
Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



683

Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № 18 ԱԿ-007. «Ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները Արցախում» գիտական թեմայի շրջանակներում

АРЦАХСКИЙ НАУЧНЫЙ ЦЕНТР
SCIENTIFIC CENTER OF ARTSAKH

М. А. АРУТЮНЯН

ОСОБЕННОСТИ СОВРЕМЕННОГО ЭТАПА РАЗВИТИЯ ВОЕННОГО ИСКУССТВА В АРЦАХЕ

M. A. HARUTYUNYAN

THE PECULIARITIES OF THE MODERN STAGE OF DEVELOPMENT OF MILITARY ART IN ARTSAKH

ИЗДАТЕЛЬСТВО НАУЧНОГО ЦЕНТРА «К А Ч А Р»
PUBLISHING HOUSE OF «KACHAR» SCIENCTIFIC CENTER
ШУШИ 2021 SHOUSHI

355
Ա-42

ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽՈՒՄ ՌԱԶՄԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6451

«ԿԱՃԱՌ» ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՇԻ 2021

ՀՏԴ 355
ԳՄԴ 68
Հ 422

Գիրքը հրատարակության է երաշխավորել
Արցախի գիտական կենտրոնի գիտխորհուրդը

Գրախոսներ՝ պ. գ. դ., պրոֆեսոր Է. Գ. Մինասյան,
պ. գ. դ. Կ. Ա. Հարությունյան

Հարությունյան Մ. Ա.
Հ 422 Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները / Մ. Հարությունյան; Խմբ.՝ գեներալ-լեյտենանտ Ն. Տեր-Գրիգորյանց.- Շուշի: «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2021.- 352 էջ քարտեզ.:

Գրքում դիտարկվում են ռազմարվեստի զարգացման վրա ազդած պատմական և ազգային առանձնահատկությունները, աշխարհագրական պայմանները և ռազմական տնտեսության սաղմնավորման գործընթացը, ինչպես նաև ռազմարվեստի վիճակը որոշող ռազմական գործի, պաշտպանական արտադրության և զինված պայքարի միջոցների զարգացման մակարդակը գիտականորեն ուսումնասիրելու առաջնահերթությունները, որոնք պայմանավորված են Արցախի Հանրապետությանը նետված մարտահրավերները դիմագրավելու հրատապ անհրաժեշտությամբ:

ՀՏԴ 355
ԳՄԴ 68

ISBN 978-9939-1-1244-2 © «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2021

ԱՌԱՋԱԲԱՆ

Արցախի Հանրապետությանը նետված մարտահրավերները դիմագրավելու անհրաժեշտությունը հրատապ է դարձնում ռազմարվեստի զարգացման վրա ազդած պատմական և ազգային առանձնահատկությունները, աշխարհագրական պայմանները և ռազմական տնտեսության սաղմնավորման գործընթացը, ինչպես նաև ռազմարվեստի վիճակը որոշող ռազմական գործի, ռազմապաշտպանական արտադրության և զինված պայքարի միջոցների զարգացման մակարդակը, հասարակարգի բնույթը և այլ գործոններ գիտականորեն ուսումնասիրելը[1]:

Մեր հանրապետության ռազմական անվտանգության ապահովման և պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործման ասպարեզում համաշխարհային ռազմական գիտության, ռազմական տեսության, ռազմարվեստի զարգացման ու ռազմապատմական գիտության նվաճումների կիրառումը պահանջված է, ինչը հնարավոր է մեր երկրի սեփական փորձի վերաիմաստավորման, 1991-1994 և 1916 թթ. պատերազմական գործողությունների ու մարտավարության տեսական վերլուծությունների միջոցով: Ժամանակակից ռազմատեխնիկական հեղափոխության և ռազմարվեստի բուռն զարգացման պայմաններում վերանայվում են հաստատագրված հասկացությունները, բառեզրերը և զինված պայքարի միջոցների մասին պատկերացումները, որոնց կոնկրետացումը կարևոր նշանակություն ունի ընդհանրապես՝ զինված ուժերի շինարարության և մասնավորապես՝ նրանց կազմակերպվածքի ու կազմի, զարգացման ու սպառազինման ուղիների որոշման համար:

Առանց Արցախի զինված ուժերի անցած ճանապարհի պատմաքննական ու ռազմագիտական ուսումնասիրության և հայկական պատմական ռազմարվեստի բոլոր արժեքավոր տարրերի, ինչպես նաև աշխարհի առաջատար բանակներում կիրառվող ռազմագիտական արդիական լուծումների համադրման[2] հնարավոր չէ կատարելագործել

[1] ***Հարությունյան Մ.,*** Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի ուսումնասիրության և դրա մի քանի առաջնահերթությունների մասին, «Դպրատուն», Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհամալսարանում հրատարակվող հասարակական գիտությունների հանդես, Ե., «Արմավ», 2019, № 2, էջ 172-177:

[2] Առաջին փորձերը տես ***Արզումանյան Ռ.,*** Сложное мышление и сеть: парадигма нелинейности и среда безопасности 21 века, Е., 2011, ***Մինասյան Ս.,*** Сдерживание в Карабахском конфликте. Ред. А. Искандарян, Е., 2016, ***Հովհաննիսյան Ա.,*** Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարները (համառոտ

ՊԲ-ի ռազմարվեստը, օպերատիվ և ռազմավարական պլանավորման ընթացակարգերը, մարտական պատրաստությունը:

Ադրբեջանի ռազմական նախահարձակմանը դիմակայելու ընթացքում Արցախում ռազմական արվեստը նշանակալի զարգացում ապրեց: Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորմանը զուգընթաց կյանքի էին կոչվում ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման տեսության ու պրակտիկայի սկզբունքները: Ռազմական արվեստի սկզբունքները՝ որպես ռազմական գործողությունների կազմակերպման ու վարման կարևոր օրինաչափությունների, հիմնարար դրույթների և պահանջների համախումբ դեռևս պատմաքննական ու գիտական վերլուծության չեն ենթարկվել: Արցախում 1990-1994 թթ. և հետագայում մղված ռազմական գործողություններին անդրադարձած հեղինակները փորձել են ամենատարբեր տեսանկյուններից բացահայտել Պաշտպանության բանակի ֆենոմենը[3]: Սակայն, փոքրաթիվ ուժերով ու սահմանափակ միջոցներով քանակապես ու նյութապես գերակշռող հակառակորդին պարտության մատնելու հանգամանքները, մարտավարական ու ռազմավարական գործոնները գիտականորեն ներկայացնելու հիմնախնդիրը դեռ չի լուծվել:

Թեև ռազմարվեստի հիմնական սկզբունքներն ընդհանուր են ռազմավարական, օպերատիվ և մարտավարական ռազմագործողությունների համար, բայց տարբերվում են պատերազմների՝ գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող օրենքների և զինված ուժե-

ուսումնասիրություն), Ե., 2017, ***նույնի*** Ռազմարվեստ, հ. 1(օդային գերակայություն), Ե., 2016, ***նույնի*** Հարձակման «սիմֆոնիան» կամ ջախջախման պատերազմի հասունացումը ռազմարվեստում (համառոտ ուսումնասիրություն), Ե., 2019 ևն:

[3] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով, Ե., 2004, ***Հատրաթյան Մ.,*** Ղարաբաղյան պատերազմ, Ե., 2001, ***նույնի*** ՊԲ պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Մ., 2008, ***նույնի*** ՊԲ հրթիռահրետանային և հակաօդային պաշտպանության զորքերը Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Մ., 2009, ***նույնի*** ՊԲ զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Մ., 2010, ***նույնի*** Արցախյան ճակատում (1991 թ. ապրիլ - 2016 թ. ապրիլ), Ե., 2018 ևն, ***Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.,*** Հաղթանակներն՝ ինչպես եղել են, ազդականչը 44, Ե., 2008, ***Հովհաննիսյան Մ.,*** Ավիացիան Արցախյան Գոյամարտում, Ե., 2006, ***նույնի*** Արցախյան պատերազմում ադրբեջանական ավիացիայի գործողությունների և հայկական ՀՕՊ հակազդեցության վերլուծություն, «21-րդ Դար», Ե., 2010, № 4, էջ 23-36 ևն, ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., 2000, ***նույնի*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿԳ-ի տարեգիրք): Գիրք 5, Շ., 2015, ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա.,*** Քարինտակի հերոսական պաշտպանությունը (ռազմական տեսանկյուն), Շ., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2020 ևն, ***Դավթյան Ա., Ավետիսյան Մ.,*** Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը, «Հայկական բանակ», 2012, № 1-2, էջ 26-42 ևն:

րի գործնական կիրառման ուղիներով: Ընդհանրապես մեր գիտահետազոտական խնդիրն ենք համարում Արցախի ԶՈՒ գործնական կիրառման առանձնահատկությունները և ուղիները պարբերաբար ներկայացնելը:

Արցախի առնչությամբ ռազմարվեստի տեսության ու պրակտիկայի գիտական հետազոտությունները նոր են սկիզբ առնում[4]: Ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օղակներում զինված պայքարի օրենքների, ձևերի և միջոցների գիտական ուսումնասիրությունները, վերոհիշյալ հանգամանքներից ելնելով, ներկայումս պահանջված են: Մեր կարծիքով՝ դրանք պետք է զուգորդվեն իրադրության կոնկրետ պայմանների հաշվառմամբ ռազմական ու մարտական գործողությունների նախապատրաստման և վարման փորձի ու ռազմական գիտելիքների կիրառման, ինչպես նաև ԶՈՒ-ի շինարարության և պատրաստության գործընթացի առանձնահատկությունների ուսումնասիրման հետ:

Ռազմական արվեստի զարգացման մակարդակն ուղիղ համեմատական է ռազմական շինարարության ոլորտի ձեռքբերումներին: Արցախում ռազմական շինարարության առանձնահատկություններին արդեն անդրադարձել ենք[5]: Ներկայումս անհրաժեշտ է բացահայտել դրանց ազդեցությունը Արցախում ռազմական արվեստի զարգացման վրա: Ինչպես հայտնի է՝ ռազմարվեստի զարգացումը օրինաչափ է համարվում, եթե այն ապահովում է ռազմական տեխնիկայի, զինուժի կառուցվածքի և մարտական գործողությունների վարման ձևերի ու եղանակների միասնությունն ու նախապայմանավորվածությունը: Ուստի այդ կարևոր բաղադրիչների արցախյան դրսևորումները համակողմանիորեն ուսումնասիրելու և գիտականորեն շարադրելու խնդրի լուծումը հնարավորություն կտա որոշարկել Արցախում ռազմարվեստի զարգացման օրինաչափությունները:

[4] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17, 13-19 մայիսի 2007 թ., № 18, 19-26 մայիսի 2007 թ., № 19, ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), «Вопросы стратегии и безопасности», Составитель, редактор, автор предисловия и примечаний Армен Айвазян, Е., «Лусакн», 2006, с. 551-577, Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից (նվիրվում է Շուշիի ազատագրման 20-ամյակին), ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի օպերատիվ վարչություն, Ե., ՀՀ ՊՆ վարչ. ապարատի հրատ., 2012, ***Ованнисян А.,*** Некоторые аспекты военного искусства в период Арцахской войны 1993-1994 гг., «21-й Век», Е., 2014, № 1, с. 33-59 ևն:

[5] ***Հարությունյան Մ.,*** Ռազմական շինարարությունն Արցախում 1991-2006 թթ., Շ., 2017:

Ռազմարվեստի սկզբունքների վերահիմաստավորումը հնարավորություն է ընձեռում տեսական ու գործնական հարթություններում դիտարկելու այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են զորքերի (ուժերի) մարտական ու զորահավաքային պատրաստության պահպանումը, գործողությունների ակտիվությունը և վճռականությունը, զորքերի (ուժերի) և միջոցների փոխգործակցության մեջ նրանց համաձայնեցված կիրառումը, վճռական պահին կարևորագույն ուղղություններում և գլխավոր խնդիրների լուծման նպատակով ջանքերի վճռական կենտրոնացումը, հանկարծակիությունը, զորքերի, ուժերի, միջոցների, կրակի համարձակ տարաշարժերը, պահեստազորի վարպետ ստեղծումը, դրա հմուտ կիրառումը և ժամանակին վերականգնումը, ձեռքբերված հաջողության ամրապնդումը, ռազմական ու մարտական գործողությունների համակողմանի ապահովումը, զորքերի (ուժերի) մարտունակության պահպանումը և ժամանակին վերականգնումը, բարոյահոգեբանական գործոնի մշտապես նկատի առնելը և հմուտ կիրառումը, զորքերի (ուժերի) հաստատակամորեն և անընդհատ կառավարումը և այլն:

Ակնհայտ է, որ վերոհիշյալ սկզբունքները քարացած, հավերժական չեն: Հարկ է նկատի առնել, որ մի շարք գործոնների ազդեցության տակ դրանք կրում են ձևական ու բովանդակային լուրջ փոփոխություններ: Ռազմական արվեստի սկզբունքներն ընդհանուր են ռազմավարության, օպերատիվ արվեստի և մարտավարության համար, իսկ նրանց ձևակերպումը նույնական է ռազմական արվեստի բաղկացուցիչ բոլոր մասերի համար, սակայն նրանց բովանդակությունը կախված է մարտական գործողությունների մասշտաբից և այլ գործոններից: Դրանց ուսումնասիրումը և վերլուծությունը նպատակաուղղված պետք է լինեն Արցախում զինված ուժերի շինարարության արդի փուլի հիմնախնդիրների լուծման տեսական հիմնավորումների լրամշակմանը, 2016 թ. մարտական գործողությունների և «նոր սերնդի» պատերազմներին մեր երկրի ու զինված ուժերի պատրաստության ուղիների ու պաշտպանական-անվտանգային առաջնահերթությունների որոշարկմանը:

Գաղտնիք չէ, որ ռազմական արվեստի զարգացումը որոշվում է պետության քաղաքականությամբ, ռազմական դոկտրինով, զորահավաքային ռեսուրսների, գիտության և տեխնիկայի վիճակով, հասարակական, առաջին հերթին՝ արդյունաբերական արտադրության ծավալով ու մակարդակով, զինված պայքարի միջոցների՝ զենքի և ռազմա-

կան տեխնիկայի զարգացման աստիճանով, ռազմավարական հումքի, վառելիքի, էներգետիկական ռեսուրսներով, տրանսպորտի, կապի միջոցների ու հնարավորություններով, ինչպես նաև կախված է ԶՈՒ քանակից ու որակից, ռազմական ավանդույթներից, ֆիզիկաաշխարհագրական պայմաններից, մարտական գործողությունների թատերաբեմի նախապատրաստումից և այլն: Նշված գործոնների համակողմանի վերլուծությունը հնարավորություն կտա ուրվագծել Արցախում դրանց հետագա զարգացման ու կատարելագործման ուղիները:

Ռազմարվեստի աստիճանական զարգացման ընդհանուր առարկայական օրինաչափություններից են պատերազմի վարման, ռազմական խնդիրների ձևերի ու միջոցների բարդացումը, զինված պայքարի թափի ու լարվածության անդադար մեծացումը: Այդ օրինաչափությունների արցախյան դրսևորումների ուսումնասիրությունը հիմք կհանդիսանա արդիական միջոցներով զինված պայքարի և հակառակորդի նախահարձակմանը ջախջախիչ հակահարված հասցնելու տեսլականի համար:

Վերոհիշյալ հիմնախնդիրները հետազոտելու աղբյուրագիտական հիմք կարող են հանդիսանալ ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարությունների, զորամասերի արխիվների նյութերը, ռազմական գերատեսչությունների պաշտոնական լրատվամիջոցները (տպագիր ու էթերային), հրապարակված գրականությունից քաղված անհրաժեշտ ու հավաստի տեղեկությունները, ռազմական գործիչների ու պատերազմի մասնակիցների հետ անցկացված հարցազրույցները, նրանց հուշագրությունների, վկայությունների ու գնահատականների ընդհանրացման և ռազմական գործողությունների պլանավորման քարտեզների տվյալների համադրման արդյունքները: Ուսումնասիրությունների արդյունքները, նախքան գիտական բաց պարբերականներում ու ամսագրերում պարբերաբար հրատարակումը, անհրաժեշտ է փորձաքննության ենթարկել համապատասխան գերատեսչություններում ու մասնագիտացված ռազմական այլ հաստատություններում:

Արխիվային նյութերի գիտական վերամշակման, պատմագրության և ռազմագիտական հասանելի նյութի քննական վերլուծության հիման վրա Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները ներկայացնելու համար անհրաժեշտ է նախ գիտականորեն լուծել հետևյալ կոնկրետ խնդիրները.

ա) պատկերացում տալ զինված պայքարի օրենքների(օրինաչափությունների), սկզբունքների մասին,

բ) ներկայացնել տարբեր մասշտաբների ռազմական գործողությունների վարման նախապատրաստման կատեգորիաների, հասկացությունների, միջոցների ու ձևերի որոշարկման և մշակման առանձնահատկությունները,

գ) ցույց տալ ՀՈՒ-ի մարտական և կազմզորահոգեբանական բարձր պատրաստության պահպանման միջոցների մշակման յուրահատկությունները,

դ) վեր հանել ՀՈՒ-ի ղեկավարման կազմակերպման և դրանց համակողմանի ապահովման հիմունքների, ՀՈՒ շինարարության հիմնական պահանջների և երաշխավորությունների մշակման առաջնահերթությունները,

ե) քննարկել հակառակորդի նախահարձակման հետևմամբ Արցախի Հանրապետության տնտեսության, բնակչության և տարածքի նախապատրաստման նախապատմությունն ու հնարավորությունները,

զ) դիտարկել սպառազինության և ռազմական տեխնիկայի հետևակարային համակարգերին ներկայացվող պահանջները՝ 1991-1994 և 2016 թթ. պատերազմական գործողությունների փորձի հաշվառմամբ,

է) համակողմանի կերպով ուսումնասիրել պատերազմի վարման հակառակորդի հայացքներն ու հնարավորությունները,

ը) անցյալի լույսով կանխատեսել պատերազմական գործողությունների (պատերազմի, ռազմագործողության կամ օպերացիայի, մարտի) հնարավոր բնույթը,


թ) ներկայացնել պատերազմի կանխարգելման ռազմական միջոցների որոշարկման առանձնահատկությունները:

Վերջին տարիներին հավաքագրված անտիպ նյութերի ու վավերագրերի, թեմայի վերաբերյալ գրականության, պարբերական մամուլի հրապարակումների հիման վրա կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքները հրատարակվել են մի շարք գիտական պարբերականներում: Մասնագիտական գրականության հետագա մեծածավալ ուսումնասիրությունները, առանձնացված խնդրահարույց հարցերի վերլուծությունը, նորովի լուսաբանման կարիք ունեցող հիմնահարցերի շարունակական գիտական քննությունն այն արդյունավետ միջոցների ու եղանակների ոչ ամբողջական ցանկն են, որոնք հնարավորություն են տալիս լուծելու վերոհիշյալ խնդիրները:

Հետազոտության արդյունքները մենագրության տեսքով հրատարակելու նախապատրաստական աշխատանքների ավարտական փուլում հարկ եղավ դժվարությամբ հաղթահարել Արցախի Հանրապետության դեմ սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի, Թուրքիայի և միջազգային ահաբեկիչների ձեռնարկած ագրեսիայի պատճառով ստեղծված խոչընդոտները: Հընթացս տեքստում որոշ սրբագրումներ կատարելու և ավարտին հասցված գլուխներն ու առանձին պարբերությունները վերանայելու անհրաժեշտություն առաջացավ: Ստեղծված կանխատեսելի ու անկանխատեսելի իրողությունների պայմաններում սույն աշխատության տեքստը ենթարկվեց վերջնական ու գիտական մշակման, փորձարկման և լրամշակման մասնագիտական խորհրդակցությունների միջոցով: Առանձին հիմնահարցեր արդեն իսկ լուսաբանվել են գիտական պարբերականներում և այլ հրատարակություններում[6]:

[6] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), 2019, № 4, էջ 111-120, ***նույնի*** Քարինտակի հերոսամարտի ռազմագիտական տեսանկյուններն ըստ ադրբեջանական աղբյուրների, «Պատմություն և քաղաքականություն. կեղծարարություն, ֆոբիա, առասպելաստեղծություն» (միջազգային գիտաժողովի նյութեր), Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2020, էջ 113-128, ***նույնի*** Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի արդյունքների և պատմական նշանակության մասին, «Հայկական բանակ», 2020, № 1, էջ 55-63, ***նույնի*** Արցախի պաշտպանության հեռավային թեատ 1993 թ. ամառային ռազմաբշավի մարտավարական առանձնահատկությունների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», մայիս-օգոստոս, 2020, №2 (659), էջ 25-46, ***Harutyunyan M.,*** The aggression of Azerbaijan against Artsakh, The collapse of empires in the 20th century: new states and new identities, Yerevan, 2020, p. 258-282 և այլն:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՆ ԼԴՀ-Ի ԴԵՄ



Մասշտաբ 1:700 000 Քարտեզ հմ. 1

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐՑԱԽԻ ՋՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Առաջադրված հիմնախնդիրը պարզաբանելու համար քննության են առնվել Ադրբեջանի նախահարձակմանը դիմագրավելու համար Արցախի հայ ազգաբնակչության զինված ինքնապաշտպանության և կանոնավոր բանակ կազմավորելու ռազմավարությունը, պատերազմական (մարտական) գործողությունների պլանավորման ու ղեկավարման առանձնահատկությունները, 1991-1994 թթ. և մինչև 2016 թ. իրականացված ռազմական շինարարությունը Արցախի Հանրապետության ռազմական (պաշտպանական) անվտանգության ապահովման, այդ թվում՝ պատերազմի հաջող ելքի կամ կանխման, հակառակորդի նախահարձակման հետմղմանը պետության ու ԶՈՒ-ի պատրաստման տեսության ու պրակտիկայի, ռազմավարական ռազմագործողությունների և ընդհանուր առմամբ պատերազմի պլանավորման ու վարման համատեքստում:

Մեծ Հայքի պատմական Արցախ նահանգի մի մասի վրա կազմավորված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տարածքում ինքնապաշտպանական ուժեր ձևավորելու անհրաժեշտությունն զգացվեց, երբ տեղի հայ ազգաբնակչությունը հարկադրված էր ինքնուրույն դիմագրավել Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունների ագրեսիվ քաղաքականությանը: Այն սկզբնական շրջանում կրում էր արտաքուստ տարերային և քողարկված բնույթ և դրսևորվում էր հիմնականում ցամաքային և օդային շրջափակման, պետական ու անհատական ունեցվածքի ավարառության, գյուղատնտեսական բերքի և ցանքատարածությունների փչացման կամ բերքահավաքին խոչընդոտելու, հայկական բնակավայրերի, մերձակա օժանդակ տնտեսությունների ու արտադրական ձեռնարկությունների վրա ավազակային զինված հարձակումների և հակաօրինական այլ գործողությունների տեսքով: Այնուհետև սկսվեցին կազմակերպված ու բացահայտ զինված ներխուժումներն ու տարածքներ զավթելու, հայ բնակչությանը բռնատեղահանելու նպատակով իրականացվող լայնածավալ ռազմական գործողությունները:

1987 թվականի դեկտեմբերից մինչև 1991 թ. ապրիլն ընկած ժամանակամիջոցում ադրբեջանական ավազակախմբերի, Ադր.ԽՍՀ Ներքին

գործերի նախարարության (ՆԳՆ) միլիցիայի հատուկ նախանշանակման ջոկատների (ՄՀՆՋ) և ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի (ՆՋ), ԽՍՀՄ Զինված ուժերի (ԶՈՒ) ստորաբաժանումների համատեղ անցկացրած պատժիչ գործողությունները, անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով իրականացրած ձերբակալությունները, բռնությունները և սպանությունները, ի վերջո, ինքնավար մարզի հայ ազգաբնակչությանը կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու հրամայականի առաջ: Այլընտրանք չմնաց, երբ 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին «Կոլցո» կոդային անվամբ հայտնի օպերացիայով, որն, ըստ էության, սկզբնավորել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դեմ Ադրբեջանական ԽՍՀ նախաձեռնած պատերազմը, հոգեվարք ապրող խորհրդային ամբողջատիրական վարչակարգը փորձեց ահաբեկել ազգային ազատագրական ու ժողովրդավարական շարժում և ինքնորոշման համար պայքար ծավալած հայ ժողովրդին:

Ինքնապաշտպանության նպատակով զինված կազմավորումների առաջացման ու համախմբման համար պատմաբան Ռ. Ազիզբեկյանը հատկանշել է այլ նախադրյալներ: Մասնավորապես, նրա կարծիքով զինված ինքնապաշտպանության անհրաժեշտությունն առավել սրությամբ զգացվեց, երբ անպատժելիության և հակահայկական քարոզչության մթնոլորտում Ադրբեջանում լայն ծավալներ ու չափեր ընդունած բռնությունները սպառնում էին արդեն իսկ հայ բնակչության ֆիզիկական գոյությանը: Իսկ Գանձակի, Բաքվի, Շամքորի, Խանլարի, Քարհատի (Դաշքեսանի) հայ բնակչության բռնագաղթը, ինչն ամենուր ուղեկցվում էր սպանություններով և ունեցվածքի կողոպուտով, ստիպում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել զինված ինքնապաշտպանության ուղղությամբ: 1988 թ. աշնանը, էթնիկական զտման քաղաքականությունը զուգակշռելու միտումով և Արցախի ժողովրդագրական կազմը փոխելու նպատակով, Ադրբեջանի իշխանությունների կազմակերպած ադրբեջանցիների սաղրիչ արտագաղթը Հայկական ԽՍՀ-ից, իրավիճակն է՛լ ավելի սպակայունացրեց, քանզի նրանց մեծամասնությունը վերաբնակեցվեց ԼՂԻՄ-ում[7]:

ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի և ԶՈՒ զորամասերի խիտ շղթայով օղակված ԼՂԻՄ-ի ու մարզի կազմավորման ժամանակ նրա սահմաններից հանիրավի դուրս թողնված պատմական Արցախի հայկական

[7] ***Ազիզբեկյան Ռ.,*** Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն (համառոտ ակնարկ), Ե., ՀՀ ԳԱ հրատ., 1992, էջ 32-34:

բնակավայրերի հայությունը կանխազգում էր վերահաս վտանգը, որը գալիս էր մարզը հայաթափելու բացահայտ քայլերից, պաշտոնական Մոսկվայի որդեգրած աղրբեջանամետ քաղաքականությունից, դրանից ոգևորված ադրբեջանցի գրոհայինների անպատիժ հարձակումներից և այլ բռնարարքներից: Ադր.ԽՍՀ ծայրահեղորեն տրամադրված ուժերը (ԱԺՃ են), իշխանությունների թողտվությամբ, իրենց զինված ավազակախմբերը նետեցին նաև Հայկական ԽՍՀ սահմանների վրա՝ նպատակ ունենալով ինքնորոշման համար ԼՂԻՄ հայ ազգաբնակչության ծավալած ժողովրդավարական պայքարը ենթագիտել ադրբեջանա-հայկական հակամարտության, Հայկական ԽՍՀ-ի ու Ադր.ԽՍՀ-ի միջև տարածքային վեճի: Արդեն իսկ 1990 թ. ձմռանը զինված հարձակումների էր ենթարկվում Հայկական ԽՍՀ գրեթե ամբողջ սահմանագիծը: Հայ աշխարհագրային և կամավորական խմբերը, ինքնապաշտպանական ջոկատները, կանգնելով ինչպես պատմական Արցախի, այնպես էլ Ե-րասխավանի, Վայքի, Մեղրիի, Կապանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Իջևանի սահմանամերձ շրջանների պաշտպանության դիրքերում, արժանի հակահարված էին հասցնում ոտնխին[8]: Ռազմաքաղաքական իրավիճակի զարգացման դինամիկան Արցախի հայ ազգաբնակչությանն անխոտոր տանում էր դեպի զինված ինքնապաշտպանություն: ԽՍՀՄ ուժային նախարարությունների չափազանց խիստ վերահսկողության պայմաններում սկսեցին կազմավորվել ընդհատակյա կամավորական զինված ջոկատներ, որոնք անվարան նետվեցին պաշտպանական ծանր ու անհավասար մարտերի հորձանուտը[9]:

Ըստ նախանշանակման ու խնդիրների՝ ժամանակին առանձնացրել էինք ինքնապաշտպանական ջոկատների մի քանի տեսակ.

ա) Սահմանամերձ ու վտանգված բնակավայրերի բնակիչներից կազմված տեղային խմբեր, որոնք խնդիր ունեին պաշտպանել իրենց տունն ու ընտանիքը, ժողովրդատնտեսական կարևոր օբյեկտները, հանրային ունեցվածքը, ապահովել գյուղատնտեսական աշխատանք-

[8] Պատմական հիշողությունը հայությանը տնօրավ դեպի XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի իրադարձությունները, երբ դարձյալ ինքնապաշտպանության նպատակով պատմական Հայաստանի տարբեր վայրերում, այդ թվում և Արցախում, առաջացան աշխարհագրային ջոկատներ ու մարտական խմբեր, որոնք լավ թե վատ կատարեցին իրենց պատմական առաքելությունը: Կարծում ենք, որ հենց նրանց վրիպումների ու սխալների վրա սովորեց ներկա սերունդը, կիրառեց նրանց մարտական փորձը և ավանդական մարտավարությունը:

[9] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991 -1994 թթ., «Կռաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շ., «Կռաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 32:

ների ու խորհուրդների, կոլտնտեսությունների խոշոր և մանր եղջերավոր անասունների պահպանման անվտանգությունը: Այս կարգի խմբերը, մեծամասամբ, պահակապարեկային էին, նրանց անդամները միայն դեպքից դեպք էին իրենց դերի մեջ մտնում՝ ավելի շատ զբաղվելով առօրյա հոգսերով ու խաղաղ-ստեղծագործ աշխատանքով:

բ) Հիմնականում քաղաքաբնակներից ստեղծվում էին այնպիսի զինված խմբեր ու ջոկատներ, որոնք կամ օգնության էին հասնում վտանգված բնակավայրերի պաշտպաններին, կամ էլ կատարում էին զանազան մարտական առաջադրանքներ:

գ) Կային նաև հատուկ պատրաստություն անցած կամ զինվորական համապատասխան փորձ ունեցող և տարբեր վայրերից ժամանած հայ կամավորականների մարտունակ ջոկատներ, որոնք, ըստ անհրաժեշտության, գործում էին առավել վտանգված շրջաններում: Ի դեպ, տվյալ վայրի ինքնապաշտպանական ջոկատի մարտունակությունը և կազմակերպվածությունն ուղիղ համեմատական էին վտանգի մեծությանը և հակառակորդի հարձակումների հաճախականությանը[10]:

Նշելով, որ հնարավոր չէ ռազմական գործողությունների բնույթը ճիշտ հասկանալ առանց հստակ իմանալու, թե ինչ էին իրենցից ներկայացնում Արցախում գործող կամավորական ջոկատները և տալով դրանց բնութագիրը 1991 թ. ամառվա կտրվածքով՝ ինքնապաշտպանության ուժերի ստեղծման ակունքներում կանգնած գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանն առանձնացրել է տեղական և Հայկական ԽՍՀ-ից Արցախ ժամանող ջոկատները:

«Ինքնապաշտպանության տեղական ջոկատները,- գրել է Ա. Տեր-Թադևոսյանը,- <...> բաղկացած էին տեղացի աշխարհազորայիններից և կազմավորվել էին՝ ի պատասխան Ադրբեջանի և ԽՍՀՄ ղեկավարության կողմից գործադրվող զինված բռնության և մի շարք գյուղերից ու ավաններից հայկական բնակչության բռնի տեղահանման: Այս ջոկատների ռազմիկներն աչքի էին ընկնում իրենց բարձր մարտական ոգով: Սակայն նրանք չափից ավելի քաղաքականացված էին և խիստ կապված իրենց շրջանին: Ռազմական գործողություններում նրանք ավելի զգուշավոր և պակաս ակտիվ էին դառնում, երբ նրանց ուղարկում էին Արցախի այլ շրջաններ՝ այնտեղ գործող ուժերին օգնության: Տեղական ջոկատներն Արցախում գործող բոլոր ջոկատների գրեթե 80%-ն էին կազմում»: Այս փաստի արձանագրումը շատ կարևոր է Արցախի զինված ուժերի հիմնադրման, կամավորագրված անձնակազմի՝ հայրենի օջախն ու ընտանիքը պաշտպանելու շարժառիթավորվածության իրական պատմությունը հանրահռչակելու տեսակետից:

«Հայաստանից [կամավոր] Արցախ ժամանող ջոկատներ,-շարունակում է Ա. Տեր-Թադևոսյանը,- այս ջոկատների շատ մարտիկներ, լինելով հայ ժողովրդի արժանավոր ներկայացուցիչները, կամովին, սրտի կանչով ոտքի ելան պաշտպանելու Հայրենիքը: Բայց, ցավոք, կային նաև այնպիսիք, որոնք զենք վերցրին բացառապես հանուն անձնական շահի: ՀՀ[-ից ժամանած կամավորական] ջոկատները կազմում էին Արցախի ինքնապաշտպանության ուժերի 20%-ը»[11]:

Մենք ժամանակին ուսումնասիրել և բավարար կերպով լուսաբանել ենք Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորման գործընթացը, այդ թվում՝ տվել ջոկատների բնութագրերը[12]:

Ուշագրավ է, թե ինչպես են Արցախ ժամանած արհեստավարժ զինվորականի հիշողությունում մնացել 1991 թ. ամռանն Արցախում գործող ինչպես տեղական, այնպես էլ ՀՀ-ից ժամանած կամավորական ջոկատների քաղաքական կողմնորոշումները:

«Դաշնակցության կուսակցության կողմից վերահսկվող ջոկատներ,- գրել է Ա. Տեր-Թադևոսյանը,- դրանք կազմում էին ինքնապաշտպանության ջոկատների մեծամասնությունը և զենք, զինամթերք ու այլ տեսակի օգնություն էին ստանում կուսակցական խողովակներով: Ամենախոշոր և լավ պատրաստված ջոկատը Աշոտ Ղուլյանի (Բեկորի) ջոկատն էր»[13]:

[10] ***Հարությունյան Մ.,*** Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», № 1, 2000, էջ 79, ***նույնի՝*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 27-28:

[11] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

[12] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 27-28, ***նույնի՝*** Արցախի ինքնապաշտպանական ուժերի կազմավորումը, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», № 1, Ս., 2000, էջ 78-88, ***նույնի՝*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 23, հմմտ.՝ Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կռաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, Շուշի, «Կռաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 32-33:

[13] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

Հարկ է նկատել, որ 1991 թ. հոկտեմբերից Ստեփանակերտում կազմավորվում էին Ինքնապաշտպանության ուժերի վաշտերը, որոնցից առաջինը գլխավորում էր հենց Աշոտ Ղուլյանը:

Շարունակելով ջոկատների քաղաքական կողմնորոշումների ներկայացումը՝ Ա. Տեր-Թադևոսյանը նշել է, որ «ՀՀՇ-ի վերահսկած ջոկատները ՀՀ-ից անհրաժեշտ միջոցներն ստանում էին 1991 թ. հուլիսին Ստեփանակերտում ստեղծված Պաշտպանության կոմիտեի միջոցով, որը գլխավորում էր Սերժ Սարգսյանը»[14]:

Արցախի ինքնապաշտպանության գործի պատասխանատու զինվորականն առանձնացրել է նաև «երկու հիմնական քաղաքական ուժերից ոչ մեկի կողմից չվերահսկվող և ինքնուրույն գործող ջոկատներին», որոնցից հատկանշել է «Լեոնիդ Ազգալդյանի՝ գերազանց մարտունակությամբ աչքի ընկնող «Ազատագրական բանակ» ջոկատը[15]»:

Ա. Տեր-Թադևոսյանը Հայաստանից կամավոր հիմունքներով ժամանած ջոկատներն ըստ պատասխանատվության, հիմնավորվածության, մարտական ոգու աստիճանի բաժանել է երեք խմբի.

«1. Ջոկատներ՝ կազմված իսկական հայրենասերներից, որոնք պատրաստ էին կատարել Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության ցանկացած առաջադրանք: Զարմանալի չէ, որ այդպիսի ջոկատներին էր հրամանատարությունը հանձնարարում ամենադժվար առաջադրանքների կատարումը:

2. Առավել զգույշ գործող ջոկատներ: Դրանց պակաս պատասխանատու առաջադրանքներ էին տրվում, քանի որ [դրանք] ավելի հաճախ ձնացնում, քան իրականում փորձում էին կատարել հրամանատարության մարտական հրամանը: Այս երկու խմբերը մեծամասնություն էին կազմում:

3. Ջոկատներ, որոնք ժամանում էին Արցախ, որ[պեսզի] ձևականորեն հավաստեն իրենց մասնակցությունը ռազմական գործողություններին և ապօրինի զենք տեղափոխեն ՀՀ, ինչը հետագայում հայտնվում էր քրեական միջավայրում կամ վաճառվում էր:

[14] Նույն տեղում: Ինչպես հայտնի է Արցախի պաշտպանության (ինքնապաշտպանության) կոմիտեն Սերժ Սարգսյանի նախագահությամբ կազմավորվել է 1992 թ. մարտի 26-ին (հմմտ. ԼՂՀ կառավարության արձանագրային բաժնի արխիվ, ԼՂՀ ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, № 3, թ. 2:)

[15] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), «Вопросы стратегии и безопасности», Составитель, редактор, автор предисловия и примечаний Армен Айвазян, Е., «Лусакн», 2006, с. 553-554.

Նման ջոկատների միակ օգուտն այն էր, որ նրանց ժամանումը ոգևորում էր տեղացի բնակչությանը և ապակողմնորոշում հակառակորդին, որի մոտ տպավորություն էր ստեղծվում, թե հայկական կողմն օժանդակ ուժեր է ներառում այս կամ այն շրջան»[16]:

Դատելով Ա. Տեր-Թադևոսյանի գնահատականից՝ այդ ջոկատները բավական հեռու էին կանոնավոր բանակին ներկայացվող պահանջներից, հետևաբար, դեռ երկար ու համբերատար աշխատանք էր պահանջվում ընդհանուր հրամանատարության ենթակայության տակ դրանք համախմբելու համար:

«Կամավորական ջոկատների մեծ մասն օժտված էր տիպիկ պարտիզանական, ֆիդայական (հայդուկային) հոգեբանությամբ և դժվարությամբ էր ըմբռնում զինվորական կարգուկանոնի, ռազմական համագործակցության, միասնական հրամանատարությանը ենթարկվելու անհրաժեշտությունը և այլն,- նշում է Ա. Տեր-Թադևոսյանը,- նրանք չէին ուզում հրաժարվել գործելու բացարձակ ազատությունից և ամենայն պատասխանատվության բացակայությունից: Ջոկատները փոքրաքանակ էին, հիմնականում՝ 20-ից 40 մարդ, քանի որ զենքը չէր հերիքում, և դրժվար էր կայուն կերպով ջոկատն ապահովել զինամթերքով և սննդամթերքով: Տարբեր քաղաքական խմբավորումների պատկանող ջոկատների համատեղ ռազմական գործողություններ, փաստորեն, չէին անցկացվում, ինչը բացատրվում էր վստահության բացակայությամբ: Մյուս կողմից՝ փոքրաթիվ, իրենց գործողությունները չհամաձայնեցնող հայկական ջոկատները չէին կարող դիմակայել խորհրդային բանակի, ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ և Աղրբեջանական ԽՍՀ ՆԳՆ ՄՀՆԶ-ի խոշոր ռազմական միավորումներին»[17]:

Առանձին ջոկատների միավորման և ինքնապաշտպանական մարտերը ղեկավարելու գործում մեծ էր գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանի ներդրումը: 1991 թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պաշտպանության և ներքին գործերի հանձնաժողովի նախագահ Վազգեն Սարգսյանը նրան հանձնարարեց մեկնել Արցախ, որտեղ 1991 թ. ամռանն Աղրբեջանական ԽՍՀ ՆԳՆ ՄՀՆԶ-ները ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զորամասերի հետ միասին, Արցախի գրեթե բոլոր շրջաններում տեղահանում էին հայկական գյուղերի բնակչությանը, ի-

[16] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

[17] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 555.

րականացնում ձերբակալություններ և զանգվածային սպանություններ: Արցախում շարունակվող «Կոլցո» գործողությամբ պայմանավորված չափազանց բարդ իրավիճակում գնդապետ Արկադի Տեր-Թադևոսյանին վիճակված էր լուծելու առաջադրված երկու հիմնական խնդիր.

« ա) ստանձնել Արցախի բոլոր կամավորական ջոկատների հրամանատարությունը, որոնց աջակցում էին Հայոց համազգային շարժում (ՀՀՇ) կուսակցությունը և Արցախի պաշտպանության կոմիտեն.

բ) փորձել մեկ միասնական հրամանատարության ներքո միավորել[18] Արցախում գործող բոլոր ինքնապաշտպանական ջոկատները, որոնք ստեղծվել էին տարբեր քաղաքական կուսակցությունների, կազմակերպությունների կողմից և համակարգել ինքնապաշտպանության ջոկատների ռազմական գործողությունները»[19]:

Այստեղ հարկ է նկատել, որ Արցախի պաշտպանության կոմիտեն դեռևս ստեղծված չէր (այն հիմնադրվել է 1992 թ. մարտի 26-ին, ԼՂՀ նախարարների խորհրդի որոշմամբ[20]): Խոսք պետք է գնար ԼՂԻՄ պաշտպանության ընդհատակյա շտաբի մասին, որի ստեղծման վերաբերյալ փաստաթուղթ մենք դեռևս չենք տեսել:

Ըստ երևույթին, Ս. Սարգսյանը ձեռք էր բերել նաև Արցախյան շարժման Հայաստանի կոմիտեի վստահությունը: Իսկ մինչ այդ էլ նա վայելում էր գործող խորհրդային ու կուսակցական իշխանությունների հանդուրժողականությունը: Եթե որպես կուսակցական նոմենկլատուրայի ներկայացուցիչ նա կոնսպիրացիայի անհրաժեշտություն չէր տեսնում, ապա Արցախյան շարժման Հայաստանի կոմիտեի և «Միացում» ժողովրդավարական շարժման ու այլ ընդհատակյա կազմակերպությունների հետ համագործակցությունը չէր հրապարակայնացվում: ՀՀՇ-ի դիրքերի ամրապնդմանը զուգահեռ Ս. Սարգսյանն աստիճանաբար

[18] Սա առանձին գործող ջոկատները միավորելու առաջին փորձը պիտի լիներ, որի հաջողության արտահայտությունը թերևս Շուշիի ազատագրումն էր: Այդ նպատակով, անկախ իրենց քաղաքական հայտնդմունքներից, հիրավի միավորվել էին այն ժամանակվա համար աներևակայելի քանակությամբ ուժեր ու միջոցներ: Սակայն Շուշիի ազատագրումից ու Լաչինի միջանցքի բացումից հետո տեղի ունեցավ ինքնահանգստացում և հայերիս խրոնիկ հիվանդությունը գլուխ բարձրացրեց՝ պատակտում մտցնելով մեր շարքերում, նորից հասարակությանը բաժան-բաժան անելով ըստ կուսակցական ու այլ հատկանիշների: Դրա պատճառով ունեցանք Շահումյանի և Մարտակերտի մի մասի կորուստը, կանգնեցինք կատարյալ աղետի առաջ: Միավորման առաքելությունը ստանձնեց Սամվել Բաբայանը, որը հաջողությամբ կատարեց իր վրա դրված խնդիրը և մենք ունեցանք փայլուն հաղթանակներ:

[19] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

[20] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժնի արխիվ, ԼՂՀ ՆԽ 1992 թ. մարտի 26-ի նիստի արձանագրություն, № 3, թ. 2:

օժտվում էր իշխանության լծակներով, մանավանդ՝ ինքնապաշտպանության կազմակերպման ոլորտում:

1991 թ. հուլիսի 20-ին ուղղաթիռով ԼՂԻՄ Մարտակերտի շրջան ժամանած գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը հետևյալ կերպ է բնութագրում իրավիճակը. «1991 թ. ամռանն Արցախում դեռևս չկար պաշտպանության ամբողջական համակարգ՝ միասնական հրամանատարությամբ և կառավարմամբ, ինչն ավելի շատ քաղաքական, քան կազմակերպչական խնդիրների հետևանք էր: Արցախում առաջատար քաղաքական ուժը Դաշնակցություն կուսակցությունն էր, որը խիստ հակամարտության մեջ էր ՀՀՇ-ի և Արցախում նրա կողմնակիցների հետ: Հակամարտող երկու քաղաքական ուժերի վերահսկած ջոկատները Հայաստանից զենք և զինամթերք էին ստանում տարբեր աղբյուրներից[21], չէին վստահում միմյանց և չէին համակարգում[22] իրենց ռազմական գործողությունները»[23]:

Նման իրավիճակում Հայաստանի պաշտպանության կոմիտեից գործուղված արհեստավարժ զինվորական Ա. Տեր-Թադևոսյանն առաջնահերթ համարեց ռազմական գործի արագացված ստուգումը: Նրա իսկ բնութագրմամբ՝ «Ինքնապաշտպանության ջոկատների հետ առաջին իսկ ծանոթությունն ակներև դարձրեց մարտիկներին՝ ռազմական գործողությունների ինչ-ինչ հմտություններ, իսկ ջոկատների հրամանատարներին ռազմական գործի այբուբենն ուսուցանելու անհրաժեշտությունը: Արցախում այն ժամանակ չկար միասնական ռազմական ուսումնական կենտրոն, ուստի ուսումնական գործընթաց կազմակերպվեց հենց տեղերում՝ ջոկատներում: Դասընթացները հիմնականում անցկացնում էին փոքրաթիվ կադրային սպաները, որոնք ընդ-

[21] Հայրենիքի պաշտպանության պատրվակի տակ, հիմնականում զենք տրամադրելով երկուստեք քաղաքական ազդեցության էին ձգտում և պայքարում իշխանության/գերիշխանության համար: Հմմտ. ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա.,*** Քարինտաշի հերոսական պաշտպանությունը (ռազմական տեսանկյուն), Շ., «Կանձառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2020, էջ 29:

[22] Ահա սրանով էր պայմանավորված ՀՅԴ ջոկատների իրականացրած մարտական գործողությունների շարքը 1991 թ. դեկտեմբերին. Լեսնոյ, Իմերեր-Քարավենդ և այլն: Անձամբ կարող ենք վկայել, որ երբ 1991 թ. դեկտեմբերի 16-ին Բերքաձորում ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանման շրջապատման մեջ հայտնված մեր ազատամարտիկների վիճակը ծանր էր, Վալերի Բալայանը չէր ուզում մեկնել օգնության, պատճառաբանելով, թե Արցախի ժողովրդի դեկավար Մուրադ Պետրոսյանի ցուցումներին պարտավոր չէ ենթարկվել, ինքը կատարում է ՀՅԴ հրամանները...Այնուամենայնիվ վիճակն այդ աստիճան անհուսալի չէր: Համատեղ իրականացված մարտական գործողությունները Կրկժանում, Մալիբեկլրում, Խոջալուում, Շուշիում ունեցել են հաղթական ավարտ:

[23] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

գրկված էին ինքնապաշտպանության ջոկատներում[24]: Հատկապես արժեքավոր էր աֆղանական պատերազմն անցած սպաների փորձը: Պարապմունքներն անցկացվում էին ոչ պարբերաբար, միայն ազատ ժամանակ ունենալու դեպքում[25]:

Ուսումնական գործընթացը կազմակերպելու համար Երևանից ճիշտ ժամանակին հատուկ ռազմական գրականություն բերվեց. զինվորական կանոնագրքեր, տարբեր զորատեսակների սպաների և սերժանտների պատրաստման ուսումնական ձեռնարկներ, ռազմական տեղագրության վերաբերյալ գրքեր[26]:

Մարտիկների մեծամասնությունը լրջորեն էր վերաբերվում պարապմունքներին,- գտնում է Ա. Տեր-Թադևոսյանը,-քանի որ տառացիորեն մի քանի օր անց ստիպված էր լինում ստացած գիտելիքները կիրառել անմիջականորեն մարտի դաշտում: Հայրենիքի պաշտպանությանը կամավորագրվածները եռանդուն կերպով յուրացնում էին զենքի տարբեր տեսակների կիրառման հմտությունները, ներդաշնակում էին ջոկատի գործողությունները հարձակման և պաշտպանության դեպքերում, մշակում տեղանքում կողմնորոշվելու կամ դիրքավորվելու արդյունավետ եղանակները և այլն: Գործնական պարապմունքների ժամանակ հատուկ ուշադրություն էր դարձվում լեռնանտառային տեղանքում ռազմական գործողությունների անցկացմանը:

[24] Կարող ենք վկայել, որ դեռևս 1988-1989 թթ. մարզի արական սեռի բնակչությունը զանգվածաբար, բայց խումբ-խումբ ձեռնամարտի հնարներ էր սովորում հանրակրթական դպրոցների դահլիճներում: Անձամբ մասնակցել ենք 5-րդ դպրոցի դահլիճում անցկացվող նման պարապմունքներին:

[25] Արցախի ԻԴՈՒ կարևոր առանձնահատկությունը պետք է համարել այն, որ կամավորական-ազատամարտիկները մարտավարական հմտություններ ստանում և սովորում էին հենց անմիջապես մարտադաշտում կամ մարտական առաջադրանք կատարելիս: Մարտական ոգին ու տոկունությունը կոփվում էին ադրբեջանցիների հարևանությամբ գտնվող բնակավայրերում և թաղամասերում կազմակերպվող զիշերային անկեզել հերթապահությունների ընթացքում, երբ բացի ադրբեջանցի գրոհայիններից վտանգ էր սպասվում նաև ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ կարգախմբերից, ոստիկանական և հատուկ ծառայությունների աշխատակիցներից: Նման մի դեպք մեզ հետ է տեղի ունեցել, երևի 1989 թ., երբ գիշերային հերթապահության ժամանակ (մեր ինքնապաշտպանական զենքը կարճ լինգն էր) թաղամասի ծայրամասում, լքված ադրբեջանցու տանը կասկածելի շարժում նկատելով՝ մոտեցանք պարզելու, թե ինչն ինչոց էր, երբ պարզվեց, որ խորհրդային զինվորականներ էին (նրանցից մեկը թերևս ապա էր), որոնք ատրճանակից կրակեցին մեզ վրա և յուրաքանչյուրիս թվաց, թե գնդակները սուրացին հենց մեր գլխավերևով: Մենք արագ հեռացանք դեպքի վայրից: Տողերիս հեղինակը բարձունքից իջավ գլորվելով՝ մտածելով, որ հասակով կանգնելու դեպքում խոցելի կդառնա: Իսկ ԽՍՀՄ ՋՈՒ-ում ծառայության փորձ ունեցող նրա եղբայրը կարծեց, թե գնդակը կպել է և անմիջապես վազեց եղբոր հետևից և թեթև շունչ քաշեց, երբ իմացավ, որ նա անվնաս է:

[26] Լայնորեն օգտագործվում էր ռազմագիտության ուսուցիչների ներուժը: Օրինակ, Ստեփանակերտում ուսուցման հարցերում ակտիվ էր և իր գործընկերներին ներգրավելու, աշխատանքները հանկարգելու հարցերում նախաձեռնողականությամբ աչքի էր ընկնում համար 1 միջնակարգ դպրոցի զինղեկ Արսեն Լաչինյանը, որի գործունեությանն ականատես լինելու առիթներ ունեցել ենք:

Աստիճանաբար սաղմնավորվում ու ձևավորվում էին նաև զորատեսակները: Դրանցից հատկապես մեծ հրատապություն էր ներկայացնում ռազմական հետախուզությունը, առանց որի հնարավոր չէր վերահսկել ու իմանալ հակառակորդի հնարավոր գործողությունների բնույթը, ժամանակը ու տեղը, հետևաբար նաև կանխիչ ու պատժիչ գործողություններ իրականացնել: Ներկայացնելով ռազմական հետախուզության կազմավորման ընթացքը՝ Ա. Տեր-Թադևոսյանը մասնավորապես նշել է. «Հայկական ջոկատների հրամանատարությունն իր աշխատանքի ամենասկզբից սկսեց մեծ ուշադրություն հատկացնել ռազմական հետախույզների պատրաստմանը: Հատուկ ռազմական գրականությանը ծանոթանալուց հետո ապագա հետախույզները պետք է ստուգարքներ հանձնեին տեղանքում կողմնորոշվելու, ռեյդեր իրականացնելու, հետախուզական ճշգրիտ զեկույցներ կազմելու և այլ հարցերի շրջանակներում: 1991 թ. օգոստոսին արդեն հետախույզների ուսուցման գործընթացն սկսեց ղեկավարել մայոր Աշոտ Խաչատրյանը, և դա անմիջապես արտահայտվեց նրանց ուսուցման որակում»[27]:

Ստեփանակերտում երեք մասնագիտացված ջոկատների ստեղծումը Ա. Տեր-Թադևոսյանը թվագրել է 1992 թ. հունվարով: **Հատուկ հետախուզական ջոկատը** զբաղվում էր ռադիոռորսով, **Առանձին հետախուզական ջոկատն** իրականացնում էր արտագրոհներ հակառակորդի դիրքերում՝ կարևոր օբյեկտները բացահայտելու նպատակով, **Դիվերսիոն-հետախուզական ջոկատը** կատարում էր դիվերսիաներ և ականներ էր տեղադրում նախահարձակ թշնամու թիկունքում:

Գնահատելով սաղմնավորվող զորատեսակի դերը՝ Ա. Տեր-Թադևոսյանը նշել է. «Ռազմական հետախուզությունը, ընդհանուր առմամբ, հաջողությամբ էր կատարում իր պարտականությունները և պարբերաբար հրամանատարությանը ստույգ տեղեկություններ էր հաղորդում ադրբեջանական և խորհրդային զորքերի տեղակայման, նրանց ուժերի և միջոցների թվաքանակի վերաբերյալ: Այդ ժամանակաշրջանում գործողությունների հաջող ելքը, նվազագույն կորուստները մեծ մասամբ նաև ռազմական հետախուզության հմուտ աշխատանքի արդյունքն էին»[28]:

[27] ***Տեր-Թադևոսյան Ա.***, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

[28] Նույն տեղում: Նա չի խուսափել նաև ցավալի ձախողումների մասին հիշատակելուց: Օրինակ, Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ժամանակին հետախուզական տվյալներ չէր

Զոկատների գաղափարական տարակարծությունները հարթելու նպատակով բացատրական լայն աշխատանքներ տարվեցին:

Քանի որ «…հայկական կամավորական ջոկատները գտնվում էին տարբեր քաղաքական ուժերի, առաջին հերթին՝ Դաշնակցության և ՀՀՇ-ի վերահսկողության ներքո,- գրել է Ա. Տեր-Թադևոսյանը,- **այս կամ այն ջոկատ մտնելիս մարտիկը հաճախ առաջնորդվում էր ոչ թե գաղափարական նկատառումներով, այլ զենք (որը սաստիկ չէր հերիքում) ստանալու հնարավորությամբ** (ընդգծումը մերն է.- Մ. Հ.): Այնուհանդերձ, երկու քաղաքական ուժերի հակամարտությունը հրահրում էր ջոկատների միջև տարաձայնություններ և նույնիսկ ազդում մարտիկների անձնական փոխհարաբերությունների վրա: Հրամանատարությունը գիտակցում էր, որ խիստ անհրաժեշտ է համապատասխան աշխատանք տանել՝ հակասությունները հարթելու և համայն հայության միասնական խնդրի՝ Արցախի <…> պաշտպանության գաղափարի շուրջ ջոկատները միավորելու համար»[29]: Այդ ջանքերի գագաթնակետը դարձավ Շուշիի ազատագրման ռազմագործողության ժամանակ գրեթե բոլոր ջոկատների համախմբումը, սակայն բերդաքաղաքի ազատագրումից և Լաչինի միջանցքով մայր հայրենիքի հետ վերամիավորումից հետո անհիմն ինքնահանգստացման ալիք առաջացավ, ինչը խորացրեց ներքաղաքական տարաձայնությունները:

Թիկունքային ծառայության կազմավորումը

Անչափ կարևոր էր զորքերի մատակարարման կազմակերպումը: Ինչպես կարծում է Ա. Տեր-Թադևոսյանը, մինչև Լաչինի միջանցքի բացումը՝ 1992 թ. մայիսի 18-ը, Արցախը կատարյալ շրջափակման մեջ էր, և բոլոր անհրաժեշտ բեռները ՀՀ-ից այնտեղ էին հասցվում ուղղաթիռներով: Հայ օդաչուների բարձր արհեստավարժության և հաճախ՝ պարզապես հերոսության շնորհիվ էր հաջողվում կանոնավորապես Արցախ

ստացել հակառակորդի լայնածավալ հարձակման նախապատրաստության վերաբերյալ, որը նախատեսված էր 1992 թ. հունիսի կեսին, և որում ընդգրկված էր Աղդբեջանի տարածքում տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակը: Ժամանակին հետախուզական տվյալներ չստանալու վերաբերյալ ԻՊՈՒ նախկին հրամանատարի այդ պնդումը չենք կարող անվերապահ ընդունել, որովհետև ԱՀ ՊՆ արխիվում տեսել ենք օպերատիվ հերթապահի աշխատանքային տետրի 1992 թ. հունիսի առաջին տասնօրյակի օպերատիվ հաղորդագրությունները Արցախի ռազմաճակատի տարբեր հատվածներում հակառակորդի կենդանի ուժի ու ռազմական տեխնիկայի հապշտապ կուտակումների մասին (ԼՂՀ ՊՆԱ, ՕՀԱՏ, № 217, էջ 33):

[29] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 556-557.

հասցնել ռազմական անհրաժեշտության բոլոր բեռները, դեղորայք, սննդամթերք, վառելիքաքսուքային նյութեր և այլն[30]:

Ա. Տեր-Թադևոսյանը չի հիշատակում Արցախի տարածքում կազմակերպված թիկունքային ապահովման ծառայությունները: Այդ առումով հատկապես նշանակալի էր «Ամարաս» բարեգործական ընկերության գործունեությունը: Միաժամանակ, ինքնապաշտպանության ուժերին սննդամթերքով ապահովման գործում ծանրակշիռ ավանդ ունեցան խորհրդային ու կոլեկտիվ տնտեսությունները, որոնք ստանձնել էին իրենց շրջանների ինքնապաշտպանության ուժերի թիկունքային մատակարարման առաքելությունը: Չպետք է մոռանալ, որ Արցախի ազգաբնակչությունը ևս կամավոր կերպով հնարավորինս սնունդ է մատակարարել ինքնապաշտպանության մարտիկներին: Այս վերջին հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ ԻՊՈՒ մարտիկները այդ ընտանիքներից էին, այսինքն՝ յուրաքանչյուր ընտանիք կերակրելով իր տղամարդուն՝ այս կամ այն չափով նպաստել է սննդապահովման գործին[31]:

Շրջափակման պայմաններում Արցախում չափազանց սուր էր դրված պարենի, հատկապես՝ հացի ապահովման հարցը, քանի որ Արցախն ի վիճակի չէր իրեն ապահովել ցորենով և մյուս սննդամթերքներով[32]: Հայկական ջոկատների մատակարարումն իրականացվում էր ՀՀ-ից օդային ճանապարհով ստացված պարենով: Ջոկատներին արգելված էր մթերքի հարցով դիմել տեղաբնակներին, որոնք իրենք էլ բավական ծանր վիճակում էին: Միայն բացառիկ դեպքերում էր հրամանատարությունը փողով մթերք գնում տեղացիներից[33]: Ջոկատների մեծ

[30] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 5-12 մայիսի 2007 թ., № 17:

[31] Համմ.՝ ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա.,*** Քարինտակի հերոսական պաշտպանությունը (ռազմական տեսանկյուն), Շ., «Գամառ» գիտական կենտրոնի հրատ., 2020, էջ 62-63:

[32] Հարկ է հիշել, որ հակառակորդը հաղորդակցության ուղիների շրջափակմանը զուգընթաց խոնգարում էր գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, ոչնչացնում էր բերքը, անասնագոմերում վնաս հասցնում կոլեկտիվ ու անհատական տնտեսություններին, ահաբեկում, ընդհուպ մինչև ֆիզիկական հաշվեհարդարը, հողի մշակներին ու անասնապահներին:

[33] Հատկապես 1989-1990 թթ. բնակչությունը սիրահոժար կերակրում էր իր պաշտպաններին: Դժվար է հավատացնել, թե դա զանգվածային բնույթ էր կրում, թե ոչ, բայց անձամբ հիշում ենք ջերմ հյուրասիրության բազմաթիվ դեպքեր, երբ մեր հայրենակիցները, օրհնանքի խոսքերով հյուրասիրում էին իրենց բնակավայրով անցնող զինված խմբի անդամներին կամ երբ դիրքեր կամ պահակակետեր (մեր պարագայում՝ Բովինան) էին գալիս առանձին քաղաքացիներ ծխախոտով ու սննդամթերքով «ֆիդայիներին» հյուրասիրելու հատուկ նպատակով:

մասի կայանատեղերում ստեղծվում էին դաշտային խոհանոցներ, որոնք մարտիկներին ապահովում էին տաք կերակուրով:

Բժշկական ծառայության սադմնավորումը

Որոշակի անհետաձգելի միջոցներ էին ձեռնարկվել նաև ***բժշկական ապահովման*** ոլորտում: Գրեթե յուրաքանչյուր կամավորական ջոկատ իր կազմում ուներ բուժքույր կամ բուժակ, որոնք վիրավորներին առաջին բուժօգնություն էին ցուցաբերում[34]: Բժշկի կարիք ունեցող վիրավորներն ուղարկվում էին շրջանային հիվանդանոցներ: Ծանր հիվանդները, որոնք հատուկ օգնության կարիք ունեին, ուղղաթիռներով տեղափոխվում էին Երևան:

Սկսած Տող գյուղի ազատագրման գործողությունից՝ Արցախի ռազմաբժշկական ծառայության հիմնադիր Վալերի Մարությանը ռազմական գործողությունների անցկացման ժամանակ դաշտային հոսպիտալ էր բացազատում անմիջականորեն դիրքերի հարևանությամբ: Դա թույլ էր տալիս բժիշկներին արագ բժշկական օգնություն ցուցաբերել վիրավորներին, այդ թվում՝ նաև կատարել վիրահատություններ՝ փրկելով շատ զինվորների կյանքը: Բացի այդ՝ փորձառու բժշկական անձնակազմով հոսպիտալի մոտիկությունը մարտիկներին վստահություն էր ներշնչում, և նրանք ավելի համարձակ էին դուրս գալիս մարտադաշտ: Վալերի Մարությանի կազմակերպած փայլուն բժշկական օգնության շնորհիվ վիրավոր զինվորների մեծ մասը, որոնց մարտական փորձն ուղղակի անհրաժեշտություն էր, վերադառնում էր շարք:

Սպառազինության և տեխնիկայի մատակարարումն ու սպասարկումը

Անդրադառնալով սպառազինության մատակարարմանը՝ Ա. Տեր-Թադևոսյանը հարկ է համարել նշել, որ «Հայաստանի Հանրապետությունից ստացվում էր զենքի և զինամթերքի սոսկ մի փոքր մասն այն ամենից, ինչ պահանջում էր Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը: Հաճախ մատակարարումներն ուշանում էին, կամ էլ ուղարկվում էր անսարք վիճակում գտնվող զինամթերք: Քանի որ զենքը չէր հերիքում, կամավորական ջոկատները օգտագործում էին ինքնաշեն նռնականետներ, կարաբիններ, ձեռքի նռնակներ և ցածրորակ ականներ, որոնք արտադրվում էին ՀՀ-ում և Արցախում: Ինքնապաշտպանության ուժերի համար զենքի և զինամթերքի համալրման հիմնական աղբյուրը ռազմավարն էր: Զենքի և զինամթերքի ամենախոշոր խմբաքանակը հաջողվեց ձեռք բերել 1991 թ. դեկտեմբերին՝ ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ գունդը և 1992 թ. փետրվար-մարտին՝ Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գունդը զինաթափելիս: Մեծ թվով զենք և ռազմական տեխնիկա առգրավվեց նաև Խոջալուի և Շուշիի ազատագրումից հետո:

1991 թ. հոկտեմբերի կռվերը Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությանը հաջողվեց համակարգել հայկական անջատ-անջատ ջոկատների գործողությունները և հասնել այն բանին, որ Պաշտպանության կոմիտեն կանոնավորապես նրանց՝ անկախ քաղաքական կողմնորոշումից, ապահովի զենք-զինամթերքով:

Կապի կազմակերպման առանձնահատկությունները

Հայ կապավորներին հաջողվեց կայուն կապ հաստատել Պաշտպանության կոմիտեի, Ինքնապաշտպանության ուժերի շտաբի, Արցախի շրջանների և ՀՀ ՊՆ-ի միջև: Առաջին փուլում, երբ հակամարտող երկու կողմերն էլ օգտագործում էին խորհրդային ռազմական ռադիոկայանների միևնույն տեսակները, կապավորներն ստիպված էին շարունակ փոփոխել մարտի կառավարման ազդանշանները: Նոր, առավել արդյունավետ ռադիոկայանների ձեռքբերումը ԻՊՈՒԻ հրամանատարությանը հնարավորություն տվեց բարելավել կապի որակը և, համապատասխանաբար, մեծացրեց ռազմական գործողությունների կառավարման արդյունավետությունը:

Ինժեներական ապահովման առանձնահատկությունները

Ինժեներական ապահովման առանձնահատկություններից հարկ է նշել հակառակորդին մոլորության մեջ գցելու նպատակով կեղծ խրա-

[34] Դա պայմանավորված էր նաև մշտական տեղակայման վայրերի բացակայությամբ և ջոկատների թռուցիկ խմբերի մարտավարությամբ գործելու հանգամանքով. շարժունակ (մոբիլ) խմբերը տեղից տեղ էին տեղափոխվում և կատարում տեղային նշանակության խնդիրներ, ինչը սկզբնավորվել էր դեռևս Խորհրդային զորքերի և ՆԳՆ ՆԶ կարգախմբերի հետապնդումներից խույս տալու ժամանակներից: Հաճախ բժիշկները նաև որպես հրաձիգ մասնակցում էին մարտական գործողություններին՝ օգնության հասնելով մարտական ընկերներին:

մատների բավական հաճախակի կիրառումը, ինչպես նաև՝ ականապատնեշները, որոնք շոշափելի վնաս էին հասցնում հակառակորդին: Օրինակ, պատերազմի առաջին փուլում հակառակորդի կորուստների մեծ մասը զրահատեխնիկայով ականի վրա պայթելու հետևանք էր: Ցավոք՝ ականների տեղադրումը ոչ միշտ էր ֆիքսվում ականապաշտների քարտեզներում, ինչի պատճառով դրանց վրա հաճախ պայթում էին ինչպես մեր զինվորները, այնպես էլ խաղաղ բնակչությունը: Ականապատելիս լայնորեն օգտագործվում էին ուղղորդվող գործողության ինքնաշեն ականներ: Ինժեներական ծառայությունը նաև մեծ ուշադրություն էր հատկացնում Ինքնապաշտպանության ուժերի հսկիչ և հրամանատարական կետերի քողարկմանը:

Ամրաշինական կառույցները զորքերի մարտական գործողությունների, դիրքերում և տեղակայման շրջաններում կենսաունակության բարձր մակարդակի ապահովման կարևորագույն միջոց են, բարձրացնում են զենքի և մարտական տեխնիկայի կիրառման արդյունավետությունը, ապահովում ժամանակակից խոցման միջոցներից զորքերի պաշտպանությունը: Պաշտպանության բարձր մակարդակն ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի համակարգ, որի շնորհիվ կրակային միջոցները օգտագործվեն արդյունավետ, կասեցվի հակառակորդի առաջխաղացումը և հասցվեն առավելագույն կորուստներ՝ վճռական հակագրոհի համար ստեղծելով անհրաժեշտ պայմաններ:

Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության կազմավորման ու կայացման մասին ժամանակին գրել ենք[35]: Դրանից հետո ինժեներական ծառայության զարգացման մասին ընդհանուր պատկերացում տալու համար դիտարկել ենք 2005-2008 թթ. գործունեությունը[36]: Ինչպես այդ, այնպես էլ հետագա ժամանակամիջոցներում Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության հիմնական ջանքերն ուղղված են եղել մարտական հերթապահությունում ընդգրկված անձնակազմի անվտանգության ապահովմանը, ինժեներական կառույցների և արգելափակոցների կատարելագործմանը, պլանային ինժեներական աշխատանքների և խնդիրների կատարմանը: Ամրաշինական կառույցների և արգելափակոցների օգտագործումը հաշվարկվել է մարտական գործողությունների կարճ ժամանակահատվածի համար, նրանց պահպանումն երկար ժամանակահատվածում առաջ է բերել մի շարք դժվարություններ, որոնց հաղթահարումը հրատապ էր ՊԲ-ի համար: Այսպես, ՊՇ-ների պաշտպանության տեղամասերի առաջին խրամատի ինտենսիվ մաքրման հետևանքով խրամատի վերևի մասի լայնությունը տեղ-տեղ հասցվել է այնպիսի լայնության, որը կորցրել է անձնակազմի պաշտպանող հատկությունը հակառակորդի հրետանու և հատկապես ականանետների կրակից: Անհրաժեշտ էր սպասարկման աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի ամրաշինական կառույցները պահպանեն իրենց պաշտպանիչ հատկությունները: Հաշվի առնելով ՊՇ-ների իրականացրած մարտական խնդիրները՝ պաշտպանության տեղամասերում առանձնահատուկ տեղ է զբաղեցրել ջոկի դիրքերի ինժեներական կահավորումը: Առաջադրված խնդիրները բխել են հակառակորդի կրակային խոցման աստիճանը բարձրացնելու և առաջնագծի պաշտպանական համակարգը մշտապես կահավորված վիճակում պահպանելու անհրաժեշտությունից:

Փորձը ցույց է տվել, որ յուրաքանչյուր ուսումնական փուլում, եթե խրամաբջիջները, ինչպես նաև հաղորդակցման ուղիները չեն սպասարկվում, ապա դրանք փլվում և շարքից դուրս են գալիս: Առաջին խրամատ (դիրք) տանող հաղորդակցման ուղիները մշտապես պահվել են կահավորված վիճակում: Ուշտրի պատասխանատուն նշել է, որ եթե պահվող կացարանները վերանորոգվել և սպասարկվել են, ապա չպահվող կացարաններն ուշադրությունից դուրս են մնացել, ժամանակին չեն կատարվել սպասարկման աշխատանքները, հերթափոխերին դրանց հանձնում-ընդունումը[37]:

Հրաձգային զումարտակներում հակառակորդի կրակային խոցման համար կարևոր միջոցներ են համարվել ականանետները և հակատանկային միջոցները, որոնց կրակային դիրքերի և ծավալման բնագծերի ինժեներական կահավորումը ևս համարվել է ՊԲ ինժեներական ծառայության կարևորագույն խնդիրներից մեկը:

Հակատանկային միջոցների կիրառման վրա բացասաբար է անդրադարձել լայնածավալ հակատանկային փոսերի և փոս-ճանապարհների կառուցումը, որի հողապատնեշները փակել են տեսանելիությու-

[35] Ինժեներական նոր խնդիրների առաջ՝ Մ. Հարությունյանի հարցազրույցը ՊԲ ինժեներական ծառայության պետ Էդուարդ Արդինյանի հետ, «Մարտիկ», 1 – 7 ապրիլի 1998 թ., հմ. 12 (257), էջ 2:

[36] ***Հարությունյան Մ.,*** Պաշտպանության բանակի ինժեներական ծառայության 2005-2008 թվականների գործունեությունից, «Հայագիտական ուսումնասիրություններ» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), № 7, 2016, Ստ., ՍրՊՀ հրատ., 2017, էջ 139-144:

[37] «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 3:

նը: Ակներևաբար առաջին խրամատի հաղորդակցման ուղիների, ականանետային դասակի կրակային դիրքի, հակատանկային դասակի ծավալման բնագծերի, ղեկավարման կետերի կահավորված վիճակում պահելու և տարեկան սպասարկումներն իրականացնելու համար պահանջվել է անձնակազմի մեծ քանակությամբ ներգրավվում և նյութական միջոցների ծախս:

Ինչպես նշել է ոլորտի պատասխանատուն, տեղերում հրամանատարության ուշադրության կենտրոնից դուրս է մնացել չպահվող դիրքերի, գումարտակի երկրորդ, երրորդ խրամուղիների, հաղորդակցման ուղիների կահավորումը:

ՊԲ հրամանատարի կարգադրության հիման վրա 2008 թ. մարտի 6-ից 20-ն իրականացվել են պաշտպանության տեղամասերի, շրջանների ինժեներական առումով կահավորման աշխատանքներ, որոնց ընթացքում վերակառուցվել և վերափոխվել են խրամաբջիջները, լրակահավորվել են կրակային գոտիները: Մեծածավալ աշխատանքներ են տարվել նաև առաջին դիրքի խրամատների, խրամաբջիջների, հաղորդակցման ուղիների լրակահավորման և բարելավման ուղղությամբ: Բոլոր ՊՇ-ներում, տանկային և մոտոհրաձգային վաշտերի համար կահավորվել են կենտրոնացման շրջանները, կրակի բնագծերը: Հիմնականում բոլոր ամրակառույցների առկայությունն ապահովվել է, տանկերի և ՀՄՄ-ների խրամատները նորմերին համապատասխան փորվել են, բացառությամբ փակ խրամաճեղքերից: Միաժամանակ ՊԲ ԻԾԲ պետը բարձրաձայնել է տանկերի և ՀՄՄ-ների համար կրակային բնագծերում նախատեսված խրամատները վերանայելու անհրաժեշտությունը՝ կապված վերջերս կառուցված հակատանկային փոսերի և փոս-ճանապարհների հետ:

Հրետանային ստորաբաժանումների կրակային դիրքերը և դիտակետերը հիմնականում կահավորվել են և մշտապես լրահամալրվել: Սակայն ստուգումների ժամանակ ի հայտ են բերվել մի շարք թերություններ:

Յուրաքանչյուր տարվա պլանով նախատեսվել են ճանապարհների վերանորոգման և սպասարկման աշխատանքներ: Սակայն, ինչպես նշել է ՊԲ ԻԾԲ պետ, գնդապետ Կ. Թովմասյանը, ճանապարհների վերանորոգման աշխատանքների վրա լուրջ ուշադրություն չի դարձվել, ինչի պատճառով դրանք ժամկետից շուտ շարքից դուրս են եկել:

Կարևորվել է ինժեներական գործիքների պահպանմանը վերաբերող ևս մի հարց: Թեև բոլոր մարտական դիրքերն ինժեներական գործիքներով ապահովվել են, սակայն դրանց պահպանման և շահագործման վրա ստորաբաժանումների հրամանատարները լուրջ ուշադրություն չեն դարձրել, ինչի պատճառով ինժեներական գործիքները ժամանակից շուտ շարքից դուրս են եկել: Ամեն տարի պակասորդի կամ ջարդված գործիքների վերականգնման համար իրականացվել են պահումներ, այսպես՝ 2005 թվականին գանձվել է 291.000 դրամ, 2006 թվականին՝ 790.600 դրամ, 2007 թվականին՝ 204.800 դրամ[38]: Այստեղ հարկ է նշել, որ բոլոր կացարանները ջեռուցվել են հեղուկ վառելիքով, որի շնորհիվ դիրքերում կացինների և տրցների անհրաժեշտությունն այնքան չի զգացվել, ուստի նպատակահարմար է համարվել ինժեներական գործիքների ցանկից հանել կացինները և տրցները, բացի բարձրլեռնային տեղանքում տեղակայված զորամասերից:

Անդրադառնալով արգելափակոցների վիճակին, կարող ենք փաստել, որ ՊԲ պաշտպանական գոտու ականապայթունային և ոչ պայթունային արգելափակոցներից կազմված ինժեներական արգելափակոցների համակարգը մշտապես կատարելագործվել է: Փոս-ճանապարհները պաշտպանության գոտում ապահովել են մեքենաների անվտանգ երթը: Մարտական գործողությունների ժամանակ դրանք օգտագործվելու են որպես հակատանկային արգելք:

Գաղտնիք չէ, որ տարեցտարի տեղադրված ականադաշտերի արդյունավետությունը նվազել է, քանի որ 10-14 տարվա վաղեմություն ունեցող ականները կարող էին շարքից դուրս գալ (ինչպես մասնագետներն են կարծում՝ հակատանկային ականների 10-15 %-ը, իսկ հակահետևակային, առանձնապես ՕԶՄ-72, ՊՕՄԶ-2 տիպի ականների 50-60%-ը)[39]: Բացի դրանից, 2000-2007 թվականներին առաջնային գծից առաջ դիվերսիոն հետախուզական խմբերի հնարավոր ներթափանցման ուղիների վրա և միջդիրքային տարածություններում տեղադրվել են հակահետևակային ականներ (տե՛ս աղյուսակ 1):

[38] «Կռունկ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 192, գործ 1, թ. 6:
[39] Նույն տեղում:

Աղյուսակ 1

Ականների տեղադրման քանակն ըստ թվականների[40]

2000 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.	2006 թ.	2007 թ.
4223	5431	5184	1992	13200	4165	2608

2007 թ. ընթացքում վերանորոգվել է մոտ 90 միավոր տեխնիկա, որից մոտ 50 միավորը՝ կրկնակի և եռակի անգամ: Վերանորոգման ժամկետները ձգձգվել են հիմնականում համապատասխան պահեստամասերի և հանգույցների ձեռքբերման դժվարության պատճառով: Իսկ հաճախակի խափանումների հիմնական պատճառներից նշվել են մեխանիկ-վարորդների և անձնակազմի կողմից ինժեներական տեխնիկայի շահագործման ու պահպանման կանոնների խախտումները: Ինժեներական տեխնիկայի և սպառազինության անհրաժեշտ հաշվառում տանելու, ժամանակին և որակով տեխնիկական սպասարկումներ և նորոգումներ կատարելու գործում 2007 թ. աչքի են ընկել հյուսիսային ուղղությունում գործող առանձին հրաձգային գումարտակներից մեկը և զենիթահրթիռահրետանային զորամասը:

2007 թվականի ինժեներական սարքավորումների կատարելագործման նպատակով իրականացվել են մեծածավալ ինժեներական աշխատանքներ:

Նախորդ տարում չավարտված պլանային ինժեներական աշխատանքները շարունակվել են 2008-ին, այդ տարվա համար նախատեսված պլանային աշխատանքների համար համապատասխան նյութական միջոցների հատկացմանը զուգընթաց:

Ուշագրավ են ՊԲ ինժեներական ծառայության պետի առաջարկները.

- Լուրջ ուշադրություն դարձնել ինժեներական պլանով նախատեսված մարտական դիրքերի քարով երեսապատման աշխատանքներին՝ ղեկավարվելով ՊՆ ինժեներական զորքերի վարչության մշակած

[40] *Հարությունյան Մ.*, Պաշտպանության քանակի ինժեներական ծառայության 2005-2008 թվականների գործունեությունից, «Հայագիտական ուսումնասիրություններ» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), № 7, 2016, Ստ., ԱրՊՀ հրատ., 2017, էջ 142: Կարծում ենք, որ թշնամու օկուպացրած Արցախի տարածքների ականապատման քարտեզներն օկուպանտներին հանձնելով ՀՀ կոլաբորացիոնիստական (ի վնաս Հայաստանի՝ թշնամու հետ համագործակցող) իշխանությունները ոտ ոչինչ են դարձրել հրապարակվող տեղեկությունների գաղտնիությունը:

ուղեցույցով և առանձնահատուկ ուշադրություն դարձնելով խրամատների և կրակի գոտիների կահավորմանը:

- Տանկային և մոտոհրաձգային ստորաբաժանումների կրակի ծավալման բնագծերը կահավորել համակարգված՝ հաշվի առնելով կառուցված հակատանկային փոսերի հողապատնեշները և սահմանափակ զորաշարժի ճանապարհները:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հակահետևակային բեկորային ականները (ՕՋՄ-72, ՊՕՄՋ-2) ժամանակի ընթացքում օբյեկտիվ պատճառներով շարքից դուրս են գալիս, նպատակահարմար է օգտագործել միայն մարտական գործողությունների վարման կամ էլ սպառնալից ժամանակահատվածում: Ներկայումս ականադաշտերի տեղադրման համար օգտագործել միայն հակահետևակային ֆուգասային (ՊՄՆ, ՊՄՆ-2, ՊՄՆ-Է, «Կայծակ») տիպի ականներ:

Այսպիսով, ՊԲ ինժեներական ծառայությունը 2005-2008 թթ. կատարել է պլանային և հրատապ միջոցառումները՝ նպաստելով ՊԲ մարտունակությանը, դիրքերում մարտական հերթապահություն տանող անձնակազմի անվտանգության բարձրացմանը և ամրաշինական կառույցների կատարելագործմանը: Սակայն, ցավով պետք է նշենք, որ հետագա տարիներին ինժեներական աշխատանքները սկսել են նկատելիորեն հետ մնալ ՊԲ պաշտպանական բնագծերի սարքավորման և անձնակազմի անվտանգության ապահովման համար անհրաժեշտ պահանջներից, ինչի մասին են վկայում 2020 թ. պատերազմական ու միջազգային ահաբեկիչների համատեղ ագրեսիային դիմագրավելու ժամանակ, ի շարս այլ ոլորտների, նաև ինժեներական ապահովման ասպարեզում ի հայտ եկած անթույլատրելի թերությունները:

Ռազմական գործողությունների նախապատրաստման ռազմավարությունը

Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը մանրակրկիտ նախապատրաստում էր յուրաքանչյուր գործողություն: Նախապատրաստությունն սկսվում էր հակառակորդի ուժերի և միջոցների, հրամանատարական կետերի և հաղորդակցման ուղիների հետա-

խուզությամբ: Դրանից հետո ստեղծվում էր տեղանքի մանրակերտը[41] (մակետ), որի, ինչպես նաև՝ քարտեզների վրա մանրակրկիտ մշակվում էին առաջիկա գործողության մանրամասները: Ջոկատների հրամանատարները բազմիցս տեղանքի հետախուզություն էին անցկացնում ցերեկային և գիշերային ժամերին:

Ըստ Ա. Տեր-Թադևոսյանի՝ ԻՊՈՒ հրամանատարությունը շուտով նկատեց, որ մշտապես տեղի է ունենում տեղեկատվության արտահոսք, և հակառակորդն արագ ու պատեհաժամորեն տեղեկանում է մեր ծրագրերի մասին: «Դա կարող էր միայն մեկ բան նշանակել,- համոզված էր խորհրդային բանակի գնդապետը,- հակառակորդը մեր շրջանում գործակալ ունի, որը հավաքագրվել է դեռևս խորհրդային ժամանակներում և աշխատում է աղրբեջանցիների համար: Դրա համար էլ առաջիկա գործողության ամենակարևոր մանրամասները գիտեին ընդամենը մի քանիսը, մյուսները միայն իրենց ստորաբաժանումներին վերաբերող տեղեկատվությունն էին ստանում»[42]:

Մարտական խնդիրներ առաջադրելիս հրամանատարությունը հաշվի էր առնում ջոկատների և նրանց հրամանատարների պատրաստվածության տարբեր աստիճանները և պատասխանատվության տարբեր մակարդակները, և ամենապատասխանատու առաջադրանքները տրվում էին ամենահուսալի և փորձառու ջոկատներին:

1991 թ. հուլիսից մինչև 1992 թ. հուլիս ընկած ժամանակամիջոցում Արցախի ինքնապաշտպանության ուժերի կայացման գործընթացը գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը բաժանել է երեք փուլերի.

Առաջին փուլ՝ 1991 թ. հուլիսից մինչև հոկտեմբերը տեղի էր ունենում Ինքնապաշտպանության ուժերի՝ տարբեր քաղաքական կողմնորոշում ունեցող ջոկատների աստիճանական մերձեցումը: Դա հնարավորություն տվեց հոկտեմբերին միավորել մի քանի ջոկատների ուժերը և անցկացնել Տող գյուղի ազատագրման գործողությունը:

[41] Եթե չենք սխալվում՝ 1-ին անգամ այն պատրաստվեց 1992 թ. ձմռանը, Ստեփանակերտի օդանավակայանի և Խոջալուի ազատագրման ժամանակ:

[42] *Тер-Тадевосян А.,* Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 560: Այս պնդումը, մեր կարծիքով, դավադրությունների տեսության ժանրից է: Արտահոսքն, ըստ երևույթին, տեղի էր ունենում որոշում կայացնողների ու խորհրդակցության /պլանավորման հավաքների հենց իսկ մասնակիցների բերանբացության պատճառով, որոնք իրենց ընտանիքներում կամ ընկերական շրջապատում գլուխ էին գովում, ինչի պատճառով գաղտնիք-լուրը կայծակնային արագությամբ տարածվում էր: Բերանբացության ախտավոր շքահանդես էր նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի սանձազերծած լայնածավալ ագրեսիայի 44 օրերին, ինչն էլ թշնամու հաջողությանը նպաստած գործոններից էր:

Երկրորդ փուլ՝ 1991 թ. դեկտեմբերին ջոկատների հրամանատարների ու մարտիկների մեծ մասն արդեն տիրապետում էր ռազմական գործի այբուբենին և փորձ էր ձեռք բերել, ինչը հնարավոր էր դարձնում անցկացնել առավել լայնածավալ ու բարդ գործողություններ:

Երրորդ փուլ՝ բացի արդեն գոյություն ունեցող առաջին և երկրորդ վաշտերից՝ սկսեցին կազմավորվել կանոնավոր վաշտեր: Կամավորական ջոկատների հիման վրա ձևավորվեց 3-9 վաշտ: 7-րդ, 8-րդ և 9-րդ վաշտերից կազմավորվեց գումարտակ՝ կապիտան Յուրի Հովհաննիսյանի հրամանատարությամբ, որին հանձնարարվեց Ստեփանակերտի և Շուշիի միջև տիրապետող դիրք գրավող, այսպես կոչված՝ «26-ի» բարձունքների պաշտպանությունը[43]:

Տեղին ենք համարում ընդմիջարկել անվանի զորավարի վերլուծական շարադրանքը, որպեսզի հատկանշենք որևէ հակասության բացակայությունը վերոհիշյալ և Պաշտպանության բանակի կազմավորման մեր առաջարկած պարբերացումների միջև: Ինչպես հայտնի է, ՊԲ կազմավորման պատմությունը մենք բաժանել էինք չորս փուլերի՝ հիմք ընդունելով իրավաքաղաքական համապատասխան որոշումները և դրանց իրագործման դինամիկան: Թեև այս խնդրին բազմիցս անդրադարձել ենք, սակայն ավելորդ չենք համարում վերստին, բայց համառոտ ներկայացնել մեր առաջարկած պարբերացումը.

ա) ***1988 թ. - 1992 թ. փետրվարի 24:*** Հիմնականում տարերայնորեն, իսկ արդեն 1991 թ. ամառային ռազմարշավի ընթացքում կազմակերպված ու նպատակասլաց կերպով կազմավորվել են կամավորական ու ինքնապաշտպանական ջոկատներ և աշխարհազորայինների խմբեր, որոնք մարտերի բովում թրծվել և համապատասխան մարտական փորձ են ձեռք բերել, հընթացս լուծել սպառազինության և այլ հրատապ հարցեր, ստեղծել անհրաժեշտ հիմքեր կանոնավոր ստորաբաժանումների (վաշտերի) սաղմնավորման համար:

բ) ***1992 թ. փետրվարի 24 - օգոստոսի 14:*** Տարերայնորեն ձևավորված կամավորական ջոկատներին պետականորեն շնորհվել է համապատասխան կարգավիճակ: Մասնավորապես, ԼՂՀ ԳԽ նախագահության որոշմամբ ԼՂՀ ԻՊՈՒ ճանաչումը դարձել է ԻՊՈՒ-ի ստեղծման մեկնակետ: Թեև ինչ որ մի տեղ այդ որոշումը կարող է նաև որպես իրողությունների սոսկական արձանագրման տպավորություն թողնել,

[43] *Տեր-Թադևոսյան Ա,* Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

բայցևայնպես անհնարին է անտեսել հարցի իրավաբանական ու բարոյահոգեբանական կողմերը, որոնցով կարելի է պայմանավորել հետագա մարտական գործողությունների հաղթական ելքը:

գ) ***1992 թ. օգոստոսի 14 - 1993 թ. նոյեմբերի 10:*** Այս ժամանակահատվածը բնորոշվում է որպես ԻՊՈՒ-ի կազմավորման նոր փուլ: Մասնավորապես, ԻՊԿ նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանագրով անցում է կատարվել ԻՊՈՒ-ի կազմակերպական-հաստիքային նոր կառուցվածքի, վերակազմակերպվել են կանոնավոր ստորաբաժանումները (գումարտակներ, դիվիզիոններ), ինչպես նաև կազմավորվել են Պաշտպանական շրջաններ, որպես՝ ավելի խոշոր ռազմական միավորումներ: Այս համատեքստում ակներև է դարձել տարածում գտած ու գրեթե համընդհանուր ընդունելության արժանացած, սակայն, ոչ ճիշտ կարծիքի անհիմն լինելը, թե ՊԲ-ն իբր ստեղծվել է 1992 թ. սեպտեմբերի 1-ին: Փաստորեն օգոստոսի 14-ին ԻՊԿ նախագահի համապատասխան հրամանագրի կենսագործման երկար ու դժվարին ճանապարհին սեպտեմբերի 1-ը մյուս օրերից առանձնացել է լոկ նրանով, որ ամսվա սկիզբն էր, ուստի նոր հրամանագրերը գրվել և զինառճիկները հաշվարկել են հենց այդ օրվանից:

դ) ***1993 թ. նոյեմբերի 10 - 1994 թ. հունվարի 4:*** Այս փուլը ՊԲ-ի, որպես՝ ժամանակակից բանակի, ստեղծման ելակետային ժամանակահատվածն է: Ավելի կոնկրետ՝ 1993 թ. նոյեմբերի 10-ը սահմանվել է որպես Ինքնապաշտպանության ուժերը ՊԲ-ի վերակազմավորելու սկիզբ, իսկ 1994 թ. հունվարի 4-ը, երբ ԼՂՀ ՊՊԿ նախագահը հաստատել է ՊԲ-ի կառուցվածքը՝ իբրև ՊԲ-ի ստեղծման ավարտ:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ արդեն գիտական շրջանառության մեջ են և պատմագրության սեփականությունն են դարձել Արցախի զինված ուժերի կազմավորման ու մարտավարության բազմաթիվ հիմնահարցեր: Դրանցից կարելի է հատկանշել կամավորական և աշխարհազորային ջոկատների կազմավորման շարժառիթները, Ինքնապաշտպանության ուժերին պետական կարգավիճակ շնորհելու մասին ԼՂՀ ԳԽ 1992 թ. փետրվարի 24-ի որոշման ու ԼՂՀ պաշտպանության խորհրդի գործունեության նշանակությունը, 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության (այնուհետև՝ Ինքնապաշտպանության) կոմիտեի (ԻՊԿ) ստեղծման և նրա գործունեության հիմնական ուղղությունները, «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» ԻՊԿ նա-

խագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանի և կանոնավոր բանակի ստեղծման նախնական փուլի առանձնահատկությունները: Լուսաբանվել են նաև բանակային շինարարության քաղաքական հիմքերը, 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) ստեղծմանը և գործունեության հիմնական ուղղությունները, ապա նաև բանակային ենթակառույցների կատարելագործումը, մարտական փորձի հարստացման և նյութատեխնիկական հիմքերի ստեղծման գործընթացները (1992 թ. սեպտեմբեր-1993 թ. հունվար):

Մեր աշխատանքներում կարևորվել են նաև ԻՊԿ շտաբում մարտերի պլանավորման, հրամանատարներին օգնելու, բանակային կադրերն ակտիվացնելու աշխատանքների արդյունավետության բարձրացման հետևողական ջանքերը, ինչպես նաև զորքերի կառավարման կատարելագործումը, նորաստեղծ ուսումնական կենտրոններում հրամանատարների մարտավարական հմտությունների բազմապատկումը: Առաջին պլան է մղվել ԻՊՈՒ-ն ՊԲ-ի վերակազմավորելու մասին ԼՂՀ ՊՊԿ նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանը: Հայ պատմագրության մեջ դեռ ոչ ոք չի հերքել այն տեսակետը, որ ՊԲ-ի իրավաբանորեն կազմավորման ավարտն ազդարարել է ՊՊԿ նախագահի 1994 թ. հունվարի 4-ի համապատասխան հրամանագիրը[44]:

Այսպիսով, նախկին ԽՍՀՄ ղեկավար մարմինների թողտվությամբ, Ադրբեջանական ԽՍՀ-ի իրականացրած բռնությունների, կողոպուտի ու տեղահանությունների քաղաքականությունը, խորհրդային ներքին զորքերի ու ադրբեջանական ՄՀՆՋ-ի կամայականությունները ԼՂԻՄ-ում, տնտեսական շրջափակումը և նախապատրաստվող ազրեսիայի ահագնացող վտանգը Արցախի հայ ազգաբնակչությանը կանգնեցրին զինված ինքնապաշտպանության դիմելու, ապա և՝ ինքնապաշտպանության ուժեր ստեղծելու անհրաժեշտության առաջ: Սա-

[44] Տե՛ս ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, ***նույնի*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ***նույնի*** Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2000, № 1, էջ 78-87, ***նույնի*** Բանակի և հասարակության միասնությունը՝ պետական անվտանգության ապահովման երաշխիք, «Բանակ-հասարակություն» համաբանակային գիտագործնական կոնֆերանս (զեկուցումներ, ելույթներ), Ս., «Պոլիգրաֆ», 2007, էջ 86-91, ***նույնի*** Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, «Շուշին՝ հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 205-217, ***նույնի*** Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում, հոդվածների ժողովածու, գիրք Ա, Ս., «Դիզակ պլյուս», 2009, ***նույնի*** Պաշտպանության բանակ, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, էջ 549-554 ևն:

կայն զինված կազմավորումներ ունենալու համար անհրաժեշտ էին զենք, զինամթերք, համապատասխան նյութատեխնիկական հենք, հարկ էր լուծել բազմաթիվ կազմակերպական-նախապատրաստական խնդիրներ, ինչը, խորհրդային զորքերի ու ադրբեջանական ՄՀՆՋ-ի համապարփակ օղակման և դաժան վերահսկողության պայմաններում, տեսականորեն անհնար էր: Այդուհանդերձ, հայ ժողովրդի լավագույն զավակների ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ խոր ընդհատակում ձեռնարկել զենքի ու զինամթերքի հայթայթումը, կամավորական ջոկատների ստեղծումը, ինքնապաշտպանության գործի կազմակերպումն ու ղեկավարումը:

Գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը գրում է, որ «փետրվարին սկսվեց Արցախի ինքնապաշտպանության ուժերի առաջին գնդի կազմավորումը՝ մայոր Սեյրան Օհանյանի հրամանատարությամբ: Այդ գնդի կազմում ստեղծվեցին հրետանային դիվիզիոն, հետախուզական վաշտ և այլ ստորաբաժանումներ ու ծառայություններ»[45]:

Այս տեղեկությունն ուշագրավ է Արցախում կանոնավոր ստորաբաժանումների ու զորամասի ստեղծման ժամանակագրության առումով: Ինքնապաշտպանության ուժերի առաջին դեմքի սույն հաղորդումը կարծես թե առարկություն չի ենթադրում, սակայն հաշվի առնելով, որ նրա մոտ պատահում են անճշտություններ և մանավանդ այն փաստը, որ Ստեփանակերտի ՊՇ-ի (գնդի) մոտոհրաձգային գումարտակների վերակազմավորումը նախատեսված էր 1992 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, իսկ մայոր Ս. Օհանյանն այդպես էլ չի ստանձնել իր պաշտոնը, կարելի է ենթադրել, որ խոսքն ընդամենը մտադրության մասին է, ինչը հնարավոր է եղել իրականացնել ամիսներ անց:

Գեներալը հավաստիացնում է, որ «Ստեփանակերտում տեղակայված գունդ ստեղծելուց բացի՝ աշխատանք էր տարվում Արցախի շրջաններում գործող կամավորական ջոկատները միասնական հրամանատարության և Պաշտպանության կոմիտեի ենթակայության ներքո միավորելու ուղղությամբ: Շահումյանի շրջանում Շահեն Մեղրյանի հրամանատարությամբ արդեն իսկ գործող խմբից բացի՝ կազմավորվեցին Մարտակերտի (հրամանատար՝ Վազիֆ Գալստյան), Ասկերանի (հրամանատար՝ Վիտալի Բալասանյան), Մարտունու (հրամանատար՝ Մոնթե Մելքոնյան) և Հադրութի (հրամանատար՝ Մանվել Գրիգորյան) զորախմբերը»[46]:

Մ. Գրիգորյանի հրամանատարությամբ կամավորականների մասնակցությունը Հադրութի շրջանի, հատկապես Ուխտաձորի ուղղության պաշտպանությանը, ակներև է: Սակայն, ամբողջ շրջանի մասշտաբով նրա հրամանատարությամբ գործող ստորաբաժանումն ուներ աջակցող դեր, իսկ տեղի ինքնապաշտպանական ուժերը մարտական խնդիրներ էին կատարում Արմեն Գասպարյանի, Վրեժ Գրիգորյանի, ինչպես նաև Արթուր Աղաբեկյանի և այլոց հրամանատարությամբ[47]:

Ա. Տեր-Թադևոսյանի գնահատմամբ՝ «թեև ջոկատների մեծ մասի հրամանատարները կադրային զինվորականներ չէին, նրանք շատ արագ յուրացրին ռազմական գործի այբուբենը և անհրաժեշտ փորձառությունը ձեռք բերելուց հետո դարձան հմուտ հրամանատարներ»: Այդպիսի հրամանատարների շարքում նա առանձնացրել է Լեոնիդ Ազգալդյանին, Մոնթե Մելքոնյանին, Յուրի Հովհաննիսյանին, Աշոտ Ղուլյանին, Վարդան Ստեփանյանին, «որոնք այջի էին ընկնում գրագետ գործողություններով, իսկական հայրենասիրությամբ և բարոյական բարձր սկզբունքներով»[48]:

Այդ ժամանակամիջոցում Ինքնապաշտպանության ուժերի կայացման գործում գեներալը հատկանշել է նաև այնպիսի կադրային սպաների նշանակալի ավանդը, ինչպիսիք էին գեներալ-մայոր Գուրգեն Դալիբալթայանը և Արտուշ Հարությունյանը, գնդապետ Լեոնիդ Մարտիրոսովը, փոխգնդապետներ Ֆելիքս Գզոդյանը և Դանիելիկ Բադդասարյանը, մայորներ Սեյրան Օհանյանը, Վալերի Չիթչյանը և Աշոտ Խաչատրյանը, կապիտան Արթուր Սիմոնյանը և այլք: «Բնատուր»-հրամանատարների և կադրային սպաների ջանքերի միաձուլումն էր հենց, ըստ Ա. Տեր-Թադևոսյանի, որ թույլ տվեց շատ կարճ ժամանակում ստեղծել Արցախի ինքնապաշտպանության մարտունակ ուժեր, որոնք հաջողությամբ դիմակայեցին հակառակորդին: Այս հանգամանքը կա-

[45] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 560-561:

[46] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

[47] Հմմտ. ***Հարությունյան Մ.,*** Արցախի զինված ուժերի ռազմավարության մասին, Նորակազմ (չճանաչված) պետությունները պատերազմից հետո. խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան, Ս., «Դիզակ պլյուս», 2021, էջ 55-56:

[48] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 561:

րելի է համարել ընդհանրապես ՀՀ զինված ուժերի կազմավորման առանձնահատկություններից մեկը:

Մինչև 1992 թ. աշնանային ռազմարշավը կանոնավոր բանակ կազմավորելու, մարտական գործողությունների պլանավորման ու դեկավարման առանձնահատկությունները ներկայացրել ենք այդ գործընթացների անմիջական ղեկավարի ու պատասխանատուի վերլուծությունների հիման վրա: Սակայն, հետագա փուլերի վերաբերյալ նմանօրինակ վերլուծությունները կամ ավելի ճիշտ՝ անդրադարձները ավելի ընդհանրական ու դրվագային բնույթ են կրում, ուստի հիմք ենք ընդունել որ միայն դրանք, այլև մեր երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները:

1992 թ. ամառային ռազմարշավի ժամանակավոր անհաջողություններից համապատասխան հետևություններ կատարելով, մի շարք անհետաձգելի միջոցառումներ են ձեռնարկվել պետական իշխանության ու կառավարման մարմինների, ինչպես նաև ինքնապաշտպանության համակարգի և հրամանատարության կենտրոնացման, ուժերի ու միջոցների համախմբան ուղղությամբ, ինչը տվել է իր դրական արդյունքները: ԻՊՈՒ նոր կազմակերպական-հաստիքային կառուցվածքի անցնելուց, այսինքն՝ բանակային ենթակառույցների, պաշտպանական շրջանների ձևավորման աշխատանքներ ձեռնարկելուց հետո, հնարավորություն է ստեղծվել դիմագրավելու հակառակորդի աշնանային լայնածավալ հարձակումներին, համառ պաշտպանական մարտերում հյուծելու նրա ուժերը և դրանով՝ նախադրյալներ ստեղծելու բռնազավթված բնակավայրերի ազատագրման, ԼՂՀ տարածքային ամբողջականության վերականգնման համար: 1992 թ. աշնանային ռազմարշավը դարձել է նախորդած ժամանակամիջոցում կարևոր ձեռնարկումների յուրօրինակ փորձաքննությունը:

Սեպտեմբերի 4-ին իրականացվել է Ինքնապաշտպանության ուժերի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի բարեփոխումից հետո առաջին ռազմագործողությունը Ասկերանի շրջանի դեռևս 1992 թ. հունիսի 12-ին բռնազավթված մի շարք բնակավայրերի ու Մարտունու շրջանի հետ կցվածքն սեպված Աբդալ և Գյուլաբլու գյուղախմբի թշնամական կրակակետերը վնասազերծելու նպատակով: Այդ ռազմագործողության հաջող ելքը լուծել է մի շարք խնդիրներ. վնասազերծվել են ԼՂՀ սահմանամերձ թշնամական կրակակետերը, ազատագրվել են Ասկերանի շրջանի գյուղերը, թշնամուց առգրավված ռազմավարի

հաշվին լրացվել է ԻՊՈՒ զինանոցը[49], վերահսկողության տակ են առնվել մարտավարական կարևոր նշանակության բարձունքներ ու ամրապնդվել են ԻՊՈՒ ստորաբաժանումների դիրքերը, իսկ թշնամին վերջապես զգացել է Արցախի պաշտպանների վերականգնվող ուժը: Այն բարոյահոգեբանական լիցքեր է հաղորդել մի շարք ձախողումներից հուսալքվածներին, ամրապնդել է հավատը սեփական ուժերի նկատմամբ: Սեպտեմբերի 4-ի ռազմագործողությունը, հատկապես Աբդալի և Գյուլաբլուի վնասազերծումը, աղրբեջանական հրամանատարության ուշադրությունը գրավել է Մարտունու շրջանի վրա: Հակառակորդը զգացել է, որ այս գոտում ուժ կա և ապարդյուն փորձել է այդ տեղով ԻՊՈՒ պաշտպանական բնագծի ճեղքում կատարել: Սեպտեմբերի 5-ին հակառակորդը գրոհ է ձեռնարկել Աբդալի և Գյուլաբլուի ռազմական հենակետերը գրավելու մտադրությամբ: Հայկական դիրքերը հրթիռակոծվել են ռազմական 5 ուղղաթիռներից: Թշնամին մարտի է հանել 16 միավոր զրահատեխնիկա: Անընդհատ գործել է հրետանին: Մարտունու ՊՇ հրամանատար Մ. Մելքոնյանի, գնդապետ Հ. Հարոյանի, Ասկերանի ՊՇ հրամանատար Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, հայ մարտիկները իսկական ջարդ են տվել նախահարձակ թշնամուն: Հատկապես տպավորիչ էին կանոնավոր ստորաբաժանումների մեջ համախմբված հայ ազատամարտիկների ու կամավորականների անհատական խիզախությունն ու զանգվածային հերոսությունները, որոնք անվիճելի առավելություն էին տալիս սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով ու կենդանի ուժով գերակշռություն ունեցող հակառակորդի նկատմամբ: Զրահատեխնիկայի հարվածային ուժի շնորհիվ աղրբեջանցիներին հաջողվել էր հասնել մինչև Վարազաբուն, սակայն հայ մարտիկներն ընդամենը երկու ժամում ստիպել են նրանց դիմել փախուստի՝ մարտադաշտում թողնելով տանկեր (շարքից հանվել ու առգրավվել է 9 միավոր, այդ թվում՝ 6 տանկ, 2 ՀՄՄ, 1 տանկային քարշակ), զենք ու զինամթերք, տասնյակ դիակներ: Սեպտեմբերի 6-ի կեսօրին հակառակորդը հարձակվել է Ճարտարի ու Մաճկալաշենի ուղղություններով, միաժամանակ կատաղի հրթիռահրետակոծության

[49] Հատկանշելի է, որ ԻՊՈՒ-ի սպառազինության մատակարարման դժվարությունները՝ կապված ներկրման ու թանկ նստելու հետ բացառաբար էին ազգում հարձակողական գործողություններ իրականացնելու վրա, մանավանդ՝ ծախսի պլանավորման ժամանակ, մինչդեռ ռազմավարական զինամթերքը ավելի արագ և առանց տնտեսելու մտահոգության ծառայում էր հակառակորդի նոր կրակակետերը վնասազերծելու կամ լրեցնելու գործողությունների հաջող իրականացմանը:

ենթարկելով Գյուլաբլուի հայկական պաշտպանական դիրքերը: Հայ մարտիկները հետ են մղել թշնամու բոլոր գրոհներն ու անսասան են մնացել իրենց դիրքերում: Մաճկալաշենի ու Ճարտարի մատույցներում թողնելով 30 դիակ և ռազմական տեխնիկա՝ թշնամին ստիպված նահանջել է: Սեպտեմբերի 7-ին Ֆիզուլիի շրջանի Ներքին Դիվանալար գյուղում տեղաբաշխված հակառակորդը հրետանային նախապատրաստությունից հետո, նոր հարձակում է ձեռնարկել Մաճկալաշեն, Սոս և Ճարտար գյուղերի ուղղությամբ՝ մարտադաշտ նետելով 8 միավոր զրահատեխնիկա և մի քանի հարյուր զինվոր[50]: Առաջանալով Մաճկալաշենի տեղամասում՝ թշնամին միտված է հայկական ստորաբաժանումների պաշտպանության խորքը և գրավել կարևոր բարձունքներից մեկը: ԻՊՈՒ մարտիկները կասեցրել են հակառակորդի առաջխաղացումը և, ապա, ստիպել նրան հետ քաշվելու՝ մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ[51]:

ԼՂՀ Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Ս. Սարգսյանին հասցեագրված մարտական զեկուցագրում, որը ստորագրել էին գնդապետ Հ. Հարոյանն ու Մարտունու ՊՇ հրամանատար Մ. Մելքումյանը, մասնավորապես կարդում ենք. «Մարտական խնդիրը լիովին կատարված է: Մարտերի ընթացքում հակառակորդից առգրավվել են 2 տանկ, 3 թնդանոթ, մեծ քանակությամբ զինամթերք (ավտոմատների, գնդացիրների փամփուշտ, տանկի արկ): Ոչնչացվել են մոտ 50 հետևակային, երկու տանկ, մեկ զրահամեքենա: Մեր կողմից տեխնիկայի կորուստներ չեն եղել, մեկ ազատամարտիկ զոհվել է, 14-ը՝ վիրավորվել: Մարտական գործողությունների ժամանակ արիությամբ աչքի ընկած սպաներին ու զինվորներին ներկայացնում եմ պարգևատրման: Մարտի ժամանակ տանկեր են ոչնչացրել կապիտան Սերգեյ Լիտվինովը, կապիտան Ալեքսանդր Կոշելը: Մաճկալաշենի վրա կատարված հարձակման ժամանակ (սեպտեմբերի 6-7-ին) Մաճկալաշենի և Սոսի հրամանատարները՝ Արմեն Մելքումյանը և Մովսես Պետրոսյանը, ինչպես նաև Մաճկալաշենի գումարտակի անդամները ընդհանրապես, շատ քաջ և հերոսաբար կռվեցին»[52]: Սեպտեմբերի 17-ին հակառակորդի մի

[50] ***Հարությունյան Մ.,*** Մարտական գործողությունները 1992 թ. սեպտեմբերին, ԱրՊՀ «Գիտական տեղեկագիր», № 1(4), Սւռ., 2001, էջ 109-117:

[51] Այդ մարտերի մասին ավելի հանգամանալից տե՛ս ***Հակոբյան Գ.,*** Սոսի արծիվները (ազատամարտիկի հուշեր), «Գանձառ» տարեգիրք, № 13 (155-166), 2019, Շուշի, «Գանձառ» գիտական կենտրոնի հրատ., 2020, էջ 35-65:

[52] Զեկուցագիրը պահվում էր ՊԲ № 35383 զորամասի օպերատիվ բաժնում:

մեծ խմբավորում, 8 միավոր տանկերի ու զրահամեքենաների աջակցությամբ, Մարգիլլուի ռազմական հենակետից հարձակման է անցել Բերդաշեն գյուղի ուղղությամբ: Երեք ժամ տևած մարտից հետո թշնամին հետ է շպրտվել, մարտադաշտում թողնելով 2 տանկ և 30 զինվոր: Ձախողված թշնամին անզոր կատաղությամբ հրետակոծել է Նորշեն, Աշան, Կարմիր շուկա և Ճարտար գյուղերը:

Այդուհանդերձ, ադրբեջանական հրամանատարության գլխավոր նպատակակետը Լաչինի միջանցքն էր: Զգտելով փակել այն, նա հույս ուներ կտրել ԼՂՀ ԻՊՈՒ-ի թիկունքը և Մարտակերտի ու Մարտունիի օպերատիվ ուղղություններով դուրս գալ Ստեփանակերտի վրա: Սակայն Լաչինի միջանցքը պաշտպանող հայկական կազմավորումները, աննկուն դիմադրությամբ, չեն զիջել ռազմավարական մայրուղին[53]:

Փոփոխական հաջողություններով ընթացած մարտական գործողությունների բնույթից, ծավալից ու սաստկությունից դատելով, կարելի է միանշանակորեն պնդել, որ այսպես կոչված Ադրբեջանի ռազմական ղեկավարության ձեռնարկած լայնածավալ նախահարձակմանը հնարավոր է եղել դիմակայելու միմիայն օգոստոսի 14-ին կազմավորման նոր փուլ թևակոխած ԼՂՀ ԻՊՈՒ-ի, բանակային ենթակառուցվածքների ու ծառայությունների ձևավորման, կենտրոնացված հրամանատարության ու շտաբների համակարգված աշխատանքի, ինչպես նաև հայ զինվորների համընդհանուր հերոսության ու տոկունության, հայրենի հողը պաշտպանելու վճռականության շնորհիվ: Սակայն, քանի դեռ բանակի կազմավորման գործընթացը նոր էր թափ առնում, ապա դրա արդյունքները շոշափելիորեն տեսանելի և ընկալելի էին միայն մի քանի ամիս անց, երբ համառ պաշտպանական մարտերում հյուծելով թվապես ու տեխնիկապես, սպառազինությամբ ու նյութական ռեսուրսներով մի քանի անգամ գերակշռող թշնամական ուժերը, ԻՊՈՒ հրամանատարությունը հող է նախապատրաստել հաջորդ տարվա փետրվարի 5-ի հակահարձակման և հակառակորդի մարտակերտյան, լաչին-քելբաջարյան խմբավորումները ջախջախելու համար:

1992 թ. դեկտեմբերից մինչև 1993 թ. հունվարը բնութագրվում է ռազմական նախաձեռնության համար հակամարտող կողմերի համառ ու անզիջում պայքարով: Ի տարբերություն նախորդ ամսվա, 1992 թ.

[53] ***Հարությունյան Մ.,*** Նորաստեղծ բանակի տված առավելությունները (սեպտեմբեր. 1992 թ.), «Մարտիկ», № 36, 1999 թ., էջ 4:

դեկտեմբերին, այսպես կոչված Աղրբեջանի Հանրապետության և ԼՂՀ-ի հակամարտության գոտում, ընդհանուր առմամբ, հարաբերական անդորր է պահպանվել, ինչը պայմանավորված էր ոչ այնքան խաղաղ կարգավորման գործընթացի աշխուժացումով, որքան աղրբեջանական բանակի ստորաբաժանումների վերախմբավորումներով ու ռազմական նախապատրաստություններով: Դեկտեմբերին իրադրությունը հատկապես լարված էր Մարտունու ճակատում: Նոյեմբերյան մարտերում հյուծվելով և լրիվությամբ սպառելով առաջխաղացման հնարավորությունները Մարտակերտի շրջանում, հակառակորդը դեկտեմբերին փոխել է հարվածի ուղղությունները՝ նպատակ ունենալով հաջողության հասնել կամ Մարտունու, կամ Լաչինի, կամ էլ Հադրութի, և նույնիսկ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ (հատկապես՝ Ջանգեզուրի) շրջաններում: Ստեղծված իրավիճակում ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարությունը Մարտունու ՊՇ ստորաբաժանումների ակտիվ մաններներով ստիպել է հակառակորդին մեծ ուժեր կենտրոնացնել Ժդանովի, Ֆիզուլու շրջաններում՝ դրանով իսկ շեղելով նրա ուշադրությունը գլխավոր հարվածի՝ Մարտակերտի ուղղությունից:

1992 թ. դեկտեմբերին հակառակորդի ամենօրյա հրթիռահարետանային և օդային հարձակումներին են ենթարկվել ոչ միայն ԼՂՀ ԻՊՈՒ պաշտպանական դիրքերը, այլ նաև խաղաղ բնակավայրերը[54]: Այդ հետևահար հարվածների պարբերականությունը, ուժգնությունն ու բնույթը վերլուծելով՝ կարելի է եզրակացնել, որ այդ օրերին Արցախում միահյուսվել էին ճակատ ու թիկունք հասկացությունները, որովհետև թշնամուն թողնված նախկին խորհրդային ռազմական վիթխարի պահեստների անսպառ թվացող հրթիռները, արկերն ու ռումբերը գրեթե ամենուր հասանելի էին, ուստի ԼՂՀ-ի խաղաղ բնակավայրերին սպառնացող հակառակորդի կրակակետերի ու ռազմական հենակետերի վնասազերծումը դառնում էր հրատապ խնդիր: Փաստորեն, հակառակորդի նախահարձակ ու դաժան գործողություններն այլընտրանք չէին թողել:

Այսպիսով, 1992 թ. տարեվերջին աղրբեջանական բանակը փաստորեն լրիվությամբ սպառել էր իր հարձակողական հնարավորությունները: Ըստ չեզոք աղբյուրների՝ 1992 թ. իր իսկ սանձազերծած պատերազմում Աղրբեջանը կորցրել է սպանված 3300 մարդ, այդ թվում՝

[54] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կռաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, Շուշի, «Կռաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 119:

ավելի քան 2000 զինծառայողներ, իսկ հայերի կորուստները կազմել են 1 հազար զինվոր ու սպա և 1,5 հազար խաղաղ բնակիչներ[55]: Ստեղծվել էր ուժերի իրական հավասարակշռություն: Ահա թե ինչու աղրբեջանական կողմը հիմնահարցը բանակցությունների միջոցով լուծելու պատրաստակամություն էր հայտնում, միաժամանակ շարունակելով ռազմական նախապատրաստությունները և ուժի գործադրման սպառնալիքները: Սակայն ոչ հրթիռահարետակոծությունները և ռմբակոծությունները, ոչ այդ սպառնալիքները, ոչ էլ Աղրբեջանի սպառազինությանը պետբյուջեից 80 մլրդ. ռուբլու հատկացումն՝ իր հնարավոր բոլոր հետևանքներով հանդերձ, չէին կարող ընկճել Արցախի ԻՊՈՒ մարտիկներին, որոնց հուժկու հարվածներին անզոր էին լինելու դիմանալ ոչ միայն աղրբեջանցի զինվորները, այլև այլազգի վարձկանները:

Նախապատրաստվելով ձմեռային ռազմարշավին՝ Աղրբեջանի զինված ուժերը ռազմական տեխնիկայի, սպառազինության, նյութական պաշարների գերակշռություն են ստեղծել ռազմաճակատում և 1993 թ. հունվարին հարձակողական գործողություններ ծավալել Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու, ինչպես նաև Լաչինի ուղղություններում: Հունվարի վերջին հիմնական հարվածն ուղղվել է Լաչինի շրջանի հայկական պաշտպանական դիրքերի վրա: Աղրբեջանական զինված կազմավորումները հարձակումներ են գործել երկու՝ հյուսիսային (Քելբաջարի ռազմահենադաշտից) և հարավային (Կուբաթլուի ռազմահենադաշտից) ուղղություններով: Հյուսիսայինում հակառակորդի առավելագույն հաջողությունը Ղոչազ բնակավայրին մոտենալն էր, իսկ հարավայինում՝ Սաֆյան-Գյուլիբերդ գծի վրա վերահսկողություն հաստատելը: Սակայն, հայկական կազմավորումները հունվարի 30-31-ին վերադարձրել են հարավային ուղղության իրենց դիրքերը, իսկ հետո Ղոչազի մատույցներում (հյուսիսային ուղղությունում) շրջապատել ու ոչնչացրել են հակառակորդի մի խոշոր խմբավորում (ավելի քան 400 զինվոր ու սպա), որից հետո Լաչինում երկարատև անդորր է տիրել[56]:

[55] «Содружество», 1995, N 3; Report of Amnesty International Hostages in the Karabakh Conflict. London, April 1993, p. 4; Sku Россия и Закавказье: реалии независимости и новое партнерство/ Под ред. Р. М. Авакова, А. Г. Лисова, ИМЭМО РАН, М., ЗАО «Финстатинформ», 2000, с. 108:

[56] «Անիս» լրատվական գործակալության արխիվ, Լ-030, Աղրբեջանի հեռուստառադիոընկերության և ռադիոյի հաղորդումների ամփոփաթերթիկ, 31.01.1993 թ.:

Այսպիսով, հունվարյան մարտերի ընթացքում հակառակորդը կորցրել է հետևակի երկու գումարտակ, 7 տանկ, 5 ԲՄՊ, 4 ռազմական ինքնաթիռ և 1 մարտական ուղղաթիռ, մարտադաշտում թողել մեծ քանակությամբ հրազեն, զինամթերք և այլ նյութական պաշարներ, ԼՂՀ ՊՊՈՒ զորամասերն ու ստորաբաժանումները, հակագրոհների ժամանակ կայծակնային և ուժգին հակահարվածներ հասցնելով, կասեցրել են մի քանի անգամ գերակշռող հակառակորդի ճնշումը, անառիկ պահել վերահսկողության տակ առնված դիրքերը և պաշտպանական հյուծիչ մարտերում հաջողությամբ լուծել առաջադրված մարտական խնդիրները: Այս առումով աչքի են ընկել հատկապես Ասկերանի և Մարտակերտի շրջանների մարտիկները, Լաչինի միջանցքի, Կիչանի, Փառուխի, Ուրյանասարի պաշտպանները[57]: 1993 թ. հունվարին, մարտերի բովում թրծվել ու շարունակել են կազմավորվել ԼՂՀ ՊՊՈՒ զորամասերն ու ստորաբաժանումները: ԻՊԿ շտաբի կողմից աշխատանքներ են տարվել մարտերի պլանավորման և կազմակերպման գործում հրամանատարներին օգնելու, բանակային կառույցների ստեղծման ու կենցաղային հարցերը լուծելու ուղղությամբ: Հատկապես մտահոգիչ էր այն հանգամանքը, որ զորամասերում ու շտաբներում դանդաղ էր վճռվում մարտական խնդիրների առաջադրման և լուծման հիմնահարցը: Անթույլատրելի էին մանավանդ մարտական զգոնության ու աչալրջության թուլացման դեպքերը[58]: Այնինչ, հրամանատարները պետք է կարողանային միշտ կտրուկ պատասխանել հակառակորդի գործողություններին, այլապես անխուսափելի էին լինելու անտեղի կորուստները, ինչպես նաև հստակ կազմակերպել մարտական ծառայությունը դիտակետերում, ինչը կբացառեր կամ կխոչընդոտեր թշնամուն՝ անպատիժ կրակ տեղալու խաղաղ բնակավայրերի ու մայրաքաղաքի վրա: Այդ խնդիրները լուծելով՝ անհամեմատ կբարձրանար Հայրենիքի պաշտպանության արդյունավետությունը, ինչին էլ ձեռնամուխ են եղել ԻՊԿ շտաբը և ՊՊՈՒ հրամկազմը:

Բանակաշինության ոլորտում ձեռնարկված միջոցները հնարավորություն են տվել ԼՂՀ ՊՊՈՒ-ին 1993 թ. փետրվար-մարտ ամիսներին մարտական գործողություններ ծավալել Մարտակերտի շրջանի տարածքի հետագա ազատագրման և այսպես կոչված Ադրբեջանի զինված

[57] ԼՂՀ ՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամաններ, գործ № 4, թ. 12-14:

[58] «Մարտական թերթիկ» (ԼՂՀ ԻՊԿ օրգան), № 1, 1993 թ.:

ուժերի՝ Լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախման նպատակով, որը բազմիցս Լաչինի միջանցքը փակելու փորձեր էր ձեռնարկել և լուրջ սպառնալիք էր ներկայացնում Մարտակերտի ուղղությամբ մարտեր մղող ՊՊՈՒ հիմնական խմբավորման համար: 1993 թ. հունվարի վերջին և փետրվարի առաջին օրերին ԼՂՀ ռազմաճակատներում տիրող հարաբերական անդորրը պայմանավորված էր պաշտպանական ծանր մարտերում հակառակորդի հարվածային ուժերի նշանակալի հյուծմամբ, ԻՊՈՒ ստորաբաժանումների դիրքերի նպատակասլաց ամրապնդմամբ, նյութական ապահովման ու սպառազինության հիմնահարցերին արդյունավետ լուծումներ գտնելով, որոնք նպաստավոր պայմաններ են ստեղծել հակահարձակողական ակտիվ գործողություններ վարելու համար: Առանց ակտիվ մարտական գործողություններ ծավալելու, ինչը վկայում է դրանք կազմակերպելու՝ աղրբեջանական հրամանատարության անկարողության, ինչպես նաև ներքաղաքական անկայունության մասին, հակառակորդը շարունակել է Հադրութի, Մարտունու և Ասկերանի շրջանների, ՊՊՈՒ ստորաբաժանումների պաշտպանական դիրքերի ու խաղաղ բնակավայրերի հրթիռահրետակոծությունները: Իսկ փետրվար ամսվա մարտական գործողությունները հիմնականում ծավալվել են Մարտակերտի պաշտպանական շրջանում:

ԼՂՀ ՊՊՈՒ ձմեռային ռազմարշավի համար նախատեսվել է հարձակողական ռազմագործողություն՝ երեք ուղղություններով. 1-ին՝ Վաղուհաս-Ջազլիկ-Թալիշ, 2-րդ՝ Չլդրան-Դրմբոն-Կուսապատ-Մարտակերտ և 3-րդ՝ Սրխավենդ-Բաշ Գյունեփայա-Մանիքլու-Ջանյաթաղ-Գյուլաթաղ-Մարտակերտ[59]: Հնգօրյա մարտերի ընթացքում հակառակորդը ԼՂՀ հյուսիսային ռազմաճակատում որպես ռազմավար թողել է 4 Տ-72, 2 ՀՄՄ, 2 «ԳԱԶ-66», 2 «Ուրալ» մեքենաներ, 1 թնդանոթ, 3 քարշակ: Մարտակերտի շրջանում ազատագրվել է 9 բնակավայր[60]: Իսկ ձմեռային ռազմարշավի արդյունքում հակառակորդից խլվել է ռազմա-

[59] Հանգամանալից տես *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Է.00.01-«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2001, էջ 97-100: Ձեռ.՝ *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.- «Կռաճառ» (ԿԳԿ-ի տպագրիչք): Գիրք 5(59-70), 2011, Շ., «Կռաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 123-126:

[60] ԼՂՀ ՊՆԱ, ԻՊԿ նախագահի հրամաններ, գործ հմ. 4, եր. 27բ:

վարական նախաձեռնությունը և վճռական քայլ է կատարվել դեպի հայրենիքի կորված տարածքների վերջնական ազատագրումը:

1993 թ. գարնանային ռազմարշավի ազատագրական մարտերին զուգընթաց, փետրվար-մարտ ամիսներին շարունակվեց ԼՂՀ զինված ուժերի կազմավորումը: Բոլոր աստիճանների հրամանատարներն ու շտաբները քրտնաջան աշխատանք էին կատարում զորամասերի և ստորաբաժանումների հետագա կազմավորման, նրանց համալրման ու լրակազմման ուղղությամբ[61]: Հայրենիքի պաշտպանների շարքերը համալրեցին 18 տարեկան պատանիները, որոնք համապատասխան պատրաստություն էին անցնում Ուսումնական կենտրոնում: Կատարելագործվեց զորքերի կառավարումը, շտաբները սկսեցին ավելի ըմբռնումով մոտենալ ու զբաղվել մարտական գործողությունների կազմակերպման ու կառավարման հարցերով: Բոլոր մակարդակների հրամանատարները զորամասերի և ստորաբաժանումների կառավարման, մարտական գործողությունների կազմակերպման ու լեռնային տեղանքի, դաժան ձմռան պայմաններում մարտը ղեկավարելու փորձ ձեռք բերեցին: Կատարելագործվեց հրետանու, հետախույզների ուսումնական կենտրոններում զորքերի մարտական և սպաների հրամանատարական նախապատրաստումը: Աստիճանաբար ծավալվեց մեկօրյա հավաքների, ինչպես նաև զորամասեր մեկնելու մեթոդով շտաբների ու պաշտպանական ուղղությունների ծառայությունների սպաների նախապատրաստումը: Կատարելագործվեց մարտի ընթացքում տեխնիկայի ու սպառազինության շահագործման, նորոգման ու սպասարկման կազմակերպումը: Շարունակվեց տեխնիկայի ու սպառազինության վերանորոգման բազայի հզորացումն ու կատարելագործումը[62]: Թիկունքային մատակարարման կատարելագործման, զորքերի կարիքներին ու պահանջմունքներին նրա համապատասխանեցման ուղղությամբ նշանակալի աշխատանք կատարեցին ԻՊԿ-ի, պաշտպանական ուղղությունների և զորամասերի թիկունքի ծառայողները: Թերություննե-

[61] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 020, л. 50, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի 1993 թ. փետրվար-մարտ ամիսների մարտական գործողությունների մասին, «Մարտիկ», 04. 1993 թ., № 6:

[62] Տանկերի նորոգման բազայի առկայությունը Ստեփանակերտում ուղղակի փրկություն էր և թույլ էր տալիս հակառակորդից առգրավված կամ խփված տանկերը վերստին մարտադաշտ հանել, լրացնելով ԼՂՀ ԻՊՈՒ զինանոցը ու մասամբ բավարարելով զրահատեխնիկայի պահանջարկը: Դա հատկապես կարևորելի է այն նկատառումով, որ Արցախի ԻՊՈՒ թիկունքային ապահովման ու սպառազինության մատակարարումները դժվարությունների էին հանդիպում տեղափոխման և առբերման սահմանափակ հնարավորությունների պատճառով:

րով հանդերձ, բարելավվեց մարտական գործողությունների բժշկական ապահովման կազմակերպումը:

Նշելով ձեռք բերված հաջողությունները, հայրենի գյուղերն ազատագրող մարտիկների ու հրամանատարների արիությունը, սխալ կլիներ շրջանցել թերությունները: Մարտական գործողությունների կազմակերպման ու անցկացման վերլուծությունը ցույց է տվել, որ երբեմն ցածր մակարդակով էին լուծվում մարտական գործողությունների պլանավորման և հատկապես՝ դրանց համակողմանի ապահովման, փոխհամագործակցության կազմակերպման հարցերը: Մինչև վերջ չէր լուծվել նվաճված բնագծերում ստորաբաժանումների դիրքերի ամրապնդման և հակառակորդի հրետակոծություններից նրանց պաշտպանության կարևոր հարցը[63], ինչի հետևանքով չարդարացված կորուստներ էին լինում: Ցածր մակարդակի վրա էր մարտական գործողությունների ինժեներական ապահովումը, մասնավորապես՝ վատ էին կազմակերպվում ինժեներական հետախուզումը, ճանապարհների ականազերծումը: Դեռևս լուծված չէր պաշտպանության առաջին գծի ինժեներական սարքավորման հարցը: Շատ թերություններ ու բացթողումներ կային հակաօդային պաշտպանությունում, ինչի հետևանքով բաց էր թողնվել մի քանի նշանակետերի խոցման հնարավորությունը[64]:

Մարտակերտի շրջանում ազատագրական օպերացիաներ իրականացնող Արցախի ինքնապաշտպանության ուժերի հակահարվածներին նշանակալի օժանդակություն էին ցուցաբերում օկուպացված Շահումյանի շրջանում պարտիզանական պատերազմ ծավալած ուժերը, որոնք տակավին 1992 թ. հունիսի 15-ին վճռել էին հանգիստ չտալ օկուպանտներին[65]: Այդ կարևոր նախաձեռնությունը ստացել էր նաև

[63] Այսպիսի լրջագույն թերությունների հանդիպեցինք նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ի պատրիջանաթուրքական ագրեսիայի ժամանակ, ինչը դարձավ անձնակազմի մեծաքանակ կորուստների, հետևաբար նաև դիրքերի պաշտպանության ձախողումների հիմնական պատճառը: Ակներևաբար, հակառակորդը բազմաթիվ անգամ մեծացրել էր հրետանու և օդուժի (հատկապես հարվածային ԱԹՍ-ների) խոցման հնարավորությունները, մինչդեռ ՊԲ առաջնագծի ամրաշինական կառույցները հիմնականում մնացել էին 1990-ականների մակարդակին: Իսկ ՊԲ առաջին շարանակարգի ճեղքումից հետո ինժեներական ծառայություններն այդպես էլ ի վիճակի չեղան նոր, շատ թե քիչ պաշտպանունակ ամրաշինական կառույցներ ստեղծել, ինչը դարձավ հակառակորդի մեծաթիվ ուժերի առաջխաղացումը կանգեցնելու ձախողումների պատճառը:

[64] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 020, л. 50, ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի 1993 թ. փետրվար-մարտ ամիսների մարտական գործողությունների մասին, «Մարտիկ», 04. 1993 թ., № 6:

[65] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, По к.у. РТ N 217, начато 6.06.92 ок. 4.08.92 (16.07.1997), с. 41:

հանրապետության օրենսդիր մարմնի աջակցությունը: 1992 թ. հունիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշել էր ի շարս այլ արտակարգ միջոցառումների նաև պարտիզանական պատերազմ սկսել[66]. Շուհումյանի շրջանում և Մարտակերտի հյուսիսային բռնազավթված մասում ծավալված ռազմական գործողությունները, որոնց նպատակն էր անընդհատ տարաշարժմամբ ու թշնամու հաղորդակցությունների, մատակարարման բազաների վրա մշտական ներգործությամբ զավթիչներին ստիպել դուրս գալ բռնազավթված շրջաններից, ինչպես նաև մշտական սպառնալիք ստեղծելով օկուպացիոն ուժերի թիկունքին դրսրացնել ազատագրական մարտեր մղող ինքնապաշտպանության ուժերի հակահարձակողական օպերացիաների իրականացումը: Այդ գործողություններում կարելի է տեսել նաև «հյուծման ռազմավարության» տարրեր, որին հաճախակի են դիմել ինքնապաշտպանության ուժերը 1992 թ. ամառային ու աշնանային, 1992-1993 թթ. և 1993-1994 թթ. ձմեռային ռազմարշավների ժամանակ թշնամու մեծաքանակ կենդանի ուժի և տեխնիկայի ներգրավմամբ իրականացված հարձակումները հետ մղելիս:

1993 թ. ապրիլ ամիսը, դժբախտաբար, բացառություն չկազմեց անձնակազմն ու տեխնիկան սեփական և հակառակորդի ականադաշտերում կորցնելու տեսակետից: Լրիվ հնարավորություններով չգործեց ՀՕՊ-ը: Ունենալով անհրաժեշտ քանակությամբ միջոցներ՝ նա անարդյունավետ կերպով պայքարեց թշնամական նշանակետերի դեմ, ինչից օգտվելով՝ հակառակորդի օդուժը բազմիցս ներխուժեց ԼՂՀ օդային տարածքը և հրթիռառմբային հարվածներ հասցրեց խաղաղ բնակավայրերին[67]: Այս ամենով հանդերձ, բանակի կազմակերպման ու շինարարության նախնական փուլը որակական նոր առաջընթաց ապրեց: Դա հաստատվում է ապրիլ ամսում ձեռք բերված մարտական շոշափելի հաջողություններով: Փետրվարյան մարտական գործողություններում սկզբնավորված բեկումը հետագա զարգացում ստացավ, հակառակորդը կորցրեց ռազմավարական նախաձեռնությունը[68]:

[66] Տե՛ս «Արցախ», № 7, 1992 թ.:

[67] ԼՂՀ ՊՆՆ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 021, л. 55:

[68] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Գեամտ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 137:

Թեև 1993 թ. մայիսին լայնածավալ հարձակողական ռազմագործողություններ չէին վարվում, սակայն տեղային նշանակության մարտերն էլ հստակ պատկերացում էին տալիս թշնամական այն բանակավայրերի ու դրանցում առկա կրակակետերի աշխարհագրության մասին, որոնք վերածվելով ազրեսիայի օջախների՝ վաղ թե ուշ իրենց վրա էին հրավիրելու կամ հրահրելու Արցախի ԻՊՈՒ հակահարվածը, որն անխուսափելի էր նախևառաջ Արցախի հայ ազգաբնակչության անվտանգությունը և նորմալ կենսագործունեությունն ապահովելու նկատառումներով:

Մայիսին շարունակվեց մարտական պատրաստության, անձնակազմերի համապատասխան քանակության ապահովման և ՊԾ-ներում նրանց տեղավորվածության, կենցաղային պայմանների հետագա բարելավման գործընթացը:

Վերլուծելով Աղդամի ռազմագործողության ընթացքում և դրան հաջորդած իրադարձությունները, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ այդ կարևոր հաղթանակը խթանել է մարտական բարդ խնդիրների կատարմամբ ուղեկցվող բանակաշինության գործընթացին հրամանատարների արհեստավարժության բարձրացման, նրանց գործառութային պարտականությունների իմացության ու արդյունավետ կիրառման, ենթակա ստորաբաժանումների ու անձնակազմի գործողությունների ներդաշնակման, առաջադրված բարդ խնդիրների լուծման և այլ առումներով:

ԼՂՀ ՊԲ ստեղծումը

Պաշտպանության բանակի՝ որպես կանոնավոր զինված ուժերի կազմավորման հարցին վերստին հանգամանալից անդրադառնալը հրատապ է Ադրբեջանի ագրեսիայի հետևանքով հարկադրված զինված ինքնապաշտպանության դիմելու՝ Արցախի հայ ազգաբնակչության՝ միջազգային իրավունքով ամրագրված գործողությունների արդարացիության փաստը հանրահռչակելու տեսակետից:

ՊԲ կազմավորման ու շինարարության պատմության վերաիմաստավորումը պահանջված է նաև այն հանգամանքով, որ որոշ հեղինակներ, անտեսելով գիտության արդի նվաճումները, այդ թվում նաև ՊԲ-ի կազմավորման հիմնահարցերի գիտական ուսումնասիրությունների արդյունքները, շարունակում են նախկին սխալները կրկնել և անհարկի շրջանառել, ինչն ակնհայտորեն խոչընդոտում է ճշմարտության որոնումների առաջընթացը ու վնասում տեղեկատվական պատերազմում

հայկական դիրքերի ամրապնդմանը, Ադրբեջանի հետ հակամարտության վերաբերյալ օբյեկտիվ հասարակական կարծիքի ձևավորմանը: Բանակաշինության վերաբերյալ հրատարակված մի հոդվածի բազում սխալներից մեկին՝ Պաշտպանության բանակի կազմավորման վերաբերյալ դրա հեղինակի թյուր պատկերացմանը արդեն անդրադարձ եղել է[69]: Մասնավորապես, հատկանշվել է, որ անտեսելով նախորդ գիտական հետազոտությունները կամ հերթական անգամ անտեղյակություն դրսևորելով՝ պատմաբան Հրանտ Աբրահամյանը գրել է. «Արցախի բանակի ամբողջական կազմավորման գործընթացը ավարտին հասավ այդ նույն թվականի (1992) սեպտեմբերին»[70]: Այս մասին թերևս չխոսվեր, եթե Արցախյան պատերազմին և Պաշտպանության բանակի մարտական ուղուն և կազմավորմանը նվիրված մեր ատենախոսության հրապարակային պաշտպանությանը ներկա չլիներ այդ նույն պատմաբանը և անձամբ լսած չլիներ, թե ինչպես է հայցորդն առաջին անգամ գիտականորեն պարբերաշրջանների բաժանել ՊԲ կազմավորման գործընթացը: Որևէ արդարացում չունի Հ. Աբրահամյանի և այլ հեղինակների կողմից ՊԲ կազմավորմանը և մարտական ուղուն նվիրված նախորդ ուսումնասիրությունների արդյունքների հանիրավի անտեսումը, ինչը հանգեցրել է թյուրիմացության: Մինչդեռ այդ ուսումնասիրություններում փաստորեն ապացուցվել է, որ ՊԲ կազմավորման գործընթացը տևել է 1988 թ. փետրվարից մինչև 1994 թ. հունվարը և ունեցել է 4 փուլ[71]:

[69] ***Հարությունյան Մ.,*** Նորագույն շրջանի ազատագրական պայքարի պատմության խեղաթյուրումների և հարակից այլ հարցերի մասին, «Կռաճա» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3(35-46), Շ., «Կռաճա» գիտական կենտրոնի հրատ., 2014, էջ 215-216:

[70] ***Աբրահամյան Հ.,*** Կամավորական ջոկատներից մինչև Պաշտպանության բանակի ստեղծումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2006, հ. 3, էջ 129: Այդ միտքը հեղինակը կրկնել է նաև ավելի ուշ տպագրած գրքում. Տե՛ս ***Աբրահամյան Հ.,*** Մարտնչող Արցախը, գիրք Գ (1985-2000), Ս., «Դիզակ պլյուս» 2007, էջ 560:

[71] Հմմտ. ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Դասագ. գիտությ. թեկնածուի գիտական. աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., 2001 (պահվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և Հայաստանի ազգային գրադարաններում), էջ 158-159, ***նույնի՝*** Պաշտպանության բանակ: Տե՞ս Դպրոցական ազատագրական պատերազմ. 1988-1994: Ձեռնարկ-ընթերան, 1 հատորով, Ե., ՀՀՀ, 2004, էջ 549-554, ***նույնի՝*** ՀՀ պաշտպանության բանակի կազմավորման պատմությունից, «Ազգ և ժառանգություն» համահայկական երիտասարդական գիտաժողով: Զեկուցումների ժողովածու, Ս., 2006, էջ 93-96, ***նույնի՝*** Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 205-217 և այլն:

Հանդիպում են նաև այնպիսի հեղինակներ, որոնք, անտեսելով Ադրբեջանի Հանրապետության հետ Արցախի Հանրապետության հակամարտության լուծված չլինելը, տեղեկատվային պատերազմում համոզիչ ու աներկբա փաստարկների կարևորությունը, Արցախում պետականաշինության ակներև նվաճումները, փորձում են պետականության կարևոր բաղադրիչը՝ Պաշտպանության բանակը ներկայացնել որպես ՀՀ ՋՈՒ-ի ստորաբաժանումներից մեկը՝ այդպիսով ակամա ժխտելով ՊԲ-ի՝ որպես Արցախում պետականակերտման՝ հանուրի կողմից ճանաչված ամենամեծ նվաճման փաստը: Օրինակ, Հայաստանի Հանրապետությունում բանակաշինության գործընթացն առանձին ուսումնասիրության նյութ դարձրած ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը, անդրադառնալով Մ. Հարությունյանի վերոհիշյալ աշխատությանը, գրել է. «Այն հանգամանորեն ներկայացնում է ԼՂՀ պաշտպանության բանակի կազմավորման գործընթացը, նաև Արցախում ընթացած մարտական գործողությունները: Նման մեկնաբանմամբ, սակայն, կարծես առանձնացվում է Հայոց բանակի կազմավորման միասնականությունը, քանի որ, ըստ էության, Պաշտպանության բանակը Հայկական բանակի կարևորագույն, բայց միայն մի մասն է»[72]: Ավելորդ չենք համարում այս տրամաբանությամբ շինծու և անհիմն մեղադրանք ներկայացնող հեղինակներին պարզաբանելու, որ պատմական գիտությունների թեկնածուի հայցորդիս խնդիրն է եղել ներկայացնելու Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին, ինչն ամենևին չի նշանակում, թե «Հայոց բանակից առանձնացնելու» միտում է դրսևորվել: Անկասկած, ամբողջ Հայկական բանակի պատմության ընդհանրացման հավակնորդը պարտավոր է անդրադարձ կատարել Պաշտպանության բանակի՝ որպես հայկական պետականության առաջնադիրքի պահապանի հավաստի պատմությունը ևս, բայց ահա ՊԲ պատմությունն ուսումնասիրության նյութ դարձրած հեղինակի համար ամենևին պարտադիր չէ մանրամասնել Հայոց բանակի ամբողջական պատմությունը: Բայց ցանկության դեպքում ամեն ոք կարող է տեսնել, որ խնդրո առարկա աշխատությունում ՊԲ կազմավորման գործընթացն ու մարտական ուղին ըստ անհրաժեշտության ներկայացվել է Հայկական բանակի ամբողջական պատմության համատեքստում: 1991-1994 թթ. Արցախում բանակաշինության գործընթացը հնարավորինս ներկայացվել է թե՛ փաստացի և

[72] ***Հովհաննիսյան Ա.,*** Բանակաշինությունը Հայաստանի երրորդ հանրապետությունում, Ե., 2015, էջ 12:

թե՛ իրավաբանորեն: Եթե որոշ ընթերցողներ այդ ամբողջության մեջ չեն տեսնում ակնհայտը, ապա «մեղավոր» են փաստերը, բայց ոչ երբեք դրանց հավատարիմ մնացող ուսումնասիրողը: Իսկ նրանք, ովքեր փաստերի անտեսմամբ փորձում են քաղաքականացնել անցյալը կամ ժողովրդահաճո հայտարարություններով («մածունը սպիտակ է» հանգույնի) սքողել իրենց ոչ գիտական մոտեցումը, ապա նախ ստիպված են պատասխանելու հետևյալ հարցերին՝ ի՞նչ նկատի ունեն «Հայոց բանակ» ասելով, ի՞նչ իրավաքաղաքական փաստերի հիման վրա: Կարծում ենք՝ սկզբունքային պետք է համարել այն մոտեցումը, որ Արցախի պաշտպանության բանակը՝ որպես երկրորդ հայկական պետության կարևոր խորհրդանիշ, գիտական շրջանառության մեջ դնելը անհրաժեշտ փաստարկ կդառնա Լեռնային Ղարաբաղն իբր ՀՀ կողմից «օկուպացվելու», Արցախի պաշտպանության բանակը ՀՀ ՋՈՒ մի ստորաբաժանումը կամ «Հայկական էքսպեդիցիոն կորպուս» ներկայացնելու, հետևաբար հանուն ինքնորոշման իրավունքի իրացման համաժողովրդական պայքարը Ադրբեջանի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հակամարտության նենգափոխելու՝ մեր հակառակորդների ջանքերը չեզոքացնելու համար:

Այդ համատեքստում կարևոր է նաև Արցախի Հանրապետության որպես անկախ պետության ինքնորոշման իրավունքի հիման վրա միջազգային ճանաչմանը հասնելը, իսկ զգացմունքային-հուզական սրացումներով Արցախը ՀՀ մի մարզը հռչակող քաղաքական գործիչների ու հեղինակների վաղաժամ պոռթկումներն ընդամենը «արջի ծառայություն» են հայկական ղիվանագիտության ու քաղաքագիտական մտքի համար[73]:

«Հայկական բանակ» հասկացության՝ որպես ՀՀ ՋՈՒ ու ԼՂՀ ՊԲ ընդհանրական մեկ անվանման օգտագործումը մեջբերված պարբերությունում և հաջորդիվ գիտական համարվել չի կարող, որովհետև ԼՂՀ պաշտպանության բանակի՝ իբրև առանձին պետական կառույցի կարգավիճակը ճանաչված ու արձանագրված է ինչպես ԼՂՀ և ՀՀ իրավաքաղաքական ու ղեկավար փաստաթղթերում, այնպես էլ միջազգային հեղինակավոր կառույցների ու փորձագետների վերլուծություններում[74]:

[73] Տե՛ս ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա., Ավանեսով Հ.,*** Պաշտպանության բանակի կազմավորման հարցը պատ մագրության մեջ (ՊԲ-ի հատուկ քակազմակերպական նոր կառուցվածքի հաստատման 20-ամյակի առթիվ, «Գաճառ» տարեգիրք, Գիրք 8 (95-106), Շուշի, «Գաճառ» գիտական կենտրոն հրատ., 2017, էջ 173:

[74] Տե՛ս, օրինակ, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների զինվորական կոչումների մասին» ԼՂՀ օրենքը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող

Արցախի Հանրապետության պաշտպանության բանակը կազմավորվել, կայացել ու զարգանում է ՀՀ ՋՈՒ հետ ամենաբարձր մակարդակի ինտեգրման հետևողական խորացման ու սերտաճման ուղիով: Կարծում ենք, որ ՀՀ ՋՈՒ կազմի մեջ մտնելու հեռանկարը պայմանավորված է ՀՀ ու Արցախի Հանրապետության համադաշնության կամ հնարավոր դեպքում վերամիավորման տեսլականի կենսագործումով:

Արդեն գիտական շրջանառության մեջ են և պատմագրության սեփականությունն են դարձել բազմաթիվ հիմնահարցեր: Դրանցից կարելի է հատկանշել կամավորական և աշխարհազորային ջոկատների կազմավորման շարժառիթները, Ինքնապաշտպանության ուժերին պետական կարգավիճակ շնորհելու մասին ԼՂՀ ԳԽ 1992 թ. փետրվարի 24-ի որոշման ու ԼՂՀ պաշտպանության խորհրդի գործունեության նշանակությունը, 1992 թ. մարտի 26-ին ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր Պաշտպանության (այնուհետև՝ Ինքնապաշտպանության) կոմիտեի ստեղծման և նրա գործունեության հիմնական ուղղությունները, «Պաշտպանական շրջանային լրակազմի ուժերի ու միջոցների կառուցվածքի մասին» ԻՊԿ նախագահի 1992 թ. օգոստոսի 14-ի հրամանի և կանոնավոր բանակի ստեղծման նախնական փուլի առանձնահատկությունները: Անդրադարձներ են եղել նաև բանակային շինարարության քաղաքական հիմքերին, 1992 թ. օգոստոսի 15-ին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) ստեղծմանը և գործունեության հիմնական ուղղություններին, ապա նաև բանակային ենթակառույցների կատարելագործման, մարտական փորձի հարստացման և նյութատեխնիկական հիմքերի ստեղծման գործընթացներին (1992 թ. սեպտեմբեր-1993 թ. հունվար)[75]:

օրենքների ժողովածու (1994-2001), Ս., «Ոսկիգրաֆ» ՊՓԲԸ, 2001, էջ 121-122, «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» ԼՂՀ օրենքը, «Պաշտոնական տեղեկագիր», 2005, հ. 12, էջ 25-28, Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության արխիվ (ԱՀ ՊՆԱ), Дело с переписки МО и ГШ ВС РА, 14.01-10.09 1995 թ., գործ հ. 3, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կոլեգիայի որոշում (26-27 դեկտեմբերի 1995 թ.), Գույքագրային համար 28, թ. 7, թ. 10 և հաջորդիվ, ***Захаров В.,*** Военное строительство в государствах постсоветского пространства, Рос. ин-т стратегич. исслед., М., РИСИ, 2011, с. 256, ***Քոթանջյան Հ.,*** Անվտանգության քաղաքագիտական պրոբլեմներ. ԽՍՀՄ վերակառուցում-Ղարաբաղ, Հայաստան, Անդրկովկաս-Աֆղանստան, Ե., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2009, էջ 249, ***Քոթանջյան Հ.,*** Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները, Ե., ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2010, էջ 672 ևն, http://www.acus.org/ docs/0101-Strategic_Assessment_Central_Eurasia.pdf (էջ 59, 60-61) ևն:

[75] Տե՛ս ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, ***կույտի,*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, ***կույտի*** Արցախի

Կարևորվել են նաև ԻՊԿ շտաբում մարտերի պլանավորման, հրամանատարներին օգնելու, բանակային կադրերն ակտիվացնելու աշխատանքների արդյունավետության բարձրացման հետևողական ջանքերը, ինչպես նաև զորքերի կառավարման կատարելագործումը, նորաստեղծ ուսումնական կենտրոններում հրամանատարների մարտավարական հմտությունների բազմապատկումը: Առաջին պլան է մղվել ԻՊՈՒ-ն ՊԲ-ի վերակազմավորելու մասին ԼՂՀ ՊՊԿ նախագահի 1993 թ. նոյեմբերի 10-ի հրամանը: Հայ պատմագրության համար ընդունելի է այն տեսակետը, որ ՊԲ-ի իրավաբանորեն կազմավորման ավարտը տեղի է ունեցել ՊՊԿ նախագահի 1994 թ. հունվարի 4-ի համապատասխան հրամանագրով:

Ինքնապաշտպանության նպատակով զինված ջոկատների կազմավորումը Արցախում պահանջված էր նախկին Ադրբեջանական ԽՍՀ մի շարք խոշոր քաղաքներում ու շրջաններում պետականորեն կազմակերպված հայ բնակչության ջարդերից ու տեղահանություններից, ինչպես նաև ԼՂԻՄ բնակավայրերի վրա ավազակային հարձակումներից և էթնիկական զտումներից հետո հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը սպառնացող մարտահրավերները չեզոքացնելու անհրաժեշտությամբ:

Արցախում զինված կազմավորումները, որոնց հիմքի վրա հետագայում ձևավորվել է կանոնավոր բանակ, ստեղծվել են հենց ադրբեջանական զինված կազմավորումների հարձակումներից ինքնապաշտպանվելու նպատակով: Նմանապես, կանոնավոր բանակ ստեղծելը կյանքի պահանջ էր՝ Ադրբեջանի՝ օտարազգի վարձկաններով ու նախկին խորհրդային ռազմական տեխնիկայով ուժեղացված կանոնավոր և զորակոչային բանակի լայնածավալ նախահարձակմանը դիմակայելու, մեր հանրապետության բռնազավթած տարածքներն ազատագրելու նպատակով:

Շուշիի ռազմագործողությունը, ինչպես արդեն նշվել է, փաստորեն առանձին գործող ինքնապաշտպանական ջոկատներից ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի՝ նոր հաստիքակազմակերպական կառուցվածքի անցման և արագ զարգացման նախերգանքն էր: Անկասկած, Շուշիի ազատագրումը կարևոր հանգրվան էր Արցախում կանոնավոր զինված ուժեր ստեղծելու և, ընդհանրապես, ռազմական շինարարության համար: Ոչ հեռու անցյալի վերաիմաստավորման համատեքստում բազմիցս անդրադարձներ եղել են մայիսի 9-ը՝ Շուշիի ազատագրման օրը, նաև ԼՂՀ պաշտպանության բանակի օր հռչակելու հանգամանքներին, պատմական ու իրավական հիմքերին:

Սակայն կյանքը ցույց է տվել, որ անհրաժեշտ է վերստին արծարծել այդ ամենը, որպեսզի ճշմարտությունը հասնի գոնե այն հեղինակներին, որոնք իրենց հորինվածքները որպես «նոր տեսակետ» ներկայացնելու կամ ակնհայտ սխալները քողարկելու նպատակով դիտավորյալ ու միտումնավոր չեն անտեսում նախորդ ուսումնասիրությունների արդյունքները:

Ինչպես հայտնի է Մայիսի 9-ը Հաղթանակի, ԼՂՀ պաշտպանության բանակի և Շուշիի ազատագրման օր է սահմանվել ԼՂՀ նախագահի 1995 թ. դեկտեմբերի 25-ին ստորագրած «ԼՂՀ տոն և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքով[76]: Մայիսի 9-ը նաև Պաշտպանության բանակի օր հռչակելու փաստը բացատրվել է Շուշիի հաղթանակի կարևորության, այդ օպերացիայի գրագետ պլանավորման ու փայլուն կերպով անցկացման, ինչպես նաև առաջին անգամ մի քանի զորատեսակների ներգրավման ու նրանց համագործակցության ապահովման և այլ հանգամանքներով: Հիրավի, Շուշիի ազատագրման ռազմագործողության ընթացքում ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը և կամավորական ջոկատները լուրջ քննություն են բռնել և ապացուցել միասնական լինելու առավելությունը: Այս ամենով հանդերձ, ուսումնասիրողները դեռևս չեն գտել այնպիսի փաստեր, որոնք իրավաբանորեն կհիմնավորեին մայիսի 9-ը ՊԲ ստեղծման օր համարելը: Ընդհակառակը, առկայսր վերհանված բոլոր փաստերը միահամուռ վկայում են, որ ՊԲ կազմավորման համար ելակետ պետք է ընդունել ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին:

Ժամանակին արխիվային նյութերի և իրադարձությունների տրամաբանական զարգացման ու պատճառահետևանքային կապի վրա հեն-

---

ինքնապաշտպանության ուժերի կազմավորումը, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», 2000, հ. 1, էջ 78-87, ***նույնի***, Բանակի և հասարակության միասնությունը՝ պետական անվտանգության ապահովման երաշխիք, «Բանակ-հասարակություն» համաբանակային գիտագործնական կոնֆերանս (զեկուցումներ, ելույթներ), Ս., 2007, էջ 86-91, ***նույնի***, Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, «Շուշին՝ հայոց քաղաքակրթության օրրան», Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, Ե., 2007, էջ 205-217, ***նույնի***, Հայաստան-Արցախ պատմության և արդիականության զուգահեռներում, հոդվածների ժողովածու, գիրք Ա, Ս., 2009, ***նույնի***, Պաշտպանության բանակ, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, Հանրագիտարան, էջ 549-554 ևն:

[76] Տե՛ս «Կռաճար» գիտական կենտրոնի արխիվ, ԼՂՀ օրենքներ, Գործ հ. 4, էջ 23:

վելով՝ տողերիս հեղինակը հիմնավորել է այդ տեսակետը[77]: Մասնավորապես, նա հատկանշել է արխիվային նյութերից հայտնի այն փաստը, որ արդեն 1995 թ. դեկտեմբերի 5-ին ավարտվել էին «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տոն և հիշատակի օրերի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքները, ինչի մասին ԼՂՀ խորհրդարանի քարտուղար տիկին Է. Գաբրիելյանին ծանուցել է ԼՂՀ խորհրդարանի կրթության, գիտության, մշակույթի, առողջապահության, սպորտի և սոցիալական հարցերի մշտական (ժամանակավոր) հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը[78]: Օրենքի նախագծում Պաշտպանության բանակի օր էր նշված հունիսի 7-ը[79]: Հետագա ուսումնասիրությունների և ժամանակի գործիչների հետ հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ հունիսի 7-ն ընտրվել է 1991 թ. այդ նույն օրը Հադրութի շրջանի Օմարձոր գյուղի ազատագրման կապակցությամբ, ինչը համարվել է ինքնապաշտպանական ջոկատների ձեռք բերած առաջին հաջողությունը[80]:

Կարծում ենք, որ այս ընտրության համար պակաս կարևոր դեր չի խաղացել այն ժամանակ ԼՂՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ Ս. Բաբայանի ազդեցությունը: ԼՂՀ խորհրդարանը «ԼՂՀ տոն և հիշատակի օրերի մասին» օրենքի նախագիծն առաջին ընթերցմամբ քննարկել է 1995 թ. դեկտեմբերի 11-ին, ապա հետաձգել հաջորդ օրվան: Իսկ մինչ այդ նախագիծն ուղարկվել էր ԼՂՀ ՆԳ նախարարին, արդարադատության վարչության պետին, վարչապետին, պաշտպանության նախարարությանը, Նախագահին, և ստացվել են համապատասխան առաջարկություններ[81]: Դեկտեմբերի 12-ի քննարկմանը ժամանակավոր հանձնաժողովի նախագահ Ա. Սողոմոնյանը ներկայացրել է ստացված երեք առաջարկությունները. մայիսի 9-ը՝ Նախագահի աշ-

[77] ***Հարությունյան Մ.,*** Շուշիի ազատագրման և ԼՂՀ զինված ուժերի կազմավորման հարցի շուրջ, Շուշին հայոց քաղաքակրթության օրրան: Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, էջ 205-217, տե՛ս նաև՝ ***նույնի,*** Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության գուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք Ա, էջ 152-159:

[78] Արցախի Հանրապետության պետական արխիվ (ԱՀ ՊԱ), ֆ. 254, ց. 4, պ. մ. 16, կ. 2 (ԼՂՀ խորհրդարանի երկրորդ գումարման առաջին նստաշրջան. 1995 թ. դեկտեմբերի 8-26-ի նիստերի սղագրություններ), էջ 15:

[79] Նույն տեղում, էջ 16:

[80] Պատմաբան Հրանտ Աբրահամյանը սխալմամբ կարծում է, թե Տող է Արցախի տարածքում ազատագրված առաջին բնակավայրը (տե՛ս ***Աբրահամյան Հ.,*** Կամավորական ջոկատներից մինչև Պաշտպանության բանակի ստեղծումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 2006, հ. 3, էջ 127):

[81] Արցախի Հանրապետության պետական արխիվ (ԱՀ ՊԱ), ֆ. 254, ց. 4, պ. մ. 16, կ. 2 (ԼՂՀ խորհրդարանի երկրորդ գումարման առաջին նստաշրջան. 1995 թ. դեկտեմբերի 8-26-ի նիստերի սղագրություններ), էջ 6:

խատակազմի կողմից, սեպտեմբերի 3-ը՝ Կառավարության կողմից, հունիսի 7-ը՝ Պաշտպանության բանակի կողմից: Հանձնաժողովի եզրակացությունը հետևյալն էր. քանի որ Պաշտպանության բանակն ինքն էր առաջարկում իր օրը, ուստի պետք է ընդունել հենց հունիսի 7-ը[82]: Սակայն, ԼՂՀ ԳՆ խոսնակ Կ. Բաբուրյանի առաջարկությամբ, ՊԲ օրվա ընտրությունը հետաձգվել է՝ հաջորդ նիստում քննարկելու համար, մինչև առաջարկություններ ներկայացրած կողմերի ընդհանուր հայտարարի գալը:

Արխիվային նյութերի բացը լրացրել են ժամանակի գործիչները: Գնահատելի քարտուղար Է. Գաբրիելյանի և վերոհիշյալ ժամանակավոր հանձնաժողովի նախկին նախագահ Ա. Սողոմոնյանի հետ ճեպազրույցներից պարզ է դարձել, որ ԼՂՀ նախագահի աշխատակազմի առաջարկած օրն ընդունելու համար գլխավոր «փաստարկ» է համարվել տոն և հիշատակի օրերի քանակը հնարավորինս սահմանափակելու նպատակահարմարությունը[83]:

Երբ վերհանել ու գիտական շրջանառության մեջ ենք դրել Պաշտպանության բանակի կազմավորման իրավական թղթապանակը, այդ ժամանակ ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ս. Օհանյանը, ի պաշտպանություն մայիսի 9-ի, հղում է կատարել ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքին, որտեղ սահմանված է, որ զորամասի տարեկան տոնի համար կարող է ամսաթիվ ընտրվել զորամասի պատմության հիշարժան օրերից մեկը՝ կազմավորումը, շքանշանով պարգևատրվելը, Հայրենիքի թշնամու դեմ մղված մարտում տարած նշանակալից հաղթանակը, մարտական հերթապահությունն առաջին անգամ ստանձնելը: Մինչդեռ, ինչպես հայտնի է, հիշյալ կանոնագիրքը ՀՀ Ազգային ժողովի համապատասխան օրենքով հաստատվել է 1996 թ. դեկտեմբերի 3-ին[84], այսինքն՝ Պաշտպանության բանակի օրը ԼՂՀ օրենքով սահմանելուց գրեթե մեկ տարի ուշ: Եթե անգամ Շուշիի ազատագրումը փորձենք դիտարկել «թշնամու դեմ նշանակալից հաղթանակի» տեսանկյունից, միևնույն է, չենք կարող անտեսել «կազմավորման օրը», որն, ի դեպ, կանոնագրքով նախատեսված դեպքերից առաջինն է: Մեր խորին համոզմամբ՝ ՊԲ-ի կազմավորման ուղին իրավական հարթության վրա բավական տեսանելի ուրվագծվում է, թեև մի շարք առանձնա-

[82] Նույն տեղում, էջ 11-12:

[83] Հարցազրույցները կայացել են 2007 թ. ամռանը:

[84] Տե՛ս Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրք, Ե., ՀՀ ՊՆ հրատ., 1997, էջ 1, 252 հավելված 5:

հատկություններից ու օբյեկտիվ պատճառներից ելնելով՝ նրա գաղտնի զարգացումներն իրավաբանորեն ձևակերպվել են բավական ուշ:

Կարծում ենք՝ այլևս անառարկելի է, որ 1992 թ. փետրվարի 24-ը շրջադարձային է եղել ԼՂՀ ԻՊՈՒ կազմավորման համար: Փաստորեն այդ օրը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը պետական կարգավիճակ են ստացել, ինչը թելադրված էր ինչպես նախընթաց զարգացումներով, այնպես էլ առաջիկա կարևոր ռազմաքաղաքական խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մինչև 1992 թ. փետրվարի 24-ը Արցախի տարածքում տարերայնորեն ձևավորված աշխարհազորային կամավորական ջոկատները հաջողությամբ իրականացրել են սահմանների և հանրապետության ներսում գտնվող թշնամական հենակետերին վերձակա հայկական բնակավայրերի պաշտպանության ոչ դյուրին խնդիրը: **Հենց այդ խնդրից է բխել նաև ադրբեջանցիներով բնակեցված այն վտանգավոր կրակակետերի ու հենակետերի վնասազերծման անհրաժեշտությունը, որոնք շրջափակել էին ճանապարհները, ահազակային հարձակումներ էին գործում խաղաղ բնակչության վրա և կողոպտում հանրային ու մասնավոր ունեցվածքը և, վերջապես, պարբերաբար գնդակոծում էին հայկական բնակավայրերը:**

ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության 1992 թ. փետրվարի 24-ի Հ. ՆԽ-0019-1 որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին կարելի է բնորոշել որպես նորաստեղծ հպնրապետության սահմանները հաջողությամբ պաշտպանող աշխարհազորային-կամավորական ջոկատներին պետական ու իրավական աջակցություն, յուրօրինակ խրախուսում և, ամենակարևորը, համապատասխան կարգավիճակի շնորհում:

Այդ պատմական որոշումն ընդունելիս ԼՂՀ ԳԽ նախագահությունը ելնում էր այն իրողությունից, որ Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող ցեղասպանության, կողոպուտի ու բռնության քաղաքականությունը և հայկական գյուղերի զանգվածային բռնատեղահանումը հանգեցրել են Լեռնային Ղարաբաղի շահերը պաշտպանելու կոչված կամավորական ջոկատների ստեղծմանը: ԼՂՀ բարձրագույն օրենսդիր մարմնի նախագահությունը նկատի էր առնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի Հանրապետության հարաճուն զավթողական գործողությունները և, վերջապես, նպատակ է ունեցել հաշվառել զորահավաքային միջոցները և ապահովել հանրապետության պաշտպանությունը:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշել է զինված ջոկատները ճանաչել որպես ԼՂՀ ինքնապաշտպանության ուժեր և դրանք ենթարկել միասնական հրամանատարության: Նկատենք, որ առանձին-առանձին գործող ջոկատների համախմբումը մեկ հրամանատարության ներքո, նրանց ջանքերի համատեղումը, հիրավի, բարդ խնդիրներ էին, որոնց լուծման համար պահանջվեցին մի քանի այլ որոշումներ, հրամանագրեր և բանակաշինության երկարատև գործընթաց:

ԼՂՀ ԳԽ նախագահությունը շրջանների ու քաղաքների գործկոմներին և զինկոմիսարիատներին հանձնարարել է մեկամսյա ժամկետում անցկացնել հանրապետության բոլոր զինապարտների վերահաշվառում և զորակոչային տարիքի քաղաքացիների հաշվառում: Որոշման երկրորդ կետով ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերում ներգրավված զինապարտները համարվում էին զորակոչված: Այնուհետև զինկոմիսարիատներին հանձնարարվում էր ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շրջանային ստորաբաժանումների շտաբների հետ համատեղ կազմակերպել ԼՂՀ պաշտպանության համար զոհվածների, անհայտ կորած և հաշմված անձանց վերահաշվառում[85]:

Ակներևաբար, այս որոշմամբ իրավաբանորեն ձևակերպվել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի պետական կարգավիճակը, իսկ արդեն զինծառայության մեջ գտնվող զինապարտները ճանաչվել են որպես՝ ԼՂՀ զինված ուժեր զորակոչվածներ: ԼՂՀ-ի՝ խորհրդարանական հանրապետության գերագույն մարմնի նախագահության ընդունած որոշումն անկասկած օրենքի ուժ ուներ, հետևաբար ԼՂՀ-ի զինված ուժերի կամ Պաշտպանության բանակի ստեղծումը պետք է համարել առնվազն փետրվարի 24-ը: Հավելենք, որ ԼՂՀ Գերագույն խորհուրդը ԳԽ նախագահությանը լիազորել էր ընդունել օրենքներ և դրանց համապատասխան որոշումներ (ելնելով պատերազմական իրավիճակից): Դա նախկին պատգամավորները բացատրում են նրանով, որ հակառակորդի նախահարձակման պատճառով պատգամավորների մի մասը զենքը ձեռքին մարտնչում էր ԼՂՀ սահմաններում, ուստի հաճախ դժվար էր քվորում ապահովել, ուստի ԳԽ-ն լիազորել էր նախագահությանը լինել մշտապես գործող մարմին և որոշումներ կայացնել նաև ԳԽ-ի անունից:

1992 թ. փետրվարի 24-ը Արցախի ինքնապաշտպանության ուժերի ստեղծման մեկնակետ ընդունելու օգտին է խոսում նաև Վլադիմիր Հա-

[85] ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, թ. 24:

րությունյանի այն վկայությունը, որ 1992 թ. փետրվարին (Խոջալուի ազատագրումից հետո) առաջին զինոռճիկն է տեղափոխել Ստեփանակերտ՝ Լեռնային Ղարաբաղի նոր-նոր ոտքի կանգնող կանոնավոր բանակի համար[86]:

Փետրվարի 24-ի որոշումից հետո Ինքնապաշտպանության ուժերը կամավորականության սկզբունքով համալրելուն զուգահեռ սկսվեց նաև զինապարտների հավաքագրումը: Մանավանդ Շուշիի ազատագրումը նախապատրաստելու կապակցությամբ գարնանը զենքի կոչվեցին այն զինապարտները, որոնք մինչ այդ ընդգրկված չէին ինքնապաշտպանական ջոկատներում:

Մայիսի 9-ը ՊԲ օր հռչակելը կարելի էր հասկանալ, քանի որ այդ օրը ձեռք է բերվել փայլուն ռազմական հաղթանակ, բայց ահա դժվար էր համակերպվել այն մտքին, որ ՊԲ զինծառայողների ծառայության ստաժը հաշվարկվում էր 1992 թ. սեպտեմբերի 1-ից: Ոմանք նույնիսկ պնդում են, որ ՊԲ-ն իբր ստեղծվել է սեպտեմբերի 1-ին[87]: Սակայն փաստն այն է, որ տակավին 1992 թ. օգոստոսի 14-ին ԼՂՀ ինքնապաշտպանության կոմիտեի նախագահի՝ «Պաշտպանական շրջաններ կազմակերպելու և ուժերի ու միջոցների շրջանային լրակազմի կազմակերպական-հաստիքային կառուցվածքի մասին» հրամանագրով ընդամենը ԻՊՈՒ կազմավորման հերթական փուլն է նշանավորվել: Մասնավորապես անցում է կատարվել ավելի խոշոր կանոնավոր ստորաբաժանումների (գումարտակների, դիվիզիոնների) վերակազմավորմանը (մինչ այդ մարտավարական միավորը վաշտն էր), ինչպես նաև ստեղծվել են 6 պաշտպանական շրջաններ: Փաստորեն օգոստոսի 14-ի համապատասխան հրամանագրի կենսագործման երկար ու դժվարին ճանապարհին սեպտեմբերի 1-ը մյուս օրերից առանձնացել է սոսկ նրանով, որ ամսվա սկիզբն էր, ուստի նոր հրամանները գրվեցին, ու զինոռճիկների հաշվարկումը սկսվեց հենց այդ օրից: Ուստի սեպտեմբերի 1-ը բանակի ստեղծման օր համարելը, ըստ էության, հիմնավորված չէ[88]:

[86] *Арутюнян В.*, Флаг над чинарой. Рассказы, Е., Авторское издание, 2006, с. 24:

[87] ***Աբրահամյան-Հարությունյան Շ.***, «Այսօրվա մեր նվաճումը դեռ հաղթանակ չէ» (հարցազրույց ԼՂՀ պաշտպանության նախարար-ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ս. Բաբայանի հետ), «Հայոց աշխարհ», հ. 38, 7 օգոստոսի 1997 թ., էջ 2, ***Աբրահամյան Հ.***, Մարտնչող Արցախը, գիրք Գ (1985-2000), էջ 560:

[88] Տե՛ս ***Հարությունյան Մ.***, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 86-88, 129-130, ***նույնի***, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կռունկ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 109-113:

Մինչդեռ 1992 թ. փետրվարի 24-ի որոշումը ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի մասին բանակի ստեղծման իրավական հիմքն է և ռազմապաշտպանական ոլորտի հետ կապված հետագա բոլոր որոշումների մեկնակետը:

1992 թ. օգոստոսի 14-ին սկիզբ առած ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի բանակային կառույցների վերակազմակերպման գործընթացը 1993 թ. նոյեմբերին մոտենում էր ավարտին: ԻՊՈՒ համոզիչ հաղթանակները ռազմաճակատներում, ԼՂՀ պաշտպանական-անվտանգային համակարգի սաղմնավորումը լուրջ հիմքեր էին միջազգային իրավական չափանիշներին համապատասխանող կանոնավոր զինված ուժեր ստեղծելու համար, ինչը պայմանավորված էր նաև պատերազմի բնույթով ու ծավալների ընդլայնմամբ, մարտական նոր ու ավելի բարդ խնդիրների առաջացմամբ: Ելնելով այդ ամենից, ԼՂՀ ՊՊԿ նախագահը 1993 թ. նոյեմբերի 10-ին որոշում ստորագրեց ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը ԼՂՀ Պաշտպանության բանակի վերակազմակերպելու մասին: Նույն որոշմամբ ՊԲ հրամանատար նշանակվեց Ս. Բաբայանը, ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ՝ Ք. Իվանյանը, հրամանատարի առաջին տեղակալ - ՊԲ շտաբի պետ՝ Ս. Օհանյանը: ՊԲ հրամանատարությանը հանձնարարվեց սերմ ժամկետում ՊՊԿ հաստատմանը ներկայացնել Պաշտպանության բանակի կառուցվածքը[89]: Պաշտպանության բանակի կառուցվածքը ԼՂՀ ՊՊԿ նախագահը հաստատեց 1994 թ. հունվարի 4-ին[90]: ԼՂՀ ՊՆ արխիվում պահվում են փաստաթղթեր, որոնցում «ՊԲ հրամանատարի հրամաններ» ձևակերպումը հանդիպում է 1993 թ. սեպտեմբերի կեսերից սկսած[91]: Դա թերևս պայմանավորված էր ԼՂՀ ԻՊԿ նախագահ Ս. Սարգսյանի՝ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը ստանձնելու և Երևան տեղափոխվելու հանգամանքով[92]: Ըստ երևույթին, ԻՊԿ նախագահի պաշտոնում նրան փոխարինած Ս. Բաբայանը, որը նախագահի առաջին տեղակալն էր, իսկ զինվորականության ու ժողովրդի մեջ հայտնի էր որպես «ՊԲ հրամանատար[93]», գործունեությու-

[89] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումներ, արձ. № 33, որոշում № 323:

[90] Նույն տեղում, արձ. № 36, որոշում № 357:

[91] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 30 от 14 сентября 1993 г.:

[92] ԼՂՀ ԻՊԿ նախագահի պաշտոնից՝ այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ, նա ազատվեց 1993 թ. օգոստոսի 26-ին (տես ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումներ, որոշում № 277 ատ 26 օգոստոսի 1993 թ., արձանագրություն № 29):

[93] Ավելի ճիշտ՝ «կոմանդուշի»:

նը ծավալեց այդ ոչ պաշտոնական կոչմամբ: Հիմք ընդունելով ԼՂՀ ՊՊԿ նախագահի № 323 որոշումը՝ գտնում ենք, որ Պաշտպանության բանակը իրավաբանորեն ստեղծվել է 1993 թ. նոյեմբերի 10-ին:

ՊԲ-ի իրավական կարգավիճակի ամրագրումը կարևոր նշանակություն ունեցավ ռազմաճակատում նոր հաջողություններ նվաճելու և պետական շինարարության բնագավառում ձեռքբերումներն ամրապնդելու համար:

Ընդհանրացնելով կարող ենք արձանագրել, որ Արցախի Հանրապետության ՋՈՒ ռազմավարությունը գիտական հիմքերի վրա ներկայացնելը նպատակաուղղված է ոչ հեռու անցյալի փորձը նոր տիպի զինված ուժեր ստեղծելու դժվարին գործընթացում կիրառելու հնարավորություններ ուրվագծելուն և անխուսափելի խնդիրների լուծման համար օպտիմալ լուծումներ գտնելուն:

2020 թ. աշնանային 44-օրյա պատերազմի բազում ծանր հետևանքներից կարելի է նշել անվտանգային-պաշտպանական համակարգի անմխիթար վճակը, որն ակներև է դառնում հակառակորդի դասավորության նոր քարտեզից և ստեղծված իրավիճակում կրիտիկական աստիճանի հասած մարտահրավերներից ու սպառնալիքներից: Նման վտանգավոր պայմաններում պաշտպանական-անվտանգային հիմնախնդիրների լուծման ամբողջ հույսը ՌԴ խաղաղապահ ուժերի հետ կապելը և սեփական հուսալի երաշխիքների ստեղծման հապաղումը միանշանակ արդարացված չեն, ուստի ավելի քան հրատապ են մնում հայկական զինված ուժերի վերազինումը, վերականգնումը և 6-րդ սերնդի պատերազմներին բնորոշ մարտավարության պահանջներին համապատասխանող չափանիշներով նախապատրաստումը: Այս տեսանկյունից բավական օգտակար կարող է լինել 1988-1994 թթ. բանակաշինության փորձը, երբ գրեթե ոչնչից տեղծվեց բանակ, որը փայլուն կերպով կատարեց Արցախի ազգաբնակչության անվտանգությունն ու ՀՀ սահմանների պաշտպանությունն ապահովելու խնդիրը: Կարծում ենք, որ այսօր ուղենշային պետք է լինեն այդ դժվարագույն խնդրի լուծմանը նպատակաուղղված ռազմավարությունն ու մարտավարությունը, ինչպես նաև պետական քաղաքականությունը: Հատկանշելի է մի տարբերություն. եթե 1988-1994 թթ. հնարավոր է դարձել ունեցած ներուժի, բարոյահոգեբանական առավելության հասնելու, ինչպես նաև խորհրդային բանակի մոդելի վրա հենվելու միջոցներով հաջողել բանակաշինության և պաշտպանական-անվտանգային ոլորտներում, ապա ներկայումս

հայկական պետականության առաջ ծառացած են բավական բարդ, առաջին հերթին բարձր տեխնոլոգիաներով համալրված կամ հագեցված շարժունակ զինված ուժերի ստեղծման խնդիրները: Առաջնահերթ խնդիրը պետք է լինի բանակի և, ընդհանրապես, պետության մարդկային սահմանափակ ներուժը հնարավորինս խնայելը: Դրա իրատեսական միջոցներից մեկը գերճշգրիտ արդիական զինատեսակներով բանակը զինելն է, ինչը հնարավորություն կտա բունկերներում կամ այլ ապահով վայրերում պատսպարված մեր զինվորին հեռահար պատերազմ վարել թշնամու դեմ, ոչնչացնել նրա կարևոր ենթակառուցվածքները, խորքային մարտակարգերի կրակային կետերը, օդուժի հարվածային միջոցները: Այնուհետև հատուկ նախանշանակման, մոբիլ ստորաբաժանումներն ավելի արդյունավետորեն կլուծեն կոնկրետ ռազմավարական դիրքեր զբաղեցնելու խնդիրը: Ի դեպ, այդ մարտավարությունը, մերձավորարևելյան ՌԳԹ-ների օրինակով, կիրառել է թշնամին 2020 թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ի ագրեսիայի ժամանակ, ինչը նկատելիորեն կանխորոշել է պատերազմի ելքը: Հիմնովին ուսումնասիրելով ու վերլուծելով 44-օրյա պատերազմը՝ դրա դասերը կարող են դառնալ մեր զինված ուժերի վերականգնման ռազմավարության հիմքը: Այդ ռազմավարությունը կարող է մշակվել ու նպատակասլաց լինել մեզանում ռազմական գիտության զարգացման ու համապատասխան մասնագետների առկայության պայմաններում: Սակայն մի բաղադրիչ կարծես թե ակնհայտ է. այդ ռազմավարության վերջնարդյունքը հզոր բանակ ունենալն է, որը կսնուցվի հայրենական ռազմարդյունաբերությունից, զինված կլինի բարձր տեխնոլոգիաներով ու արհեստական բանակությամբ հագեցած, գերճշգրիտ զինատեսակներով (գերճշգրիտ հրթիռահրետանային համալիրներ, գերժամանակակից ՀՕՊ համակարգեր և ռադիոէլեկտրոնային պայքարի արդիական ու մարտական պայմաններում փորձարկված միջոցներ, հարվածային և հետախուզական անօդաչու թռչող սարքեր), որոնք արհեստավարժ զինվորական մասնագետների հմուտ ձեռքերում կդառնան հայոց պետականության անվտանգության երաշխիքն ու ապահովման հիմնական միջոցը:



66

Քարտեզ հմ. 2

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ
ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երկրորդ՝ «Օպերատիվ արվեստի զարգացման առանձնահատկությունները» գլխում վերլուծության են ենթարկվել Արցախի Հանրապետության զինված ուժերի միավորումների և զորատեսակների կողմից օպերատիվ մասշտաբի ռազմական գործողությունների (օպերացիաների, ճակատամարտերի, մարտական գործողությունների, հարվածների) նախապատրաստման ու վարման տեսական և պրակտիկ առանձնահատկությունները ինչպես պատերազմի ակտիվ (1991-1994 և 2016 թթ.), այնպես էլ դիրքային դիմակայության, դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման ու դիպուկահարների զանգվածային կիրառման(1995-ից մինչև 2016 թթ.) փուլերում:

Այս հարցերը մինչև 1992 թ. աշնանային ռազմարշավը պարզաբանելու համար դարձյալ հիմք ենք ընդունել Արցախի ինքնապաշտպանության ուժերի նախկին հրամանատար, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանի ուշագրավ վերլուծությունը, որի առանձին հատվածներ արդեն քննարկել ենք նախորդ գլխում:

Ներկայացնելով 1991 թ. հուլիսից մինչև 1992 թ. հուլիս ընկած ժամանակամիջոցում Արցախի ինքնապաշտպանության ուժերի գործողությունների մարտավարությունը՝ նա գրել է. «Այս շրջանում դեռևս Արցախում բավականաչափ խորհրդային զորքեր կային, որոնց աղբբեջանցիները կարողացել էին, հիմնականում՝ կաշառելու միջոցով, ներքաշել ռազմական գործողությունների մեջ: Բուն ռազմական գործողությունները տեղի էին ունենում առանց կողմերի հստակ արտահայտված շփման գծի, հակառակորդը թվով ու ռազմական տեխնիկայով տասնապատիկ գերազանցում էր մեզ՝ բացարձակապես տիրապետելով օդում: Այդ պայմաններում հայկական ուժերը ստիպված էին կազմակերպել այն գյուղերի պաշտպանությունը, որոնց բնակչությանը տեղահանություն էր սպառնում: Նախ Դրմբոն գյուղի պաշտպանությունն էր՝ 1991 թ. օգոստոսի 30-ին և Հաթերք գյուղի պաշտպանությունը՝ 1991 թ. սեպտեմբերի 7-ին: Հետագայում մենք սկսեցինք նաև հարձակողա-

67

կան գործողություններ իրականացնել՝ հակառակորդի կողմից գրավված բնակավայրերն ազատագրելու համար»[94]:

Մեջբերման վերջին պարբերությունը ժամանակագրական անճշտություններ է պարունակում: Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի անհաջող պաշտպանությունը 1992 թ. օգոստոսի 30-ին է եղել[95], իսկ Հաթերքի բարեհաջող «պաշտպանությունը» 1991 թ. օգոստոսի 13-22-ը[96]:

1991 Թ. ԱՇՆԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՇԱՎԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հադրութի շրջանի Տող գյուղի ազատագրումը (1991 թ. հոկտեմբերի 30)

Սեպտեմբերի 22-ին Ստեփանակերտ Բ. Ելցինի և Ն. Նազարբաևի այցելությունը[97], Ռուսաստանի ու Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելությունը և Ժելեզնովոդսկում ստորագրված համաձայնագիրը չնպաստեցին տարածաշրջանում իրադրության նորմալացմանը, քանի որ ադրբեջանական կողմը գերադասում էր հակամարտությունը լուծելու ռազմական ուղին: Հակառակորդի ագրեսիվ նկրտումները դիմազրավելու նպատակով 1991 թ. հոկտեմբերի 28-ին Ստեփանակերտում կայացած արտադրական ձեռնարկությունների տնօրենների խորհրդի նիստում հարց բարձրացվեց ԼՂՀ պաշտպանության խորհուրդ և զինված ուժեր ստեղծելու վերաբերյալ, ինչը թելադրված էր Ադրբեջանի կողմից բանակ ստեղծելու և այն ԼՂՀ-ի դեմ նետելու վտանգին դիմազրավելու անհրաժեշտությունից[98]:

Դեռևս նոր կազմավորվող ինքնապաշտպանական ուժերը, չունենալով բավարար միջոցներ, այս ու այնտեղ պատասխան գործողությունների էին դիմում, սակայն թշնամուն ցնցող ու զգաստացնող հարված էր պետք: Այն որոշվեց հասցնել Հադրութի շրջանի Տող գյուղում: Դա Ա. Տեր-Թադևոսյանը համարում է Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության պլանավորած և իրականացրած առաջին գործողությունը: Ադրբեջանական ՄՀՆԶ-այինները մտադրվել էին գյուղից արտաքսել հայազգի բնակչությանը և օգտագործելով գյուղի դիրքը՝ շարունակել Հադրութի շրջանի հայկական գյուղերի բռնի տեղահանությունը:

Գործողությանը մասնակցում էր հայկական 11 ջոկատ: Գործողությունը պլանավորելիս առաջին անգամ մարտական հրամանը ձևակերպվել էր քարտեզի վրա՝ առաջիկա և հետագա առաջադրանքների սահմանումով: Գործողության խորությունը կազմում էր մոտավորապես 2,5 կմ: Գյուղի ադրբեջանական մասը, որտեղ դիրքավորվել էին ՄՀՆԶ-այինները, գիշերային գրոհի ենթարկվեց: Հրետանային կարճատև նախապատրաստությունը, որն սկսվեց երեկոյան կողմ, խուճապի մատնեց թշնամուն, հատկապես երբ նռնականետի արկն ընկավ ուղիղ շտաբի վրա: Այն շենքին, որտեղ տեղակայված էր հակառակորդի շտաբը, հարվածներ հասցվեցին միակ «ՋՀՆ-7»-ից, ինչն էլ կանխորոշեց գործողության հաջողությունը, ընդ որում՝ առանց հայկական կողմից կորուստների: Ասել է թե՝ հակառակորդին զրկելով հրամանատարությունից՝ նրան դատապարտեցին խուճապահար լքելու զբաղեցրած կրակակետերը: Մարտական գործողություններն այնքան լավ էին ծրագրվել ու նախապատրաստվել, իսկ գրոհն այնպես հանկարծակի եղավ, որ ընդամենը մեկ ժամ հուսահատ դիմադրելուց հետո, հակառակորդը սկսեց հապճեպ հեռանալ գյուղից՝ չսպասելով անգամ ֆիզուլիից ստանալիք օգնությանը: Ադրբեջանցիներին «պաշտպանելու» եկան 2 զրահամեքենա, սակայն հայերը ռադիոխաղով խանգարեցին ռուսներից բաղկացած անձնակազմին կրակելու[99]:

Տողի ազատագրումը, թերևս, առաջին հաղթանակն էր, որով կոտրվեց հակառակորդի անպատժելիության զգացումը, բացվեց Հադրութի ներշրջանային երթևեկության ճանապարհներից մեկը, իսկ հայ ազատամարտիկները ոգեպնդվեցին ու ձեռք բերեցին համապատասխան մարտական փորձ:

---

[94] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

[95] ***Հակոբյան Կ.,*** Սոսի արծիվները (ազատամարտիկի հուշեր), խմբագրումը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Մ. Ա. Հարությունյանի: «Կռունկ» տարեգիրք, № 13 (155-166), 2019, Շուշի, «Կռունկ» գիտական կենտրոնի հրատ., 2020, էջ 33:

[96] ***Նաթիևական Գ.,*** Օրագրություններ, հուշեր, վկայություններ, «Կռունկ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3(35-46), 2009, Շ., «Կռունկ» գիտական կենտրոնի հրատ., 2014, էջ 81-118:

[97] ***Бабанов И., Воеводский К.,*** Карабахский кризис, СПб, 1992, с. 55.

[98] ***Арутюнян В.,*** События в Нагорном Карабахе. Хроника. Часть IV. Январь 1991 г. - январь 1993 г., с. 88.

[99] «ԼՂ Հանրապետություն» (հանրապետական թերթ), 1996 թ., № 145: Տե՛ս նաև ***Մկրտչյան Շ.,*** Արցախում ես ուրիշ պատերազմ տեսա, Ե., 1996, էջ 50-54:

Հադրութի շրջանի Սարինիշեն, Ծամձոր և Բանաձոր գյուղերի ազատագրումը

1991 թ. նոյեմբերին տարերային բախումներին փոխարինելու եկան համեմատաբար կազմակերպված բնույթ կրող մարտական գործողությունները: Սակայն, միասնական ռազմաճակատ և ժամանակակից ընկալմամբ պատերազմական գործողություններ դեռ չկային: Հիմնականում Հադրութի և Մարտունու շրջաններում ծավալված մարտերի ընթացքում համապատասխանաբար Մ. Գրիգորյանի և Մ. Մելքոնյանի հրամանատարությամբ ճնշվեցին Հալիֆշա (6. 11), Հախուլու(7. 11), Սալաքյաթին (17. 11) և Խոջավենդ (19. 11) բնակավայրերի կրակակետերը, ազատագրվեցին Սարինիշեն, Ծամձոր (15.11) ու Քարագլուխ (20. 11) գյուղերը:

Սարինիշեն գյուղի մերձակա բարձունքը, որտեղ հեռուստատեսային աշտարակն էր, ադրբեջանցի ՄՀՆՋ-այինները գրավել էին «Գոլցո» գործողության ժամանակ: Հակառակորդի դիրքերից ոչ հեռու տեղակայված էր ԽՍՀՄ ՆԳՆ ՆՋ պահակակետը: Բարձունքը մեծ նշանակություն ուներ, քանի որ տիրապետող դիրք էր գրավում Հադրութի հովտի վրա: Գործողության խորությունը կազմում էր մոտավորապես 12 կմ: Գործողությանը մասնակցում էին հայկական ինը ջոկատներ: Ջոկատներից մի քանիսը վերահսկողության տակ առան այն ճանապարհը, որով հակառակորդը կարող էր համալրում ստանալ, մյուսները գրավեցին բարձունքը: Հարկ է նշել, որ Տող գյուղի գործողության համեմատ՝ զգալիորեն բարելավվել էր փոխհամագործակցությունը ջոկատների միջև: Այդ ռազմագործողությունը Ա. Տեր-Թադևոսյանը թվագրում է նոյեմբերի 17-ով[100]: Սակայն, մեր ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրների հիման վրա այն հնարավոր ենք համարում ճշգրտել նոյեմբերի 15-ով[101]:

Խորհրդային զորքերը, որոնց օգնությամբ Ադրբեջանի ՆԳՆ ՄՀՆՋ-ները գավթել էին Հյուսիսային Արցախի հայկական մի քանի գյուղեր, սեպտեմբերին հետ քաշվեցին՝ դեմ առ դեմ թողնելով հայերին ու ադրբեջանցիներին: Շահումյանի ինքնապաշտպանության ուժերը ձեռնամուխ եղան բռնազավթված բնակավայրերն ազատագրելու և շրջանից ադրբեջանցի ՄՀՆՋ-այիններին դուրս շպրտելու նպատակներով պլանավորված ռազմական գործողություններին: Ընդհանուր հակահարձակումը սկսվեց սեպտեմբերի 14-ին[102]: Հնգօրյա մարտերի արդյունքում ազատագրվեցին Բուզլուխ, Մանաշիդ և Էրքեջ գյուղերը, դիրքեր գրավվեցին Մարտունաշենից չորս կիլոմետր հեռավորության վրա: Այսպիսով, Շահումյանի շրջանից ադրբեջանցի զավթիչներին դուրս շպրտելու նպատակով իրականացված ռազմագործողությունն անցավ կազմակերպված ու հաջողությամբ պսակվեց:

[100] *Тер-Тадевосян А.*, Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 564:

[101] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Գամառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, Շուշի, «Գամառ» գիտական կենտրոնի հրատ., 2015, էջ 47-48:

1991 թ. աշնանը հայկական ջոկատների անցկացրած հաջող գործողությունները հարստացրին հրամանատարների ու մարտիկների մարտավարական փորձը: Բավական ուսանելի էր սեպտեմբերին Շահեն Մեղրյանի ղեկավարությամբ Շահումյանի շրջանի Էրքեջ, Բուզլուխ, Մանաշիդ գյուղերի, իսկ հոկտեմբերին և նոյեմբերին Մարտունու շրջանում Մոնթե Մելքոնյանի առաջնորդությամբ և Հադրութի շրջանում Մանվել Գրիգորյանի հրամանատարությամբ ևս մի քանի գյուղերի ազատագրումը: Այդ մարտերը մեծ նշանակություն ունեցան. նախ, ազատագրվեցին բռնազավթված հայկական բնակավայրերը, հայ ազատամարտիկները ռազմագործողություններ պլանավորելու և վարելու համապատասխան փորձ ձեռք բերեցին, և, որ պակաս կարևոր չէր, հայկական գյուղերում արագ թափով վերաբնակեցվող ադրբեջանցիներին ցույց տրվեց, որ անվրդովմունք ու հանգիստ չեն կարող բնակվել ուրիշի տանը, յուրացնել ուրիշի արարածը և ինչքը: **Հայկական հողը վառվում էր զավթիչների ոտքերի տակ: Յուրաքանչյուր հայ ազատամարտիկ գիտակցում էր, որ այդպիսի պատժիչ գործողություններով կարելի էր խափանել ԼՂՀ-ում օտար էթնիկ տարրեր արմատավորելու Ադրբեջանի ծրագրերը:**

Ռազմական գործողությունների պլանավորման ու իրականացման մտահղացումների վրա իրենց ազդեցությունն ունեցան աշխարհաքաղաքական նոր զարգացումները: 1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելովեժսկում Ռուսաստանը, Ուկրաինան և Բելառուսը ստորագրել էին ԽՍՀՄ-ի՝ որպես միջազգային սուբյեկտի ու աշխարհաքաղաքական իրողության գոյության դադարեցման համաձայնագիր, որից հետո իրավիճակը Ստեփանակերտի շուրջ կտրուկ վատթարացավ: Ադրբեջանի ղեկավարությունը Մոսկվայից պահանջեց մինչև դեկտեմբերի վերջը դուրս բերել խորհրդային զորքերը Լեռնային Ղարաբաղից, որի տարածքում հանրաքվեի արդյունքներով հայտարարվել էր Լեռնային Ղարաբաղի Հան-

[102] «Հայ գինվոր», 1998 թ., № 51:

րապետությունը (ԼՂՀ): Աղրբեջանը վստահ էր, որ խորհրդային զորքերի հեռանալուց հետո իր զինված ուժերը, որոնք զգալիորեն գերազանցում էին սպառազինությամբ և տեխնիկայով, առանց դժվարության կջախջախեն հայկական փոքրաթիվ ջոկատները և կտեղահանեն Արցախի հայ բնակչությանը: Ավելի սաստկացավ Ստեփանակերտի գնդակոծությունը Շուշիի, Ջանհասանի, Խոջալուի, Մալիբեկլուի, Կրկժանի և այլ բնակավայրերում տեղակայված աղրբեջանական կրակակետերից:

Ըստ Արկադի Տեր-Թադևոսյանի՝ 1991 թ. «դեկտեմբերի 12-ին Արցախի Պաշտպանության կոմիտեն նրան հանձնարարեց կազմակերպել Ստեփանակերտի պաշտպանությունը: Այդ պահի դրությամբ քաղաքը պաշտպանում էին Ինքնապաշտպանության ուժերի երկու վաշտեր, առաջինը՝ Աշոտ Ղուլյանի, երկրորդը՝ Կարեն Բաբայանի գլխավորությամբ: Իրավիճակի կտրուկ վատթարացումը և Ստեփանակերտին սպառնացող իրական վտանգը պահանջում էին արագացնել ռազմական շինարարության տեմպերը: Առաջին հերթին ստեղծվեց Ստեփանակերտ քաղաքի պարետատունը: 1991 թ. դեկտեմբերի 16-ին նրա հրամանով՝ դրանից քիչ առաջ ստեղծված Ինքնապաշտպանության ուժերի շտաբի պետ նշանակվեց գնդապետ Գեորգի Պետրոսյանը: Շտաբի կազմում ստեղծվեցին հետախուզական բաժին, կապի ծառայություն, ինժեներական ծառայություն, տեղագրական բաժին և այլն»[103]:

Շտաբի առջև առաջադրանք դրվեց՝ կազմել Արցախի պաշտպանության պլան:

Ակնհայտ էր, որ հակառակորդի հարձակման դեպքում երկու վաշտն ի վիճակի չէր լինի ապահովելու Ստեփանակերտի պաշտպանությունը: Ինքնապաշտպանության ուժերի շինարարությունը շարունակելու և շարքերը համալրելու նպատակով ձեռնարկվեցին հետևյալ միջոցները.

- 1991 թ. դեկտեմբերին Ստեփանակերտում ստեղծվեց ուսումնական կենտրոն՝ Ինքնապաշտպանության ուժերի կազմում ընդգրկվելու ցանկություն ունեցող քաղաքացիական անձանց ռազմարվեստի հիմնական հմտություններն ուսուցանելու նպատակով: Ուսուցումն անցկացնում էին, հիմնականում, կաղրային սպաները: Դասընթացի տևողությունը նախատեսված էր 30 օր, սակայն շուտով այն ստիպված

[103] *Տեր-Թադևոսյան Ա.*, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

կրճատվել է մինչև 15 օր, քանի որ սկսվեց նոր վաշտերի կազմավորումը, որոնք անհրաժեշտ էր համալրել անձնակազմերով;

Պաշտպանության կոմիտեի ղեկավարությունը դիմել է Վազգեն Սարգսյանին՝ խնդրելով ուղարկել մի քանի կամավորական ջոկատներ: Դեկտեմբերի 25-ի դրությամբ ՀՀ-ից ժամանել էին մի քանի կամավորական ջոկատներ մինչև 100 մարդ ընդհանուր քանակազմով: Ինչպես վկայում է Ա. Տեր-Թադևոսյանը, դժբախտաբար, նրանց մեծամասնությունը մի քանի օր անց լքել է Արցախը, որպեսզի, ինչպես հետո պարզվեց, Հայաստանում նշի Նոր տարին[104]:

1991-1992 թթ. ձմեռային ռազմարշավի առանձնահատկությունները

Շահումյանի շրջանը Կասում Իսմայիլովին միացնելու և Գերանբույի շրջան ստեղծելու (1991 թ. հունվարի 14) կամ ԼՂԻՄ-ը լուծարելու մասին որոշումների լույսի տակ աղրբեջանական բնակավայրերը, ռազմական հենակետեր լինելուց զատ, նաև «միջանկյալ օղակներ» էին արցախյան այս կամ այն հողատարածքը պոկելու և Աղրբեջանի հարակից շրջանին բռնակցելու համար: Հիշյալ որոշումներով խրախուսված աղրբեջանցի հրոսակների հարձակումներին դիմազրավելուն զուգահեռ, Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուների առաջնահերթ խնդիրներից էին նաև հաղորդակցության կարևոր ճանապարհներն աղրբեջանցիների վերահսկողությունից ազատելը և վերոհիշյալ «միջանկյալ օղակների» վնասազերծումը[105]:

Արցախյան լեռնաշղթայից այս կողմ ընկած աղրբեջանական գյուղերից յուրաքանչյուրը մի-մի ռազմական հենակետ էր Արցախի կենտրոն ներխուժելու համար: Այս առումով հատկապես վտանգավոր էին Ջամիլլուն ու Լեսնոյեն: Վերջինս մշտական սպառնալիք էր Պատարա, Աստղաշեն (Դաշբուլաղ) ու Դահրավ գյուղերի համար և Խոջալուի հետ ռազմավարական գիծ ստեղծելու հավակնություն ուներ:

Ստեփանակերտն անընդհատ գնդակոծության տակ պահող մերձակա Ջամիլլու գյուղը վնասազերծվեց դեկտեմբերի 15-ին: Հաջորդ օրը, Բերքաձորի մոտ հայ ազատամարտիկների խումբը բախվեց ՄՀՆՋ-այինների ու վարձկան ռուս զինվորների միացյալ ուժերին: Մի քանի

[104] *Тер-Тадевосян А.*, Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 565-566:

[105] *Հարությունյան Մ.*, Թեքելով հաջողության նժարը (դեկտեմբեր. 1991), «Մարտիկ», 1998 թ., № 49:

ժամ տևած մարտի արդյունքում հայ ռազմիկները փախուստի մատնեցին հակառակորդին: Մի շարք թերություններով հանդերձ, անկարելի է չհիանալ Արցախի ազատագրական պայքարին զինվորագրված կամավորների նվիրվածությամբ, խանդավառությամբ և այլ հատկություններով, որոնք օգնեցին նրանց ծանր պայմաններում մարտնչել մինչև ատամները զինված հակառակորդի, այդ թվում նաև՝ Կենտրոնի տխրահռչակ պատժիչ զորամիավորումների դեմ, ի տարբերություն որոնց հայ նորընծա մարտիկների զինվածությունը խիստ անբավարար էր: Սակայն, ոգու ուժով ու նվիրվածությամբ նրանք ի վերջո հաղթող դուրս եկան և դրանով իսկ ոգեշնչման աղբյուր դարձան հետագա ռազմական փայլուն հաղթանակները կռող հայ զինվորների համար:

Թեև օրակարգում Կրկժանի ազատագրումն էր, Արցախի ինքնապաշտպանական ջոկատները մարտական գործողություններ ձեռնարկեցին Լեսնոյեի ուղղությամբ՝ նպատակ ունենալով մի հարվածով լուծել երկու խնդիր. վնասազերծել վտանգավոր «միջանկյալ օղակներից» մեկը և հակառակորդի ուշադրությունը շեղել Կրկժանից՝ նրա մեծաթիվ ուժերը գամելով Լեսնոյեին:

Ռազմագործողությունը սկսվեց դեկտեմբերի լույս 23-ի գիշերը: Յոթ ժամ տևած մարտերն ավարտվեցին թշնամական կարևոր հենակետի վնասազերծմամբ: Կատարվեցին առաջադրված խնդիրները: Դեկտեմբերի 22-23-ին հայ մարտիկների վիժաժառու բազկի ուժը զգացին նաև Մարտակերտի շրջանի Իմարաթ-Քարավանդ (պատմական Քարահունջ) և Ուումութլու (Ծաղկաշեն) գյուղերի աղրբեջանցիները:

Այս գործողություններն իրականացրել են հիմնականում ՀՅԴ ջոկատները և ըստ երևույթին Ինքնապաշտպանության ուժերի շտաբին ինքնուրույն գործողություններ նախաձեռնելու կարողության ցուցադրություն էին, քան Ստեփանակերտն օղակած հակառակորդի կրակակետերի ճնշման գործողությունների ընդհանուր պլանի մաս: Բայցևայնպես, կարծում ենք, որ Ինքնապաշտպանության ուժերի շտաբը կարողացավ շրջահացորեն այդ գործողությունների արդյունքներն էլ օգտագործել հիմնական խնդիրները լուծելու համար: Սակայն, այս մասին ազատագրական օպերացիաները ղեկավարող գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը լռում է, ինչը ևս վկայում է այն մասին, որ Լեսնոյեի, Քարահունջի և Ծաղկաշենի գործողությունները նրա ընդհանուր մտահղացման մեջ չէին մտնում:

ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի 81-րդ գնդի զինաթափումը (1991 թ. դեկտեմբերի 22)

Նշելով, որ այդ ժամանակ հենց Ստեփանակերտում էր տեղակայված նախկին ԽՍՀՄ ՆԳՆ ՆԶ գունդը, որը շուտով պետք է հեռանար ԼՂՀ-ից՝ Ա. Տեր-Թադևոսյանը հավաստիացնում է, որ «Պաշտպանության կոմիտեն որոշում ընդունեց գունդը զինաթափելու գործողություն իրականացնել: Գործողության մանրակրկիտ մշակվեց՝ նկատի առնելով շենքի հատակագիծը, գնդի պահակակետերի տեղաբաշխումը, զենքի պահեստների և զրահատեխնիկայի տեղերը: Դեկտեմբերի 22-ին, առավոտյան ժամը 6.30-ին, հայ ռազմիկները՝ թվով 51 մարդ, մի քանի ուղղություններով անակնկալ հարձակում գործելով՝ հանկարծակիի բերեցին գնդի անձնակազմին, որը չկարողացավ դիմադրություն ցույց տալ: Գործողության արդյունքում, որն անցավ առանց կորուստների, գրավվեց 10 զրահամեքենա և 1000-ից ավելի հրազեն»[106]:

Թեև ասեկոսեներ էին պտտվում, որ այդ հարձակումը բեմադրված էր և զենքի ու զինամթերքի հանձնումը նախորոք ձեռք բերված պայմանավորվածության արդյունք էր, այնուամենայնիվ, այդ թանկարժեք ռազմավարը խիստ պահանջված էր Արցախի ինքնապաշտպանության համար և պատեհաժամորեն համալրեց ԻՊՈՒ զինանոցը:

Դեկտեմբերի 25-ին և 26-ին Արցախից դուրս բերվեցին ԽՍՀՄ ներքին զորքերի «ԴՕՆ» դիվիզիան (հրամանատար՝ գեներալ-մայոր Լոբունեց), այդ թվում՝ Ստեփանակերտից՝ փոխգնդապետ Տյուլովիչի, Մարտունուց՝ Բատակովի, Մարտակերտից՝ Գալիբերդենկոյի գնդերը[107]: Դրա հետևանքով, անպաշտպան մնացին ԼՂՀ բազմաթիվ բնակավայրեր և ժողովրդատնտեսական կարևոր օբյեկտներ, իսկ սահմանագծի ամբողջ երկայնքով վերսկսվեցին աղրբեջանական զինված խմբավորումների հարձակումները: Դրանց ակտիվացումը, թերևս, պայմանավորված էր նրանով, որ Բաքվից և Աղդամից Արցախ էին տեղափոխվել 300-ական զինծառայող ընդգրկող 18 գումարտակներ, ինչպես նաև ռազմական տեխնիկա և նույնիսկ՝ ՄԻ-24 ուղղաթիռ: Ստեղծված իրադրությունում Արցախի ինքնապաշտպանության պատասխանատուները խնդիր ունեին ուժեղացնել ժողտնտեսական օբյեկտների պաշտպանությունը՝

[106] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

[107] ԼՂՀ ՊՆԱ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 4а.

ներգրավելով նաև խաղաղ բնակչությանը, ինչպես նաև՝ ստեղծել առանձին ջոկատներ՝ հակառակորդի հետախուզական խմբերի ոչնչացման նպատակով: Տագնապալից իրավիճակի թելադրանքով, Պաշտպանության կոմիտեից Արցախ գործուղված Ա. Տեր-Թադևոսյանին հնձնարարվեց անհապաղ ավարտել զինված խմբավորումների կազմավորումը. Հաղրութի և Մարտունու շրջաններում ներգրավելով 400-ական, իսկ Ասկերանում, Մարտակերտում և Ստեփանակերտում՝ 500-ական մարտիկ: Միաժամանակ, Գ. Դալիբալթայանը խորհուրդ տվեց առաջարկել տեղական ղեկավարներին՝ անցկացնել մասնակի զորահավաք[108]:

Դեկտեմբերի 28-ին, չդադարող հրետակոծությունների, զինված ավազակախմբերի պարբերական հարձակումների պայմաններում տեղի ունեցան ԼՂՀ Գերագույն խորհրդի ընտրությունները: Ախոյան կողմը, դրանք ձախողելու դիտավորությամբ, նույն օրը դադարեցրեց Ստեփանակերտի էլեկտրամատակարարումը: Չբավարարվելով դրանով, հակառակորդի զինված խմբերը երեկոյան ուժգին հարձակում ձեռնարկեցին Քարինտակի ուղղությամբ: Գյուղի պաշտպանները, թեև մեծ դժվարությամբ, բայց կասեցրին թշնամու առաջխաղացումը: Մարտերի ընթացքում գյուղի պաշտպաններից զոհվեց 1 և վիրավորվեցին 2 մարտիկներ: Ի պատասխան, ինքնապաշտպանական ջոկատները նույն օրվա գիշերը հանկարծակի մտան Կրկժան: Հակառակորդը ստիպված Քարինտակի ուղղությունից ուժեր հանեց ու նետեց Կրկժանի կողմը: Այդուհանդերձ, ՄՀՆՋ-ային ուժերին հաջողվեց պաշտպանություն բրոնել միայն դպրոցի շրջակայքում: Մարտական գործողություններին զուգընթաց, շարունակվում էր հակառակորդի կազմավորումների զինումը: Այսպես, դեկտեմբերի 29-ին Շուշի բերվեցին կենդանի ուժ, սպառազինություն և մարտական տեխնիկա[109]: Դեկտեմբերի 30-ին մարտեր էին ընթանում Ղազանչիում, Կրկժանում, Միսիթարաշենում, Ասկերանում, Խրամորթում, Մարտունիում և այլուր: Հակառակորդը, թեև կենդանի ուժի և սպառազինության եռակի և քառակի առավելություն ուներ, սակայն հաջողության չէր հասնում: Իրենց հայրենիքը և հարազատ օջախը պաշտպանող հայ մարտիկները հակառակորդին գերազանցում էին բարոյահոգեբանական որակներով, ինչպես նաև կազմակերպչական ընդունակություններով:

[108] ԼՂՀ ՊՆՆ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 7.
[109] ԼՂՀ ՊՆՆ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 12а.

Ըստ ռազմական բաց աղբյուրների («Ռոսիյսկայա գազետայի» մի հրապարակման), ԽՍՀՄ փլուզման պահին Անդրկովկասյան ռազմական օկրուգի սպառազինությունների և զինապաշարների մեծ մասը տեղակայված էր Ադրբեջանական ԽՍՀ տարածքում. 4 մոտոհրաձգային դիվիզիաների, օդադեսանտային դիվիզիայի, հատուկ նախանշանակման բրիգադի, ՀՕՊ-ի 3 բրիգադների, 4 ռազմաօդային բազաների սպառազինությունն ու գույքը, կասպիական նավատորմի մի մասը: Այդ ամբողջ տեխնիկան ու սպառազինությունը 1992 թ. հունվարից բացահայտորեն սկսեց անցնել ադրբեջանական իշխանությունների իրավասության տակ: ՌԴ պաշտպանության նախարարությունը կամ չկարողացավ, կամ չցանկացավ խանգարել դրան[110]:

Այնպես որ հենց սկզբից հակառակորդը ստացել էր ռազմատեխնիկական գերակշռություն: Փաստերն ավելի քան խոսուն են. Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև ուղղակի ռազմական գործողություններ սկսվելու պահին քանակական առումով վերջինս ուներ բացահայտ առավելություն. մարտական տանկերի 132 միավոր, մարտական զրահամեքենաների՝ 568, հրետանու՝ 129, մարտական ինքնաթիռների՝ 53, հարվածային ուղղաթիռների՝ 4 միավոր[111]: Միայն իր հայրենի եզերքը պաշտպանող հայ ռազմիկի բարոյակամային ու մարտական որակների շնորհիվ հնարավոր եղավ հակահարված տալ թշնամուն, ամրապնդել վերընձյուղված արցախյան պետականության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիմքերը:

Հակառակորդի կրակակետերի ոչնչացումը Կրկժանում (1992 թ. հունվարի 20)

Հին հայկական Կրկժան գյուղը, որն արդեն 1980-ականներին վերածվել էր Ստեփանակերտի արվարձանի, դարձել էր ադրբեջանական ՄՀՆՋ-ների վտանգավոր հենակետերից մեկը, որտեղից անընդհատ գնդակոծվում էին մայրաքաղաքի բնակելի թաղամասերը և հաճախակի հարձակման ենթարկվում ծայրամասերը:

1992 թ. հունվարի 1-ին ևս իրադրությունը լարված էր Շահումյանի շրջանում, Կրկժանում: Միաժամանակ, ամեն օր հրետակոծվում էր Ստեփանակերտը: Պատասխան գործողությունների արդյունքում հրի

[110] Տե՛ս «Մարտիկ», 1998 թ., № 31:
[111] Նույն տեղում:

մատնվեցին Կրկժանի՝ ՄՀՆՋ-ային կրակակետերի վերածված բոլոր տները: Հարկ է նշել, որ տներ հրկիզելը այդ ժամանակ մարտավարական հնար էր համարվում, ինչը առաջինը սկսեցին կիրառել ադրբեջանցիները հայ բնակչությանը վերադարձի հնարավորությունից զրկելու, դիմադրողներին հոգեբանորեն ընկճելու կամ խուճապը մեծացնելու և այլ նպատակներով: Պատերազմն իր չգրված օրենքներն ունի, կամ թե ակամա դրանք գործում են, ուստի դաժան իրողության թելադրանքով հայերը ևս ստիպված էին ի պատասխան նույն մարտավարությունը կիրառել:

Այդուհանդերձ, ցանկացած գնով Կրկժանը պաշտպանելու հանձնարարությամբ, դեպի Ստեփանակերտի արվարձան ձգվեցին Ադրբեջանի ազգային բանակի կազմավորումները: Մասնավորապես, Կրկըժանի մերձակա Ղայբալիշենում կենտրոնացվեց հակառակորդի շուրջ 200 զինվոր[112]: Հակառակորդը, կարծելով, թե հայկական բոլոր կազմավորումները ձգվել են դեպի Կրկժան, պահը հարմար գտավ Խրամորթի հետ հաշիվները մաքրելու համար: Այդ ուղղությամբ ճնշում գործադրելով՝ հակառակորդը փորձում էր շեղել ինքնապաշտպանության ուժերի հրամանատարության ուշադրությունը Կրկժանի ուղղությունից: Հունվարի 1-ին, գերակշռող ուժերով և զրահատեխնիկայի աջակցությամբ, ադրբեջանցի զինյալները գրոհեցին ու գավթեցին Խրամորթը: Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական ջոկատները, հակահարձակման անցնելով, ազատագրեցին այն:

Պաշտպանական մարտեր ընթացան նաև Մեյսուլանում (Արծվաշենում): Հունվարի լույս 2-ի գիշերն ադրբեջանցիներին հաջողվեց մտնել այդ գյուղը: Կազմակերպվեց կանանց ու երեխաների տարահանումը: Գյուղի պաշտպանների ձեռնարկած միջոցների շնորհիվ, խուճապը կանխվեց: Հունվարի 3-ին բնակիչները գյուղ վերադարձան:

Հունվարի 6-ին մարտական գործողություններ ընթացան Շահումյանի շրջանում: Հայ մարտիկներն ազատագրեցին Բուզլուխի մոտակա բարձունքը և շարժվեցին դեպի Սարրսու: Նույն օրն ազատագրվեց դեռևս հունվարի 1-ին հակառակորդի նվաճած Ինջայի կիրճը, ինչն ապահովեց Շահումյանի հատորդակցական կապը Մարտակերտի շրջանի հետ:

[112] ԼՂՀ ՊՆԱ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 18б.

Հետախուզության տվյալներով՝ այդ օրերին ադրբեջանական բանակը ԼՂՀ-ում և նրա արևելյան սահմանների երկայնքով կենտրոնացրել էր շուրջ 18 գումարտակ, որոնցից 8-ը՝ գլխավոր հարվածի՝ Ստեփանակերտի, իսկ 4-ը՝ երկրորդ հարվածի՝ Հադրութի շրջանի ուղղությամբ, ինչպես նաև 63 զրահամեքենա, 2 տանկ, ավելի քան 27 հրանոթ[113]: ԼՂՀ ինքնապաշտպանության պատասխանատուները վերոհիշյալ երկու ուղղություններում ուժեղացրին պաշտպանական բնագծերը:

Հունվարի 19-20-ին Կրկժանում շարունակվող մարտերը պսակվեցին փայլուն հաջողությամբ. Կրկժանն ազատագրվեց, հայ մարտիկները դիրքեր զբաղեցրին տիրապետող բարձունքների վրա: Ստեփանակերտի արվարձան Կրկժանում հակառակորդի ամրացված հենակայանի ջախջախման գործողությանը մասնակցեցին հայկական 26 ոչ մեծ ջոկատներ:

Գործողությունն սկսվեց գիշերը և ընթացավ երկու ուղղություններով: Հաջողությանը մեծապես նպաստեցին Վարդան Ստեփանյանի շարժունակ խմբի շուրջ 40 կամավորների ձեռնարկած գործողությունները: Մասնավորապես, տարաշարժային խումբը դուրս եկավ հակառակորդի թիկունք և հանկարծակիի բերեց ադրբեջանցիներին: Դրան անմիջապես հետևեց հայկական հիմնական ուժերի հարվածը ճակատից, ինչն էլ արագ ավարտվեց հաջողությամբ[114]:

Գործողության հաջողությանը, մեր դիտարկմամբ, մեծապես նպաստեց նաև ԿՍ-19 հակակարկտային հրանոթից ուղիղ նշանառությամբ հառակորդի կրակակետերի ճնշումը:

Մի շարք հեղինակներ Կրկժանի ազատագրման օրը սխալմամբ նշում են հունվարի 22-ը: Թերևս, դա գալիս է Բ. Ուլուբաբյանից, ըստ որի Կրկժանն ազատագրվել է հունվարի 21-ի լույս 22-ի գիշերը[115]: Նրան էլ, ըստ երևույթին, հետագայում կրկնել են մյուս հեղինակները[116]: Զարմանալիորեն հունվարի 22 է նշում նաև գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադ-

[113] ԼՂՀ ՊՆԱ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 37б.

[114] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 566-567:

[115] ***Ուլուբաբյան Բ.,*** Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Ե., «Ս. Վարանդեան», 1994, էջ 339, ***նույնի*** Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, խմբ.՝ Լ. Ա. Խուրշուդյան, Ե., 1997, էջ 315:

[116] ***Տեմրուխան Ա.,*** Արցախեան ազատագրական պայքար, ԱՄՆ., 1998, էջ 43, ***Մելքումյան Ս.,*** Ղեռապին Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրություն, Ե., 1998, էջ 176, ***Հասրաթյան Ս.,*** Գոյամարտ, էջ 7, նույնի՝ Ղարաբաղյան պատերազմ, Ե., «Ամարաս», 2001, էջ 27, ***Դանիելյան Գ.,*** Արցախը՝ չանձած նժույգ, Ե., 2001, էջ 153:

նույանը[117]: Փաստորեն, Կրկժանի ազատագրման լուրը Երևանում ուշացումով ստացվեց, քանի որ, հենց Բ. Ուլուբաբյանի վկայությամբ, հունվարի 20-ին ու նախորդ մի քանի օրերին «կապ չկար Արցախի հետ»[118]: Արխիվում պահվող «Ռադիոկայանի ապարատային մատյան»-ում, որի էջերում ժամ առ ժամ և րոպե առ րոպե գրանցվում էին տեղի ունեցող իրադարձությունները, արձանագրված է, որ Կրկժանի ազատագրումը սկսվել է 1992 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը և ավարտվել հունվարի 20-ին[119]:

Այն ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի լուրջ հաղթանակներից էր, ինչն իր հոգեբանական ու քաղաքական նշանակությամբ գրեթե հավասարազոր էր զուտ ռազմականին: Դրա շնորհիվ Ստեփանակերտն ազատվեց վտանգավոր արվարձանից, որն աղրբեջանական հրամանատարությունը դիտում էր իբրև ռազմական հենակետ Արցախի մայրաքաղաք ներխուժելու համար: Մյուս կողմից, ամրապնդվեցին ու բազմապատկվեցին հայ մարտիկների հաղթանակի հասնելու հավատը, կամքն ու վճռականությունը:

Քարինտակի հերոսական պաշտպանությունը

Արցախյան պատերազմի նշանավոր օպերացիաներից մեկի՝ Քարինտակի հերոսական պաշտպանության ռազմագիտական վերաիմաստավորմանը նվիրել ենք առանձին ուսումնասիրություն[120]: Նորահայտ փաստաթղթերի, ժամանակի պարբերական մամուլի և ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա քննության ենք առել այդ կարևոր իրադարձության ռազմավարական, ռազմաքաղաքական և այլ տեսանկյունները, ներկայացրել դրա պատմական նշանակությունը, ինչպես նաև կարևորությունն Արցախում ռազմական արվեստի զարգացման առումով:

[117] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18, ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 566:

[118] ***Ուլուբաբյան Բ.,*** Արցախյան գոյապայքարի տարեգրություն, էջ 314-315:

[119] Տե՛ս Ա. Տեր-Թադևոսյանի՝ հունվարի 20-ի ժամը 10[00]-ի օպերատիվ իրավիճակի մասին զեկույցը. ԼՂՀ ՊՆՄ, Аппаратный журнал радиостанции. Начат 25 декабря, 1991г. окончено 5 марта 1992 г., л. 706:

[120] ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա.,*** Քարինտակի հերոսական պաշտպանությունը (ռազմական տեսանկյուն), Շ., «Գեամա» գիտական կենտրոնի հրատ., 2020, 96 էջ:

Քարինտակի հերոսամարտի եզակիությունը, որն արտահատվում է ժամանակի ու տարածության մեջ, անհրաժեշտ էր դարձնում զուտ ռազմական տեսանկյունից այն քննության առնելը, որպեսզի, նախ, վերիմաստավորվեր Արցախյան պատերազմի հաղթական ընթացքի վաղ դրսևորումներից մեկը, ապա նաև բացահայտվեին քաղաքականացված ու պատեհապաշտորեն արտահայտված տեսակետների անհամատեղելիությունը և հակասությունները իրականության հետ: Մենք ցույց ենք տվել, որ խնդրո առարկա իրադարձությանը բազմիցս անդրադարձել են ինչպես հայկական, այնպես էլ աղբբեջանական աղբյուրները: Հայ հեղինակները հատկանշել են գյուղի պաշտպանների հերոսական կերպարը, հաղթելու կամքն ու վճռականությունը: Իսկ հակառակորդի ճամբարում ձգտում են վերհանել Աղրբեջանի ԶՈՒ-ի առաջին կանոնավոր ստորաբաժանումների առաջին օպերացիայի ձախողման պատճառները, սակայն ապարդյուն, որովհետև ընթանում են ակնհայտ սխալ ճանապարհով՝ ըստ ամենայնի փորձելով մեղավորներ փնտրել և մտացածին պատճառաբանություններ գտնել սխալների ու անհաջողությունների համար: Մեր աշխատանքում ըստ անհրաժեշտության փորձել ենք համադրել հակամարտող կողմերի տեսակետները և հնարավորինս վերականգնել դեպքերի իրական պատկերը:

Պատճառահետևանքային կապի մեջ դիտարկելով հայկական կողմի հաջողության և հակառակորդի կատարյալ ձախողման խորքային պատճառները՝ հատկանշելի ենք համարում Աղրբեջանում 1992 թ. հունվարին ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը: Խորհրդային Միության փլուզումից հետո միութենական հանրապետություններից մեկի՝ Աղր.ԽՍՀ նախկին տարածքում առաջացել էին երկու պետական կազմավորումներ՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը և Աղրբեջանի Հանրապետությունը: Աղրբեջանցի քաղաքական ու ռազմական գործիչները պահը հարմար էին համարում պատմական Արցախի վերջին հայկական շրջանները բռնազավթելու համար: Այդ նպատակով Աղրբեջանում կանոնավոր զինված ուժեր ստեղծելու գործընթացում փորձեր արվեցին ներգրավելու դեռևս անորոշ կարգավիճակում գտնվող նախկին ԽՍՀՄ ԶՈՒ՝ այդ հանրապետությունում տեղակայված զորամասերի անձնակազմին, նախևառաջ՝ ռազմական մասնագետներին ու սպառազինությունը: Բարեբախտաբար, Աղրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության իրենց բաժին

սպառազինությունը ստանալու շուրջ բանակցությունները նախկին ԽՍՀՄ իրենց պաշտոնակիցների հետ այդ ժամանակ դրական արդյունք չունեցան: Սակայն, դեռևս մինչև այդ բանակցություններն էլ Ադրբեջանում ուղղակի բռնագրավվում էին նախկին ԽՍՀՄ զինված ուժերի սպառազինությունն ու տեխնիկան:

1992 թ. հունվարն, ադրբեջանական իսկ աղբյուրների գնահատմամբ, առանձնանում էր ներքաղաքական պայքարի սրացմամբ: Իշխանության մնացած նախկին կոմունիստական վարչակարգի և ընդդիմության, հատկապես Ադրբեջանի ժողովրդական ճակատի արմատական գործիչների միջև կատաղի պայքարն իշխանության համար անդրադառնում էր նաև ռազմական ոլորտին: Հենց այդ պայքարի հետևանք է համարվում Ադրբեջանի պաշտպանության նախարարի փոփոխությունը: Լեռնային Ղարաբաղում ադրբեջանական զինված կազմավորումների և ՆԳՆ ՄՀՆՋ-ի անհաջողությունների համար ընդդիմությունից մեղադրանքների արժանացած նախագահ Մութալիբովն անհատապես էր հետաքրքրված Արցախում տղավորիչ ռազմական հաջողության ձեռքբերմամբ և այդպիսի խնդիր անձամբ էր դրել նորանշանակ պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Թաջեդդին Մեհդիևի առաջ: Ադրբեջանական աղբյուրները լռում են, թե հատկապես ինչու է այդ նպատակի համար ընտրվել Քարինտակ փոքրիկ գյուղը: Ոմանք մոգոնում են Շուշիի և Լաչին-Շուշի ճանապարհի համար այդ փոքրիկ գյուղի իբր ներկայացրած մեծ վտանգի մասին չափազանցված պատճառաբանությունը, մինչդեռ իրական փաստերը միանգամայն հակառակն են ապացուցում:

Քարինտակի վրա հարձակվելու որոշումը Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը կարող էր կայացնել հետևյալ նկատառումներով.

ա) աշխարհագրական դիրքի գործոնը: Այս տեսակետից ուղղակի անհամադրելի են փոքրիկ գյուղի աշխարհագրական անբարենպաստ և, ընդհակառակը, Շուշիի գերիշխող դիրքերը: Այս ակնհայտ առավելությունը հակառակորդին հեշտությամբ հաղթանակի հասնելու հույսեր էր ներշնչում:

բ) կենդանի ուժի և սպառազինության անհամաչափ տարբերությունը:

Ադրբեջանական աղբյուրները չեն թաքցնում, որ իրենց հետախուզության տվյալներով՝ Քարինտակը պաշտպանում էր մոտավորապես

հինգ տասնյակ աշխարհազորային: Գյուղի ոչ բոլոր պաշտպաններն էին զինված ինքնաձիգներով և այլ մարտական հրազենով: Մեկ ձեռքի մատների վրա կարելի էր հաշվել գնդացիրները, նռնականետը և դիպուկազարկ հրացանը: Մեծամասնությունն առաջվա պես որսորդական հրացաններով էր դիրքերում հերթապահություն կատարում: Իսկ հրետանային և հակատանկային միջոցների մասին ընդհանրապես խոսք լինել չէր կարող: Ադրբեջանական հրամանատարությունը Քարինտակի դեմ կենտրոնացրել էր առնվազն երկու ուժեղացված գումարտակ, աֆղանական պատերազմում մարտական պարգևների արժանացած ու հայկական բնակավայրերի դեմ մարտական գործողություններում փորձ ձեռք բերած առնվազն 10 գրոհայիններից բաղկացած խումբ, ՆԳՆ հատուկ նախանշանակման և ՄՀՆՋ երկու դասակ, ընդհանուր առմամբ՝ մոտ 400 զինվոր ու սպա: Գրոհին ներգրավված էր 4 միավոր զրահատեխնիկա, որոնցից երկուսը տեխնիկական անսարքության կամ այլ պատճառներով նշանակված ժամին տեղ չի հասել, իսկ ադրբեջանցիների ԶՀԴՄ-ը մեկ այլ զրահամեքենայի կրակային աջակցությամբ հասել է գյուղի մատույցներին և պայթել ականի վրա: «Զաստավ» տեղամասից հրետանային ապահովում էր իրականացնում ԿՍ-19 թնդանոթը, Շուշիի պարսպաժայռից գործել են բազմաթիվ գնդացրային ու դիպուկազարկային կրակակետեր: Գյուղն անմիջապես գրոհած ադրբեջանական կանոնավոր ստորաբաժանումների մարտիկները զինված էին ինքնաձիգներով, գնդացիրներով, դիպուկազարկ հրացաններով և մեծ քանակությամբ զինամթերքով: Հակառակորդի հատուկ նախանշանակման ստորաբաժանումների գրոհայինները մինչ այդ Քարինտակում «անձնագրային ռեժիմի ստուգման» պատրվակով պատժիչ և 1991 թ. դեկտեմբերի 19-ին ու 28-ին հարձակողական գործողությունների մասնակից էին, ուստի քաջածանոթ էին տեղանքին: Քարինտակցիների վկայությամբ՝ շրջակա ադրբեջանական բնակավայրերից հարյուրներով խաժամուժ էր հավաքվել, որպեսզի գյուղ ներխուժի կողոպուտի համար: Ինչպես տեսնում ենք՝ ուժերի ու միջոցների ծայրահեղ անհամաչափ հարաբերակցությունը հակառակորդին անվերապահ հաղթանակի հասնելու հույս էր ներշնչում:

գ) նախկին ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և ԶՈՒ կարգախմբերի հետևում թաքնված Ադր.ԽՍՀ ուժայինների ահաբեկչական գործողություններն ադրբեջանական կողմը հաջողություն էր համարում և թյուրիմացաբար կարծում էր, թե կարող էր կատարել նաև սեփական ուժե-

րով: Այս հարցը կարևորվում է նաև այն առումով, որ որոշ բարձրաստիճան ուժայիններ այսօր էլ Ադրբեջանում հոխորտում են, որ իրենք ավելի փոքրաթիվ ուժերով հաջող «օպերացիաներ» են անցկացրել Շուշիի շրջանի Բերդաձորի ենթաշրջանի գյուղերում և հենց իսկ Քարինտակում: Իսկ իրականությունը միանգամայն այլ էր: Գաղտնիք չէ, որ Ադրբեջանում աներևակայելի հեղինակություն էին ձեռք բերել ՆԳՆ, նրա շրջանային, քաղաքային բաժինները, ՄՀՆՋ-ն (ՕՄՕՆ-ը): Իրականում այդ հեղինակությունը կեղծ էր, որովհետև ձեռք էր բերվել ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի և խորհրդային բանակի կարգախմբերի հետ միասին իրականացված ռեպրեսիվ միջոցառումների կամ օպերացիաների (անձնագրային ռեժիմի ստուգում, գենքի ու զինամթերքի որոնում, «գրոհայինների» հետապնդում, ռեյդեր ևն) հետևանքով: Կարելի է ասել, որ ադրբեջանական ուժայիններն իրենց լավ էին զգում, երբ թաքնված էին միութենական կառույցների իրենց գործընկերների (իմա՝ հանցակիցների) թիկունքում: Իսկ հայ աշխարհազորայինը բացի այլ խոչընդոտներից, ուներ նաև «կարմիր բանակայինի» անձեռնմխելիության բարդույթ: Իսկ երբ 1991 թ. դեկտեմբերի 25-ին սկսեցին Արցախի տարածքից դուրս բերել ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերը, հատկապես «ԴՕՆ» դիվիզիայի գնդերը, ադրբեջանցի «իզիթները» մեն-մենակ մնացին հայ ազատամարտիկի դեմ և մեկեն զգացին, որ հողը փախչում է ոտքերի տակից: Արցախի նոր կազմավորվող Ինքնապաշտպանության ուժերի աշնան վերջերին ու ձմեռվա սկզբներին իրականացրած ազատագրական մարտերը ցույց տվեցին, թե որ կողմն է ավելի մարտունակ և ի վիճակի մարտական խնդիրներ լուծելու: Ադրբեջանի ԶՈՒ առաջին կանոնավոր ստորաբաժանումը, որին վիճակվեց ուժերը չափել հայ աշխարհազորայինների հետ, Շիխովյան դեսանտագրոհային գումարտակն էր, որն ուժեղացնող այլ ստորաբաժանումների ու օժանդակ ուժերի հետ հարձակվեց Քարինտակի վրա: Ադրբեջանցիներին թվում էր, թե այդ փոքրիկ գյուղի գրավումն մի առանձին դժվարություն չի ներկայացնում, ուստի ներգրավված բոլոր ուժերն ու հրամանատարները ուզում էին ըոպե առաջ փառքի դափնիների արժանանալ և, մինչև անգամ, այդ հողի վրա իրար հետ մրցակցում ու հակադրվում էին: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ հենց այդ անհիմն փառասիրությունը և հայկական ուժերի թերագնահատումը ճակատագրական եղան օպերացիան նախաձեռնած ՊՆ բարձրաստիճան պաշտոնյաների և Ադրբեջանի ԶՈՒ 1-ին դեսանտագրոհային գումարտակի համար, որը գրեթե ամբողջությամբ ոչնչացավ Քարինտակում:

դ) Քարինտակը 1988 թ. սեպտեմբերից, փաստորեն, պաշարված էր: Գրեթե ամենօրյա գնդակոծությունները, հարձակումները, մարդորսությունը, հանրային ունեցվածքի վնասարարությունը և այլ խափանարար գործողություններ, ըստ ադրբեջանական կողմի, ընկճած պետք է լինեին Քարինտակի պաշտպաններին ու բնակչությանը, կաթվածահար արած լինեին գյուղատնտեսական աշխատանքները, առաջին անհրաժեշտության սննդամթերքի ու դեղորայքի մատակարարումները, ծանրացրած լիներ սովահար աշխարհազորայինների մարտական ու բարոյահոգեբանական վիճակը: Դա տեսականորեն հնարավոր էր: Իսկ գործնականում քարինտակցին, արհամարհելով գնդակոծություններն ու ամեն տեսակ վտանգները, շարունակել է հող մշակել, խոտ հարել և անասունն արտովայր տանել, դպրոց հաճախել ու հարսանիք անել կամ ծնունդ նշել, իսկ ամենակարևորը՝ թև ու թիկունք կանգնել հայրենի գյուղի պաշտպաններին, որոնք գիտակցում էին, որ իրենց թիկունքում ընտանիքն է, հետևաբար նահանջելու տեղ չկա, ընդհակառակը, հարկ եղած դեպքում կյանքի գնով պետք է պաշտպանել սեփական օջախը, հարազատներին: Յուրաքանչյուր ընտանիք հոգացել է իր անվտանգությունը երաշխավորող տղամարդու պաշտպանական գործառույթներից հարուցված բոլոր կարիքները: Իսկ տղամարդն էլ հերթափոխից հետո զբաղվել է գյուղատնտեսական աշխատանքներով, որպեսզի իր ընտանիքը հացի խնդիր չունենա: Հետևաբար, ադրբեջանական հրամանատարության հաշվարկները պաշարված գյուղը սովի մատնելու, ահաբեկելու և դիմադրական ոգին ընկճելու վերաբերյալ նույնպես սխալ դուրս եկան:

ե) ադրբեջանցիները գրեթե համոզված էին, որ Շուշիի բանտում բազմաթիվ քարինտակցիների առանջահարումները և տնական ահաբեկումը պետք է որ սարսափ տարածած լինեին գյուղում, ուստի բավական էր ադրբեջանական ՕՄՕՆ-ը հայտնվեր գյուղում, բնակիչները լեղաճաք եղած փախչելու էին: Բայց, ընդհակառակը, քարինտակցին ավելի է ամրապնդվել իր համոզմունքներում և խոր ատելությամբ լցվել թշնամու հանդեպ, ապա և բազմապատկված եռանդով ու վրեժխնդրությամբ դիմագրավել հայրենի գյուղի վրա հարձակված ոսոխի մեծաքանակ ուժերին: Հայրենի գյուղի պաշտպաններից Մարտին Ամիրջանյանի սխրագործությունն ասվածի լավագույն վկայությունն է:

Բազմաքանակ թշնամու դեմ կենաց մահու մարտն ընդունած Քարինտակը դարձավ Հայաստանի ռազմական պատմության նորագույն շրջանի մարտական փառքի գյուղերից մեկը: Բնակավայրի հերոսական պաշտպանությունն առայսօր հարուցում է ռազմարվեստի տեսաբանների ու դաշտային հրամանատարների կամ արհեստավարժ զինվորական մասնագետների զարմանքը: Կարծում ենք, որ ճակատամարտի արդյունքները դեռ երկար կհետաքրքրեն նրանց և կշարժեն այլևայլ հեղինակների վառ երևակայությունը:

1992 թ. հունվարի 26-ը բեկումնային եղավ ադրբեջանա-արցախյան պատերազմի ընթացքում. Քարինտակի հերոսամարտը վճռեց պայքարի ելքը՝ հող նախապատրաստելով առաջին հերթին Շուշիի ազատագրման, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման և նրա հետագա հաղթական առաջխաղացման համար:

1992 թ. հունվարի երկրորդ կեսը բնութագրվում է Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական ծանր իրավիճակով: Ստեփանակերտի և շրջակա հայկական գյուղերի մշտական հրետակոծություններ-ը, սահմանամերձ գյուղերի վրա հարձակումները բնակչությանը լարված վիճակում էին պահում, իսկ ոմանց, հատկապես ուժերի հարաբերակցությունը մաթեմատիկորեն հաշվարկողներին հասցրել էին հուսահատության եզրին: Եվ շատերը շունչը պահած սպասում էին Քարինտակի հերոսամարտի ելքին: Ուստի, երբ այն ունեցավ հաղթական ավարտ, հույս ներշնչեց հազարավոր մարդկանց, որոնց համար հասկանալի դարձավ, որ դիրքային առավելությունը, կենդանի ուժի և տեխնիկայի գերակշռությունն ամեննին էլ վճռորոշ չեն հաղթանակի համար, իսկ մարտական ոգին և կամային այլ որակները, հայրենի հողն ու օջախը պաշտպանելու վճռականությունը, մարտական ավանդույթներ-ը և պատմականորեն ձևավորված խոր ատելությունը թշնամու նկատմամբ դառնում են ինքնապաշտպանության դիմած ազատամարտիկների անխորտակ զենքերը:

Քարինտակի հերոսամարտը, փաստորեն, ձախողեց 1992-ի սկզբներին ռազմական նախաձեռնությունը հայկական ուժերից խլելու Աղրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության փորձը: Հայտնի է, որ այդ հերոսամարտից հետո Աղրբեջանում ավելի սրվեց իշխող վերնախավի տարբեր թևերի միջև հակադրությունը: Քարինտակի ճակատամարտում Աղրբեջանի ամենաընտիր ստորաբաժանումների ջախջախիչ պարտության մեղավոր ճանաչվեց ռազմագործողության մտահղացման հեղինակ և անմիջական հրամանատար, այդ ժամանակ պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Թ. Մեհդիևը:

Քավության նոխազ գտնելուց հետո անգամ հակառակորդի ճամբարում կրքերը չհանգստացան. պարտության հիմնական պատճառներից հայտարարվեցին հունվարյան սառնամանիքը, տեղացած ձյունը (փաստորեն թշնամու քարոզչական մեքենան, ակամա, ընդունում է բնության հարուցած խոչընդոտները հաղթահարած հայ զինվորների տոկունությունը, քանի որ այդ նույն եղանակային պայմաններում են կռվել նաև նրանք), սխալ պլանավորման ու դրա անհաջող կազմակերպման, կապի բացակայության և այլ մտացածին հանգամանքների վրա: Սակայն, հակառակորդի ուղեղում որևէ կերպ չեն տեղավորվում այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են իր տունն ու օջախը, ընտանիքն ու հայրենիքը պաշտպանող հայ ազատամարտիկի բարոյակամային անհամեմատելի առավելությունը, հայ զինվորի մարտական ոգին և պապերից ժառանգած մարտական ավանդույթները: Այդ գործոնները կարող են վճռորոշ լինել նաև ժամանակակից համազորային մարտում, մինչև անգամ 6-րդ սերնդի պատերազմներում, երբ, թվում է, ամեն ինչ որոշում են գերճշգրիտ զենքերն ու զինատեսակները: Սակայն, ինչպես ցույց տվեցին 2020 թ. սեպտեմբերի 27-ին Աղրբեջանի և Թուրքիայի սանձազերծած ու միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ 44 օրյա ագրեսիվ պատերազմի աղետալի հետևանքները, հակառակորդը բարոյահոգեբանական դիսբալանսը կարող է հաղթահարել հատուկ դեղամիջոցների (հոգեմետ հաբեր և թմրանյութեր) միջոցով: Այսուհետ չենք կարող միայն ապավինել բարոյահոգեբանական պատրաստությանը՝ երկրորդական պլան մղելով գերճշգրիտ զինատեսակներով սպառազինումը, 6-րդ սերնդի պատերազմներին յուրահատուկ մարտավարության յուրացումը և կիբեռման հմտությունների ձեռքբերումը:

Հակառակորդի հենակայանի ոչնչացումը Մալիբեկլու և շրջակա գյուղերում (1992 թ. փետրվարի 9-11)

ԼՂՀ սահմանների ամբողջ երկայնքով հակառակորդի զինված կազմավորումների չդադարող հարձակումներին ի պատասխան և թի-

կունքն ապահովելու նպատակով, ինքնապաշտպանական ուժերը ձեռնարկեցին ռազմական հենակետի վերածված Մալիբեկլուի ազատագրումը, որը սկսվեց փետրվարի 9-ին:

Ինչպես գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանն է խոստովանել՝ «Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությանը հայտնի չէր, թե ինչ ուժեր ուներ հակառակորդը Մալիբեկլու գյուղում, ուստի որոշում կայացվեց մարտով գիշերային հետախուզում իրականացնել: Ընդ որում՝ որոշ հետախույզների հրամայվեց հսկողության համար նպաստավոր դիրքեր զբաղեցնել և մարտի մեջ չմտնելով՝ փորձել գնահատել կռվող հակառակորդի ուժերը: Առանց կորուստների, մարտով հետախուզություն անցկացնելուց հետո, որին մասնակցեցին 40 մարտիկներ՝ Վ. Բալայանի գլխավորությամբ, պարզ դարձավ, որ հակառակորդի ուժերը մեծ չեն: Հենց հաջորդ գիշեր իրականացվեց գյուղը գրավելու գործողությունը: Գրոհը շարունակվեց Ղուշչուլար գյուղի ուղղությամբ, որտեղ նույնպես հաջողությամբ ոչնչացվեց հակառակորդի հենակայանը»[121]:

Ինքնապաշտպանության ուժերը, արյունահեղությունից խուսափելու համար, աղրբեջանական բնակչությանը հեռանալու հնարավորություն տվեցին: Արցախյան պատերազմի ամբողջ ընթացքում հայկական կողմը միշտ էլ աղրբեջանցի խաղաղ բնակչությանը հեռանալու հնարավորություն է տվել՝ տրամադրելով «միջանցք»: Սակայն, հաճախ դրանցից շտապել են օգտվել հակառակորդի զինյալները՝ դրանով իսկ ակամա նպաստելով հայերի հաջողությանը: Դա այն դեպքում, երբ աղրբեջանական ռազմական հենակետերի վերածված բնակավայրերի թե՛ բնակչությունը և թե՛ զինված խմբերը ապահովված էին ոչ միայն սննդի, այլև ռազմամթերքի զգալի պաշարով, ինչը նախատեսված էր հարձակողական ու պաշտպանական երկարատև մարտեր մղելու համար: Նույն իրադրությունն էր նաև Մալիբեկլուի հենակետի պարագայում: Գիշերվա ընթացքում այդ գյուղը գրեթե դատարկվեց: Հեռացողներն անցան մոտակա Ղուշչուլար գյուղը:

Նախօրյակին թույլ տրված սխալները շտկելուց և ուժերի վերախմբավորում կատարելուց հետո, ինքնապաշտպանական ուժերը փետրվարի 10-ի առավոտյան վերսկսեցին գրոհը, ինչը հաջողությամբ զարգացավ: Հատկանշելի են 1-ին վաշտի մարտիկների սրընթաց գործո-

[121] *Տեր-Թադևոսյան Ա.*, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

ղությունները: Նույն օրվա երեկոյան, կանխելով հակառակորդին, հայ մարտիկները հարված հասցին Ղուշչուլարում հապճեպ դիրքավորվող աղրբեջանցի զինյալներին: Փետրվարի 11-ին վնասազերծվեցին նաև Ներքին և Վերին Ղուշչուլար գյուղերը: Եոթրյա մարտերի արդյունքում հայ ռազմիկների վաստակած հաղթանակն այլևս անշրջելի էր, ինչին անզոր էին խանգարել անգամ Շուշիից և Ջանհասանից Ստեփանակերտի վրա արձակված հարյուրավոր հրթիռներն ու արկերը[122]: Մալիբեկլուի ազատագրումը, ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հերթական հաջողությունը լինելով՝ նաև մի կարևոր քայլ էր դեպի փաստացի անկախության հաստատում: Մայրաքաղաքն ազատվեց շրջափակման շղթայի ևս մի օղակից: Վերաբացվեց Ստեփանակերտի և Մարտունու շրջանի բնակավայրերի միջև հաղորդակցության ամենակարճ ճանապարհը: Արցախում բնավորված աղրբեջանական զինված կազմավորումները ևս մի ուժեղ հարված ստացան, ինչը նաև ահեղ զգուշացում էր նշանակում: Եվ, վերջապես ռազմական այդ հաղթանակը լավագույն ևվերն էր ազգային զարթոնքի ու վերածննդի օրվա առթիվ, ասել է թե՝ վերականգնվեց որևէ նշանակալի տարեդից նոր հաղթանակով նշելու ավանդույթը:

Մալիբեկլուի և Ղուշչուլարի ռազմակայանների կորստից անմիջապես հետո հակառակորդը լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Փետրվարի 14-ին աղրբեջանցիները Շուշիից առաջին անգամ Ստեփանակերտը հրթիռակոծեցին ՄՍ-21 «Գրադ» հրթիռահրետանային կայանքով, որը միջազգային համաձայնագրերով արգելված է կիրառել խաղաղ բնակավայրերի դեմ: Բայց և այնպես այդ զինատեսակի օգտագործումը շուրջ 50 հազարանոց Ստեփանակերտի ու շրջակա հայկական բնակավայրերի դեմ, ընդունեց մշտական ու անխնա բնույթ:

Փետրվարի 17-ին ինքնապաշտպանական ջոկատները մարտական գործողություններ ծավալեցին Ղարադաղլու գյուղի թշնամական հենակետի ուղղությամբ: Մասնակցելու պատրաստակամություն հանդես բերեցին շրջակա գրեթե բոլոր գյուղերի ինքնապաշտպանական ջոկատները: Հրետանային նախապատրաստությունից հետո, հայերը տարբեր կողմերից առաջանալով, սկսեցին տուն առ տուն ազատագրել այն: Չորսբոլորից տեղացող կրակի տակ հայտնված հակառակորդը

[122] *Հարությունյան Մ.*, Մալիբեկլուի ազատագրումը, «Մարտիկ», 1996 թ., № 7:

խուճապի էր մատնվել: Այն լիակատար դարձավ, երբ Ա. Ղուլյանի վաշտն ու Մ. Եղիազարյանի «Արաբո» ջոկատը շեշտակի հարվածով ճեղքեցին թշնամու պաշտպանական գիծը: Դիմադրությունը շարունակվում էր դպրոցի շենքում և շտաբում, որտեղ հավաքվել էին մեծ թվով աղրբեջանցի զինյալներ: Սեղմելով շրջապատման օղակը և միաժամանակ մաքրելով ազատագրված ամբողջ տարածքը, ինքնապաշտպանական ջոկատները, վերջին հարվածով ավարտին հասցրին Ղարադաղլուի վնասազերծումը[123]: Մարտական գործողությունների ամենաառաուն պահին Ամիրանալարից գրոհելով Մարտունու ուղղությամբ՝ հակառակորդը փորձեց շեղել ազատամարտիկների ուշադրությունը, սակայն, ապարդյուն:

Արցախի մյուս շրջաններում տեղական նշանակության մարտեր էին ընթանում: Մի քանի օր շարունակ պաշտպանական ծանր մարտեր էին մղում Մարադայի պաշտպանները: Փետրվարի 18-ին հակառակորդի հետևակը զրահատեխնիկայի ուղեկցությամբ, գրոհեց Շահումյանի շրջանի Մանաշիդ և Էրքեջ գյուղերը: Փետրվարի 20-ին ինտենսիվ մարտեր ընթացան Մարաղա, Սեյսուլան, Կարմիրավան, Քաջավան բնակավայրերի պաշտպանական բնագծերի ամբողջ երկայնքով: Այդ բնակավայրերի պաշտպանները, հակառակորդին կորուստներ պատճառելով, հետ շպրտեցին:

Մարտունու ինքնապաշտպանության ստորաբաժանումներն ախոյան բանակին հակահարված հասցրին՝ նպատակակետ դարձնելով Վերին Վեյսալուի ռազմական հենակետը: Այն, փակելով Մարտունու շրջանի խոշոր բնակավայրերից մեկի՝ Ճարտարի հաղորդակցության ճանապարհը շրջկենտրոնի հետ, հարաճուն վտանգ էր ներկայացնում Ճարտարցիների համար: Վերին Վեյսալուի ռազմագործողությունն ավելի կազմակերպված անցավ[124]: Ինքնապաշտպանական ջոկատները, մարտական տեխնիկայի աջակցությամբ, ճնշեցին դիմադրության վերջին կետերը և փետրվարի 22-ին ազատագրեցին գյուղը:

Ղարադաղլուի և Վերին Վեյսալուի ռազմագործողությունները կարևոր հաղթանակներ էին Մարտունու շրջանում միասնական ճակատ ու ապահով թիկունք ստեղծելու, ինչպես նաև Մարտունին անառիկ դարձնելու և Արցախի ԻՊՈՒ այդ ուղղության գործառնում մարտական լավագույն ավանդույթներ արմատավորելու առումով:

[123] ***Հարությունյան Մ.,*** Մարտունին ձերբազատվում է թրքական ավազակախոջերից, «Մարտիկ», 1996 թ., № 15:

[124] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀԱՏ, № 140, թ. 6:

Հակառակորդի հենակայանի ոչնչացումը Խոջալուում (1992 թ. փետրվարի 25-26)

Անդրադառնալով Խոջալուի վտանգավոր կրակակետերի վնասազերծման անհրաժեշտությանը՝ Ա. Տեր-Թադևոսյանը գրում է. «Մարտ ամսին Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը հասկացավ, որ անհրաժեշտ է ոչնչացնել հակառակորդի հենակետը Խոջալուում»[125]: Այստեղ ակներև վրիպակ կա, որովհետև մարտ ամսին չէ, որ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը պիտի հասկանար արդեն իսկ փետրվարին ազատագրված Խոջալուի ազատագրման անհրաժեշտության մասին, այլ առնվազն փետրվարի երկրորդ տասնօրյակին, Մալիբեկլուի և Ղուշչուլարի կրակակետերի վնասազերծումից հետո: Իսկ եթե հիշենք, որ Ա. Տեր-Թադևոսյանը խոսել է ավելի վաղ Արցախի ինքնապաշտպանության պլանի նախապատրաստման մասին, ուրեմն կարելի է ենթադրել, որ Խոջալուի և Ստեփանակերտի օդանավակայանի ազատագրումը պետք է որ կազմեին այդ պլանի կարևոր ու բաղկացուցիչ մասը:

Նման որոշման կայացումը զորավարը պայմանավորել է հետևյալ հանգամանքներով.

1. Հակառակորդը Խոջալուում տեղաղրել էր «ԲՄ-21» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ համակարգ («Գրադ») և պարբերաբար գնդակոծում էր Ստեփանակերտը՝ ավերելով քաղաքը և մեծաթիվ զոհեր պատճառելով խաղաղ բնակչությանը:

2. Ռազմական գործողություններն աստիճանաբար ավելի ինտենսիվ էին դառնում, և այդ պատճառով ավելանում էր բոլոր տեսակի մատակարարումների քանակը: Առաջին հերթին՝ դա վերաբերում էր Ինքնապաշտպանության ուժերի տրամադրության տակ հայտնված ռազմական տեխնիկային անհրաժեշտ վառելիքի մատակարարմանը: Ուղղաթիռներն այլևս գլուխ չէին հանում ավելի ու ավելի մեծացող բեռ-

[125] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ գիտվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19, ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 568:

նափոխադրումներից, իսկ ինքնաթիռների օգտագործման համար տե-
հրաժեշտ էր Խոջալուի (կարդալ՝ Ստեփանակերտի) օդանավակայանը:

Գործողությունը մանրակրկիտ ծրագրվեց երեք շաբաթների ըն-
թացքում: Ջոկատների հրամանատարները քարտեզի և Ինքնապաշտ-
պանության աժերի տեղագրական ծառայության պատրաստած տե-
ղանքի մանրակերտի վրա մշակեցին առաջիկա գործողության փուլե-
րը: Մեծ ուշադրություն հատկացվեց ռազմական գործողությունների
մշակմանը [ԼՂԻՄ-ին հատկացված մարզի սոցիալ-տնտեսական զար-
գացման 1988-1995 թթ. պլանով հատկացված միլիոններով.-Ս.Հ.] քա-
ղաքի վերածված [բնակավայրի] սահմաններում: Խոջալուում գտնվող
ադրբեջանցիները նկատել էին, որ հայերը նախապատրաստվում են
հարձակման, և կայազորի հրամանատարությունը համալրում էր պա-
հանջել, իսկ խաղաղ բնակչությունն սկսել էր հեռանալ քաղաքից:

Որոշվեց միաժամանակյա հարձակում իրագործել չորս ուղղութ-
յուններով՝ Նորագյուղ, Մեհտիշեն (Լուսաձոր), Քյաթուկ գյուղերի և օ-
դանավակայանի կողմերից: Մինչև գործողության սկսվելը, Խոջալուի
կայազորին և հայկական ջոկատների բոլոր հրամանատարներին
կենտրոնական հրամանատարությունն զգուշացրել էր քաղաքացիա-
կան բնակչության նահանջի համար միջանցք թողնելու մասին: Մի-
ջանցքն անցնում էր գյուղաքաղաքի արևելյան արվարձանից դեպի
հյուսիս-արևելք՝ Կարկառ գետի հունի երկայնքով դեպի Աղդամ քաղա-
քը:

Հայկական կամավորական ջոկատներն առաջին անգամ կիրա-
ռում էին զրահատեխնիկա՝ երկու միավոր հետախուզական-դետքային
զրահամեքենա[126], ինչպես նաև 100 մմ-անոց «Ռապիրա» հակատանկա-
յին մեկ թնդանոթ: Հարձակմանը ներգրավված էին 487 հայ մարտիկ-
ներ[127]: Հետախուզության տվյալներով Խոջալուն պաշտպանում էին հա-
կառակորդի մինչև 200 զինվորներ: Գրոհն սկսվեց ժամը 22.00-ին, իսկ
ռազմական գործողությունները տևեցին գրեթե մեկուկես օր: Ամենա-
համառ դիմադրությունը ցույց տրվեց հակառակորդի հենակետը դար-

[126] Այս պնդումը չի համապատասխանում իրականությանը: 366-րդ գնդի երկու միավոր զրահատեխնիկա 1992 թ. հունվարի 26-ին մասնակցել է Քարինտակի հերոսական պաշտպանությանը՝ կարճատև ժամանակահատվածում կրակային աջակցություն ցույց տալով մարտադաշտ ձգվող հակառակորդի տորանոր ուժերի զրահները կատեցնելու համար: Մեզ հայտնի երկրորդ դեպքը փետրվարի 22-ին էր Մարտունու շրջանի Վերին Վեյսալի գյուղի ազատագրման ժամանակ, որին մասնակցել է նաև 1 թե 2 զրահատեխնիկա՝ Սովսես Հակոբյանի շնորհիվ:

[127] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 569:

ձած ինք[128] հարկանի շենքի շրջանում: Դիմադրությունը ճնշելու համար
օգտագործվեցին հրթիռային երկու «Ալազան» կայանքներ, որոնցից մե-
կը գրավվել էր հենց Խոջալուում և խոշոր տրամաչափի երկու թնդա-
նոթ, որոնք նախապես տեղակայվել էին մերձակա բարձունքների
վրա[129]:

«Խոջալուի գործողության արդյունքում Ինքնապաշտպանության
ուժերը տվեցին 8 զոհ, իսկ հակառակորդը՝ 23»[130],- գրում է Ա. Տեր-Թադ-
լոսյանը: Հակառակորդի մարտական կորուստների մասին տվյալը
խիստ նվազեցված է թվում: Ջանազան հրապարակումներում ամենա-
տարբեր թվեր են նշվում, որոնք ակներևաբար քաղաքական ենթա-
տեքստ ունեն, ուստի արժանահավատ չեն կարող լինել: Իսկ քանի որ
այս պահին այդ թիվը ճշգրտել հնարավոր չէ, ուստի դա թողնում ենք
ապագային:

1992 թ. փետրվարի 25-ի երեկոյան սկսված և հաջորդ իսկ օրն ա-
վարտված Խոջալուի կրակակետերի ճնշման ռազմագործողությունը
Ինքնապաշտպանության ուժերի հերթական փայլուն հաջողությունն
էր, ինչի շնորհիվ զբաղեցվեցին ռազմավարական կրակադիրքեր, վնա-
սազերծվեց այդ կարևոր ռազմական հենակետը, որտեղից սպասվող
վտանգը գնալով ավելի սպառնալի չափեր էր ընդունել: Զրահամեքե-
նաների ուժեղ կրակի տակ հակառակորդի դիմադրության կետերը
ճնշեցին տարբեր կողմերից գրոհի ելած հայ մարտիկները: Հաջողութ-
յամբ իրականացվեց հետևակի և զրահամեքենաների փոխգործակ-
ցությունը: Կրկին կիրառվեց նախկինում երկուստեք կիրառված մար-
տավարական հնարը, որի հետևանքով այս ու այնտեղ բոցավառված
տների կրակակետերն ընդմիշտ լռեցին, իսկ Խոջալուում վխտացող
զինյալները խուճապի մատնվեցին: Սակայն մինչև փետրվարի 26-ի կե-
սօրը առանձին տներում դեռևս դիմադրողներ կային: Հատկապես
հինգհարկանի շենքում ամրացած և կատաղի դիմադրություն ցույց
տվող շուրջ 100 զինյալները[131], հայ մարտիկների ճնշմանը չդիմանալով,

[128] Իրականում՝ 5: Ա. Տեր-Թադևոսյանի հիշողությունից տարիների ընթացքում ջնջվել են իրադարձությունների որոշ մանրամասներ:

[129] Նաև սոմոնալով լցված մի վագոն հեռակառավարվող պայթուցիչով պետք է բաց թողնվեր դեպի Խոջալու և պայթեցվեր՝ խուճապ առաջացնելու համար, սակայն այն այդպես էլ չպայթեց:

[130] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հունիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19, ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 569:

[131] ***Јагублу Н.,*** Хочалы гырғыны, сəh 17.

նույնպես հարկադրված էին լքել իրենց դիրքերը և ճողոպրել Հացոտ լեռան ուղղությամբ:

Մինչ Խոջալուում մարտեր էին ընթանում, Ադրամի զինյալները փորձեցին օգնության հասնել: Նրանց նույնիսկ հաջողվեց մոտենալ Նախիջևանիկի մոտակա Սև լեռանը, սակայն առավելագույն «առաջխաղացման» այս վայրում կորցնելով 1 տանկ՝ հետ քաշվեցին:

Անպաշտպան գառների կեցվածք ընդունած աղրբեջանցիները Խոջալուում, ըստ որոշ տեղեկությունների, թողել էին 3 հրթիռային կայանք, 100 մմ թնդանոթ, 3 միավոր զրահատեխնիկա, 100 միավոր մարտական զենք և զինամթերքի վիթխարի պաշարներ[132]: Մեծ էր Խոջալուի ազատագրման ռազմաքաղաքական նշանակությունը: Նախ, վերականգնվեց հաղորդակցությունը Ասկերան ավանի հետ, անվտանգ դարձավ շրջկենտրոնի պաշտպանների թիկունքը, հոգեբանական հուսալի նեցուկ եղավ ցամաքային շրջափակման մեջ գտնվող արցախահայության համար, թեկուզև ժամանակավոր կապ ստեղծվեց արտաքին աշխարհի հետ, կանխվեց Ասկերանի վրայով Ստեփանակերտ ներխուժելու՝ հակառակորդի վաղեմի ծրագիրը, ծանր հարված հասցվեց Աղրբեջանի ռազմական մեքենային, էլ ավելի սրվեցին Բաքվի իշխանությունների և ընդդիմության ներհակությունները:

Այդուհանդերձ, ռազմաճակատի այլ ուղղություններում թշնամու ագրեսիվ գործողությունները չէին դադարում: Մասնավորապես ծանր էր իրավիճակը Մարտակերտի շրջանի հարավարևելյան սահմանեռում, քանի որ 6 միավոր զրահատեխնիկայի և 3 թնդանոթի կրակային աջակցությամբ՝ փետրվարի 26-ին հակառակորդը վերստին գրոհել էր Մեյսուլանը: Թիկունքի հետ մի փոքրիկ միջանցքով կապված գյուղը պաշտպանող մարտիկները շրջապատման մեջ հայտնվեցին: Հակատանկային միջոցների և զրահատեխնիկայի բացակայությունը դժվարացնում, գրեթե անհնարին էր դարձնում հայ մարտիկների դիմադրությունը: Փետրվարի 27-ին, ինչպես ներկայացնում էին տեղական հրամանատարները, փամփուշտների պակասի պատճառով, հայ մարտիկները դուրս եկան Մեյսուլանից[133]:

Նույն օրը ԼՂՀ ԻՊՈՒ-ն ձեռք բերեց այնքան սպասված անդրանիկ ՄՄ-21 «Գրադ» կայանքը՝ իր 80 հրթիռներով, ինչը կրակի ռեակտիվ

[132] «Մարտիկ», 1996թ., № 9:
[133] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀԱՏ, № 140, թ. 21:

համակարգերի սպառազինությունում հակառակորդի լիակատար գերակշռությանը վերջ տալու հույս էր ներշնչում:

Ասկերան-Ստեփանակերտ ռազմավարական գծով ԼՂՀ տարածք ներխուժելու թշնամու համառ փորձերը, մասնավորապես երկու ռազմական ուղղաթիռների կրակի աջակցությամբ, նրա հարձակողական գործողությունները Ասկերանի 2-րդ և 3-րդ պահակակետերի ուղղությամբ հետ մղելիս ԻՊՈՒ մարտիկները օդուժի դեմ պայքարելու հմտություններ էին ձեռք բերում:

Փետրվարի 28-ի լույս 29-ի գիշերը մարտական գործողությունները շարունակվեցին Մարտակերտում, Կարմիրավանում և Քաջավանում: Հաջորդ օրը մարտեր մղվեցին ոչ միայն այս գյուղերում, այլև Կիչանում ու Չափարում: Երկարատև ու համառ պայքարի արդյունքում Մարտակերտի շրջանում աղրբեջանական ռազմական հենակետ Ծաղկաշեն (Ումուլթլու) գյուղն անցավ հայ մարտիկների վերահսկողության տակ: Իսկ հակառակորդը հրի մատնեց նույն շրջանի հարավ-արևելքում գտնվող հայկական Հացավան (Յարմջա) գյուղը:

Այսպիսով, 1991-1992 թթ. ձմեռային ռազմարշավի ընթացքում, հակառակորդի կենդանի ուժի և միջոցների առավելությամբ հանդերձ, Արցախի ինքնապաշտպանության ուժերը հիմնականում հաջողությամբ հետ էին մղում բոլոր հարձակումները և իրականացնում նաև վտանգավոր հենակայանների ու կրակակետերի վնասազերծման գործողություններ, որոնց շնորհիվ ավելի նպաստավոր դիրքեր էին զբաղեցնում հետագա խնդիրներն արդյունավետորեն կատարելու համար: Տեղական նշանակության այդ մարտերում ձեռք էին բերվում փոխգործակցության, ղեկավարման և մարտավարության անհրաժեշտ հմտություններ, որոնք հաճախ ստանում էին տեսական ու գործնական գիտելիքների, ինչպես նաև կաղրային ու բնատուր հրամանատարական ընդունակություններ ունեցող սպաների ներդաշնակ գործողությունների համադրման ու միատեղման դրսևորումներ:

1992 թ. գարնանային ռազմարշավի առանձնահատկությունները

1992 թ. մարտ ամիսում շարունակվեցին ԼՂՀ խաղաղ բնակավայրերի մշտական հրթիռահրետակոծությունները և Աղրբեջանի զինված կազմավորումների՝ զրահատեխնիկայի ու ռազմական ուղղաթիռ-

ների կիրառմամբ լայնածավալ հարձակումները: Միաժամանակ չէին դադարում նաև օտարերկրյա միջնորդական առաքելությունները, իսկ որոշ տերությունների կողմից՝ նույնիսկ բացահայտ սպառնալիքներն ու հոխորտանքները: Այդ ամենը, սակայն, արգելք կամ խոչընդոտ չդիտվեց Արցախն աղրբեջանական զինյալներից ու ռազմական հենակետերից ազատելու պատմական առաքելությունն իրագործելու ճանապարհին:

Հակառակորդի ակտիվությունը մասամբ պայմանավորված էր մարտի սկզբներին Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գնդի Արցախից դուրսբերմամբ: Աղրբեջանական ռազմաքաղաքական ղեկավարությունը զորամասի հրամանատարությանը մեղադրում էր հայերի կողմից մարտական գործողություններին մասնակցելու մեջ: Նախապաշարումներ ունեցող մարդիկ խուճապի էին մատնվել, որ ռուսները լքում են Արցախը և մեն-մենակ թողնում թշնամու դեմ: Այնինչ, բացառիկ հնարավորություն էր ստեղծվում հեռացող զորամասի հաշվին ԻՊՈՒ զինանոցը համալրելու համար, որին էլ ձեռնամուխ եղան հայ մարտիկները: 1918 թ. դասերը, երբ չհերիքեց Լեռնային Ղարաբաղի ղեկավարների վճռակամությունը՝ զինաթափելու հեռացող ռուսական սահմանապահ ջոկատին, որի սպառազինությունը բաժին հասավ թշնամուն[134], կարծես թե օգնեցին հայերին ահագնացող վտանգի պայմաններում այս անգամ բաց չթողնել ընձեռված հնարավորությունը:

Ամսվա առաջին օրերին հակառակորդին հաջողվեց ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելու միջոցով ռազմաճակատի առանձին տեղամասերում ժամանակավոր հաջողության հասնել: Միայն մարտի 3-ին հակառակորդը Սրխավենդ մտցրեց 2 տանկ, 6 ՀՄՄ, 2 ՋՓԴ և այլ տեխնիկա, իսկ հաջորդ օրը 6 միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակվեց Ղազանչիի վրա: Գյուղը պաշտպանող վաշտից 27 զինվոր դիրքավորվել էր գերիշխող բարձունքների վրա: Թեև նախօրոք ականապատվել էր Ալիաղալու-Ղազանչի ճանապարհը, բայց թշնամուն հաջողվեց մոտենալ գյուղին, զավթել Եռե-խամ և Կըրըվերեն խութ բարձունքները: Հայ ռազմիկները մարտն ընդունեցին վաշտի շտաբի մատույցներում: Գյուղը հրետակոծվում էր Սրխավենդից, Բաշ Գյունեյփեյայից, Մանիքլուից, Ալիպղալուից: Այդուհանդերձ, գյու-

[134] Տե՛ս *Իշխանեան Ե.,* Լեռնային Ղարաբաղ. 1917-1920 թթ., Ե., 1999, էջ 92-93:

ղի պաշտպաններին հաջողվեց ամուր պահել Խաչինխութը: Ղազանչիի ուղղությամբ հաջողությունը զարգացնելու մտադրությամբ, հակառակորդը ժամը 13-ին հարձակվեց նաև Կիչանի վրա՝ ներգրավելով 5 թնդանոթ, 3 տանկ, 5 ՀՄՄ, 2 ՋՓԴ, 2 ՀԻՄՄ[135]: Երկու ճակատներում էլ հայ մարտիկները դիմադրեցին մինչև ժամը 20-ը: Վաղ առավոտյան անգամ վերադարձվեցին Ղազանչիի բարձունքները, բացի Կըրըվերեն խութից, որտեղ հակառակորդը մեծ ուժեր էր կուտակել: Կանգ չառնելով մեծաթիվ կորուստների առաջ (միայն Եռե-խամի ուղղությունում թշնամին 75 զինվոր կորցրեց), աղրբեջանցիները շարունակում էին հարձակումները: Գյուղի պաշտպանները, նոր զոհերից խուսափելու համար, կազմակերպված նահանջեցին[136]: Դրանից ոգևորված հակառակորդը Փափրավենդից, 4 ՋՓԴ-ի աջակցությամբ, հարձակվեց Մարտակերտի ուղղությամբ՝ շարունակելով Կիչան, Քաջավան, Կարմիրավան, Մարաղա բնակավայրերի հրետակոծությունը:

Մարտի 6-ին ծանր պաշտպանական մարտեր էին մղվում Ասկերանի մատույցներում և Կիչանում: Այդ ուղղություններում հակառակորդի ակտիվությունը ճնշելու նպատակով ԻՊՈՒ հրամանատարությունը մշակեց հակահարձակման գործողություն՝ «լավագույն պաշտպանությունը հակահարձակումն է» համաշխարհային ռազմարվեստում ընդունված ու հաջողությամբ կիրառված սկզբունքով:

Մարտի 11-ին Ասկերանի ԻՊՈՒ-ը ռազմագործողություն ձեռնարկեցին Խրամորթի ուղղությունում հանձնված դիրքերը վերադարձնելու նպատակով: Նույն օրը ԻՊՈՒ հարվածային ստորաբաժանումները ռազմագործողություն սկսեցին նաև Սրխավենդի հատվածում: Երեկոյան կողմ գյուղն ազատագրվեց, ճնշվեցին թշնամու քոլոր կրակակետերը: Պահակակետեր կարգվեցին, իսկ ազատամարտիկների շրջիկ խմբերը «սանրեցին» գյուղի տարածքը: Առգրավվեց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք[137]: Զարգացնելով հաջողությունը՝ ԻՊՈՒ ստորաբաժանումներն ազատագրեցին նաև շրջակա Մանիքլու, Խաթրնբեյլու, Բաշ Գյունեյփեյա, Օրթա Գյունեյփեյա բնակավայրերը:

Սրխավենդի ու շրջակա գյուղերի կրակակետերի ոչնչացման ժամանակ Աղդամի շրջանից փորձեցին օգնության հասնել, նույնիսկ, ճեղքել ռազմաճակատի մի այլ տեղամաս և մխրճվել Ինքնապաշտպա-

[135] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 140, էջ 36:
[136] «Մարտիկ», 1994 թ., № 5:
[137] «Մարտիկ», 1998 թ., № 8:

Ապրիլի 10-ին հակառակորդը Միր-Բաշիրից ներխուժեց Մարտաղա: Մարտաղացիները հանկարծակիի եկան, շատերը չհասցրին հեռանալ թաքստոցներից, ուր և կնքեցին իրենց մահկանացուն: Հակահարձակման անցած ԻՊՈՒ մարտիկները հետ շպրտեցին թշնամուն[140]: ԼՂՀ ԳԽ նախագահությունն ապրիլի 14-ին տարածեց հայտարարություն, որը եզրափակվում էր հետևյալ բազմիմաստ նախադասությամբ. «Մարտաղ գյուղի խաղաղ բնակչության բարբարոսական ոչնչացումը, ինչը թելադրված չէր ռազմական անհրաժեշտությունից, չպետք է անպատիժ մնա և հետևանքների համար ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Ադրբեջանի Հանրապետության ղեկավարության վրա»[141]:

Մարտաղայում ծավալված մարտական գործողությունների մասին ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանը գրում է. «Ապրիլի 10-ին ադրբեջանցիները գրավեցին Մարտակերտի շրջանի Մարտաղ գյուղը և կոտորեցին գյուղի խաղաղ բնակչությանը՝ գազանաբար սպանելով 57 մարդու, այդ թվում՝ երեխաների, կանանց և ծերերի: Գյուղի 53 բնակիչներ պատանդ վերցվեցին: Նույն օրը երեկոյան հայկական ջոկատները երկու զրահամեքենաների ուղեկցությամբ և փոխգնդապետ Ֆելիքս Գզողյանի գլխավորությամբ, գրոհ ձեռնարկեցին գյուղի վրա և հակառակորդին դուրս շպրտեցին Մարտաղայից»[142]:

Ակներևաբար, ԻՊՈՒ հաջող հակահարձակումը հակառակորդի գերակշիռ ուժերի դեմ ներգրավված ուժերի ու միջոցների գրագետ կիրառման, գործողությունների ներդաշնակման և հարթավայրային տեղանքում զրահատեխնիկայի արդյունավետ օգտագործման առումով առաջնութացի վկայություն էր:

Շուշի բերդաքաղաքի ազատագրման օպերացիան (1992 թ. մայիսի 7-9)

Արցախյան պատերազմի այս կարևոր իրադարձության մասին շատ է գրվել: Այն լուսաբանող գրականության միայն թվարկումը շատ տեղ կզբաղեցներ: Ուզում ենք նշել, որ Շուշիի ազատագրման պատ-

[140] «Արցախ» (հանդես), 1993, № 1-2, էջ 8-10:
[141] ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 5, պ. մ. 13, կ. 1, էջ 60-61:
[142] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

մագրությունը և հենց իսկ դրան առնչվող իրադարձությունների գիտական ուսումնասիրությանը նվիրել ենք մեր գիտաստեղծագործական գործունեության քառորդ դարը: Հաջողվել է բազմաթիվ հարցեր պարզաբանել ու ճշգրտել, բայց դեռ ուսումնասիրությունների տեղ կա: Կարծում ենք, որ զգալի աշխատանք է կատարվել նաև ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հրամանով ստեղծված աշխատանքային խումբը[143], որում ընդգրկված է եղել նաև տողերիս հեղինակը: Համատեղ աշխատանքի արդյունքները հրատարակվել են գրքույկի և առանձին հոդվածի տեսքով[144]: Այդ համատեղ աշխատանքը համարելով ժամանակագրորեն վերջինը և դրա արդյունքները համադրելով օպերացիայի հրամանատար, գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանի վերլուծության հետ, Շուշիի ազատագրումը և Լաչինի միջանցքի բացումը ներկայացնում ենք ռազմական արվեստի տեսանկյունից:

ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ վարչության հրապարակած նյութում, ինչպես տեղեկացվում է նախաբանում, «քսան տարվա վաղեմության հիշողությունների հիման վրա, փորձ է արվել վերականգնել անառիկ Շուշիի ազատագրման մարտական գործողությունների ձևերն ու առանձնահատկությունները, վերհանել և ռազմական արվեստի տեսանկյունից գնահատել այդ օպերացիայի լավագույն փորձը, որը անկասկած ուսանելի է նաև մեր օրերի հրամանատարների համար՝ հասկանալի պատճառներով քիչ անդրադառնալով պատմական դեպքերին ու իրադարձություններին: Ու թեև, ինչպես ծանուցված է նույն տեղում «օպերացիայի նախապատրաստման ու վարման ընթացքի ուսումնասիրման նպատակով զրույցներ են անցկացվել շուրջ 40 մասնակիցների, այդ թվում օպերացիայի 6 ղեկավարների և տարբեր օղակների 14 հրամանատարների հետ, այնուամենայնիվ մարտական գործողությունների նախապատրաստման ու վարման վերաբերյալ շատ հարցեր ու տվյալներ լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն»[145]: Այս հանգամանքն է նաև դրդում շարունակել ուսումնասիրությունները՝ նախորդ-

[143] Շուշիի ազատագրման պատմական և ռազմական նշանակության ուսումնասիրման և վերլուծության աշխատանքային խումբը (ղեկտեմբեր՝ ՀՀ ԶՈՒ ԳՇ օպերատիվ վարչության պետ, գեներալ-մայոր Ա. Դավթյան) ստեղծվել է ՀՀ պաշտպանության նախարարի 17.08.2011թ. N 944 հրամանով:
[144] Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից (ավիրվում է Շուշիի ազատագրման 20-ամյակին) / ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի օպերատիվ վարչություն, Երևան, ՀՀ ՊՆ վարչ. ապարատի հրատ., 2012, 44 էջ, ***Դավթյան Ա., Ավանեսյան Մ.,*** Շուշիի ազատագրումը և դրա պատմական նշանակությունը, «Հայկական բանակ», 2012, № 1-2, էջ 26-42:
[145] Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից, էջ 3:

ները ճշգրտելու և լրամշակելու, ինչպես նաև նորահայտ տվյալներով գիտական գիտելիքների բազան հարստացնելու ճանապարհով:

Շուշիի ազատագրման օպերացիայի վերաբերյալ խնդրո առարկա նյութը, լրամշակելով ու հարստացնելով հայթայթված լրացուցիչ տեղեկություններով, ինչպես նաև մեր բազմամյա ուսումնասիրությունների արդյունքներով՝ սույն մենագրությունում ընդհանրացրել ենք այդ փայլուն օպերացիայի մարտական փորձը, դիտարկել բացառապես օպերացիայի ռազմագիտական կողմերը:

Հակառակորդ կողմերի ուժերի հարաբերակցությունը

Ինչպես ցույց տվեցինք նախորդ շարադրանքում՝ 1992թ. գարնանը ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը հերոսական ու անձնուրաց պայքարով կարողացան դիմագրավել գերակշիռ ուժերով ու միջոցներով անընդհատ հարձակվող հակառակորդին, դուրս գալ անելանելի դրությունից, ստեղծել է՛լ ավելի պաշտպանունակ ու մարտունակ ենթակառույցներ: Սակայն պատերազմն ավելի էր ահագնանում, հակառակորդը փորձում էր նոր թափով անցնել հարձակման, կիրառման մեջ էր դնում ավելի հզոր զինատեսակներ: Ստեղծված պայմաններում Արցախի համար առաձնահատուկ վտանգ էին ներկայացնում Շուշիի, Քյոսալարի, Ջանհասանի, Կարագյավի, Լեսնոյեի հենակետերը, որոնցից անդադար վարվող կրակը և պարբերական հարձակումները մահաբեր էին շրջակա հայկական բնակավայրերի, մանավանդ՝ մայրաքաղաքի համար: Անհրաժեշտ էր սեղմ ժամկետներում կրակակետերի վերածված այդ բնակավայրերը վնասազերծել հակառակորդի զրոհայիններից, այլապես ռեսուրսների և հաղորդակցության ուղիների ծայրահեղ անհավասար պայմաններում ժամանակն աշխատում էր ի վնաս հայկական կողմի:

Արդեն սկսած 1991 թ. սեպտեմբերից Շուշիից անխնա հրթիռակոծվում էր Ստեփանակերտ քաղաքը, որտեղ զոհերի, վիրավորների ու ավերածությունների թիվն օրեցօր ավելանում էր: Խաղաղ բնակչությունը կամ պատսպարվում էր նկուղներում կամ էլ ապաստան էր գտնում ավելի ապահով վայրերում: Համաճարակային հիվանդությունները սովի, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի մատակարարումների խափանման պայմաններում, տարածվելու և հումանիտար աղետի պատկերն ամբողջացնելու վտանգ էին ստեղծել:

Միայն «1992 թ. սկզբից մայրաքաղաքը ենթարկվել է հրետակոծության 170, իսկ Շուշիից անմիջական հարձակման՝ 11 անգամ: ԼՂՀ մայրաքաղաքի վրա արձակվել է տարբեր տրամաչափի 4253 արկ ու հրթիռ, այդ թվում՝ ՄՄ-21 «Գրադ» կայանքի 2437 ռեակտիվ արկ (հիմնականում՝ բեկորաֆուգասային), «Ալազան» և «Կրիստալ» կայանքների փոխված մարտագլխիկներով 527 հրթիռ, 100 մմ 593 արկ և այլն: Ա-վերվել է 188 և վնասվել 223 բնակելի շենք կամ մոտ 2000 բնակարան: Հիմնահատակ ավերվել են 54 և վնասվել 147 սոցիալ-մշակութային, կենցաղային և վարչական օբյեկտներ: Զոհվել են Ստեփանակերտի 90 քաղաքացիներ, մեծ մասամբ՝ կանայք ու երեխաներ, իսկ 268-ն ստացել է բեկորային և այլ վնասվածքներ: Մայրաքաղաքի մոտ 10 հազար բնակիչ մնացել է անօթևան»[146]:

Ուժերի ու միջոցների հարաբերակցությունն ԻՊՈՒ նախկին հրամանատարն անհամեմատ էր համարում: Նրա իսկ գնահատմամբ՝ «Կոմիտեի ղեկավարությունը գիտակցում էր, որ հայկական ջոկատների ուժը բավարար չէ հաջողությամբ գործողությունն իրականացնելու համար: Ակնհայտ էր, որ եթե անգամ մենք այդ գործողության մեջ ընդգրկեինք մեր տրամադրության տակ գտնվող բոլոր ջոկատները, ապա լավագույն դեպքում զորքերի թվաքանակը հավասար կլիներ: Մինչդեռ ռազմական տեխնիկայի, հրետանու և զինամթերքի առումով հայկական կողմն ամեն դեպքում խիստ զիջում էր Շուշիի [և շրջակա հենակետերի.- Մ. Հ.] ադրբեջանական ուժերին»[147]:

Ըստ հետախուզական տվյալների՝ 1992 թ. ապրիլի 27-ի դրությամբ Շուշիում կենտրոնացված էր 11 միավոր տանկ, 9 ՀՄՄ, 10 ՋՓԴ, 2 ՋՀԴՄ, 100 մմ-ոց 3 թնդանոթ, 2 ՄՄ-21 «Գրադ» համազարկային կայանք, «ՈՒԱԶ»-ներում տեղակայված 3 ԿՊՎԴ գնդացիր, մոտ 1500 զրոհայիններ[148], իսկ մայիսի 6-ին Լաչինից Շուշի են տեղափոխվել 15-20 միավոր մեքենա, 4 ՀՄՄ, 4 ՋՓԴ[149]: Ըստ երևույթին, այս տեխնիկայի ու սպառազինության մի մասը տեղաբաշխվել է Ջանհասան-Քյոսալար,

[146] Տե՛ս ԼՂՀ ՍԳՆ մամուլի կենտրոնի արխիվ, գ. 29, թ. 52, հմմտ.՝ ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 79-80, ***նույնի՝*** Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի արդյունքների և պատմական նշանակության մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), 2020, № 1, էջ 55:

[147] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 570:

[148] ԼՂՀ ՊԲ արխիվ, ռադիոկայանի ապպարատային մատյան, հաղորդում ժամը 16^{00} առ 27.04.92 թ.:

[149] Ն. տ., հաղորդում ժամը 11^{35} առ 06.05.92 թ.:

Գործողության պլանը, որը ժամանակին գիտական շրջանառության մեջ է դրել տողերիս հեղինակը, հրամանատարը հակիրճ ներկայացրել է հետևյալ կերպ. «հակառակորդին ջախջախելու և Շուշին ու հարակից գյուղերն ազատագրելու համար գրոհ է ձեռնարկվում չորս ուղղություններով.

Քյոսալարի ուղղություն. հասցվում է ուշադրությունը շեղող հարված, և հաջողության հասնելու դեպքում գրավվում են Քյոսալար և Կաթարցավ բնակավայրերը:

«26»-ի ուղղություն. հսկողության տակ են առնվում Շուշիի հարակից բարձունքները, որին հետևում է Շուշի քաղաքի հյուսիսային արվարձանի գրավումը:

Շուշի ուղղություն. գրավվում է Շուշիի արևելյան արվարձանը՝ սահմանագծին ամրացված բանտ-հիվանդանոցի հետ միասին:

Լաչինի ուղղություն. հարձակում Զարիսլու և Լիսագոր գյուղերի վրա՝ վերջինիս մոտ գտնվող և տիրապետող դիրք զբաղեցնող բարձունքը գրավելու, Շուշի-Լաչին ճանապարհը վերահսկողության տակ առնելու և համալրման մոտեցումը չթույլատրելու նպատակով[157]:

Շուշիի ազատագրման օպերացիայի որոշման կայացման ու պլանավորման աշխատանքներն իրականացվել են ԼՂՀ ՊՊՈՒ շտաբում, Պաշտպանության կոմիտեի ղեկավարության հսկողությամբ ու մասնակցությամբ: Մշակվել է օպերացիայի պլան, մարտական հրաման, կատարվել է հիմնականում հրետանային միջոցներով հակառակորդի կրակային խոցման պլանավորում, անցկացվել են օպերացիայի ապահովման ամենաանհրաժեշտ միջոցառումներ: Կազմակերպվել ու իրականացվել է հակառակորդի համակողմանի մանրազնին հետախուզություն: Նախապատրաստական աշխատանքները շարունակվել են մինչև մայիսի 2-ը: Հենց այդ օրն էլ ՊՊՈՒ հրամանատար, գնդապետ Ա. Տեր-Թադևոսյանը պատրաստականության մասին զեկուցել է Պաշտպանության կոմիտեի նախագահին:

Տեղեկույթի հոսք թույլ չտալու նպատակով օպերացիայի ընդհանուր մտահղացմանը տեղյակ են եղել հնարավորինս սահմանափակ քանակությամբ անձինք: Ինչպես վկայում է ՊՊՈՒ հրամանատարը՝ գործողությունների իրական պլանի քարտեզի հետ մշակվել է նաև կեղծ պլանի քարտեզ: Նախապատրաստական միջոցառումների առա-

[157] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

ջադրանքները կատարողները հիմնականում իրականացրել են առանց հետաքրքրվելու նպատակներն իմանալու, մարտական խնդիրների առաջադրումը կատարվել է սոսկ նրանց վերաբերող մասով, օգտագործվել են խիստ սահմանափակ գրավոր փաստաթղթեր:

Օպերացիայի նախապատրաստման ընթացքում, շուրջ երկու ամիս, օգտագործելով բոլոր հնարավորությունները՝ տարբեր օղակներ իրականացրել են հակառակորդի մանրակրկիտ հետախուզություն: Բացի ՊՊՈՒ շտաբի անցկացրած ընդհանուր հետախուզական աշխատանքներից, հակառակորդը հետախուզվում էր նաև ըստ ուղղությունների: Շուշի քաղաքում և հարակից տարածքներում հակառակորդի ցանկացած շարժ ու գործողություն հսկողության տակ էր:

Հետախուզական դասակի հրամանատար Ռուսլան Իսրաելյանի վկայությամբ՝ ՊՊՈՒ հրամանատարի հանձնարարությամբ դեռևս մարտի 20-ից Դաշուշեն և Շոշ գյուղերի հարակից բարձունքներում տեղակայվել են դիտակետեր, որոնցից դպրոցական աստղադիտակներով անընդհատ դիտարկվել են Շուշիում և շրջակա տարածքում գործող հակառակորդի տեղաշարժերը և ուժերի ու միջոցների կուտակումները: Հետախուզությամբ ձեռք բերված տվյալների մասին հետախույզներն անմիջապես զեկուցել են անձամբ ՊՊՈՒ հրամանատարին, որն էլ հավաքագրում և վերլուծում էր ամբողջ տեղեկույթը:

ՊՊՈՒ համար աննախադեպ ծավալուն ռազմական գործողությունների ապահովման համար կապի միջոցների, մասնավորապես ռադիոկայանների, նաև համապատասխան պատրաստվածության կապավորների քանակը բավարար չէր: ՊՊՈՒ շտաբի կապի պետ Ա. Փափազյանը եղած միջոցների հետ կիրառման է դրել տաքսիների ու շտապ օգնության մեքենաների ռադիոկայանները, կազմակերպել ու անցկացրել է կապավորների մասնագիտացման մակարդակի բարձրացման գործնական պարապմունքներ[158]:

Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվել նաև տեղանքի ուսումնասիրմանը: Համաձայն առաջադրված խնդիրների, տարբեր մակարդակներով անցկացվող տեղազննման աշխատանքներին մասնակցել են բոլոր հրամանատարներն ու պետերը: Տեղանքում աշխատանքների ընթացքում, ըստ ուղղությունների և առանձին ենթաուղղությունների, բծախնդրորեն ճշգրտվել են հարձակման ելման շրջանները, ա-

[158] Տես «Հայ զինվոր», 1999 թ., № 19, «Մարտիկ», 1994 թ., № 24, հմմտ.՝ ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 97:

ռաջխաղացման ուղիները, բնագծերի կամ օբյեկտների գրավման եղանակներն ու ժամանակը, օբյեկտների կամ նշանակետերի խոցման կարգը, փոխգործակցության, փոխադարձ ճանաչման և այլ հարցեր:

Ուղղությունների ու ջոկատների հրամանատարներին ցուցում էր տրվել ստորաբաժանումներից ընտրել օպերացիայի մասնակիցներին և ցուցակները ներկայացնել ԻՊՈՒ շտաբ:

Փոխադարձ ճանաչման նպատակով որոշվել էր ընդգրկված անձնակազմի ու սպառազինության վրա ունենալ սպիտակ խաչերի տարբերանշաններ:

Օպերացիայի համար անհրաժեշտ միջոցները ներկրվում էին ուղղաթիռների միջոցով: Թիկունքային ու բժշկական ապահովման հարցերը, սուղ հնարավորություններով հանդերձ, այնուամենայնիվ կազմակերպվել էին:

Բոլորի համար պարզ էր, որ Շուշին անառիկ ամրոց է և առանց ռազմական արվեստի յուրահատուկ հնարքների կիրառման, այն էլ հակառակորդի համարյա եռակի ավելի ուժերի ու միջոցների փոխհարաբերակցության պայմաններում, նրա գրավումն անհնարին է:

Ըստ պահպանված մարտական հրամանի տվյալների՝ հակառակորդը շուրջ 1200 անձնակազմով շրջանաձև պաշտպանության էր անցել Շուշի քաղաքում և նրա հարակից 1006,6, 1360, 1529, 1329 նիշերով բարձունքներում, մոտ 100 անձնակազմով Զառիստ գյուղում, 300-350 զինծառայողներով՝ Լիսագորսկում, մոտ 300 զինծառայողներով՝ Քյոսալարի ուղղությամբ:

ԼՂՀ ԻՊՈՒ խնդիրն էր՝ ջախջախել հակառակորդին Լիսագորսկ, Զառիստ, Զանհասան, Կարագյավ բնակավայրերի շրջաններում և Շուշի քաղաքի մատույցներում, ազատագրել Շուշի քաղաքը, այնուհետև զարգացնելով հարձակումը Բերդաձորի ուղղությամբ՝ ազատագրել Բերդաձորի ենթաշրջանը[159]:

Վերլուծելով մարտական հրամանի տվյալները՝ հնարավոր է ընկալել օպերացիայի մտահղացումը, որը համապատասխանելով օպերատիվ արվեստի դրույթներին, ունի նաև դասական օրինակներին չհամապատասխանող անկանխատեսելի բնույթ ու ռիսկի չափազանց մեծ գործոն: Օպերացիայի անցկացումից հետո, ուսումնասիրելով դրա

[159] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 92:

ընթացքն ու եղած փաստագրական նյութերը, մտահղացումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ[160].

Ըստ ուղղությունների 1992 թ. մայիսի 7-ի օրվա վերջում ստորաբաժանումները ծածուկ կերպով դուրս բերել նախորոշված հարձակման ելման շրջաններ: Աննկատ տեղաշարժերով ու հանկարծակի գրոհով տիրել Լիսագորսկի ուղղության 2214,8 (9742) նիշով բարձունքին, միաժամանակ անցնել հարձակման հետևյալ չորս ուղղություններով՝

1-ին՝ 26-րդ կամ հյուսիսային,

2-րդ՝ Շոշի կամ արևելյան,

3-րդ՝ Լաչինի կամ հարավային,

4-րդ՝ Զանհասան-Քյոսալարի և Կարագյավի:

Լաչինի ուղղությամբ վճռական գործողություններով հսկողության տակ վերցնել Լաչին-Շուշի ճանապարհը և միաժամանակ հարձակվելով նախկին ցարական «Ուղեկտրի» ուղղությամբ՝ տիրել Շուշի քաղաքի հարավարևմտյան մատույցներին, դրանով թույլ չտալ հակառակորդին լրացուցիչ ուժեր ու միջոցներ տեղափոխել դեպի Շուշի:

Քյոսալարի ուղղությամբ անակնկալ հարձակմամբ շեղել հակառակորդի ուշադրությունը Շուշի քաղաքից, իսկ նպաստավոր պայմանների դեպքում ազատագրել Կարագյավ, Զանհասան և Քյոսալար բնակավայրերը:

Ստեփանակերտի, Շոշի, Քարինտակի ուղղություններից գրոհել Շուշի քաղաքի պաշտպանական դիրքերի վրա, տիրել նպաստավոր դիրքերին ու բարձունքներին, երեք ուղղություններով շրջապատել քաղաքը, այնուհետև ներգրավելով ռեզերվները՝ հյուսիսային և արևելյան ուղղությունների նպատակահարմար տեղերից ներթափանցել քաղաք և ազատագրել այն:

Կրակային խոցումը նախատեսվել է իրականացնել երկու փուլերով՝ հրետանային նախապատրաստություն և հրետանային աջակցություն:

Հրետանային նախապատրաստության ընթացքում պլանավորվել է ԲՄ-21 հաշվարկների միջոցով ճնշել հակառակորդի հենակետերը Շուշի քաղաքի մատույցներում (նշանակետեր 106, 107, 108, 110, 111), Դ-30 ստորաբաժանումով՝ 101, 103, 104 նշանակետերը, իսկ ականանետայինով՝ 102-րդ նշանակետը:

[160] Տե՛ս Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից, էջ 9-11:

Հրետանային աջակցության ընթացքում նախատեսվել է խոցել հակառակորդի առավել վտանգավոր օբյեկտներ. ԲՄ-21 ստորաբաժանումով՝ 109, 204, 205, Դ-30 ստորաբաժանումով՝ 201, 202, 203, իսկ ականանետներով՝ 110, 201, 202 նշանակետերը:

Ելնելով այն հանգամանքից, որ օպերացիայում կիրառվել են հետևակային ստորաբաժանումներ (վաշտեր, ջոկատներ) և քիչ քանակությամբ ռազմական տեխնիկա ու հրետանի, ապա զորքերի խմբավորումների որոշումն իմաստ չուներ:

Օպերատիվ շարվածքը իրավացիորեն ձևակերպվել է մարտավարական օղակի մարտակարգի համապատասխանությամբ, այն է՝ մարտակարգն ըստ ուղղությունների մեկ շարանակարգով, համազորային պահեստազորի առանձնացմամբ:

Օպերացիայի անցկացման համար նախատեսված չորս ուղղություններում ընդգրկվել էին տարբեր վաշտեր, ջոկատներ, խմբեր ու դասակներ: Օպերացիայի մարտական հրամանում հատկանշված են հետևյալ կազմերը՝

26-ի կամ հյուսիսային ուղղության կազմում՝ 4-րդ (հրամանատար՝ Գագիկ Սարգսյան), 5-րդ (հրամանատար՝ Դավիթ Առուշանյան), 6-րդ (հրամանատար՝ Կարեն Ներսիսյան), 7-րդ (հրամանատար՝ Արկադի Սարգսյան), 8-րդ (հրամանատար՝ Մարտիկ Կասպարյան), 9-րդ (հրամանատար՝ Յուրի Իշխանյան) վաշտերը, հետախուզական վաշտը (հրամանատար՝ Սեմյոն Աբրահամյան), Սևանի (հրամանատար՝ Սուրիկ Սարգսյան), Հրազդանի (հրամանատար՝ Սասուն Միքայելյան), Ստեփանավանի (հրամանատար՝ Հրաչ Շահվերդյան) ջոկատները,

Շոշի կամ արևելյան ուղղության կազմում՝ 1-ին վաշտը (հրամանատար՝ Աշոտ Ղուլյան), Շոշի (հրամանատար՝ Արգամ Հարությունյան), Դաշուշենի (հրամանատար՝ Վիլեն Սաֆարյան), Քոասնու (հրամանատար՝ Վալերի Բաղրյան), «Ագոյի» (հրամանատար՝ Արկադի Կարապետյան), Ռուսլանի հետախուզական (հրամանատար՝ Ռուսլան Իսրայելյան), Վարդան Ստեփանյանի և Գրիգոր Գրիգորյանի, «Մոստ» (հրամանատար՝ Վիլեն Միքաելյան) ջոկատները,

Լաչինի կամ հարավային ուղղության կազմում՝ 2-րդ (հրամանատար՝ Հրանտ Ծատրյան) և 3-րդ (հրամանատար՝ Աշոտ Խաչատրյան) վաշտերը, Բերդաձորի (հրամանատար՝ Միքայել Օսիպյան), Ավետարանոցի (հրամանատար՝ Համլետ Ստեփանյան), Սղնախի (հրամանատար՝ Վարդան Վարդանյան), Ակնաղբյուրի (հրամանատար՝ Արշավիր

Ղարամյան), Քարինտակի (հրամանատար՝ Արթուր Առաքելյան), ՀՅԴ (հրամանատար՝ Ժիրայր Սեֆիլյան) ջոկատները, «Քիրա» խումբը (հրամանատար՝ Սամվել Հայրիյան),

Ջանհասան-Քյոսալարի և Կարագյավի ուղղության կազմում՝ Բադարայի (հրամանատար՝ Կարեն Արզումանյան), «Կումայրի» (հրամանատար՝ Միքայել Վարդանյան), Այգեստանի 1-ին (հրամանատար՝ Սամվել Հակոբյան) և 2-րդ (հրամանատար՝ Գարիկ Դադայան), Վադոյի (հրամանատար՝ Վլադիմիր Ավագյան) ջոկատները, դիվերսիոն-հետախուզական մեկ խումբ (հրամանատար՝ Աշոտ Ավագյան) և այլն:

Օպերացիայի մարտական հրամանում եղած տվյալներից բացի, մասնակիցների հիշողությունների հիման վրա եզրակացվում է, որ Քյոսալարի ուղղության ձախ թևում, «26»-ի կամ Կրկժանի պաշտպանական դիրքերի ստորաբաժանումների մի մասի և հայաստանյան կամավորական որոշ ջոկատների բազայի վրա, օպերացիայի ընթացքում ստեղծվել է նաև օպերացիայի հետազորային պահեստազոր 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ վաշտերի, պարետային դասակի, Սևանի, Հրազդանի, Ստեփանավանի ջոկատների կազմով (պահեստազորի հրամանատար՝ Յուրա Հովհաննիսյան):

Օպերացիայի ուսումնասիրությունից պարզվում է նաև, որ դրա ցուցանիշները հնարավոր ամենաօպտիմալներն են՝

- հարձակման ճակատի լայնքը - 40 կմ
- հարձակման միջին տեմպը -20 կմ/օր
- օպերացիայի տևողությունը - 1 օր:

Օպերացիայի նախօրյակին, ըստ ուղղությունների և ընդհանուր առմամբ, ուժերի ու միջոցների փոխհարաբերակցության մոտավոր հաշվարկը հետևյալն է՝

Ուժերն ու միջոցները	Մեր զորքերը	Հարաբերակցությունը	Հակառակորդը
ա) Ամրիջապես Շոշի քաղաքի ուղղությամբ (Հրատիական, Արևելյան ուղղություններ և մեկ վաշտ Հարավային ուղղությունից)			
Հրաձգային վաշտեր	8	1:1,7	14
Տանկեր	4	1:1	4

ՀՄՄ/ԶՓԴ	8	1:2	10/6
Հրետանի	4	1:1,5	6
Ականանետ	4	1:5	20
Ռեակտիվ հրետանի	2	1:1,5	3
ՀՏՄ (ԶՀՏՆ-7)	21	1:1,4	30
Ուղղ. ընդհանուր միջին հարաբերակցությունը՝		1:2	
բ) Հարավային կամ Լաչինի ուղղությամբ			
Հրաձգային վաշտեր	4	1:1	4
Տանկեր	-	բացարձակ	2
ՀՄՄ/ԶՓԴ	6	1,2:1	2/3
Հրետանի	-	-	-
Ականանետ	-	բացարձակ	10
Ռեակտիվ հրետանի	-	բացարձակ	1
ՀՏՄ (ԶՀՏՆ-7)	6	1:2,5	15
Ուղղ. ընդհանուր միջին հարաբերակցությունը՝		1:3	
գ) Քյոսայարի, Կարագյազի ուղղությամբ			
Հրաձգային վաշտեր	6	1,2:1	5
Տանկեր	-	բացարձակ	2
ՀՄՄ/ԶՓԴ	2	1:3,5	3/4
Հրետանի	-	բացարձակ	4
Ականանետ	4	1:1,5	6

Ռեակտիվ հրետանի	-	բացարձակ	1
ՀՏՄ (ԶՀՏՆ-7)	-	բացարձակ	5
Ուղղ. ընդհանուր միջին հարաբերակցությունը՝		1:2,6	

Օպերացիայում ընդհանուր ուժերի ու միջոցների հարաբերակցության հաշվարկը հետևյալն է.

Ուժերն ու միջոցները	**Մեր զորքերը**	**Հարաբերակցությունը**	**Հակառակորդը**
Հրաձգային վաշտեր	18	1:3	23
Տանկեր	4	1:2	8
ՀՄՄ/ԶՓԴ	16	1:1,7	15/13
Հրետանի	4	1:2,5	10
Ականանետ	6	1:6	36
Ռեակտիվ հրետանի	4	1:1,2	5
ՀՏՄ (ԶՀՏՆ-7)	27	1:1,8	50
Ուղղ. ընդհանուր միջին հարաբերակցությունը՝		**1:2,6**	

Այսպիսով Շուշիի ազատագրման օպերացիան սկսելուց առաջ հակառակորդը բոլոր ուղղություններում ուներ գերակշիռ առավելություն: Ուժերի ու միջոցների միջին հարաբերակցությունն ամբողջ ճակատում կազմում էր 1:2,6՝ հօգուտ հակառակորդի:

Արցախի ԻՊՈՒ տրամադրության տակ կար հրետանու և զրահատեխնիկայի համար պահանջվող զինամթերքի ընդամենը 10%-ը:

ԻՊՈՒ հրամանատարությունը, գիտակցելով հակառակորդի քանակական գերակշռությունը, անում էր հնարավոր ամեն ինչ, որպեսզի ապահովի որակական առավելություն:

Այդ նպատակով, օրինակ՝ հրետանավորների հետ անցկացվում էին կրակի կառավարման պարապմունքներ, բոլոր օղակների հրամա-

նատարները տեղանքում անցկացված պարապմունքների ընթացքում լիարժեք կերպով յուրացրել էին իրենց խնդիրների կատարման ընթացքը: Ամբողջ անձնակազմի մարտական ոգին բավական բարձր էր, ազատամարտիկներն անհամբեր սպասում էին հայրենի բերդաքաղաքի ազատագրման բաղձալի պահին: Իսկ նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով մասնակցելու հնարավորություն չունեին, անձնական ողբերգություն էին ապրում:

Թեև ռազմական արվեստի չափանիշներով Ինքապաշտպանության ուժերն ու միջոցները ակներևաբար անբավարար էին նման մասշտաբի օպերացիա իրականացնելու համար, այդուհանդերձ ԼՂՀ պաշտպանության կոմիտեի ղեկավարությունը որոշեց սկսել հարձակումը: Արդեն ապրիլի վերջերին նախապատրաստական բոլոր միջոցառումները կատարված էին, ներգրավված զորքերը բերվել էին մարտական լրիվ պատրաստականության, բայց եղանակային վատ պայմանների հետևանքով օպերացիան հետաձգվել է:

1992թ. մայիսի 7-ի երեկոյան, ըստ ուղղությունների, ստորաբաժանումները խիստ ծածուկ կերպով սկսեցին դուրս բերվել հարձակման ելման շրջաններ:

Օպերացիայում ԲՄ-21 կայանքների կիրառման նպատակով կրակային դիրքեր էին ընտրվել Բերքաձորի (Կապուտան լճակի), Փարամաքիի և Խնածախի մերձակայքերում: Հրետանավորները նշանակետերը հստակ դիտարկելու, ինչպես նաև ռազմամթերքը խնայելու նպատակով Դ-30 հրանոթները դուրս էին բերել կիսաուղիղ նշանառության համար նպաստավոր դիրքեր:

Սերգեյ Ոսկանյանի հաշվարկը գործելու էր «26»-ի ուղղությունից, իսկ Դավիթ Սաֆարյանի հաշվարկը, Լաչինի ուղղությամբ գործող ստորաբաժանումներին կրակային աջակցություն ցուցաբերելու նպատակով, վերատեղաբաշխվել էր Սղնախի մերձակայքում: Բանտի շրջանում գտնվող հակառակորդի կրակակետերը ճնշելու նպատակով, Շոշ գյուղի ուղղությամբ, կրակային դիրքում էր մեկ ԿՍ-19 հրանոթ (հաշվարկի հրամանատար՝ Վիտալի Վերդյան):

ԻՊՈՒՒ հրամանատարական կետը մայիսի 7-8 գիշերը, ժամը 02-ի սահմաններում ծավալվել է Շոշ գյուղից 500 մ հյուսիս-արևելք՝ 1206,7 (0654) նիշով բարձունքի շրջանում:

Մայիսի 7-8 գիշերը, մինչև ժամը 02[40]-ը, բոլոր հրամանատարները զեկուցել են հարձակման ելման և կրակային դիրքերի շրջաններում խնդիրների կատարման պատրաստականության մասին:

Նախքան օպերացիայի ընթացքին ու վարմանն անցնելը, նախապատրաստական փուլի առումով կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Ելնելով ռազմաքաղաքական իրադրությունից, բնակլիմայական պայմաններից և հակառակորդի վիճակից՝ Շուշիի ազատագրման օպերացիայի համար ընտրվել է ամենանպատակահարմար պահը:

- Որքան էլ որ զարմանալի է, այնուամենայնիվ օպերացիայի նախապատրաստման աշխատանքներն ընդհանուր առմամբ կատարվել են ռազմական գիտության պահանջներին համապատասխան: Այն է՝ իրադրության պայմաններից ելնելով կայացվել է խելամիտ որոշում, առաջադրվել են մարտական խնդիրներ, ամենասեղմ ծավալով իրականացվել է օպերացիայի պլանավորում, թեև միջոցները սուղ էին, այնուամենայնիվ կազմակերպվել է հակառակորդի կրակային խոցում, փոխգործակցություն ու զորքերի կառավարում: Ըստ ուղղությունների ստեղծվել են զորքերի խմբավորումներ, կազմակերպվել ու իրականացվել է դրանց ծավալումը և հարձակման շրջաններ դուրսբերումը: Իրականացվել են հրամանատարների, շտաբների ու զորքերի մարտական գործողությունների նախապատրաստման աշխատանքներ:

- Վարպետորեն է օգտագործվել հակառակորդի բարոյահոգեբանական խարխլված վիճակը, ինչը հարձակման որոշման կայացման հիմնական գործոններից մեկն էր:

- Օպերացիայի նախապատրաստման ընթացքում ձևական մոտեցումներ չեն եղել: Հրամանատարությունը, ճիշտ գնահատելով կիրառվելիք ուժերն ու միջոցները, նաև սպասվելիք մարտական գործողությունների բնույթը՝ օպերացիան կազմակերպել է մարտավարական օղակներին համապատասխանող կարգով:

- Պահպանվել են զորքերի ծածուկ կառավարման պահանջները, կատարողներն իմացել են այն, ինչ պետք է տվյալ պահի խնդրի կատարման համար, օպերացիայի ու առանձին ուղղությունների վերաբերյալ տեղեկատվությանը տիրապետել են ղեկավար կազմից շատ քիչ թվով մարդիկ:

Ըստ ուղղությունների մարտական գործողությունների վարման հնարավորինս ամբողջական նկարագիրը ժամանակին տվել ենք[161], հիմա այն ներկայացնում ենք համառոտ.

Հյուսիսային ուղղություն
(հրամանատար Վալերի Չիթչյան)

Ուղղությունում ներգրավված ստորաբաժանումների ու անձնակազմերի մասին արդեն խոսվել է, որոնք էլ «26-ի» դիրքերից և նախատեսված տարբեր ելման շրջաններից անցել են հարձակման: Օպերացիայի ընթացքում այս կազմի որոշ մաս կիրառվել է որպես հետազոտային ռեզերվ:

Ըստ 4-րդ վաշտի հրամանատար Գագիկ Սարգսյանի հուշերի, իր անձնակազմը (ընդամենը 111 զինծառայող), 5 դասակների կազմով, մեկ տանկի և երկու ՀՄՄ-ների աջակցությամբ, հարձակման է անցել Ստեփանակերտ-Շուշի մայրուղով: Վաշտի 1 միավոր ՀՄՄ-2-ը թողնվել է Կրկժանի մոտակա «Կոբրա» բարձունքում՝ հակառակորդի կրակակետերը ճնշելու համար, իսկ 1 միավոր S-72 տանկն՝ ընթացային մասի անսարքության պատճառով մնացել է Դաշուշեն գյուղում, բայց կրակային աջակցություն է ցուցաբերել հարձակվող յուրայիններին:

Վաշտը գիշերով զբաղեցրել է Ստեփանակերտի հարավային մատույցների ձորակում (0850) գտնվող հարձակման ելման շրջանը: Հրետանային նախապատրաստությունից հետո, վաշտի հետևակը ելման շրջանից ծածկաբար առաջանալով դեպի «Երեք աշտարակների բարձունք» (0750), շրջանցել է այն աջ և ձախ կողմերով, անակնկալ կերպով գրոհել հակառակորդի դիրքերի վրա: Բարձունքի արևմտյան լանջի մայրուղու մի հատված հակառակորդը հսկայական քարերով փակել էր: Ճանապարհը նույնիսկ զրահատեխնիկայի համար անանցանելի էր: Վաշտի զրահատեխնիկան արգելքը շրջանցելու նպատակով, մայրուղուց թեքվելով ձախ, ընթացել է անմիջապես «Երեք աշտարակների բարձունքի» լանջով, այնուհետև շարունակել գրոհն ասֆալտապատ ճանապարհով: Մայիսի 8-ին ժամը 6-7-ի սահմաններում, վաշտը տիրել է այդ կարևոր բարձունքին, որից հետո վաշտի տեխնիկան ճանա-

[161] ***Հայրությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 100-119, ***նույնի*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., էջ 73-78:

պարհով, իսկ հետևակը ճանապարհից աջ բարձունքներով շարունակել է հարձակումը Շուշի քաղաքի հյուսիսային մուտքի ուղղությամբ: Բարձունքներով հարձակվող հետևակը, փաստորեն, գտնվել է զրահատեխնիկայից առաջ և որոշ առումով կարողացել է ապահովել դրա առաջխաղացումը:

Բարձունքի գրավման ընթացքում, տալով կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ, հակառակորդը գլխապատառ նահանջել է դեպի ձորակում գտնվող գոմը: Բարձունքի շրջանում մեր մարտիկները խոցել են հակառակորդի երեք միավոր զրահատեխնիկա (ՀՄՄ, ՋՓԴ): Բարձունքի համար մղվող մարտերում վաշտից զոհվել է մեկ մարտիկ:

Ճանապարհից աջ բարձունքներով գրոհելիս 4-րդ վաշտի ստորաբաժանումները ժամը 11^{00}-ի սահմաններում, 865,0 նիշով բարձունքից արևելք (0750) շրջանում գտնվող շինության մոտ հանդիպում են շենքի ներսում ամրացած հակառակորդի համառ դիմադրությանը: Այս մարտի ընթացքում վիրավորվում է վաշտի հրամանատարը: Մեր մարտիկները, կարողանալով ճնշել դիմադրությունը, ժամը 12^{00}-ի սահմաններում մարտերով դուրս են գալիս 1290,2 նիշով բարձունքի (0549) շրջան: Ճանապարհով շարժվող մեր զրահատեխնիկայից՝ S-72 տանկը (անձնակազմի հրամանատար՝ Գագիկ Ավշարյան, նշանառու-օպերատոր՝ Շահեն Սարգսյան, մեխանիկ-վարորդ՝ Աշոտ Ավանեսյան), ժամը 12^{00}-ի սահմաններում մարտի մեջ է մտնում այդ ուղղությամբ, Շուշիի մատույցներում, հենց ճանապարհի վրա գտնվող հակառակորդի S-72 տանկերից մեկի հետ: Ճանապարհի ոլորանի (0650 2) շրջանում մեր տանկը հակառակորդի տանկից խոցվում է, տանկի անձնակազմի 2 անդամներ՝ Աշոտ Ավանեսյանը և Շահեն Սարգսյանը զոհվում են:

4-րդ վաշտից աջ՝ շրջանի արտադրական միավորման տարածքի և երաժշտական գործիքների գործարանի բնագծով ձգվող բարձունքների հատվածներում մարտեր են մղել վեցերորդ վաշտի ստորաբաժանումները և հետախուզական վաշտի երկու խմբերը: Հակառակորդը համառ դիմադրություն է ցույց տվել նաև բենզինառման կայանի շրջանում:

Գրոհի ընթացքում խոցվել է նաև ԻՊՈՒ ՀՄՄ-ն, զոհվել են դրա մեխանիկ-վարորդը և գնդացրորդը:

Ժամը 12^{00}-ի սահմաններում, զրահատեխնիկայի կորուստների և հակառակորդի գրոհային ուղղութիոների կիրառման հետևանքով մի պահ ստեղծվում է իրարանցում, որի պատճառով ավտոբազայի տա-

բածքի շրջանում դադարեցվում է առաջխաղացումը և ուղղության ստորաբաժանումները հապճեպորեն անցնում են պաշտպանության:

Յոթերորդ, ութերորդ, իններորդ վաշտերը և հայաստանյան կամավորական ջոկատները «26»-ի հենակետից հարձակվելով Ղայբալիշենի ուղղությամբ՝ տարանջատել են Շուշի-Քյոսալար բնագծում պաշտպանվող հակառակորդին, կտրել նրա ստորաբաժանումների միջև հաղորդակցական կապը:

Շոշի (Արևելյան) ուղղություն
(հրամանատար Արկադի Կարապետյան)

Օպերացիան սկսելուց առաջ ուղղության անձնակազմի ընդհանուր քանակը եղել է մոտ 400 ազատամարտիկ, որոնց աջակցել են մեկական տանկ, ՀՄՄ-1, ՀՄՄ-2, ԿՍ-19 հրանոթ, ականանետ, խոշոր տրամաչափի գնդացիրներ (ԴՇԿ, ԿՊՎՏ):

Այդ ուղղությունում հարձակվող ստորաբաժանումների խնդիրը հիմնական ուժերով Շոշ-Շուշի ուղղությամբ գրոհի անցնելն էր, հենակետերում ամրացած հակառակորդին ջախջախելը, քաղաքի պաշտպանությունը ճեղքելը և մյուս ուղղությունների հետ փոխգործակցելով՝ բերդաքաղաքի ազատագրումը:

Ուղղության շտաբը տեղակայված էր Շոշ գյուղում: Հարձակման նախօրեին Շոշում են հավաքվել ուղղության մյուս ստորաբաժանումները: Առաջխաղացումը սկսվել է մայիսի 7-8-ի գիշերը՝ ժամը 02^{30}-ի սահմաններում:

Բերդաքաղաքի արևելյան կողմից հակառակորդի դիմադրությունը հաղթահարելու և բնականից անառիկ բնագծերում նրա պաշտպանությունը ճեղքելու խնդիրն առավել դժվար լուծելի էր, ինչն ազատամարտիկներից պահանջում էր ուժերի գերագույն լարում, անձնվիրություն ու հնարամտություն, կամքի ու վճռականության դրսևորում: Հարկ է նշել, որ այդ ամենը համընդհանուր խանդավառության, հաղթանակի հանդեպ հավատի, բարոյակամային որակների հետ զուգորդած՝ հայ ռազմիկները հասան իրենց նպատակին ու փայլուն կերպով լուծեցին առաջադրված խնդիրները: Ըստ երևույթին, հակառակորդը հենց այս ճակատից էլ սպասում էր հարձակման, պահա թե ինչու համառ ու երկարատև մարտերը ծավալվեցին հենց այստեղ: Նախօրոք մեծ քանակությամբ կենդանի ուժ կենտրոնացնելով, թշնամին կատաղի դիմադրություն ցույց տվեց՝ ջանալով ամեն գնով պաշտպանել զբաղեցրած բնագծերը: Հարվածային ուժերի առաջխաղացումը սկսվեց մայիսի 8-ի գիշերը երեք հիմնական ենթաուղղություններով: Ուղղության աջ թևի ստորաբաժանումներն առաջադրանք էին ստացել անցնել ձորը, ապա ֆիննական տնակների շարքը, ելնել դեպի երեք աշտարակների բարձունքը և այնտեղ միանալ 4-րդ վաշտի զինվորներին: Անողոք մարտեր մղելով, հայ ռազմիկները հաղթահարեցին ձորակի բնական արգելքը և ապա ֆիննական տնակների շրջանում ընկճեցին հակառակորդի դիմադրությունը: Գրոհող ստորաբաժանումների ու պահեստազորի միացյալ ուժերը սկսեցին ելնել ավտոբազայի ուղղությամբ: Այդ պահին ԻՊՈՒ զրահատեխնիկայի շարքից դուրս գալը սառը ցնցուղի ազդեցություն գործեց գրոհող մարտիկների վրա: Ռազմական ուղղաթիռների օդային հարձակմանը հետևեց անորոշ դադարը: Տպավորությունն այն էր, որ Շուշիի գրոհը հետաձգվել է վաղվան:

Առաջին վաշտի գրոհային խումբը Աշոտ Ղուլյանի հրամանատարությամբ հարձակվել է բանտի, Արգամ Հարությունյանի հրամանատարությամբ գործող Շոշի խումբը՝ բերդի երկու աշտարակների ուղղություններով:

Ռուսլան Իսրայելյանի հետախուզական խումբը գործել է առանձին ուղղությամբ՝ մոտակա խնդիր ունենալով դուրս գալ հանգար-գոմ բնագիծ:

Մայիսի 7-8-ի գիշերը Արկադի Կարապետյանի ջոկատն առաջխաղացման ժամանակ ընկել է հակառակորդի ականանետի կրակի տակ: ԻՊՈՒ ականանետն իր կրակով կարողացել է ճնշել հակառակորդի ականանետային կրակակետը: Այնուհետև ջոկատը բարձրանալով Կարկառ գետի արևմտյան փափաղե բարձունքները՝ դրանք գտել է հակառակորդից լքված:

Վաղ առավոտյան, ժամը 05^{00}-07^{00} սահմաններում Արգամ Հարությունյանը Շոշի ջոկատի իր 11 մարտիկների հետ բերդի երկու աշտարակների հատվածից աննկատ ներթափանցել է քաղաք, մարտի է բռնվել հակառակորդի հետ և երբ փամփուշտները վերջանալու վրա են եղել, այդ մասին զեկուցելով հրամանատարին՝ հետ է քաշվել քաղաքի աշտարակների պարսպի տակ:

Աշոտ Ղուլյանի ջոկատը լուսաբացին գրոհել է բանտի և գերեզմանոցի հենակետերի վրա:

Ուղղության կենտրոնում գործող երեք խմբերը հաջողությամբ դուրս են եկել ավտոբազա-գոմ բնագծից արևելք և մարտի բռնվել հակառակորդի հետ:

Ռ. Իսրայելյանի ջոկատը գոմի մոտ հանդիպել է հակառակորդի կատաղի դիմադրությանը: Ջոկատը մայիսի 8-ի լուսաբացից մինչև ժամը 12^{00}-ը մղած մարտերի ընթացքում տվել է 2 զոհ և 3 վիրավոր:

Կեսօրվա սահմաններում ստորաբաժանումների հրամանատարները զեկուցել են, որ զինամթերքը վերջանալու վրա է: Արկադի Կարապետյանը հրամայել է դիրքավորվել գրաված բնագծերում և սպասել հետագա հրամանին:

Երեկոյան ժամը 16^{00}-17^{00}-ի սահմաններում ստացվել է զինամթերք և բաշխվել խմբերին:

Աշոտ Ղույումանի և Արգամ Հարությունյանի (Շուշի) խմբերն իրենց ենթաուղղություններում մարտերը շարունակել են մինչև ուշ երեկո: Մութն ընկնելուց հետո տրվել է դադարի հրաման: Օրվա մարտերի ընթացքում ստորաբաժանումները տվել են 8 զոհ, հակառակորդի կորուստները եղել են կրկնակի անգամ ավելի:

Մայիսի 9-ի լուսաբացին, բոլորի հետ միասին արևելյան ուղղության ստորաբաժանումները նույնպես մտել են Շուշի:

Լաչինի (Հարավային) ուղղություն (հրամանատար՝ Սամվել Բաբայան)

Օպերացիան սկսելուց առաջ ճակատային ամենաերկար ձգվածությամբ այս ուղղության կազմում են եղել 2-րդ, 3-րդ վաշտերը, Բերդաձորի, Ավետարանոցի, Սղնախի, Ակնաղբյուրի, Քարինտակի, ՀՅԴ ջոկատները, «Քիրս» խումբը:

Ուղղության ստորաբաժանումների խնդիրն էր. տարբեր ուղղություններով հարձակման անցնելով տիրել «Ուղեկալին», Շուշի քաղաքի հարավարևմտյան մատույցներին, կանխել Կուբաթլուի և Լաչինի շրջաններից հակառակորդի օժանդակ ուժերի տեղաշարժը դեպի Շուշի, միևնույն ժամանակ վնասազերծել Մեծ և Փոքր Քիրսերի բարձունքների հենակետերն ու կրակակետերը:

Ջառիստ գյուղի հենակետում տեղակայված էր հակառակորդի ուժեղ խմբավորում, որը կարող էր օգնության հասնել Շուշիում գտնվող ուժերին:

Ուղղության խմբերը մայիսի 7-ին, տարբեր ժամերի սկսել են տեղաշարժը և ըստ առաջադրված խնդիրների հարձակողական գործողությունները:

Փոքր Քիրսի ենթաուղղությամբ հարձակման է անցել երկրորդ վաշտը (հարմանատար Հրանտ Ծատրյան), որը մարտանցելով 1902 (9850) և 1803 (9747) նիշերով բնագծերը, աջ թևով շրջանցել է Փոքր Քիրսը, ճնշել բարձունքի լանջում տեղակայված հակառակորդի հենակետը, այնուհետև մոտենալով 2214.8 նիշով (9742) բարձունքին, հսկողության տակ է առել Լիսագորսկի ճանապարհահատվածը:

3-րդ վաշտը (հրամանատար Աշոտ Խաչատրյան), Ավետարանոցի (Չանախչի) վաշտը (հրամանատար Համլետ Ստեփանյան) և ջավախքահայերի ջոկատը Մեծ Քիրս լեռան շրջանում վնասազերծել են հակառակորդի հենակետերը:

Այդ գործողություններով չեզոքացրել են 2346,4 (9448) և 2571,0 նիշերով (9248) բարձունքների շրջաններից հակառակորդի հնարավոր հարվածը մեր ստորաբաժանումների թիկունքին:

Տումի գյուղի ջոկատը և «Քիրս» խումբը խնդիր ունեին հարձակվել 2292,0 նիշով (8850) բարձունքի ուղղությամբ և կանխել հակառակորդի հնարավոր հարձակումները Մեծ Քիրսի ուղղությամբ:

Ակնաղբյուրի և Սարուշենի միացյալ վաշտերը (հրամանատար՝ Արշավիր Ղարամյան), «Աֆղանցիներ» (հրամանատար՝ Նվեր Չախոյան), «Մերգելյան» (հրամանատար՝ Արմեն Բադղասարյան), «Բյուրեղավան» (հրամանատար՝ Վրեժ Ղարոյան) ջոկատները, շրջանցումով հարձակվել են Ջառիստ գյուղի ուղղությամբ և հսկողության տակ առել Շուշի-Լաչին ճանապարհահատվածը՝ 1449 (0248) և 1462 նիշերով (9946) դիրքերի բնագծից:

ՀՅԴ-ի 1-ին վաշտը (հրամանատար՝ Ժիրայր Սեֆիլյան), Վալերի Բալայանի խումբը, Բերդաձորի ջոկատը, խնդիր ունենալով շրջանցել Ջառիստը, գրավել Լիսագորսկը և փակել Լաչին-Շուշի ճանապարհը, կարողացել են մոտենալ Ջառիստի դիմացի բարձունքներին:

2-րդ վաշտի մոտոհրաձգային դասակի (հրամանատար՝ Սասուն Աղաջանյան) զրահատեխնիկան (7 միավոր) մայիսի 8-ի լուսաբացին դուրս է բերվել անմիջապես Շուշի-Լաչին և Նաբիլար ճանապարհների խաչմերուկ (0248) և այնտեղից խոցել հակառակորդի միջոցները (այդ ընթացքում խոցել են 3-4 ավտոմեքենաներ): Որոշ ժամանակ անց (մայիսի 8-ին՝ կեսօրից հետո) զրահատեխնիկան հետ է վերադարձվել ելման

դիրքեր՝ հակառակորդին Շուշիից նահանջելու հնարավորություն տալու նպատակով:

Շուշիի անկասելի գրոհը, հայ ազատամարտիկների ու հրետանավորների արդյունավետ «աշխատանքը» խուճապի էին մատնել հակառակորդին: Ճողոպրողները, ժամը 4^{50}-ի սահմաններում լքելով քաղաքը, շարժվում էին Ջառիստի ուղղությամբ: Ա. Տեր-Թադևոսյանի հրամանով, գյուղի մերձակայքում դիրքավորված ազատամարտիկները սկսեցին գնդակոծել ռազմական տեխնիկայի և զինյալներ տեղափոխող ավտոմեքենաների շարասյունը, քանի որ Ջառիստում ուժերի նոր կուտակումները բնավ ձեռնտու չէին: Կրակի տակ առնվեցին նաև Ջառիստ գյուղի պահակակետերը, ինչպես նաև կենդանի ուժի և տեխնիկայի կուտակման վայրերը: Հակառակորդը տանկերից, զրահամեքենաներից ու «Գրադ» կայանքից հրնթացս կրակ բացեց ճանապարհի երկայնքով ձգվող բլուրներին հաստատված հայ մարտիկների ուղղությամբ՝ ջանալով Շուշիի կայազորի մնացորդները փրկել վերջնական ջախջախումից: Ջառիստի ուղեհատվածը վերահսկողության տակ պահելն այլևս իմաստ չուներ, քանի որ հակառակորդը արդեն տեղի էր տվել և նրա շարասյուները հապշտապ լքում էին քաղաքը: Խոչընդոտ ստեղծելը կարող էր հակառակ ազդեցությունն ունենալ և փչացնել գործը:

Այսպիսով, հարավային (Լաչինի) ուղղությունում ծավալված մարտերի արդյունքում հաջողվեց շեղել հակառակորդի ուշադրությունը գլխավոր՝ Շուշիի ճակատից, հակառակորդի նահանջի ճանապարհը փակելու սպառնալիքով բազմապատկել նրա խուճապը, զրկել ադրբեջանական հրամանատարությանը Ջառիստում ուժերի վերախմբավորում կատարելու և հակահարձակման անցնելու հնարավորությունից:

2-րդ վաշտի մոտոհրաձգային դասակի կրակային աջակցությամբ՝ Քարինտակի, Սգնեքի, Արտաշատի և այլ ջոկատներ, Կարմիր Քարի հատվածում միավորվելով՝ դուրս են եկել Շուշի-Լաչին ճանապարհի շրջագիծը, արևմտյան կողմից շրջափակել քաղաքի մատույցները:

Ջանհասան-Քյոսալարի և Կարագյավի ուղղություն
(ուղղության հրամանատար Սեյրան Օհանյան)

Բադարա-Կարագյավ ենթաուղղությամբ Բադարա, Աստղաշեն, Խանձք, Դահրավ, Այգեստան-2 (հրամանատար՝ Գարիկ Դադայան) ջոկատների կազմով, համաձայն առաջադրված խնդրի՝ մայիսի 7-ին ժամը 22^{00}-ի սահմաններում, Բադարա գյուղի շրջանից սկսվել է ստորաբաժանումների առաջխաղացումը դեպի նախորոշման շրջաններ[162]:

Բադարա-Կարագյավ ենթաուղղությամբ հակառակորդը՝ մոտ մեկ գումարտակի կազմով (առնվազն 200 հոգի, 1 միավոր ՀՄՄ, 2 միավոր ԿՄ-19), նախապատրաստված պաշտպանության է անցել Կարագյավից հյուսիս բարձունքների շրջանում:

Նպաստավոր դիրքում պաշտպանվող գերակշիռ հակառակորդին ջախջախելու նպատակով, ենթաուղղության ստորաբաժանումները բաժանվելով երկու խմբերի՝ դուրս եկան հակառակորդի աջ թևը, իսկ ձախից շրջանցելով՝ անցան նրա թիկունքը:

1-ին խմբում Բադարայի և Խանձքի ջոկատները, իսկ 2-րդ խմբում Դահրավի և Աստղաշենի ջոկատները, ծածկաբար շարժվելով անտառոտ տեղանքով, մայիսի 7-8 գիշերը, ժամը 04^{00}-05^{00}-ի սահմաններում, հակառակորդին անակնկալ կերպով հարվածելու նպատակով, դուրս եկան հարձակման ելման հետևյալ շրջանները.

1-ին խումբը՝ Կարագյավից 1,5 կմ արևելք՝ (1637) քառակուսու շրջանում,

2-րդ խումբը՝ ճանապարհների հատում (1740) շրջանում:

Մայիսի 8-ին ժամը 08^{30}-ի սահմաններում, 1466 (1739) նիշով բարձունքի շրջանից Կարագյավի վրա՝ բաց թողնելով 4 «Ալազան» տիպի հրթիռներ, միաժամանակ տարբեր ուղղություններով անցել են գրոհի: Սկսվել են ծանր մարտեր: Դրանք ավելի ծանրացան, երբ հակառակորդը համալրում ունեցավ: Ժամը 16-17-ի սահմաններում խնդիր է առաջադրվել պասսիվացնել գործողությունները՝ ըստ երևույթին հակառակորդին նահաջելու հնարավորություն տալու նպատակով: Գիշերվա ընթացքում հակառակորդը հետ է քաշվել: Մայիսի 9-ի լուսաբացին, առանց լուրջ դիմադրության հանդիպելու մեր ստորաբաժանումները մտել են Կարագյավ:

Այս ենթաուղղությունում ԻՊՈՒ գոհեր չեն ունեցել, հակառակորդը տվել է 10 զոհ: ԻՊՈՒ վերցրել են 2 միավոր ԿՄ-19, 4 միավոր ավտոմեքենա, հարյուրից ավելի հրանոթային արկեր, հակատանկային ականներ, մեծ քանակությամբ փամփուշտ:

[162] Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 116-117:

Այգեստան-Քյոսալար ենթաուղղությամբ հակառակորդը թե՛ Ջանհասանի և թե՛ Քյոսալարի դիմաց ստեղծել է նախապատրաստված պաշտպանական բնագծեր, որոնցում կենտրոնացրել է այն ժամանակների համար մեծաքանակ ուժեր ու միջոցներ: Այս երկու բնակավայրերի բնագծերում հակառակորդն ունեցել է մոտավորապես 350-400 զինծառայող, 2 տանկեր, 6 միավոր ՀՄՄ և ՋՓԴ, 2 հրանոթ, 1 «Ալազան» տիպի հրթիռային կայանք, 4 միավոր ականանետներ, լիարժեք քանակությամբ հրաձգային զենք ու զինամթերք: Այս ենթաուղղությամբ հակառակորդն ունեցել է ուժերի ու միջոցների առնվազն 2,5 անգամ առավելություն:

Առկա ուժերով ու միջոցներով հակառակորդի պաշտպանությունը ճակատային գրոհով ճեղքելն անհնարին էր: Անհրաժեշտ էր խնդրի կատարմանը հասնել հակառակորդի հնարավոր անսպասելի գործողություններով:

Ենթաուղղությունում ԻՊ ուժերի կազմում են եղել Այգեստան-1 վաշտը՝ չորս դասակներով, «Արաբո», «Արամո», «Կումայրի», «Կարվին» ջոկատները և մեկ ԴՀ խումբ: Այս կազմից առանձնացվել է մեկ դասակ՝ (մոտ 20 հոգի) ճակատից ուշադրություն շեղող գործողություններ կատարելու համար: Մնացած ստորաբաժանումները, Այգեստանից քողարկված տարաշարժ կատարելով, դուրս են եկել հակառակորդի աջ թևը, պաշտպանության դիրքերի հենց միջակայքով՝ նրա վրա անակնկալ գրոհելու նպատակով: Ստորաբաժանումները դեպի Ջանհասան և Քյոսալար տարաշարժը սկսել են մայիսի 7-ին, ժամը 11^{00}-ի սահմաններում:

Հիմնական կազմը տեղաշարժ կատարելով Մեղրագետի ձախ ափով և այնուհետև անտառներով, ժամը 22^{00}-23^{00}-ի սահմաններում կենտրոնացել է Ջանհասանից արևմուտք անտառի վերջնամասում՝ (1243) քառակուսու շրջանում ու գիշերել այնտեղ:

Գարիկ Դադայանի ջոկատը, ունենալով մեկ ՀՄՄ, Այգեստանից տեղաշարժ կատարելով՝ Մեղրագետի ձախ ափով, մայիսի 8-ին, ժամը 04^{00}-05^{00}-ի սահմաններում դուրս է եկել բացատի (1442) շրջան, զբաղեցրել նպաստավոր դիրք՝ նպատակ ունենալով մարտերի ընթացքում օժանդակել գրոհող ստորաբաժանումների գործողություններին և ապահովել նրանց թիկունքը:

Բուն հարձակողական գործողությունները սկսվել են առանց հրետանային նախապատրաստության՝ մայիսի 8-ի վաղ լուսաբացին:

«Կումայրի», «Արամո», «Արաբո» ջոկատների մարտիկները և 2 սակրավորներ կրակային դիրքեր (դարան) են զբաղեցրել հակառակորդի Քյոսալարի պաշտպանական դիրքերի դիմաց՝ խնդիր ունենալով թիկունքից պաշտպանել Ջանհասանի դիրքերի վրա գրոհող ստորաբաժանումներին:

Այգեստան-1 վաշտի 1-ին դասակը և ԴՀ խումբը գրոհել են Քյոսալարի և Ջանհասանի միջդիրքային տարածքով դաշտամիջյան ճանապարհի ոլորանի (1144) ուղղությամբ՝ նպատակ ունենալով ոչնչացնելու հակառակորդի հրետանային կրակակետերը և փակելու Քյոսալար-Ջանհասան ճանապարհահատվածը:

Այգեստան-1 վաշտի 2-րդ, 3-րդ և 4-րդ դասակները և «Կարվին» խումբը մտնելով միջդիրքային տարածք՝ Ջանհասանի կրակադիրքերում գտնվող հակառակորդի վրա գրոհել են նրա թիկունքից:

Կատաղի մարտերի ընթացքում հակառակորդը, հայտնաբերելով մեր դարանը, զրահատեխնիկայից ինտենսիվ կրակ է վարել ու գրոհել է բնագծի վրա, որի հետևանքով «Կումայրի», «Արամո» և այլ ջոկատներ ունեցել են անդառնալի կորուստներ (14 զոհ): Մասնավորապես մարտերի ընթացքում Այգեստան-1 վաշտից զոհվել են 3, իսկ «Կարվին» խմբից՝ 1 մարտիկներ:

Անդառնալի կորուստներով հանդերձ՝ մեր ստորաբաժանումները դիմացել են հակառակորդի ուժեղ ճնշմանը և շարունակել մարտական խնդրի կատարումը:

Կատաղի մարտերը շարունակվել են մինչև օրվա վերջը: Այդ ընթացքում մեր ստորաբաժանումները տարբեր ուղղություններով գրոհելով՝ կարողացել են շարքից հանել միջդիրքային տարածքում եղած հակառակորդի կրակային միջոցները, ետ մղել նրա հակագրոհները, կենդանի ուժի կորուստներ պատճառել ու ջլատել թշնամական ուժերը, նրա մոտ ստեղծել նահանջելու տրամադրություններ: Սպասվում էին նոր ու արյունահեղ մարտեր, ինչին հայ մարտիկները հոգեբանորեն պատրաստ էին: Սակայն անհրաժեշտ էր խուսափել նոր զոհերից, մանավանդ, որ Շուշիի ուղղությամբ հարձակումը հաջող էր ընթանում: Ուստի, տրվեց մարտավարական նահանջի հրաման: Ստեղծված պայմաններում շատ ավելի դժվար էր նահանջը կազմակերպել. բարդ տեղանքը և թշնամու թվական ու զինական գերակշռությունը զգալ էին տալիս: Մարտական գործողությունների երկրորդ փուլը ևս հաջող էր նահանջը կազմակերպելու, ինչպես նաև հակառակորդի մեծաթիվ ու-

ժերն այս ուղղությունում գամած պահելու առումով: Հակառակորդն ուշ հասկացավ, որ Արցախի ԻՊՈՒ-ի հիմնական նպատակակետը Շուշին էր: Սակայն, հուսալիորեն փակված էր նաև հակառակորդի նահանջի ճանապարհը դեպի Շուշի:

Հաջորդ օրը, ժամը 09[00]-ի սահմաններում, «26»-ի Յուրայի պահեստազորային ստորաբաժանումների օժանդակությամբ վերսկսելով գրոհը, առանց նոր զոհերի, օրվա երկրորդ կեսին, այս ենթաուղղության ստորաբաժանումները ազատագրել են Ջանհասան, Քյոսալար, Ջավադլար, Բաշքենդ բնակավայրերը՝ լիարժեքորեն կատարելով օպերացիայի մասով առաջադրված մարտական խնդիրը:

Յուրա Հովհաննիսյանի պահեստազորային ստորաբաժանումները (մոտ 250 հոգի անձնակազմ և 1 միավոր ՀՄՄ) մայիսի 9-ին ժամը 5-6-ի սահմաններում նիշ 1432,0 (0846), նիշ 1489,0 (0946), բացատ (1045) ուղղությամբ շարժվել են դեպի Քյոսալար, մարտերով գրավել այն, այնուհետև շարժվելով Ջանհասանի ուղղությամբ՝ միացել են Սեյրան Օհանյանի հրամանատարությամբ գործող ստորաբաժանումներին[163]:

Այս երկօրյա մարտերի ընթացքում հակառակորդը տվել է տասնյակ զոհեր, մարտադաշտում թողել ունեցած միջոցների կեսից ավելին, զինամթերքի և այլ միջոցների մեծ քանակությամբ պաշարներ:

Միով բանիվ, ըստ ուղղությունների բերված նկարագրությունները ցույց են տալիս, որ ԻՊՈՒԻ հարձակողական խմբերը բոլոր ուղղություններում էլ ցուցաբերելով ճիշտ մարտավարություն, գործել են նպատակասլաց ու աներեր և արդյունքում կենդանի ուժի և միջոցների գերակշռություն ունեցող հակառակորդի նկատմամբ ձեռք բերել համոզիչ հաղթանակներ:

Ասկերանի և Մարտակերտի շրջանների պաշտպանությունը

Ինչպես և սպասվում էր, Շուշիի զորակայանի կորստից հետո հակառակորդը մեծ ուժերով ու միջոցներով լայնածավալ հարձակումներ ձեռնարկեց ԼՂՀ սահմանների մի քանի հատվածներում: Միաժամանակ աղբբեջանական լրատվամիջոցները, ապատեղեկատվություն էին տարածում իրենց բանակի նվաճած հաջողությունների մասին: Սակայն, իրականում, Շուշիում կրած խայտառակ պարտությունից հետո հակառակորդը ձգտում էր փոխվրեժի հասնել, ամեն գնով հաջողություն ձեռք բերել ռազմաճակատի ցանկացած ուղղությունում: Այդ իսկ նպատակով մայիսի 10-ին հարձակում ձեռնարկվեց Աղդամ-Ասկերան-Ստեփանակերտ ռազմավարական գծով: Մասնավորապես, Աղդամի հենակետից հակառակորդը հարձակվեց Դահրազ, Նախիջևանիկ, Վարդաձոր, Վարազաբուն (Արևանզամին), Սառնաղբյուր գյուղերի ուղղությամբ և ժամանակավորապես գավթեց նշված գյուղերը:

Հարձակման սկզբում հակառակորդի ունեցած տեխնիկական ու թվական գերակշռության շնորհիվ ձեռք բերված որոշակի հաջողությունը, սակայն, երկար չտևեց: Սառնաղբյուրի պաշտպաններին օգնության հասած Ասկերանի շրջանի ինքնապաշտպանության ուժերը՝ Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, երեկոյան ձեռնարկված սրընթաց հակագրոհով ազատագրեցին վերոհիշյալ գյուղերը և թշնամուն դուրս շպրտեցին ԼՂՀ տարածքից՝ խափանելով ճեղքմամբ Շուշի հասնելու նրա հավակնոտ ծրագրերի իրականացումը:

Մայիսի 10-ին իրավիճակը կտրուկ սրվեց Մարտակերտի շրջանում: Վեց միավոր տեխնիկայի աջակցությամբ հարձակման ենթարկվեց Մարտաղա, 1 տանկի ու 3 ՀՄՄ-ի ներգրոհությամբ՝ Չայլուն (բառացի՝ Գետքը, վերանվանվել է Այգեստան): Հակառակորդը վերսկսեց հարձակումը և գավթեց Մարտաղան: Մարտեր ընթացան նաև Գետքում: Ստացված պահեստազորի ու մարտական տեխնիկայի օգնությամբ հայ մարտիկները, 5-ժամյա մարտերից հետո, մայիսի 12-ին ազատագրեցին Մարտաղան: Հակառակորդը կորցրեց 18 զինվոր և 3 միավոր տեխնիկա[164]:

Վերոհիշյալ ճակատներում հայ ազատամարտիկների տոկունությունն ու աննկունությունը նպաստեցին Շուշիի հաղթանակը պաշտպանելու, ապա և ամրապնդելու գործին:

Շուշիի ազատագրման օպերացիայի արդյունքները

Ինչպես արձանագրվել է ԼՂՀ ԻՊԿ նախագահի հրամանում՝ Արցախի ինքնապաշտպանության ուժերի շտաբի հսկայական աշխատանքի ու մանրակրկիտ նախապատրաստության, հմուտ ղեկավա-

[163] Տե՛ս *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմի սկիզբը և Շուշիի ազատագրումը, էջ 118-119:

[164] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀԱՏ, № 142, էջ 46:

րության, բոլոր աստիճանների հրամանատարների հնարամտության ու փոխհամագործակցության, ինչպես նաև հայ ազատամարտիկների վճռական գործողությունների շնորհիվ հաջողվեց երկու օրում կոտրել հակառակորդի դիմադրությունը և ազատագրել ռազմավարական տեսակետից կարևոր Շուշի քաղաք-ամրոցը: Այդ ռազմագործողության ընթացքում աչքի զարնեցին ԻՊՈՒ-ի 1-ին, 4-րդ, 6-րդ վաշտերը, Այգեստանի վաշտը, հետախուզական ու այլ ստորաբաժանումներ[165]:

Շուշիի ազատագրման ամենատեսանելի արդյունքը ստեղծված ռազմաքաղաքական նպաստավոր պայմանների օգտագործմամբ քառամյա շրջափակման ճեղքումն ու Լաչինի մարդասիրական միջանցքի բացումն էին, ինչի շնորհիվ Արցախը փրկարար կապ հաստատեց մայր հայրենիքի հետ: Ռազմավարության տեսանկյունից բարդագույն խնդիրը հնարավոր եղավ լուծել, այնուհետև Շուշիի հաղթանակն ամրապնդել նաև Ասկերանի, Մարտակերտի, Հադրութի շրջանների պաշտպանական բնագծերի առանձին հատվածներում հակառակորդի հարձակումները պատեհաժամորեն հետ մղելու շնորհիվ:

Շուշիի ազատագրման և Ստեփանակերտին հարակից աղրբեջանական հենակետերի վնասազերծման օպերացիային մասնակցած ազատամարտիկների թիվը, կողմերի կորուստները տարբեր կերպ են գնահատվում, և դրանց ճշգրտման աշխատանքը դեռ շարունակվում է[166]: Օպերացիայի ընթացքում մեր ընդհանուր կորուստները կազմել են՝ 47 զոհ, 80-ից ավելի վիրավոր, 2 անհայտ կորած, 1 միավոր S-72 տանկ, 1 միավոր ՀՄՄ-1 և այլն[167]:

Մոտավոր տվյալներով հակառակորդը տվել է 150-200 զոհ, Շուշի քաղաքում և ռազմաճակատի այլ հատվածներում է թողել մոտ 10 միավոր զրահատեխնիկա, 10 միավորից ավելի հրետանի և ականանետ, մեծ քանակությամբ հրթիռներ, արկեր և այլ զինամթերք[168]:

[165] «Մարտիկ», 1993 թ., №7:

[166] Տե՛ս, օրինակ, ***Հարությունյան Մ. Ա.,*** Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին, «Հայկական բանակ», 2019, №4 (էլեկտրոնային տարբերակը՝
https://razmavaraget.files.wordpress.com/2019/12/hb-4-2019.pdf):

[167] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., էջ 80-81:

[168] Տե՛ս Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից, էջ 24:

Շուշիի ազատագրման փայլուն օպերացիայի արդյունքներին ու պատմական նշանակությանն արդեն անդրադարձել ենք[169], ուստի սույն աշխատության բնույթից ելնելով, նպատակահարմար ենք համարում կանգ առնել գնահատականի և ուսանելի դասերի վրա:

Շարադրված նյութում նշվեց, որ օպերացիայից անմիջապես առաջ, կողմերի ուժերի ու միջոցների ընդհանուր միջին հարաբերակցությունը կազմել է 1:2,6՝ հօգուտ հակառակորդի: Մանավանդ ուժերի ու միջոցների հարաբերակցության այսպիսի պայմաններում, շատ ու շատ ռազմական գործիչների համար այդպես էլ անհավանական ու զարմանալի է թվում Շուշիի ազատագրման օպերացիայի իրականացումը: Այնուամենայնիվ հայկական նորաստեղծ ռազմական կառույցները, չունենալով անհրաժեշտ համալրվածություն, մեծամասամբ նախկինում քաղաքացիական մասնագիտություն ունեցող կրտսեր հրամկազմի ղեկավարությամբ, կարողացան կատարել անհնարին թվացող խնդիրը՝ համեմատաբար փոքրաթիվ ուժերով ազատագրել անառիկ բերդաքաղաքը:

Մեր կոլեկտիվ աշխատանքում մենք փորձել ենք վերհանել շատ ու շատ ռազմական գործիչներին ու տեսաբաններին զարմանք պատճառած այս օպերացիայի հաջողության գործոնները:

Եթե ղեկավարվելու լինենք ռազմական արվեստի տեսության պահանջներով, ապա բուն Շուշի քաղաքի ուղղությամբ մեր զորքերը պետք է ունենային ուժերի ու միջոցների առնվազն 4-5 անգամ առավելություն, իսկ այլ ուղղություններում՝ գոնե պետք է լիներ կրկնակի գերակշռություն: Ուժերի հարաբերակցության աննպաստ դրությունն ԻՊՈՒ հրամանատարը գիտակցել է, ինչի մասին այլ անուղղակի օրինակներից բացի վկայում է նաև հետևյալ մեջբերումը. «Գործողության հենց ամենասկզբից հակառակորդի հրամանատարությունը, ջանալով օգնել Շուշիի կայազորին, մեր դեմ հանեց Սու-25 գրոհային ինքնաթիռ և Մի-24 ուղղաթիռ[170], որոնք մի քանի մարտական թռիչքներ իրականացրին: Հակառակորդի օդուժի գործողությունները վնաս հասցրին թե՛

[169] Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի արդյունքների և պատմական նշանակության մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), 2020, № 1, էջ 55-63
(էլեկտրոնային տարբերակը՝
https:// https://razmavaraget.files.wordpress.com/2020/07/hb_2020-n1.pdf)

[170] 2-4 միավորի մասին պետք է խոսք գնար:

մեր և թե՛ աղրբեջանական զորքերին, սակայն օպերացիայի ելքի վրա, ընդհանուր առմամբ, արդեն ազդել չէին կարող»[171]:

Սակայն Շուշիի օպերացիան կազմակերպող ղեկավարներն ու հրամանատարները գնացել են անկանխատեսելի ռիսկի, այնուհետև խելացի կերպով և իրատեսորեն գնահատելով իրադրության բոլոր գործոնները, կայացրել են այնպիսի որոշում, որի հիմքում հակառակորդին անակնկալի բերելու հանգամանքներն էին:

Բնական է՝ հակառակորդը չէր կարող պատկերացնել, որ հայկական փոքրաթիվ ուժերը կձեռնարկեն այդքան լայնածավալ գործողություններ, այն է՝ աննկատ ու անակնկալ ձևով, բնակլիմայական դաժան պայմաններում, կկատարեն շրջանցիկ զորաշարժեր, 10-15 կմ կխորանան հակառակորդի կողմից հսկվող տարածքում, հանկարծակի գրոհներով կտիրեն գերիշխող բարձունքներին, կհասնեն մինչև Լիսագորսկի և Ջառիստի մատույցներ ու կկտրեն հակառակորդի կապը Շուշի քաղաքի հետ:

Հակառակորդի մտքովն անգամ չէր անցել, որ հայկական փոքրաթիվ ուժերը կկարողանան գնալ ևս մեկ անկանխատեսելի քայլի, այն է՝ Շուշի քաղաքի հետ մեկտեղ հարձակման կանցնեն նաև Կարագյավի և Ջանհասան-Քյոսալարի ուղղություններով:

Որոշման նմանատիպ տարբերակը կամ ռիսկի գործոնի սահմանների գերգերազանցումը դուրս են ռազմական արվեստի տեսության օրենքների, բայց ոչ բանականության սահմաններից:

Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի իրականացման ընթացքն ավելի պարզ ընկալելու նպատակով, չորս ուղղությունների և պահեստազորային խմբավորումների գործողությունները կարելի է բաժանել երեք խումբ խնդիրների.

ա) Շուշի քաղաքի մեկուսացումը հակառակորդի զորքերի արևմտյան խմբավորումից,

բ) Ղայբալիշեն-Քյոսալար-Կարագյավ ճակատում գտնվող հակառակորդի զորքերի ներքաշումը մարտական գործողությունների մեջ,

գ) Շուշի քաղաքի գրոհը, պաշարումն ու տիրումը:

Միանշանակ պարզ է, որ ընդհանուր օպերացիան հաջողություն կունենար միայն այն դեպքում, երբ ա) և բ) կետերի խնդիրները կկատարվեին հաղթական ելքով:

[171] *Տեր-Թադևոսյան Ա.*, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

Այս պայմաններն ապահովելու նպատակով է, որ օպերացիայի գլխավոր խնդիրները կատարվել են հետևյալ հաջորդականությամբ.

- Օպերացիան սկսելու նախապայման հանդիսացող խնդրի կատարման նպատակով Սամվել Բաբայանն իր խմբով, մայիսի 8-9-ի գիշերը՝ ժամը 02^{30}-ին զբաղեցնելով 2214.8 նիշ. գերիշխող բարձունքը, հսկողության տակ է առել Լաչին-Շուշի մայրուղու Լիսագորսկի ճանապարհահատվածը,

- Լիսագորսկի ճանապարհահատվածը հսկողության տակ վերցնելուց հետո, մայիսի 8-9-ի գիշերը՝ ժամը 02^{50}-ի սահմաններում, տրվել է օպերացիայի հետևանային նախապատրաստության և հարձակման ելման շրջաններից ստորաբաժանումների դեպի գրոհի բնագծեր առաջխաղացման հրաման,

- բոլոր ուղղություններում հասցվել են գրեթե միաժամանակյա հարվածներ, հարձակողական գործողություններն իրականացվել են առավելագույն տեմպով,

- օպերացիայի սկզբից և ամբողջ ընթացքում առանձնապես ուժեղ ճնշման է ենթարկվել Քյոսալար-Կարագյավ բնագծում ամրացած հակառակորդը, ինչը ստիպել է նրան ոչ միայն չանդրադառնալ Շուշիի ուղղությանը, այլև օժանդակ ուժեր տեղափոխել այս ճակատ,

- հարձակողական գործողությունների ընթացքում շրջափակելով քաղաքը, միաժամանակ ակտիվ գրոհներով փորձեր են արվել հնարավոր ուղղություններից ու վայրերից քաղաքի պաշտպանությունը ճեղքելու համար:

Այսպիսի գործելակերպը ցույց է տալիս, որ օպերացիայի խնդիրները կատարվել են միասնական մտահղացմամբ, գործողությունների փոխկապակցված ու երևի թե միակ ճիշտ հաջորդականությամբ:

Օպերացիայի պլանի փաստաթղթերի և օպերացիայի վարման ընթացքի համադրությունը ցույց է տալիս նաև, որ մարտական գործողությունները մոտ 80 %-ով ունեցել են պլանային համապատասխանության ընթացք: Մարտավարական որոշ դրվագների շեղումները չեն ազդել օպերացիայի ընդհանուր պլանային ընթացքի վրա:

Այս հանգամանքը հաստատում է այն միտքը, որ թեև առաջին անգամ այնուամենայնիվ օպերացիայի կազմակերպիչները սեղմ ժամկետներում կարողացել են առանձին և անկախ գործելաձևի սովոր ջոկատներին ու ստորաբաժանումներին նպատակամղել միասնական

խնդրի կատարմանը, հասել են զորքերի կենտրոնացված կառավարման, հաստատել են զինվորական բարձր կարգապահություն:

Հանգամանալից վերլուծելով Շուշիի ազատագրման օպերացիայի տարբեր ուղղությունների տարատեսակ մարտավարական դրվագները, կարող ենք հիմնավորել, որ թե՛ ընդհանուր օպերացիան և թե՛ ուղղություններում անցկացված մարտական գործողություններն ունեն նաև բավականաչափ համապատասխանություններ ժամանակակից համազորային օպերացիայի (մարտի) հիմնական սկզբունքներին: Ազատագրական պայքարի համար զենք վերցրած կամավորական ստորաբաժանումները համազորային մարտի սկզբունքների պահպանման համար անհրաժեշտ միջոցառումներն անցկացրել են պատերազմական պայմաններում, մարտական փորձով ու արյան գնով սովորել են տիրապետել այն ամենին, ինչն անհրաժեշտ է մարտնչելու համար:

Որպես օրինակներ կարող ենք նշել հետևյալը.

ա) Օպերացիայում ընդգրկված ստորաբաժանումներն եղած հնարավորությունների սահմաններում մշտապես պահպանել են մարտական պատրաստականության բարձր աստիճան: Այդ առումով լիարժեք կերպով են պահպանվել հետևյալ պահանջները՝

- հրամանատարները ճիշտ են հաշկացել իրենց խնդիրները,
- անձնակազմն ունեցել է բարձր կամային ու բարոյահոգեբանական հատկանիշներ, մարտական ու ֆիզիկական վարժվածություն, եղել է կարգապահ,
- միջոցների անբավարարությամբ հանդերձ, ընդհանուր առմամբ, զորքերի կառավարումն իրականացվել է կայուն և անընդհատ,
- անընդհատ վարվել է հակառակորդի հետախուզություն, եղած հնարավորությունների սահմաններում ապահովումներն իրականացվել են առանց ձախողումների:

Ռեսուրսների (համալրվածություն, տեխնիկական ապահովվածություն և այլն) առկայության հետ կապված մնացած չկատարված միջոցառումների բացը լրացվել է օպերացիայի նախապատրաստման ու անցկացման որակի մակարդակի բարձրացման հաշվին:

Հայրենի քաղաքի ազատագրման օպերացիայից առաջ մարտիկների պատրաստակամությունը և շարժառիթավորվածությունը բնութագրել են բազմաթիվ հեղինակներ ու ռազմական ու քաղաքական գործիչներ:

բ) Օպերացիայի վճռականության, ակտիվության, դրա անընդհատ վարման պահանջների պահպանման հանգամանքներն ապացուցվում են բոլոր ուղղությունների և ենթաուղղությունների անկացրած մարտավարական դրվագների նկարագրություններով, որոնց մի մասը ներկայացվել է նախորդող շարադրանքում և օպերացիային նվիրված այլ աշխատանքներում:

Օրինակները բազմազան են: Վճռականության դրսևորման օրինակ են Շուշիի բանտի և գերեզմանոցի ուղղությամբ Աշոտ Ղուլյանի և բերդի ուղղությամբ Արգամ Հարությունյանի խմբերի գրոհները:

Գործողությունների ակտիվության դրսևորում է Ջանհասան և Քյոսալար բնակավայրերի ազատագրման ժամանակ հակառակորդի միջդիրքային տարածքով ԻՊՈՒ ստորաբաժանումների հարձակողական գործողությունը:

Օպերացիայի բոլոր ուղղություններում և համարյա թե բոլոր ենթաուղղություններում գործողությունները վարվել են անընդհատ, որի շնորհիվ նաև հակառակորդը չի հասցրել ուժեր տեղափոխել կամ կատարել նշանակալի վերախմբավորումներ:

գ) Զորատեսակների, հատուկ զորքերի համաձայնեցված գործողությունները և նրանց միջև անընդհատ փոխգործակցության պահպանումը եղած ուժերի ու միջոցների սակավ քանակություններին համապատասխան՝ սահմանափակ ծավալներով իրականացվել են:

Օրինակ, որպես այս սկզբունքի տարրեր կարելի է նշել Շուշիի ուղղությամբ հրետանու համաձայնեցված կրակի վարման, նաև փոխադարձ ճանաչման նպատակով անձնակազմի ու սպառազինության վրա սպիտակ խաչերի տարբերանշաններ ունենալու հանգամանքները:

- Օպերացիայի ընթացքում մասնայական բնույթ են կրել գործողությունների անակնկալության և ռազմական խորամանկության կիրառման սկզբունքի դրսևորումները:

Կարելի է եզրակացնել, որ գերակշիռ հակառակորդի նկատմամբ, այն էլ հարձակողական օպերացիայում, հաղթանակի հասնելու ամենակարևոր գործոնն այս սկզբունքի մտածված կիրառումն էր: Այս սկզբունքն է ընկած օպերացիայի թե՛ մտահղացման և թե՛ որոշման հիմքում: Այդ իսկ պատճառով էլ այս սկզբունքն արժանի է ավելի հանգամանալից մեկնաբանության:

Օպերացիայի վարման ընթացքում գործողությունների անակնկալության և ռազմական խորամանկության հեռահար նպատակներին

հասնելու համար, դեռ օպերացիայի նախապատրաստական փուլում, հրամանատարությունը խստորեն պահպանել է զորքերի ծածուկ կառավարման պահանջները և ձեռնարկել ապասվելիք գործողություններ վերաբերյալ հակառակորդին թյուրիմացությունների (մոլորության) մեջ գցելու կամ նրան ապակողմնորոշելու միջոցառումներ ու կոնկրետ գործողություններ: Այս առումով, բացի նախորդող շարադրանքից, կարելի է հավելել նոր օրինակներ.

Օպերացիայի նախապատրաստական հարցերի վերաբերյալ պարբերաբար հրավիրվող խորհրդակցությունների անցկացման ժամկետների ու քննարկվող հարցերի մասին տեղեկատվությանը տիրապետում էին միայն հրամանատարները:

Զորքերի ծածուկ կառավարման պահանջների բծախնդրորեն պահպանման մեջ համոզվելու համար բավարար է Յուրա Հովհաննիսյանի հրամանատարությամբ ստեղծված գումարտակի շտաբի պետ Վանիկ Ստեփանյանի հետևյալ հիշողությունը՝ «1992թ. մարտի 23-ին Շուշի քաղաքը նկարահանելու կապակցությամբ «26»-ի դիրքեր եկավ «Սասունցի Դավիթ» ջոկատից Վաչագան Կարապետյանը և ցանկացավ անպայման տեսնել Ա. Տեր-Թադևոսյանին, որի գտնվելու վայրը ոչ ոք չգիտեր, իսկ իմացողներին էլ արգելվել էր այդ մասին ասել: Ես հարցուփորձ անելով ու բացատրելով, որ անհրաժեշտ է նրան տեսնելը, մի կերպ իմացա, որ Տեր-Թադևոսյանը գտնվում է Նորագյուղում՝ Մանուչարովի ամառանոցում: Ես, Վաչագանն ու վարորդ Վարդգեսը գնացինք Նորագյուղ, մտանք ԻՊՈՒ հրամանատարի մոտ: Նա միայնակ աշխատում էր քարտեզի վրա՝ բոլորից առանձնացված մշակում էր Շուշի քաղաքի ազատագրման օպերացիան»[172]:

Հակառակորդի վիճակն ուսումնասիրելու, հետագա օպերացիայի վերաբերյալ նրան ապակողմնորոշելու, նաև հակառակորդի ուժերի, դեպի մեզ համար նպաստավոր ուղղություններ տեղաշարժեր պարտադրելու նպատակով, ԻՊՈՒ հրամանատարը մինչ օպերացիան, կազմակերպել ու իրականացրել է նաև տարատեսակ գործողություններ ու միջոցառումներ: Այսպես օրինակ՝ հեռահար նպատակով Յուրա Հովհաննիսյանի ստորաբաժանումներին 1992 թ. ապրիլի 29-ին խնդիր է առաջադրվում «26»-ի դիրքերն առաջ տալու պատրվակով, անակնկալ գրոհով տիրել 1459,0 նիշով (0746) բարձունքին: Մեր ստորաբաժանումները բարեհաջող կերպով կատարել են մարտական խնդիրը՝ տիրել բարձունքին, որից հետո դեպի այդ ուղղություն հակառակորդի օժանդակ ուժերի տեղաշարժ նկատելով՝ թողել են բարձունքը և հետ քաշվել նախկին դիրքեր: Այս գործողությամբ ԻՊՈՒ հրամանատարն ապակողմնորոշել է հակառակորդին, նրան ստիպել Շուշիից ուժեր տեղափոխել Ղայբալիշեն-Քյոսալար հատված[173]:

Օպերացիայի վարման ընթացքում այս սկզբունքի արտահայտման վառ օրինակներ են Ջանհասան և Քյոսալար բնակավայրերի ազատագրման ժամանակ թերից ու թիկունքից հակառակորդի հենակետերի ու կրակակետերի գրոհման, «Երեք աշտարակների» բարձունքի գրավման, Մեծ և Փոքր Քիրսերի բարձունքների հենակետերի ու կրակակետերի վնասազերծման մարտական գործողությունների դրվագները: Այսպիսի օրինակներ եղել են ցանկացած խմբի կամ ջոկատի գործողություններում: Դրանք բազմաթիվ են: Ահա ևս մի օրինակ, որը բերել է «Աֆղանցիներ» ջոկատի հրամանատար Նվեր Չախոյանը. «Թուրքերը փորձեցին Զառիստից անցնել մեր թիկունքը... Ետ գնալու տեղ չունեինք, բաց անտառ էր, հակառակորդի տեխնիկայի կրակի տակ ու տեսադաշտում: Նույն վիճակն էր նաև մեզնից դեպի աջ: Ի զարմանս իմ ընկերների և թշնամու համար անսպասելի, ես որոշում կայացրի գյուղի տակով, գետի բերանով, հակառակորդից մոտ 30 մ հեռավորությամբ անցնելու մասին»:

դ) Օպերացիայում, թեև գերակշռություն ապահովելու հնարավորություն չի եղել, այնուամենայնիվ հիմնական ջանքերի կենտրոնացում կատարվել է միաժամանակ բոլոր ուղություններում:

Օպերացիայի վերլուծությունը ցույց է տալիս, որ գլխավոր հարվածի ուղության ընդգծումն այս տարբերակում տեղին չէ: Ըստ իրենց նշանակության բոլոր չորս ուղություններով հասցված հարվածներն էլ ունեն ուժերի ու միջոցների կենտրոնացման մոտավորապես նույն բնութագիրը. դրանք ունեն համարյա թե հավասարազոր կարևորություն: Այս հանգամանքը նույնպես օպերացիայի յուրահատկություններից մեկն է:

ե) Օպերացիայում ստորաբաժանումների զորաշարժերի օրինակները բազմաթիվ ու բազմաբնույթ են, իսկ կրակի զորաշարժերի օրինակները, հասկանալի պատճառներով, սահմանափակ են:

[172] Տե՛ս Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից, էջ 30:

[173] Հմմտ.՝ *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Գամառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 247-248, ծանոթ.՝ 15:

Գերակշիռ հակառակորդի պաշտպանական դիրքերի կամ հենակետերի վրա ճակատային հարձակումից խուսափելու նպատակով գրեթե բոլոր ուղղություններում կիրառվել են տարաբնույթ զորաշարժեր:

Ստորաբաժանումների զորաշարժերի յուրահատուկ օրինակներ են Հարավային (Լաչինի) ուղղության՝ Սղնախ և Ավետարանոց բնակավայրերի շրջաններից դեպի Ներքին Ջառիստ, Վերին Ջառիստ բնակավայրերի, Մեծ ու Փոքր Քիրսերի ուղղությամբ, տեղանքի ու բնակլիմայական բարդ պայմաններում իրականացված զորաշարժերը: Այս ստորաբաժանումները հակառակորդի հսկողության տակ գտնվող տարածքներով, նրա անմիջական ներգործության պայմաններում պետք է թևանցեին Շուշին և հսկողության տակ առնեին Լաչին-Շուշի ճանապարհը: Թեև գործողության ընթացքում առաջացել են բազմաթիվ խոչընդոտներ, այնուամենայնիվ ստորաբաժանումները հիմնականում հաջողությամբ են կատարել մարտական խնդիրը: Այս ուղղությամբ կատարված զորաշարժերի դժվարությունները պատկերացնելու նպատակով, օրինակ բերենք 2-րդ վաշտի մարտիկ Վ. Գևորգյանի հուշերից մի հատված. «Քիրսը գրավելու համար 20-22 ժամ ճանապարհ ենք գնացել անտառներով, որպեսզի չնկատվենք, ընդամենը 1 ժամ ենք հանգստացել, սնվել: Լավ սպառազինված ենք եղել, մեզ հետ տարած 2 ձիերին բարձել էինք ծանր զենքերը, մինչև մեր ծնկները ձյուն էր, կենդանիները չկարողացան շարունակել ճանապարհը՝ չոքեցին ուժասպառ, լեռները բարձրացանք առանց ձիերի»[174]:

Քիչ փոքր հեռավորությունների վրա, նպատակային զորաշարժերի ուսանելի օրինակներ են նաև Կարագլավի և Քյոսալարի ուղղություններում հակառակորդի թիկունք և թևեր շրջանցման ու թևանցման քողարկված գործողությունները: Եթե ուղղության ստորաբաժանումները չկիրառեին այս սկզբունքը, ապա անհնարին կլիներ համարյա եռակի առավելություն ունեցող և նախապատրաստված պաշտպանությունում գտնվող հակառակորդի նկատմամբ հասնել հաղթանակի:

Ստորաբաժանումների զորաշարժեր են իրականացվել նաև մնացած բոլոր ուղղություններում:

Հրետանու նվազագույն քանակությամբ հանդերձ՝ օպերացիայի ընթացքում իրականացվել են նաև կրակի զորաշարժեր. «Զինամթերքի սակավությամբ հանդերձ, Ժորա Գասպարյանը կարգադրեց Աղդամի վրա 40 հրթիռ արձակել (կրակը Շուշիի ուղղությունից տեղափոխելով)»- հիշում է ԲՄ-21 կայանքի հրամանատար Վ. Կարապետյանը: ԻԳՈՒ հրամանատարի գնահատմամբ՝ «<...>մայիսի 7-8-ին «Դնեպր» հրետանային խումբը, փոխգնդապետ Դնեպրիկ Բաղդասարյանի հրամանատարությամբ, [գուցե սեփական նախաձեռնությամբ.- Մ. Հ.] հրետակոծության տակ էր պահում Լաչին քաղաքը և Լաչին-Կուբաթլու ճանապարհահատվածը»[175]:

գ) Ստորաբաժանումների մարտունակության ժամանակին վերականգնումը օպերացիայի ընթացքում առանձնահատուկ դրսևորումներ չի ունեցել: Դա կապված է եղել օպերացիայի վարման կարճ ժամկետի և կրած համեմատաբար քիչ կորուստների հետ: Միաժամանակ նաև հասկանալի է, որ նորաստեղծ ինքնապաշտպանական ուժերը նմանատիպ սկզբունքի ապահովման հարցերում չէին կարող ունենալ լիարժեք կատարելություն: Այս հանգամանքներով հանդերձ՝ բոլոր գործող օղակների բուժապահովումը կազմակերպված է եղել բավարար չափով:

Օպերացիայում համակողմանի ապահովման տարրերից, կախված առկա ուժերից ու միջոցներից, կիրառում են գտել հետախուզությունը, պահպանությունը, մարտավարական քողարկումը, ինժեներական, տեխնիկական ու թիկունքային ապահովումները: Ինչպես նախորդող շարադրանքում է նշվել, հետախուզությունը վարվել է բոլոր օղակներում, բոլոր հնարավոր միջոցներով:

է) Ստորաբաժանումների կայուն և անընդհատ կառավարման, նախորոշված նպատակներին հասնելու, կայացված որոշումներն ու առաջադրված խնդիրները կատարելու հաստատակամության սկզբունքի տարրերի դրսևորումներն օպերացիայում նույնպես բազմաթիվ են: Ակնհայտ է օպերացիայի ղեկավարության ու տարբեր օղակների հրամանատարների այն գործելակերպի համստարած դրսևորումը, որ իրադրության դժվար ու կրիտիկական պահերին նրանք եղել են առաջին շարքերում, իրենց ներկայությամբ ու գործելաձևով ոգևորել են մարտիկներին, առաջնորդել նրանց դեպի հաղթանակ: Ունեցած միջոցների հնարավորությունների սահմաններում ստորաբաժանումների կառավարումն ընդհանուր հաշվով իրականացվել է անընդհատ: Եղել են կապի խաթարման առանձին դեպքեր, բայց դրանք չեն բերել կառավարման համակարգի խաթարման: Միանշանակ կարելի է նշել, որ կառա-

[174] Նույն տեղում, էջ 31-32:

[175] *Гер-Тадевосян А.,* Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 572:

վարման մարմինները, աղքատիկ միջոցներով, կառավարման խնդիրների կատարման ամբողջ ընթացքում, գործել են նպատակասլաց ու վստահ, հաստատակամորեն ենթակա օղակներին առաջնորդել են առաջադրված մարտական խնդիրների բարեհաջող կատարմանը:

Արցախյան ազատագրական պայքարում, այդ թվում նաև Շուշիի ազատագրման օպերացիայում ԼՂՀ ռազմաքաղաքական ղեկավարության հետ մեկտեղ մեծ ներդրում են ունեցել նաև Հայ Առաքելական եկեղեցու շատ ներկայացուցիչներ[176]: Մեր հոգևորականները մարտի գնալուց առաջ օրհնել են մարտիկներին, իսկ մարտի ընթացքում եղել են նաև նրանց շարքերում: Օրինակ օպերացիային ուղղակի մասնակցություն են ունեցել Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, քահանա Գրիգոր Մարկոսյանը, սարկավագ Կորյուն Ապրեսյանը և այլք:

Այսպիսով ամփոփելով Շուշի քաղաքի ազատագրման օպերացիայի այս համառոտ վերլուծականը՝ կարող ենք հաստատապես պնդել, որ հայկական փոքրաթիվ ուժերը, ցուցաբերելով համատարած արիություն, մեծամասամբ գնալով անկանխատեսելի, բայց և մտածված գործողությունների, հոգում անընդհատ պահելով հայրենի հողի ազատագրման անդիմադրելի ձգտումը, կարողացել են մոլորեցնել ու զարմանալիորեն կարճ ժամկետում ջախջախել թվապես եռապատիկ թշնամուն, փախուստի մատնել նրան և ազատագրել անառիկ համարվող բերդաքաղաքը:

Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի բացառիկ գլուխգործոց է, այն իր մեջ ներառում է թե՛ օպերատիվ արվեստի և թե՛ մարտավարության բազմապիսի ուսանելի օրինակներ: Միաժամանակ կատարված աշխատանքները ցույց են տալիս, որ օպերացիայի նախապատրաստման և անցկացման վերաբերյալ նյութերը դեռևս խորը ուսումնասիրությունների կարիք ունեն: Այդ է հաստատում նաև Շուշիի ազատագրման օպերացիայում Քյոսալար-Կարագյավ ուղղության ընդհանուր հրամանատար Սեյրան Օհանյանի խոսքը. «Շուշիի օպերացիան մեր Արցախյան գոյապայքարի ընթացքում ամենահաջողված, ճիշտ պլանավորված և մեր հրամանատարների ու զինվորների իրականացրած մարտական գործողությունն է, որն իհարկե այսքան կարճ ժամանակահատվածում հնարավոր չէ»[177]:

Լաչինի միջանցքի բացումը (1992 թ. մայիսի 14-18)

Շուշիի ազատագրումից 3 օր անց ճնշվեցին Ջառիստ գյուղի թշնամական կրակակետերը: Հաջորդ օրը հակառակորդի մեծաքանակ մարտական տեխնիկան ու հետևակը հարձակում ձեռնարկեցին Ջառիստ ներխուժելու և դեպի Շուշի շարժվելու նպատակով: Նախորդ գիշեր հայ մարտիկների տեղաղրած ականի վրա պայթած տանկը փակեց ճանապարհը: Փոխհրաձգության ընթացքում կորցնելով 40 զինվոր, հակառակորդը հետ շպրտվեց: Այս մարտերի մասին ԻՊՈՒ հրամանատարը հետագայում գրելու էր. «Մայիսի 12-ին հակառակորդը փորձեց Ջարիսլու գյուղից դեպի Շուշի հակագրոհ ձեռնարկել: Սակայն հակառակորդի զորքերն ընկան մեր սարքած ծուղակը և կենդանի ուժի ու տեխնիկայի կորուստներ տալով՝ նահանջեցին»[178]: Միաժամանակ ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, ճնշելով միայն 2 գյուղերում դրսևորված հակառակորդի դիմադրությունը, վերահսկողություն հաստատեցին Շուշիի շրջանի գրեթե 20 գյուղակների նկատմամբ: Այնուհետև հարվածային խմբերը դուրս եկան Լիսագորսկի աջ ու ձախ կողմերի բարձունքները: Մայիսի 17-ին ազատագրվեց Լիսագորսկը[179]: Լիսագորսկ և Մեծշեն-Հինշեն գծով հարձակվեցին Ակնաղբյուրի, Ավետարանոցի, ՀՀ-ից ժամանած կամավորական վաշտերը: Մայիսի 17-ին, առանց մեծ դժվարությունների ազատագրվեցին նաև Բերդաձորի ենթաշրջանի գյուղերը: Մայիսի 18-ի առավոտյան, հրետանային նախապատրաստությունից հետո, ԻՊՈՒ կազմավորումները հարձակման անցան Լաչինի ուղղությամբ և ազատագրեցին այն: Հակառակորդն այլևս ի վիճակի չէր լուրջ դիմադրություն ցույց տալ: Նրա համընդհանուր բարոյալքմանը նպաստել է նաև «Դնեպր» հրետանային ստորաբաժանման կողմից դեռևս Շուշիի ռազմագործողության նախօրեին ձեռնարկված Լաչին քաղաքի զանգվածային հրետակոծությունը՝ ի պատասխան Գո-

[176] Տե՛ս *Մարտիրոսյան Պ. (արքեպիսկոպոս), Հարությունյան Մ.,* Արցախի թեմը և Ադրբեջան-Ղարաբաղ հակամարտությունը, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդես), № 1-2, Ե., 2001, էջ 85-86:

[177] Տե՛ս Շուշիի ազատագրման օպերացիան ռազմական արվեստի տեսանկյունից, էջ 33-34:

[178] *Տեր-Թադևոսյան Ա.,* Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

[179] *Հարությունյան Մ.,* Ճեղքելով խուլ շրջափակումը (մայիս. 1992 թ.), «Մարտիկ», 1999 թ., № 19:

բիսի շրջանի հայկական բնակավայրերի չդադարող հրթիռահրետակոծություններին[180]:

Լաչինի ազատագրմամբ, մաքառող Արցախն անմիջական հողային (ցամաքային) կապ հաստատեց Հայաստանի Հանրապետության հետ՝ զենքի ուժով լուծելով ցամաքային շրջափակումը վերացնելու հրատապ հարցը: Դրանից հետո, կապված միջնորդների խաղաղարարական ջանքերի, Բաքվում ներքաղաքական զգվոտոցների, ինչպես նաև աղրբեջանական բանակի հարվածային ուժերի ջախջախման ու բարոյազրկման հետ, հակամարտության գոտում մարտական գործողությունները մի առ ժամանակ դադար առան: Հրադադարը հակառակորդն օգտագործում էր ուժերն ու միջոցները վերականգնելու, զորքերի վերախմբավորումներ կատարելու և վերստին հարձակման անցնելու նպատակով:

1992 թ. ամառային ռազմարշավի առանձնահատկությունները

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի համար թերևս ամենածանր ժամանակաշրջանի՝ 1992 թ. ամառային ռազմարշավի վերաբերյալ մեր ուսումնասիրություններում[181] անդրադարձել ենք նաև ռազմարվեստի որոշ տարրերի, հիմնականում՝ պաշտպանական մարտերի պլանավորմանն ու վարմանը:

Մեր թեմայի տեսանկյունից կարևոր նշանակություն են ստանում 1992 թ. ռազմարշավի հիմնահարցերի վերաբերյալ ԻՊՈՒ նախկին հրամանատարի գնահատականները: Ըստ նրա՝ «Աղրբեջանը Ռուսաստանից ստանալով 4-րդ բանակի չորս դիվիզիաների և Կասպյան նավատորմի սպառազինությունը՝ հունիսի 12-ին անսպասելիորեն լայնածավալ հարձակման անցավ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Հակառակորդը գլխավորապես հարվածներ էր հասցնում Շահումյանի, Մարտակերտի և Ասկերանի ուղղություններով: Հարձակվող զորքերի առաջին շարքերում ընթանում էին տանկերը՝ Աղրբեջանի ՊՆ-ի վարձած նախկին խորհրդային 23-րդ դիվիզիայի փորձառու անձնակազմերով»[182]:

Ինչպես արխիվային փաստաթղթերն են վկայում՝ հակառակորդի հարձակումն այնքան էլ հանկարծակի չէր: ԻՊՈՒ հրամանատարի հունիսի 8-ի հաղորդագրությունում ծանուցվում էր. «Վերջին երկու օրերի ընթացքում նկատվել են հակառակորդի զրահատեխնիկայի հապշտապ կուտակումներ բոլոր ուղղություններում՝ Միր-Բաշիրի կողմերում՝ Մարաղայի ուղղությամբ՝ 8 տանկ, 10 ՀՄՄ-2, «Գրադ» կայանք, Փափրավենդում՝ Մարտակերտի ուղղությամբ՝ 4 միավոր, Ասկերանի ուղղությունում՝ 12 միավոր, Ամիրանլար-Կուրդպատկինո հատվածում՝ 10 միավոր, Կարմիր շուկայի ուղղությունում՝ 3 միավոր, Հադրութի ուղղությունում՝ 4 միավոր զրահատեխնիկա, ավելի վաղ զրահատեխնիկայի կուտակումներ են նկատվել Կուբաթլիի շրջանում՝ միջանցքի ուղղությամբ»[183]: Կարելի է ենթադրել, որ Շահումյանի ուղղությունում հակառակորդի ուժերի կուտակումների վերաբերյալ տեղի հրամանատրությունն անմիջապես է զեկուցել ՀՀ ՊՆ-ին[184]:

ԻՊՈՒ նախկին հրամանատարը այդ շրջանի ուժերն ու միջոցները ներկայացնում է հետևյալ կերպ. «Շահումյանի շրջանի պաշտպանությունն իրականացնում էին տեղացի աշխարհազորայինները, Հայաստանից «Տիգրան Մեծ» կամավորական ջոկատը և Հատուկ գնդի հերթափոխային վաշտը՝ ընդհանուր թվով մոտավորապես 500 հոգի: Շրջանի պահպանությունը համակարգում էր «Հյուսիսային կոմիտեն», որը ղեկավարում էր Շահեն Մեղրյանը»[185]:

Գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանը Շահումյանի շրջանում անհաջողությունները պայմանավորում էր պաշտպանության գծում առա-

[180] ***Բադրասարյան Դ.,*** Դիվակայություն (հուշագրություններ), Ե., «Միհթար Գոշ», 1998, էջ 122:

[181] ***Հայրապետյան Ս.,*** 1992 թվականի սմառային պատերազմական գործողությունների շուրջ, Զեկուցում Երիտասարդ գիտնականների 2-րդ գիտաժողովում (12-14 ապրիլի 2007 թ.), ԱրՊՀ Գիտական տեղեկագիր, Ստ., 2008, № 2, էջ 60-67, հմմտ.՝ Հայատոան-Արցախ. պատմության և արդիականության զուգահեռներում(հոդվածների ժողովածու), գիրք Ա, Ս., 2009, էջ 83-98, ***նույնի*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կռաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 85-106:

[182] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 572-573:

[183] ԼՂՀ ՊՆՍ, ՕՀՍՏ, № 217, էջ 33, հմմտ.՝ ԼՂՀ ՊՆ, ՕՀՍՏ, № 142, էջ 90, ***Սուքսանյ Ջ.,*** նշվ. գիրքը, էջ 23-24:

[184] Ցավով ենք արձանագրում, որ հրամանատարության և քաղաքական ղեկավարության պատեհաժամորեն հակազդելու կամ կանխիկ հարված հասցնելու համարձակություն չցուցաբերելու աղետալի հետևանքներից դասեր չքաղելու պատճառով նույն իրավիճակում հայտնվեցինք նաև 2020 թ. ամռանը, երբ առնվազն տասնօրյան դեպքերից հետո թշնամին հաճախադեպ անցկացվող զորավարժությունների քողի տակ վիթխարի կենդանի ուժ և ռազմական տեխնիկա, հրթիռահրետանային միջոցներ էր կուտակում Արցախի Հանրապետության սահմանների ամբողջ երկայնքով՝ այդպես էլ չկարժանանալով կանխիկ հարվածի, նույնիսկ որևէ հակազդեցության. այն տպավորությունն էր, որ ՊԲ հրամանատարությունը ՀՀ վերադասի հետ միասին նույնիսկ որևէ կերպ թշնամու անկնայտ ագրեսիվ գործողություններին խանգարելու կամ համարժեք միջոցներ ձեռնարկելու փորձեր չեն կատարել՝ մատնվելով կործանարար անգործության:

[185] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

ջացած ճեղքվածքով. «Հակառակորդի գրոհի սկզբից Ղարաչինարի ուղղությունը պաշտպանող հայկական զորքերը լուրջ դիմադրություն ցույց չտվեցին և նահանջեցին: Դա խարխլեց շրջանի պաշտպանության ամբողջ համակարգը, ինչն էլ հնարավորություն տվեց հակառակորդին արագ գրավել Շահումյանը և ընդամենը երկու օրում՝ նաև համանուն շրջանն ամբողջությամբ»[186]:

Շահումյանի շրջանի հետ կապված մարտական գործողություններում կարևոր առանձնահատկություն էր պարտիզանական պատերազմի ծավալումը բռնազավթված տարածքում, ինչի մասին նախ հայտարարել էին շրջանի ինքնապաշտպանության հրամանատարները, ապա ԼՂՀ ԳԽ նախագահությունը[187]:

Ինչ վերաբերում էր Մարտակերտի շրջանին, ապա այստեղ ևս ուժերի ու միջոցների քանակն անբավարար էր: Ըստ ԻՊՈՒ նախկին հրամանատարի՝ «Հունիսի 15-ին հակառակորդն սկսեց գրոհը Մարտակերտի ուղղությամբ: Այդ ժամանակ շրջանը պաշտպանում էին մի քանի ջոկատներ, ընդհանուր առմամբ՝ 1136 մարդ, որոնք բաշխված էին երեք հիմնական ուղղություններով՝ 383 մարտիկներ՝ արևմտյան (Քելբաջարի), 371-ը՝ հյուսիսարևելյան և 382-ը՝ հարավարևմտյան ուղղություններով: Հայկական ջոկատներն ունեին 6 տանկ, 4 ՀՄՄ, 1 զրահամեքենա: Ընդ որում՝ տանկային փորձառու անձնակազմերն ընդամենը երեքն էին, որոնց շուտով միացան ևս երկուսը: Հակատանկային զենքերից կար «Ֆագոտ» տեսակի չորս հակատանկային կառավարելի հրթիռ (ՀԿՀ), ինչպես նաև ձեռքի և հաստոցային նռնականետներ: Հրետանին ներկայացված էր երեք Դ-30 հաուբիցներով և ԿՍ-19 երկու թնդանոթներով»[188]:

Ստեղծվել էր վտանգավոր իրավիճակ, որը գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանը գնահատում է այսպես. «Հունիսի 17-ին զոհվեցին Մարտակերտի շրջանի պաշտպանության պատասխանատու Վագիֆ Գալստյանը և Հատուկ գնդի հրամանատար Վլադիմիր Կարապետյանը: Այդ ընթացքում շրջանը պաշտպանող ջոկատներում ծանր բարոյահոգեբանական վիճակ էր տիրում: Դա բացատրվում էր հետևյալ հանգամանքներով. հայկական ջոկատներն առաջին անգամ էին ենթարկվում հակառակորդի այդքան հզոր հարձակմանը, որի արդյունքում հա-

[186] *Тер-Тадевосян А.*, Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 573:
[187] «Արցախ», 1992 թ., № 7:
[188] Նույն տեղում:

մեմատաբար մեծ կորուստներ էին կրում: Նրանց վրա ծանր ազդեցություն էր գործել հակառակորդի կողմից Շահումյանի շրջանի գրավումը և շահումյանցի փախստականների վիճակը, որոնք Մարտակերտով շարժվում էին դեպի Ստեփանակերտ»:

Նման իրավիճակում ԻՊՈՒ հրամանատարը որոշում է անձամբ ղեկավարել Մարտակերտի ռազմաճակատը. «Հաշվի առնելով ստեղծված իրավիճակի ողջ ծանրությունը՝ հունիսի 18-ին ես մեկնեցի Մարտակերտ՝ շրջանի պաշտպանությունը կազմակերպելու համար: Շուտով Մարտակերտի շրջանի պաշտպանությունը համակարգելու նպատակով չորս սպաների հետ միասին այստեղ ժամանեց նաև գեներալ-մայոր Արտուշ Հարությունյանը: Փորձառու կադրային սպաների ժամանումը հնարավորություն տվեց նշանակալի կերպով բարելավել դաշտային շտաբի աշխատանքը և վստահություն հաղորդեց ջոկատների հրամանատարներին»:

Ներկայացնելով Մարտակերտի ռազմաճակատում օպերատիվ-մարտավարական իրադրությունը՝ գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանն առանձնացրել է հետևյալ յուրահատուկ կողմերը. «Հակառակորդը, գիտակցելով իր գերազանցությունը կենդանի ուժի և միջոցների հարցում, համառորեն փորձում էր ճեղքել ռազմաճակատը՝ այդ նպատակով օգտագործելով փորձառու վարձկան անձնակազմեր ունեցող զրահատեխնիկան»:

Զրահատանկային ուժերով ճեղքումների մարտավարությունից բացի՝ հակառակորդը լայնորեն օգտվում էր իր օդային գերակայությունից: Այդ և, մասնավորապես, օդուժի մարտավարության մասին ԻՊՈՒ նախկին հրամանատարը գրում է. «Հակառակորդի գրոհին օդից աջակցում էր ավիացիան: Ռազմական ինքնաթիռների և ուղղաթիռների անձնակազմերը նույնպես կազմված էին հիմնականում վարձկան-օդաչուներից: Իսկ մենք Մարտակերտի ուղղությունում ՀՕՊ միջոցներից ունեինք մի քանի «Ստրելա 2Մ» շարժական զենիթահրթիռային համալիրներ և երեք «ԶՈՒ-23-2» զենիթային կայանքներ, որոնք չէին կարող էական վնաս հասցնել հակառակորդի օդուժին: Հայկական դիրքերի վրա օդային գրոհի ժամանակ հակառակորդը, որպես կանոն, օգտագործում էր մի զույգ ՍՈՒ-25 գրոհային ինքնաթիռ, որին, դարձյալ զույ-

գերով, հետևում էին Լ-29 ուսումնամարտական ինքնաթիռները կամ Մի-24 հարվածային ողղաթիռները»[189]:

Ռազմաճակատի պաշտպանությանը խանգարող գործոններից ԻՊՈՒ նախկին հրամանատարն առանձնացրել է հետևյալ հանգամանքները. «Թեև հակառակորդը նշանակալիորեն գերազանցում էր կենդանի ուժի և զրահատեխնիկայի հարցում, ինչպես նաև լիակատար տիրապետում էր օդում, հայկական ջոկատները 19 օր դիմակայեցին հակառակորդի կատաղի հարձակմանը: Սակայն կորուստներ կրելով, այդ թվում՝ նաև հրամանատարական կազմից[190], սկսեցին առանց հրամանի, մեկը մյուսի հետևից թողնել մարտական դիրքերը: 1992 թ. հուլիսի 4-ի դրությամբ Մարտակերտը պաշտպանում էին ընդամենը 42-հոգի ընդհանուր թվակազմով երեք փոքր ջոկատներ, որոնք այլևս ի վիճակի չէին դիմակայել հակառակորդի ճնշմանը»[191]: Հակառակորդի հաջողությունը զարգացնելու համար վճռորոշ նշանակություն ունեցավ 1992 թ. օգոստոսի 6-ին և 12-ին Քարվաճառի շրջանից ձեռնարկած հարձակումը:

Շահումյանի և Մարտակերտի շրջաններում պաշտպանության ձախողումների պատճառները մի շարք տեսանկյուններից դիտարկել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում[192]: Մեր թեմայի շրջանակներում առանձնակի կարևորություն են ներկայացնում ռազմական բնույթի օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները, որոնց վերստին անդրադառնալը պահանջված է մանավանդ 2020 թ. սեպտեմբերի 27-ին ադրբեջանաթուրքական զավթիչների ու միջազգային ահաբեկիչների համատեղ ագրեսիայի աղետալի հետևանքների համապատկերում:

Պետք է խոստովանել, որ հունիսի 12-ի ռազմական գործողությունները հակառակորդը կազմակերպել ու անցկացրել է հիմնավոր և գրագետ: Մարտակերտի շրջանի Թալիշ, Մարաղա, Չայլու գյուղերի ինտենսիվ հրթիռահրետակոծություններով և Կիչան-Խաչենագետի կամուրջ ռազմավարական գծով ձեռնարկված հարձակմամբ Շահումյանի շրջանը լրիվությամբ մեկուսացվեց Մարտակերտի շրջանից, իսկ Մարտակերտն էլ՝ Ստեփանակերտից: Ասկերանի ռազմավարական ուղղությամբ հարձակումը և Սառնաղբյուր, Վարազաբուն, Վարդաձոր, Նախիջևանիկ ու Դահրազ գյուղերի զավթումը անմիջական սպառնալիք էին ստեղծել մայրաքաղաքի՝ Ստեփանակերտի համար, բնականաբար, գրավելով ԻՊՈՒ հրամանատարության հիմնական ուշադրությունը: Ուստի, երիցս սխալվում են նրանք, ովքեր պնդում են, թե ռազմական օգնությունը դիտավորյալ չի հասցվել Շահումյանի պաշտպաններին: Շուտափույթ ռազմական օգնություն ակնկալելը, կարծում ենք, որ անիրական էր ոչ միայն տեխնիկական (հեռավորության, կարճ ժամկետում այդ առաքումը կազմակերպելու անհնարինության հաշվառմամբ), այլև, ընդհանրապես հատուցող ներքաղաքական ճգնաժամի պատճառներով: Քաղաքական երկատվածությունը պետք է որ խանգարեր արագ ու ճիշտ կողմնորոշվելուն: Դժկամություն եթե կար էլ, ապա չպետք է ամեն ինչ պայմանավորել դրանով:

Ինչ վերաբերում է ԼՂՀ ԻՊՈՒ շտաբի կողմից անհրաժեշտ օգնությունը չհասցնելու խնդրին, ապա հանուն ճշմարտության պիտի ասել, որ նման հնարավորություն, ընդհանրապես, չկար, քանզի առկա սուղ պաշարները բաշխվել էին շրջաններին կամ տրամադրվել ռազմաճակատի ամենավտանգավոր տեղամասերին: Ի դեպ, մի ուշագրավ հաղորդագրություն գալիս է հաստատելու այդ միտքը: Այսպես, 1992 թ. հունիսի 11-ի ժամը 00[25]-ին Շահումյանից Շ. Մեղրյանը դիմեց Ա. Տեր-Թադևոսյանին ու Ս. Սագսյանին. «Խնդրվում է հայտնել ռազմագործողության ժամանակ տեխնիկայով աջակցելու հնարավորության մասին»: Ժամը 00[30]-ին տրվում է պատասխանը. «Շահումյան: Շահենին: Ամբողջ տեխնիկան օժանդակելու նպատակով ուղարկված ու ներգրավված է շրջաններում, պաշտպանական տեղամասերում: Տեխնիկայով օգնելու հնարավորություն չկա: Արկադի»[193]:

Երբ խոսք է գնում ինչ-որ խոստացված, բայց չուղարկված տանկերի մասին, ապա պարզ չկամության կողքին հարկ է դնել նաև այդ տեխնիկան շահագործելու ընդունակ մասնագետների առկայության գործոնը: Այն փաստը, որ հունիսի 15-ից սկսած զինկոմիսարիատներ էին հրավիրվում ռազմական տեխնիկայի, հատկապես տանկերի մասնագետներ[194], վկայում է տեխնիկային տիրապետողների սուր պահանջարկի մասին:

[189] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

[190] Հունիսի 21-ին գոհվեց Լեռնիդ Ազգալդյանը՝ «Ազատագրական բանակ» ջոկատի հրամանատարը, իսկ հունիսի 3-ին՝ «Սասնա ծռեր» ջոկատի հրամանատար Սամվել Գեղոգյանը:

[191] ***Тер-Тадевосян А.,*** Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 574:

[192] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Վաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 93-100, 104-106:

[193] ԼՂՀ ՊՆԱ, ՕԱՍ, № 217, էջ 14:

[194] ***Ալուբաբյան Ռ.,*** նշվ. գիրքը, էջ 456:

Հարկ է նշել, որ տարանջատ ջոկատներով ու թույլ զինվածությամբ դժվար էր կասեցնել բանակային մեծածավալ օպերացիան, համազորային մարտի բոլոր կանոններով առաջնորդվող և ժամանակակից զենքերով ու զինտեխնիկայով հագեցվածքորքին: «Ֆիդայի տղերքը» մինչ այդ նմանօրինակ հոծզանգված կրակ և գրագետ կազմակերպված հարձակում չէին տեսել, ուստի շփոթվեցին և ի վիճակի չէին դիմադրել: Կանոնավոր բանակի, միասնական հրամանատարության բացակայությունը, նամանավանդ՝ Մարտակերտում, ունեցան իրենց աղետալի, ողբերգական հետևանքները:

Շ. Մեղրյանին մեղադրել դավաճանության մեջ՝ անհեթեթություն է: Ինչ խոսք, որպես շրջանի հրամանատար, նա էր պատասխանատու պաշտպանության, բնակչության անվտանգության ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու, իրադրության սրման վերաբերյալ վերադասին զեկուցելու համար: Մի քանի հեղինակների այն պնդումը, թե ազրեսիայի նախօրեին հետախուզությունը ոչ մի արտասովոր շարժում ու փոփոխություն հակառակորդի դասավորության առաջնագծում չի նկատել[195], առնվազն տարօրինակ է: Դա այն դեպքում, որ արդեն իսկ հունիսի 8-ին ԻՊՈՒ ղեկավարությունը հաղորդում էր Սիր-Բաշիրում, Փափրավենդում և այլուր թշնամական ուժերի կուտակման մասին: Ճակատագրական թերացումն այն էր, որ հետախուզությունը բավարարվեց սոսկ Գետաշենի ենթաշրջանում առկա հակառակորդի կենդանի ուժի ու միջոցների մասին տեղեկություններ ստանալով:

Ի դեպ, խոսելով շրջանի ԻՊՈՒ հրամանատարության և Շ. Մեղրյանի թերացումների մասին, հարկ է անպայման ընդգծել, որ շրջանի պաշտպանությունը սկսվում ու վերջանում էր սահմանագծով: Երկրորդ և երրորդ գիծ, որպես այդպիսին, չկար: Այնինչ, պաշտպանական բնագիծ պետք է ունենար յուրաքանչյուր բնակավայր՝ վերածվելով ամբացված շրջանի կամ ամրակետի, այսինքն՝ հանդիսանալով դիմադրության օջախ: Սակայն այլ հարց է, որ ինչ-ինչ պատճառներով, նման քայլեր պաշտպանության ամրանդման ուղղությամբ, չիրագործվեցին:

Պատահական չէ, որ Գետաշենի ազատագրման խնդիրն էր օրակարգում[196]: Սա վկայում է, որ Շահումյանի ԻՊՈՒ հրամանատարությունը թերագնահատում էր հակառակորդի հնարավորությունները, մեկ, և երկրորդ՝ դեռ պաշտպանության մասին հոգ չտարած, այն լրիվ չկազմակերպած, հարձակման մասին էր մտածում, ինչը, մարտավարության ու ոչ իրատեսական հաշվարկների առումով, չարդարացրեց իրեն: Շահումյանում դիմադրության կազմակերպման դժվարություններից կարելի է համարել զանգվածաբար դուրս եկող (տեղահանվող) բնակչության գործոնը ու նրա անվտանգության, հնարավորինս քիչ կորուստներով դուրս բերելու մտահոգությունը, ինչը, բնականաբար, կաթվածահար էր արել շրջանի պաշտպանությունը: Հակառակորդը նպատակային, հետևողականորեն և անխնա հրետակոծում կամ ռմբակոծում էր ոչ միայն խաղաղ բնակավայրերը, այլ նաև փախստականների կուտակման, ժամանակավոր կանգառի վայրերը, քարավանները: Դա ավելի էր ուժեղացնում խուճապը, կամազրկում և ուժասպառ անում վտանգի ենթարկված ընտանիքի պաշտպանին:

Թշնամու հաջողության գործոններից կարելի է համարել ուժեղ քարոզչությունը և լրատվական ճակատում նախաձեռնությունը վերցնելը: Ազրեսիա իրագործող կողմը բազմակողմանիորեն լրատվական քողարկում էր կատարել, հայ գրոհայինների սպառնալի կերպարն էր ստեղծել և այն տպավորությունը, թե իբր աղրբեջանցի զինյալները միայն ստիպված են հարձակվում գրոհայիններին կանխելու համար: «Աղրբեջանցիները Մոսկվայում հայտարարեցին, թե իրենց այս աննախադեպ արշավանքը պատասխանն է հայերի այն պատրաստություններին, որոնց նպատակն էր գրավել Ֆիզուլի, Աղդամ, Թարթառ ու Ղազախ քաղաքները,- հաղորդում էր ռուս հաղորդավարը»[197]:

Ասես ի հաստատումն այն ասեկոսեների, թե Լաչինի միջանցքը հակառակորդը փորձում էր օգտագործել ուժեղ ճնշումով արցախցիներին Հայաստան դուրս մղելու նպատակով, Աղրբեջանի լրատվամիջոցները Մոսկվայից լուրեր էին տարածում, թե վաղուց փակած կլինեին այն, բայց սպասում են միջանցքով հայերի հեռանալուն: Այսպես, Աղրբեջանի ուժային նախարարներից մեկը՝ Ի. Համիդովը հունիսի 18-ի իր հայտարարությունում պնդում էր, թե հիմա էլ կարող են վերանվաճել

[195] *Նանագույան Մ.*, նշվ. գիրքը, էջ 103, *Դանիելյան Գ.*, նշվ. գիրքը, էջ 83, *Բալայան Զ.*, նշվ. գիրքը, էջ 192:
[196] *Նանագույան Մ.*, նշվ գիրքը, էջ 103, *Գևորգյան Հ.*, Պետուն, էջ 38-39, *Դանիելյան Գ.*, նշվ. գիրքը, էջ 82: Զարմանալի զուգադիպությամբ թե պատահականորեն 2020 թ. աշնանային ազրեսիայի օրերին դարձյալ շրջանառվում էր Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի ազատագրման

գաղափարը, ընդհուպ մինչև իրականացված իրողություն, այնինչ դա հերթական ստահոդ ապատեղեկատվությունն էր այդ պատերազմում:
[197] *Ղույումչյան Ռ.*, նշվ. գիրքը, էջ 456:

Լաչինը, սակայն դա հետաձգում են, որ բաց ճանապարհով հայկական ռազմական ուժերը հեռանան «Ղարաբաղի լեռնային մասից»[198]:

ԻՊՈՒ նախկին հրամանատար, գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանը շարադրել է 1992 թ. հունիս-հուլիսին Շահումյանի և Մարտակերտի շրջաններում հայկական Ինքնապաշտպանության ուժերի պարտության հիմնական պատճառները. « 1. **Զինված ուժերի ստեղծման դանդաղումը:** Թեև 1990 թվականից բոլորի համար ակնհայտ էր ԶՈՒ կազմավորման անհրաժեշտությունը (առաջին հերթին՝ խոշոր ռազմական կազմավորումների ստեղծումը), դրանք այդպես էլ չէին կազմավորվել: Դա բացատրվում էր տնտեսական ծանր կացությամբ, որն այդ ժամանակ ստեղծվել էր հանրապետությունում, և երկրի ղեկավարությունը դրա համար անհրաժեշտ ֆինանսական հնարավորություններ չուներ: 1990 թ. դրությամբ ստեղծվել էր ընդամենը մեկ կանոնավոր զորամաս՝ Հատուկ գունդը: Դրա պատճառով, երբ 1992 թ. հունիսին սկսվեց պատերազմի նոր փուլը, և ռազմական գործողությունները ծավալվում էին արդեն ռազմարվեստի բոլոր կանոնների համաձայն, հայկական կամավորական ջոկատներն այլևս ի վիճակի չէին դիմակայել Ադրբեջանի ԶՈՒ կանոնավոր զորամասերի խոշորածավալ հարձակումները, որոնք պաշտպանությունը ճեղքելու համար փորձառու վարձկան անձնակազմերով զրահատեխնիկա էին կիրառում: Ոչ Հայաստանում, ոչ էլ Արցախում չկային բավարար թվով կանոնավոր զորամասեր, որոնց կարելի էր տեղափոխել ռազմաճակատի այն հատվածը, ուր ճեղքման վտանգ կար: 2. **Հայաստանի առաջատար կուսակցությունների միջև քաղաքական կոշտ դիմակայությունը, որն ավելի էր ուժեղացել Շուշիի ազատագրումից հետո:** Քաղաքական ուժերի հակամարտությունն անդրադառնում էր ջոկատների փոխհարաբերությունների և բարոյահոգեբանական մթնոլորտի վրա: Շուշիի ազատագրումից և Լաչինի միջանցքի բացումից հետո ստեղծված էյֆորիկ վիճակը, որի արդյունքում կտրուկ ընկավ զորքերի կարգապահությունը: Ժողովրդին և նույնիսկ հրամանատարակազմի մի մասին թվում էր, թե պատերազմն ավարտված է, և հայաստանյան շատ կամավորական ջոկատներ վերադարձան տուն: Հաճախակի դարձան զենքերի գողության դեպքերը: 3. **Հետախուզության թերացումները:** Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը ժամանակին չէր ստացել հետախուզական տվյալներն այն մասին, որ հակառակորդը լայնածավալ հարձակում է նախապատրաստում՝ 4-րդ բանակի Կիրովաբադում տեղակայված 23-րդ դիվիզիայի նախկին զինծառայողներով համալրված տանկային փորձառու անձնակազմերի ընդգրկմամբ: Սույն փաստը կարելի է գնահատել որպես թե՛ ռազմական և թե՛ քաղաքական հետախուզության խոշոր թերացում: 4. **Մարտական ոգու անկումը և խամաքը:** Շահումյանի և մասամբ՝ Մարտակերտի քաղաքացիական բնակչության տեղահանությունը և դեպի Ստեփանակերտ շարժվելը հանգեցրին նրան, որ տեղացի մարտիկները և նույնիսկ այդ շրջանի ամբողջ ջոկատներ հետևեցին իրենց ընտանիքներին և դադարեցին պաշտպանել Մարտակերտի շրջանը: 5. **Օգնության բացակայությունը:** Մարտակերտի պաշտպանության հրամանատարությունն անհրաժեշտ օգնությունը չստացավ: 1992 թ. փետրվարին Ստեփանակերտում ստեղծված և Շուշիի ազատագրմանը մասնակցած Ինքնապաշտպանության վաշտերից Մարտակերտի շրջանի պաշտպանությանը, մինչև նրա անկումը (1992 թ. հուլիսի 4), մասնակցում էր միայն Աշոտ Ղուլյանի առաջին վաշտը»[199]:

Ցավալի է, որ նմանօրինակ պատճառներ ունենք նաև 2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9-ի ագրեսիայից կրած պարտության համար: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ և Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունն անհրաժեշտ դասեր չի քաղում անցյալից, ինչն էլ նոր աղետների պատճառ է դառնում: Հուսանք, որ գոնե սույն ուսումնասիրության արդյունքներն օգտակար կլինեն մեր երկրի պաշտպանական ու անվտանգային ռազմավարության մշակման և դրա արդյունավետ իրականացման համար:

Արցախի Հանրապետության զինված ուժերի միավորումների և զորամասակների կողմից օպերատիվ մասշտաբի ռազմական գործողությունների (օպերացիաների, ճակատամարտերի, մարտական գործողությունների, հարվածների) նախապատրաստման ու վարման տեսական և պրակտիկ առանձնահատկությունները դրսևորվեցին պատմական Քարվաճառի ազատագրման ռազմական գործողություններում: Դրանք, փաստորեն, դարձան Մարտակերտի բռնազավթված արևմտյան մասի ազատագրման տրամաբանական շարունակությունը: Քարվաճառի ռազմական գործողությունները հավասարապես թե՛

[198] Նույն տեղում, էջ 461, 476:

[199] ***Տեր-Թադևոսյան Ա.,*** Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:

անվտանգության գոտու ստեղծման և թե՛ ազատագրական բնույթ ունեին: Ակներևաբար, Քարվաճառի շրջանը հին հայկական տարածք է և պատմական հիշողության թելադրանքով անհրաժեշտ էր վերջնական ավերումից փրկել հրաշքով պահպանված պատմական հուշարձանները, ինչպես նաև թիզ առ թիզ վերադարձնել կորուսված հայրենի հողը: Այս ամենի հաշվառմամբ, Քարվաճառի ռազմական գործողություններ կարելի է համարել կապող, միջանկյալ օղակ ազատագրական մարտերի և անվտանգության գոտի ստեղծելու նպատակով իրականացված օպերատիվ մասշտաբի օպերացիաների շղթայի միջև:

Քարվաճառի ռազմագործողությունն թելադրված էր Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ԻՊՈՒ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու, խաղաղ բնակչության վերադարձի անվտանգության, Լաչինի միջանցքի վրա մշտական սպառնալիքի նվազեցման[200] և Լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախման անհրաժեշտությունից: Քելբաջարի շրջանի ազատագրումը կարևոր էր նաև Հայաստանի հետ ցամաքային կապի՝ երկրորդ կյանքի ճանապարհի բացման, ինչպես նաև Օմարի բարձրադիր լեռնանցքում, ռազմավարական առումով նպաստավոր ու տիրապետող բնագծերում, ԼՂՀ-ի հյուսիսարևմտյան սահմաններին հակառակորդի մշտական սպառնալիքին ավելի դյուրությամբ ու հուսալիորեն դիմագրավելու նկատառումներով:

Քարվաճառի ազատագրման օպերացիայի առաջին փուլը. Մարտակերտի շրջանի արևմտյան մասի ազատագրումը

Մարտակերտի շրջանի բռնազավթված ու զորակայանների վերածված գյուղերում թշնամին կենդանի ուժ և ռազմական տեխնիկա էր կուտակում, ըստ երևույթին, նախապատրաստվելով նոր, լայնածավալ հարձակման: Հաշվի առնելով շրջանի հայ բնակչությանը սպառնացող իրական վտանգը, ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարությունը մշակեց անհետաձգելի միջոցառումներ, վերադարձող խաղաղ բնակչության անվրտանգությունն ապահովելու նպատակով: Բացի այդ, Լաչինի շրջակա

[200] Իսպառ վերացման մասին խոսք կարող էր գնալ միայն Կոլբաթյուի վնասազերծումից (1993 թ. օգոստոս) հետո:

տարածքը և Արցախը Հայաստանի Հանրապետությունից կտրելու՝ Ադրբեջանի զինված ուժերի համառ փորձերը, ինչպես նաև անմիջական սպառնալիքը Մարտակերտ շրջկենտրոնի ուղղությամբ ազատագրական մարտեր մղող ԼՂՀ ԻՊՈՒ հիմնական զորամասերի թիկունքին, մարտ ամսվա վերջին օրակարգի հարց էին դարձրել հակառակորդի Լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախումը:

Մարտական գործողությունները սկսվեցին 1993 թ. մարտի 27-ին, որոնց նախորդեցին մանրազնին հետախուզությունն ու հրամանատարների՝ իրենց շտաբների հետ կատարած նախապատրաստական համակողմանի աշխատանքները: Փորձելով շեղել ԻՊՈՒ կազմավորումների ուշադրությունն արևմտյան ռազմաճակատից, հակառակորդը, հրետանու աջակցությամբ նոր հարձակում ձեռնարկեց Պուշկենյալում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ: Հարձակումը հետ մղվեց, խփվեց թշնամու հետևակի մարտական մեքենաներից մեկը: Մարտի 29-ին Ինքնապաշտպանության ուժերն ազատագրեցին Մարտակերտի շրջանի Նարեշտար գյուղը և, շարունակելով առաջխաղացումը, ճնշեցին Ենիքենդ, Աղջաքենդ գյուղերի կրակակետերը: Մարտի 29-30-ին ԻՊՈՒ զորամասերն առաջ անցնելով Աղդաբանից 2-3 կմ, իսկ Չարեքտարից՝ 5 կմ, ազատագրեցին Չարեքտարից հյուսիս-արևվելք ընկած Վանք գյուղը և հայկական ճարտարապետության հին կոթող Դադի (Խոթա) վանքը[201]: Օրվա ընթացքում զարգացնելով հաջողությունը, Արցախի ինքնապաշտպանության ուժերը տիրեցին 2066,2 նիշով բարձունքին և, ճնշելով Բաղրլը, Քեչիլիկայա, Չորման գյուղերի կրակակետերը, հասան քարե կամրջին, իսկ Վանքի ուղղությունում՝ 1587,0 և 1365,0 նիշերով բարձունքներին: Նշված բնակավայրերից մշտապես հրետակոծվում ու ավազակային հարձակումների էին ենթարկվում Մարտակերտի շրջանի բնակավայրերը: Աղդաբանի, Չարեքտարի, Նարեշտարի, Թազաքենդի, Չայղովուշանի և Մարջումակի կրակակետերի ոչնչացման մարտական գործողությունների ընթացքում կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ պատճառվեցին հակառակորդին: Լեռնային ծանր պայմանները, զրահատեխնիկայի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, ինչպես նաև նշված բնակավայրերում կենդանի ուժի ու սպառազինության մեծ կուտակումները դժվարացնում էին ԻՊՈՒ ստորաբաժանումների առաջխաղացու-

[201] *Հայրենյան Մ.*, 1993 թ. մարտի 30. Ազատագրվեց Դադի վանքը, «Մարտիկ», 1998 թ., № 11:

մը: Մարտավարական բարենպաստ դիրքերում գտնվող հակառակորդն զգալի կորուստներ էր կրում: Միայն Չարեքտար գյուղի համար մղված գիշերային մարտերում Ինքնապաշտպանության ուժերն առգրավեցին 2 թնդանոթ, 2 ՀԻՆ-17 տիպի ռոնականետ և 1 ԴՇԿ:

Ազատագրվող բնակավայրերից մինչ այդ մշտապես հրետակոծվում ու ավազակային հարձակումների էին ենթարկվում Մարտակերտի շրջանի բնակավայրերը: Գետավանցի ազատամարտիկներն Աղդաբանում և նշված մյուս գյուղերում տեսել և ճանաչել են իրենց ու հարևան գյուղերից դեռևս 1992-ի ամռանը կողոպտված իրերն ու կահկարասին, հայատառ գործվածքով ազգային գորգեր, ավարառված հեռուստացույցներ ու սառնարաններ[202]:

Քարվաճառի ազատագրման օպերացիայի երկրորդ փուլը

Շարունակելով թշնամու զավթած Մարտակերտի շրջանի ազատագրման՝ փետրվար-մարտ ամիսների մարտական հաջող գործողությունները, ԻՊ ուժերը ԼՂՀ հյուսիսարևմտյան մասում ապրիլի սկզբին անմիջականորեն հասան նախկին ԼՂԻՄ վարչական սահմանին: Նպատակ ունենալով ոչնչացնել հակառակորդի կրակակետերը և ձգտելով ընդլայնել ու վտանգազերծել կենսականորեն կարևոր Լաչինի միջանցքը, ԻՊ ուժերը վճռական հարձակման անցան մարտական գործողությունների Քելբաջարի՝ պատմական Քարվաճառի (Ծարի) ուղղությունում: Ինքնապաշտպանության ուժերն առաջ շարժվեցին երեք տարբեր ուղղություններով՝ նպատակ ունենալով վերջնականապես ջախջախել հակառակորդի Լաչին-քելբաջարյան խմբավորումը և փակել Օմարի բարձրադիր լեռնանցքը[203]:

Զինամթերքի պաշարի, վառելիքի ու մյուս նյութատեխնիկական միջոցների պակասով հանդերձ, հայ մարտիկների արիության և տոկունության, հայրենի հողն ազատագրելու վճռականության, հրամանատարների ու շտաբների կազմակերպական աշխատանքների շնորհիվ ԻՊՈՒ զորամասերն ու ստորաբաժանումները հաջողությամբ կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Գրագետ ու հմտորեն գործեցին հրետանավորներն ու կապավորները, ինժեներական ծառայության

[202] «Մարտական թերթիկ», 1993 թ., №3:

[203] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 021, л. 54:

զինվորները: Բոլոր ստորաբաժանումների փոխհամագործակցությունն ու հմուտ ղեկավարումը կանխորոշեցին ձեռքբերված հաջողությունները: ԻՊՈՒ զորամասերի հաղթարշավը շարունակվեց նաև հաջորդ օրերին և պսակվեց հակառակորդի՝ Լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախմամբ[204]:

Հակառակորդի տարերային դիմադրության օջախները վերացնելով՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները կրնկակոխ հետապնդում էին ադրբեջանցի զավթիչներին: Քաշաթաղի ու Մարտակերտի շրջաններից հասցված միաժամանակյա հարվածով ԼՂՀ ԻՊՈՒ զորամասերը ապրիլի 2-ին տիրեցին Քելբաջար-Գանձակ խճուղու թունելին, ապա՝ Քելբաջար շրջկենտրոնին: Շարունակելով թշնամու կրակակետերի վնասազերծումը, ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Քարվաճառի շրջանի ռազմավարական դիրք ունեցող Ջերմաջուր բնակավայրը: Այնուհետև համագործակցելով Արևելյան զորախմբի ստորաբաժանումների հետ, ԻՊ ուժերը զարգացրին հարձակումը և դուրս եկան ռազմավարական Օմար լեռնանցքը:

Այսպիսով, Մարտակերտի, Մարտունու և Շուշիի ՊՇ-ների համատեղ անցկացրած կայծակնային ռազմագործողությունն ավարտվեց Ադրբեջանի զինված ուժերի Լաչին-քելբաջարյան խմբավորման ջախջախումով, ինչը ձախողեց հակառակորդի զավթողական մտադրությունները, ապահովեց անվտանգ երթևեկությունը «Կյանքի ճանապարհով»: Մարտերով ազատագրվեցին երկու տասնյակից ավելի գյուղեր, ռազմավար վերցվեցին նշանակալի քանակությամբ զենք ու զինամթերք, մարտական տեխնիկա և մեքենաներ[205]: Օմարի լեռնանցքի վրա վերահսկողության սահմանումը նկատելիորեն ամրապնդեց ԻՊՈՒ դիրքը, ցնցող հարված հասցրեց թշնամուն՝ ի չիք դարձնելով նրա զավթողական նկրտումներն այդ շրջանում:

Մարտակերտ քաղաքի ազատագրման օպերացիան

1993 թ. ապրիլի սկզբին ԻՊ ուժերն, ավարտելով հակառակորդի Լաչին-քելբաջարյան զորախմբի ջախջախման ռազմագործողությունը, ուժերի ու միջոցների վերախմբավորում կատարելով՝ ձեռնամուխ ե-

[204] Նույն տեղում, թ. 48:

[205] Նույն տեղում, թ. 54-56:

դան առաջին կիսամյակի մարտական գործողությունների եզրափակիչ փուլի՝ Մարտակերտի գործողության պլանավորմանն ու նախապատրաստմանը: Հունիսի 12-ին 2-րդ, 3-րդ, 5-րդ ՊՇ և Կենտրոնական ուղղության զորամասերը, 4-րդ ՊՇ մի քանի ստորաբաժանումներ սկսեցին Մարտակերտ քաղաքի և համանուն շրջանի բռնազավթված մասի ազատագրման խոշորամասշտաբ գործողությունը:

Ընկճելով հակառակորդի 3-րդ մոտոհրաձգային բրիգադի, Ներքին զորքերի բրիգադի, տանկային բրիգադի զորամասերի համառ դիմադրությունը, հաղթահարելով համատարած ականապաշտպանները, հրետանու, տանկերի հարուցած արգելքները և ի չիք դարձնելով նրա սպառազինության առումով ու օդում ունեցած բացարձակ տիրապետությունը, հայկական ստորաբաժանումներն Աղդամի ուղղությունում գրավեցին օպերատիվ ու մարտավարական առումներով շահավետ բարձունքներ և բնագծեր[206]:

Հարվածի գլխավոր ուղղությունից հակառակորդի ուշադրությունը շեղելու և մարտերով հետախուզություն իրականացնելու նպատակով 1993 թ. հունիսի 12-ին մարտական գործողություններ սկսվեցին Ասկերանի և Մարտունու շրջանների ուղղություններում: Հայ մարտիկները վերահսկողության տակ առան Մարզիլու, Կիյամադդինլի, Յուսիֆջանլու գյուղերը: Մարտերը շարունակվեցին Նովրուզլու գյուղի մատույցներում: Մարտերի ընթացքում ընկավ Մարտունու ՊՇ հրամանատար Մ. Մելքոնյանը:

Ասկերանի ՊՇ մարտիկները երեկոյան կողմ դիրքեր զբաղեցրին Ջինլի գյուղի մատույցներում:

Հունիսի 13-ին մարտական գործողությունները նշված ուղղությունում վերսկսվեցին: Մարտեր ծավալվեցին նաև Մարտակերտի շրջանում: Հայ ռազմիկներին հաջողվեց ազատագրել Լյուլասազ գյուղը:

Խաչենագետի հովտի Ջինլի և Ալիահալու գյուղերի կրակակետերի վնասազերծման նպատակով հայ մարտիկները զարգացրին նախորդ օրվա հաջողությունները, և կոտրելով թշնամու դիմադրությունը՝ ստիպեցին նրան նահանջել: Ի դեպ խուճապի ու իրարանցման մեջ էին նաև աղդամցիները: Աղբեջանական մի թերթի ծանուցմամբ. «հունիսի 14-ն ամենադժվարին օրն էր Աղդամի համար: Խուճապի մատնված բնակչությունը արագ թափով լքում էր քաղաքը»: Ինքնագովազդի տպավորություն է թողնում պաշտոնաթերթի այն պնդումը, թե «ԱԺՃ-ի ներկայացուցիչների օպերատիվ ջանքերով խուճապը կանխվեց...»[207]:

Մարտակերտի ու Ասկերանի ՊՇ ուղղություններում ծավալված դժվարին մարտերի արդյունքում ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Մարտակերտի շրջանի Մաղավուզի քարհանքի բարձունքը և զարգացրին հաջողությունը Մատաղիսի ուղղությամբ: Մարտեր ծավալվեցին նաև ռազմավարական նշանակության Եղդիխրման բարձունքի համար: ԿՊՇ ստորաբաժանումներն առաջ շարժվեցին դեպի Ղալայչիլար գյուղը՝ վերահսկողության տակ առնելով ինչպես այդ, այնպես էլ Ջինլի գյուղերը:

Այսպիսով 2-րդ, 3-րդ ՊՇ զորամասերը, 4-րդ ՊՇ ուժերի մի մասը և 6-րդ ՊՇ ստորաբաժանումները, գրավելով օպերատիվ ու մարտավարական առումներով շահավետ բարձունքներ ու բնագծեր, դուրս եկան Աղդամ-Մարտակերտ մայրուղու բնագիծը: Հակառակորդը, զգալի կորուստներ կրելով Մարզիլու, Խրամորթ, Փափրավենդ գյուղերի շրջանում, ստիպված էր ռազմաճակատի Կուբաթլուի, Ջաբրայիլի և Մարտակերտի ուղղություններից այստեղ տեղափոխել կենդանի ուժ և տեխնիկա՝ դրանով իսկ բարենպաստ պայմաններ ստեղծելով Մարտակերտի լեռնաշղթայի վրա հակառակորդի ջախջախման, Մարտակերտ քաղաքն ազատագրելու և հիմնական ուժերը Խրամորթ-Բոյահմեդլի-Փափրավենդ-Մարտակերտ-Մատաղիս բնագիծ դուրս բերելու գլխավոր նպատակն իրագործելու համար[208]:

Տևական ու դաժան մարտերից հետո ազատագրվեցին Աղդարա (Հեռուստաաշտարակ) և Թազախաչին-յալ (Պուշկեն-յալ) բարձունքները: Փաստորեն նույն օրն էլ՝ հունիսի 26-ին 4-րդ ՊՇ զորամասերը մտան Մարտակերտ քաղաքը, որով ավարտվեց մարտակերտյան ռազմագործողությունը:

3-րդ, 5-րդ, 6-րդ ՊՇ զորամասերն անցան գերիշխող բարձունքների, մասնավորապես՝ Եդդիխրման, Բուզդաղ լեռների, Բոյահմեդլի, Փափրավենդ գյուղերի, Թազախաչին-յալ, Աղդարա լեռնաշղթայի վրայով ձգվող բնագծի և հիմնական ճանապարհների պաշտպանությունը[209]:

[206] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 017, л. 40:

[207] «Ана торпаг» (АХЧ Агдам район шо'басинин газети), 1993 ил, № 22:

[208] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 017, л. 40:

[209] *Հայրապետյան Մ.,* Մարտակերտի ազատագրումը. ընթացքն ու արդյունքները, «Մարտիկ», 1998 թ., № 24:

Հունիսի 27-ին հայ մարտիկներն ամբապնդվեցին Ներքին Հոռաթաղում, Աղաբեկալինջում, Սատաղիսի մոտակա բարձունքների վրա:

Մարտակերտ քաղաքի ազատագրումն ունեցավ ռազմաքաղաքական կարևոր նշանակություն: Նախ, շշմեցուցիչ հարվածներ ստացավ հակառակորդի մարտակերտյան խմբավորումը, ԻՊՈՒ կազմավորումները տիրելով նպաստավոր բնագծերի՝ ավելի հուսալի պաշտպանություն բռնեցին: Ակնհայտորեն, առանց Մարտակերտի ազատագրման, անհնար էր ճնշել Աղդամի վտանգավոր կրակակետերը: Բարոյահոգեբանական առումով Մարտակերտի ազատագրումը բարենպաստ ներգործություն ունեցավ հարևանուն շրջան վերադարձող խաղաղ բնակչության, Աղդրեջանի ագրեսիայի հետևանքով ավերված բնակավայրերի վերակառուցման ու փախստականների բնակեցման, շրջանի երբեմնի տնտեսական ներուժը վերականգնելու համար[210]:

Աղդամի ազատագրման օպերացիան

Արցախում ռազմարվեստի զարգացման գործում նշանակալի է Աղդամի օպերացիայի նշանակությունը, որի ռազմաքաղաքական[211] ու պատմական[212] տեսանկյունները ներկայացնելու առիթներ ունեցել ենք:

1991 թ. վերջերին և 1992 թ. ամբողջ ընթացքում ադրբեջանական զինված կազմավորումներն Աղդամից բազմիցս փորձեցին ճեղքել ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի արևելյան բնագծերը, բայց ամեն անգամ հետ շպրտվեցին, անգամ ժամանակավոր հաջողություններից հետո: Հնարավոր չէ առանց սոսկումի հիշել Աղդամում տեղակայված կրակակետերից ԼՂՀ խաղաղ բնակավայրերի և Ստեփանակերտի բարբարոսական հրթիռակոծությունները, արկ ու հրթիռի պայթյուններից երեխաների ու կանանց քրքրված մարմինները: Թվում էր, թե Աղդամի թշնամական ռազմահենադաշտի պատճառով ստեղծված դժոխքին վերջ չկա, սակայն Արցախի անձնվեր պաշտպանները գնացին շատերին աննախադեպ թվացող համարձակ քայլի՝ վնասազերծեցին Աղդամի կրակակետերը և ռազմական հենակետը:

Նոր ծավալներ ու չափեր ընդունող, ինչպես նաև արդիական զինատեսակների կիրառմամբ ընթացող պատերազմի տրամաբանությունը գալիս էր փաստելու, որ Աղդրեջանի տենդագին նախապատրաստությունները, սպառազինության ու կենդանի ուժի բազմապատկումը նպատակաուղղված են ԼՂՀ-ի դեմ լայնածավալ մարտական գործողությունների վերսկսմանը, հետևաբար՝ անհրաժեշտ էր հակառակորդին նախօրոք զրկել այնպիսի կարևոր ռազմավարական հենադաշտից, ինչպիսին Աղդամն էր, ինչը հնարավորություն կընձեռեր գոնե Ասկերան-Ստեփանակերտ ուղղությունում սահմանափակելու աղդրեջանցիների դիրքային առավելությունը, ի դերև հանելու ամենակարճ ճանապարհով հանրապետության մայրաքաղաք հասնելու հակառակորդի հույսերը: ԻՊՈՒ ռազմավարական և օպերատիվ-մարտավարական խնդիրները թելադրում էին իրականացնել Աղդամի հենադաշտի վնասազերծումը, ինչը կարող էր վճռական բեկում մտցնել Աղդրեջանի սանձազերծած պատերազմում:

Բնականաբար, լավ հասկանալով այդ ռազմագործողության կարևորությունը, Ինքնապաշտպանության կոմիտեն (ԻՊԿ) լուրջ նախապատրաստական աշխատանքներ իրականացրեց ինչպես կազմակերպահաստիքային բարելավումների, այնպես էլ զորքերի խմբավորման ու լրահամալրման, սպառազինման ու նպաստավոր բնագծերի տիրելու առումներով:

1993 թ. հուլիսի 4-ին սկսված ռազմական օպերացիան պսակվեց հաջողությամբ և հուլիսի 23-ին Աղդամն անցավ ԼՂՀ ԻՊՈՒ-ի վերահսկողության տակ՝ շնորհիվ հարավից Մարտունու ՊՇ-ի, հարավ-արևմուտքից Ասկերանի ՊՇ-ի և հյուսիս-արևմուտքից Կենտրոնական պաշտպանական շրջանի, ինչպես նաև այլ ստորաբաժանումների համաձայնեցված գործողությունների: Արդյունքում վերացավ Ստեփա-

---

[210] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Գանձառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 141:

[211] ***Հարությունյան Մ.,*** Ասկերան. հերոսության հասցեներ, Ա., 2005, էջ 23-26, ***նույնի՝*** Աղդամի ազատագրման պատմական նշանակությունը, Հայաստան-Արցախ. պատմության և արդիականության գուգահեռներում (հոդվածների ժողովածու), գիրք Ա, Ս., 2009, էջ 99-101, նույնի՝ Աղդամում խորտակվեց աղդրեջանցիների հոգեբանական ամրոցը, «Մարտիկ», 22-26 հուլիս, 2002 թ., № 30, էջ 1, ***նույնի՝*** Աղդամի ռազմական հենակետերի ոչնչացումը, «Մարտիկ», 22-26 հուլիս, 2002 թ., № 30, էջ 3, ***նույնի՝*** Աղդամի ռազմագործողությունը, «Բերդ», №12(1897), 29 հուլիսի, էջ 7-8, № 13 (1898), 15 օգոստոսի, 2002 թ., էջ 7-8, ***նույնի՝*** Աղդամի պարսպագրում այլընտրանք չկար, «Մարտիկ», 17 – 24 հուլիս, 2004 թ., № 31(585), էջ 2, ***նույնի՝*** Ինչու՞ վնասազերծվեցին Աղդամի ռազմական հենակետերը (Հուլիսի 23-ը Աղդամի ազատագրման օրն է), «Մարտիկ», 16 – 23 հուլիս 2005 թ., № 28(635), էջ 7 և «Բերդ», 31.07.2006թ., № 13(1989), էջ 4-5, ***նույնի՝*** Աղդամի ազատագրման պատմական նշանակությունը, «Մարտիկ», 19-28 հուլիս 2008 թ., № 29(791), էջ 3, ***նույնի՝*** Աղդամի ազատագրման ռազմաքաղաքական տեսանկյունները և պատմական նշանակությունը, «Մարտիկ», 14-21 հուլիս, 2012 թ., № 28(994), էջ 4, ***նույնի՝*** Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Մարտիկ», 28 հուլիս-4 օգոստոս, 2012 թ., № 30(996), էջ 3-4, 4-11 օգոստոս, 2012 թ., № 31(997), էջ 3-4:

[212] ***Հարությունյան Մ.,*** Վեքսոին Արցախում ռազմական շինարարության համար Աղդամի ազատագրման նշանակության հարցի շուրջ, «Գանձառ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 7(83-84), 2013, Շ., «Գանձառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 193-196:

նակերտի գլխին դամոկլյան սրի պես կախված մահացու վտանգը, մայրաքաղաքի ու շրջակա գյուղերի բնակիչներն ի վերջո ազատ շունչ քաշեցին: Հակառակորդին հասցվեց ռազմական ու բարոյահոգեբանական խորտակիչ հարված: Աղդամը հաղորդակցության ուղիների կարեվոր հանգույց էր, որից հակառակորդին զրկելը կաթվածահար արեց ոչ միայն ԼՂՀ արևելյան, այլև հարավային սահմանների երկայնքով կենտրոնացված խմբավորումների նախահարձակ գործողությունները և նրանց թիկունքային ապահովումը: Պատահական չէր, որ Ադրբեջանի ղեկավարությունը վերջապես տեղի տվեց և դիմեց ԼՂՀ ղեկավարությանը՝ կրակի դադարեցման խնդրանքով, ինչը հնարավորություն կտար 22մեցուցիչ հարվածից ու խայտառակ պարտությունից ուշքի գալ և լուծել Աղդամի հենաղաշտի կորստին անխուսափելիորեն հետևած բազմաթիվ հիմնախնդիրներ: Արցախի ինքնապաշտպանության ուժերը տիրեցին նպաստավոր բնագծերի ու ռազմավարական առումով շահավետ դիրքերի, ստեղծելով ԼՂՀ-ի շուրջ, մանավանդ՝ նրա կենտրոնի համար, կենսականորեն անհրաժեշտ անվտանգության գոտի: Միով բանիվ, Աղդամի ազատագրումը, որով խորտակվեց Ադրբեջանի բարոյահոգեբանական ամրոցը, պատմական անհրաժեշտություն էր և թելադրված էր ԻՊՈՒ-ի ռազմավարական ու օպերատիվ-մարտավարական խնդիրներից: Արցախի հայ ազգաբնակչությունը Շուշիից հետո, թերևս, մեկ էլ Աղդամի պարագայում այլընտրանք չուներ, բացի ագրեսիայի այդ մշտական աղբյուրը վերացնելուց:

Ռազմական, դիվանագիտական ու արտաքաղաքական համակողմանի նախապատրաստություններից հետո Ադրբեջանի զինված ուժերը 1993 թ. դեկտեմբերի 15-ին լայնածավալ հարձակման անցան հինգ՝ Ֆիզուլիի, Մարտունու, Աղդամի, Մարտակերտի, Քելբաջարի ուղղություններով: Բոլոր օպերատիվ ուղղություններում հակառակորդն արժանի հակահարված ստացավ և հիմնականում հետ շպրտվեց ելման դիրքեր:

ԼՂՀ ռազմաճակատի ամբողջ երկայնքով դեկտեմբերի 15-ին սկսված լայնածավալ հարձակումներով Ադրբեջանի նորընտիր նախագահ Հ. Ալիևը փորձում էր, թեկուզ վիթխարի կորուստների գնով, շահավետ բեկում մտցնել պատերազմում և դրանով ամրապնդել իր երերուն իշխանությունը:

Դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ հերթական անգամ խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ հաստատված տասնօրյա

երկկողմանի զինադադարը, ադրբեջանական կողմը դեկտեմբերի 21-ի առավոտյան սկսված և մեկ օր տևած հրետանային նախապատրաստությունից հետո, դեկտեմբերի 22-ին, տանկերի ու ՀՄՄ-ների աջակցությամբ, 30 կմ ճակատային գծով հարձակման անցավ Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ: Պահեստազորային ուժերի օգնությամբ հաջողվեց կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը: Իրանի տարածքից հակառակորդի կրակի ճշտողներն առավելագույն դիպուկությամբ ուղղորդում էին հրետանու կրակը: Միաժամանակ Ֆիզուլի-Բեյլոկան գծում ընթացող մարտերից ՊԲ հրամանատարության ուշադրությունը շեղելու նպատակով, հակառակորդը հարձակվեց նաև Մարտունու ՊՇ ուղղությամբ: Նման պայմաններում, մարտավարական նկատառումներով հարավարևելյան ուղղությունում թողնվեց մի պահակակետ: ՊԲ հրետանային մարտկոցների դիպուկ համազարկերից հետո հակառակորդի շարքերում խուճապ առաջացավ: Հայ մարտիկներին վիճակված էր մարտնչել հակառակորդի՝ մի քանի անգամ գերակշռող հետևակի դեմ: Արյունահեղ ու համառ մարտեր էին ընթանում յուրաքանչյուր բարձունքի համար: Տեղանքի առանձնահատկություններից ելնելով՝ ՊԲ զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարները շրջանցում էին մարտավարական արվեստի ընդունված «չափանիշները» և անակնկալի բերելով հակառակորդին՝ փորձում կոտրել նրա հարձակման թափը: Իսկ թշնամին շարունակում էր կենդանի ուժի ու զրահատեխնիկայի կուտակումները ռազմաճակատի համեմատաբար բաց ու թույլ տեղամասերում կամ ճեղքվածքներում, հատկապես Արաքսի երկայնքով, ավտոմայրուղու վրա: Օրհասական պահին Ալխանլու բնակավայրի ուղղությամբ օգնության հասան Մարտունու ՊՇ տանկիստները, որոնց աջակցությամբ խփվեց հակառակորդի 2 տանկ, ինչին հետևեց թշնամու անկանոն նահանջը[213]:

Դեկտեմբերի 29-30-ին ռազմագործողություններ ընթացան Մարտունու և Մարտակերտի ՊՇ-ների ուղղությամբ: Հատկապես կատաղի մարտեր ընթացան Մարտակերտ շրջկենտրոնի, Պուշկեն-յալի ուղղությամբ և Փափրավենդի մատույցներում, որտեղ ադրբեջանցիները մի քանի անգամ փորձեցին առաջ անցնել, բայց բոլոր դեպքերում հետ շպրտվեցին[214]:

---

[213] «Մարտիկ», հմ. 41, 1993 թ.:
[214] ԼՂՀ ՊՆՄ, ՕՀՍՏ, հմ. 141, եր. 60 բ, 62 բ:

Ընդհանրացնելով նշենք, որ 1993 թ. դեկտեմբերին ԼՂՀ ՊԲ-ն պաշտպանական ծանր մարտերում ամրապնդեց տարվա ռազմական փայլուն հաղթանակները, որոնց շնորհիվ հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի ձևավորման ուղղությամբ առաջընթաց կար, ասել է թե՝ Արցախի հայ ազգաբնակչությունն ավելի պաշտպանված է եղել հեռահար հրետակոծություններից: Այդ կողմից, բավական հարստացել է ՊԲ-ի փորձն օպերատիվ արվեստի տեսանկյունից:

Օպերատիվ արվեստի զարգացման առանձնահատկությունները 1994 թ. ձմեռային ռազմարշավում

Հարվածի գլխավոր ուղղություններում կենդանի ուժի, սպառազինության ու տեխնիկայի գերակշռություն ստեղծելու միջոցով ճակատային գիծը ճեղքելու ռազմավարությունը, որը դեկտեմբերին մասնակի հաջողություն էր բերել հակառակորդին, հեռանկարային թվաց ադրբեջանական հրամանատարությանը, ուստի հունվարին նոր թափով վերսկսվեցին հարձակումները ԼՂՀ իրական սահմանների ամբողջ երկայնքով: Դժվար չէր կռահել հակառակորդի հաշվարկները. մի քանի ուղղություններով հասցվող միաժամանակյա հարվածներով ճեղքել ռազմաճակատի այս կամ այն հատվածը և, մխրճվելով ՊԲ դասավորության խորքերը, վճռական բեկում մտցնել պատերազմում և հետամուտ լինել ԼՂՀ տարածքը նվաճելու Ադրբեջանի ղեկավարության ագրեսիվ պլանների կենսագործմանը: Հակառակորդի հիմնական հարվածային ուժերը ճնշում էին գործադրում հարավարևելյան, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան ուղղություններով, թևերից ու թիկունքից սպառնալով շրջապատել ՊԲ մարտնչող զորամասերը[215]: Միաժամանակ, ուշադրություն շեղող հարձակումներով լարվածություն ստեղծելով նաև ռազմաճակատի մյուս հատվածներում՝ հակառակորդը նպատակ ուներ զրկել ՊԲ հրամանատարությանը պահեստային ու հիմնական ուժերի տեղաշարժեր կամ վերախմբավորումներ կատարելու հնարավորությունից: Սակայն, ՊԲ զինանձնակազմի անձնվիրության, համընդհանուր խիզախության ու տոկունության, ինչպես նաև տարբեր

[215] *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 47:

ստիճանների հրամանատարների հնարամտության շնորհիվ հաջողվեց խափանել հակառակորդի նկրտումների իրականացումը:

Հարավարևելյան ռազմաճակատում զարգացնելով հարձակողական գործողությունները Հորադիզ ռազմավարական հանգույցի ուղղությամբ՝ հակառակորդը նպատակ ուներ դուրս գալ Ֆիզուլի քաղաքի վրա: Համախմբելով ուժերը և համալրում ստանալով՝ հայկական ստորաբաժանումներին հաջողվեց մի առ ժամանակ կասեցնել հակառակորդի առաջխաղացումը[216]: Հունվարի 5-ի առավոտյան հակառակորդը, տանկերի աջակցությամբ, վերստին գրոհեց Հաղրութի ՊԾ դիրքերը: Ադրբեջանցի դիվերսանտների խումբը, օգտագործելով Իրանի տարածքը, դուրս եկավ ՊԲ ստորաբաժանումների թիկունքը: Թշնամու մեծաքանակ հետևակը 3 տանկի աջակցությամբ, ներխուժեց Շուքյուրբեյլի: Մի այլ զորամիավորում շարժվեց Վերին Աբդուռահմանլու բնակավայրի ուղղությամբ: Ադրբեջանական հրամանատարությունը, հաշվի չառնելով կենդանի ուժի վիթխարի կորուստները, օտարերկրացի վարձկաններով համալրված նորանոր ստորաբաժանումներ էր քշում մարտադաշտ, հատուկ ջոկատների միջոցով, որպես կանոն, գնդակահարելով իր փախչող զինվորներին[217]:

Հյուսիսարևմտյան ռազմաճակատում ռազմական տեխնիկայի, հրետանային կրակի աջակցությամբ հակառակորդը ներխուժեց Լև ու Բոզլու գյուղերը: Պաշտպանական ծանր մարտեր էին մղվում Բաբաշլար, Չոնդրլու գյուղերում[218]: Հունվարի 4-ին հակառակորդը Օմարի լեռնանցքից շարժվեց ԼՂՀ ՊԲ դիրքերի վրա: Համառ մարտերից հետո հակառակորդի առաջխաղացումը կասեցվեց: Սակայն, ստանալով նոր համալրումներ և ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելով՝ հակառակորդին հաջողվեց հունվարի երկրորդ կեսին ճեղքել ճակատային գիծը և սպառնալից խորանալ շրջանի տարածք:

Արևելյան և հյուսիսարևելյան ռազմաճակատներում հունվարի 3-ին հակառակորդը մարտական գործողություններ սկսեց Մարտակերտի ՊԾ-ի Լևոնարխ գյուղի մոտ տեղաբաշխված դիրքերի ուղղությամբ: Նույն օրը վաղ առավոտյան Ասկերանի և Կենտրոնական ՊԾ-ների ստորաբաժանումները հակահարձակման անցան ռազմաճակատի

[216] ԼՂՀ ՊՆՆ, Рабочая тетрадь оперативного дежурного, 88 л., РТ N 141 (23.11.1996 г.), н. 25.10.93 г. - ок. 14.01.94 г., л. 74 а:

[217] Նույն տեղում, եր. 78 բ:

[218] Նույն տեղում, եր. 68 բ:

Փափրավենդ-Սալահլի-Քենգերլի հատվածում[219]: Հունվարի 4-ին հարձակման ենթարկվեցին նաև Մարտակերտի, Մարտունու և Հադրութի ՊՇ-ների բնագծերը: Շուրջ 70 աղրբեջանցի զինվորների հաջողվեց անցնել մարտունեցի ռազմիկների թիկունքը: Օպերատիվ գործողությունների արդյունքում հակառակորդի այդ խմբավորումը շրջապատվեց: Հուսահատ կատաղությամբ դիմադրելուց, մարտադաշտում 43 դիակ թողնելուց հետո, աղրբեջանցիները մազապուրծ ճողոպրեցին[220]:

Ռազմաճակատի հյուսիսարևելյան ուղղությունում հիմնականում դիրքային մարտեր էին ընթանում: Աղրբեջանական հրամանատարությունը, ուժեղ հարվածային խմբավորումներ ստեղծելով Միր-Բաշիրում և Ենիքենդում, հունվարի 6-ին հարձակում ձեռնարկեց երկու՝ Մարտակերտի և Աղդամի ուղղություններով: Մարտական գործողությունների ընթացքում Բարդայից նորանոր զորամասեր նետվեցին Միր-Բաշիրի տեղամաս[221]: Մատաղիսի ուղղությամբ տասնյակ միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակումներ գործելիս, հակառակորդը կորցրեց շուրջ 300 զինվոր և հետ շպրտվեց: Կեսօրից հետո, կենտրոնական ուղղությունում հակահարձակման անցնելով, ՊԲ հարձակողական միավորումները ճնշեցին Գյուլիջա և Սումա գյուղերի թշնամական կրակակետերը[222]:

Հունվարի 7-ին հակառակորդը լայնածավալ հարձակում սկսեց Մարտունու և Հադրութի ՊՇ-ների ուղղությամբ: Մարտունու ՊՇ-ում թշնամին գրավեց 609 բարձունքը: Հարավարևելյան ռազմաճակատում ՊԲ ստորաբաժանումները կազմակերպված երկրորդ բնագիծ նահանջեցին: Սալահլի-Քենգերլի հատվածում ՊԲ ստորաբաժանումներն ամրապնդեցին իրենց դիրքերը[223]:

Հունվարի 8-ին մարտական գործողությունները ռազմաճակատի ամբողջ երկայնքով շարունակվեցին: Աղրբեջանական հրամանատարությունն այլ մարտավարության դիմեց՝ ճակատային գրոհները փոխարինելով շրջանցող և գիշերային հարձակումներով: ՊԲ կազմավորումները, կասեցնելով հակառակորդի առաջխաղացումը և գիշերային

[219] Նույն տեղում, եր. 70 ա:
[220] «Մարտիկ», հմ. 2, 1994 թ.:
[221] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, հմ. 141, եր. 81 ա:
[222] Նույն տեղում, եր 81 բ, 82 ա:
[223] Նույն տեղում, եր. 83 ա:

գրոհները, ռազմաճակատի առանձին հատվածներում հակահարձակման անցան:

Հունվարի 10-ին աղրբեջանական բանակը վերսկսեց լայնածավալ հարձակումները ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքս: Հատկապես ծանր իրավիճակ էր ստեղծվել Մարտակերտի ՊՇ Մատաղիս-Լյուլաասազ (Հակոբ Կամարի) բնագծում: Կասեցնելով թշնամու առաջխաղացումը՝ ՊԲ կազմավորումները թեժ մարտերի արդյունքում ազատագրեցին Լյուլաասազ գյուղը և գերիշխող ռազմավարական բարձունքներից մեկը: Հակառակորդի «Կումանդո» գորախումբը շրջապատվեց ու գլխովին ջախջախվեց[224]: Հաջողությունն ամրապնդելու համար, ՊԲ զորամասերն ամբողջ ճակատով հակահարձակման անցան՝ խրամատներից քշելով թշնամուն:

Հունվարի 12-ի առավոտյան հակառակորդը հարձակվեց Փափրավենդ-Սալահլի-Քենգերլի, Մարտունու ՊՇ և ռազմաճակատի հարավարևելյան ուղություններով: Կատաղի մարտեր ընթացան նաև Արցախի հյուսիսային ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդն անընդհատ փորձում էր հետ գրավել կորցրած դիրքերը, սակայն ապարդյուն: Հադրութի և Մարտունու ՊՇ-ների հարակից բնագծերի ուղղությամբ հակառակորդի գրոհները կասեցնելով՝ ՊԲ զորամասերը հակահարձակման անցան և ազատագրեցին Ներքին Աբդուռահմանլու բնակավայրը:

Հունվարի 15-ին թեժ մարտեր ընթացան ճակատային գծի ամբողջ երկայնքով: Հարավային ռազմաճակատում շարունակվեց հայ մարտիկների առաջխաղացումը: Սակայն հակառակորդն իր հերթին հարձակման անցավ Մարտունու և Հադրութի ՊՇ-ների բնագծերի ուղղությամբ[225]: Մարտական գործողություններ ընթացան նաև Կարախանբեյլիի հատվածում: Ամսվա երկրորդ կեսին ևս համառ մարտեր ընթացան ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով: Ֆիզուլիի ուղղությունում՝ Կարախանբեյլիի, Վերին Աբդուռահմանլուի հատվածներում, Մարտունու ՊՇ-ում՝ Աղբուռունի տեղամասում և այլուր, Ասկերանի ՊՇ-ում Կարակաշլը, Սալահլի-Քենգերլի և Մարտակերտի ՊՇ-ի՝ Մարտակերտ-Լևոնարխ, Մատաղիս-Լյուլաասազ բնագծերի, Եզնիկյումեր, Գյոդակբուռուն (781.3) և Թարթառի ավազանի մի շարք այլ բարձունքների ուղղություններում աննկուն պաշտպանությամբ ու համարձակ հա-

[224] Հմմտ.՝ «Մարտիկ», հմ. 4, 1994 թ.:
[225] ԼՂՀ ՊՆԱ ՕՀՍՏ, հմ. 141, եր. 98 բ:

կագրոհներով չեզոքացվեցին հակառակորդի առաջխաղացման փորձերը:

Մարտական գործողությունների Քելբաջարի թատերաբեմում այնքան էլ բարեհաջող չէր իրադարձությունների ընթացքը: Հարվածային ուժերի ու տեխնիկայի գերակշռություն ստեղծելով, հակառակորդը սպառնալից խորանում էր շրջանի տարածքում:

Հունվարի 24-ին մարտերը Քելբաջարի շրջանում շարունակվեցին Բաղրլը, Բաբաշլար, Կամըշլը բնակավայրերի և Բուզդուխ լեռան ուղղություններում[226]: Երկու օր անց արդեն մարտեր էին մղվում Բոզլու, Բաբաշլար հատվածում: Բացառությամբ Քելբաջարի շրջանի, ԼՂՀ մյուս ռազմաճակատներում, հիմնականում, հակառակորդը մեծ կորուստներ կրելով, ստիպված նահանջեց:

Փետրվարի առաջին տասնօրյակում Քելբաջարի, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի ուղղություններում կատաղի մարտերը շարունակվեցին: Փետրվարի 1-ին հակառակորդը գրոհեց Մարտունու ՊԾ բնագիծը, սակայն տեխնիկայի ու կենդանի ուժի կորուստներ կրելով՝ հետ շպրտվեց:

Հակահարձակման անցնելով, հայ մարտիկներն առանց կորուստների, վերստին տիրեցին նախօրեին թողնված դիրքերին[227]: Մարտեր ընթացան նաև հարավարևելյան ռազմաճակատում: Ծանր պաշտպանական մարտերի ընթացքում խփելով 2 ծանր տանկ, հայ զինվորները կասեցրին հակառակորդի առաջխաղացումը, իսկ այնուհետև զարգացնելով հաջողությունը, անցան հակահարձակման՝ առաջնորդվելով «լավագույն պաշտպանությունը հարձակումն է» մարտավարությամբ: Սակայն հակառակորդն ամեն գնով ձգտում էր բեկում մտցնել ռազմաճակատի հենց այս հատվածում՝ իր հաշվարկները կառուցելով հարթավայրային գոտում աղրբեջանական բանակի մարտավարական առավելության մասին առասպելի վրա, ուստի հաջորդ օրը մարտական գործողությունները Ֆիզուլիի ուղղությունում վերսկսվեցին: Հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները, որոնք, թերևս ավելի քաջածանոթ էին հակառակորդին, ինչպես նաև ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելով հարվածի գլխավոր ուղղություններում, մասնավորապես, միայն 289,3 նիշով բարձունքի վրա նետվեց մի ամբողջ

[226] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 49 л., РТ N 152 (23.11.1996 г.), н. 15.01.94 г. - ок. 17.03.94 г., л. 8 б:
[227] Հմմտ.՝ «Մարտիկ», հմ.8, 1994 թ.:

գումարտակ և 6 տանկ, ադրբեջանական հրամանատարությունը գրեթե համոզված էր հաղթանակի մեջ: Սակայն հայ մարտիկներն այս անգամ էլ գտնվեցին իրենց անվան ու կոչման բարձրության վրա: Հենց վերոհիշյալ բարձունքի մատույցներում ծավալված մարտերի ընթացքում խփվեց 3 տանկ ու շարքից հանվեց հակառակորդի 30 զինվոր[228]: Չհամակերպվելով իրականության հետ, թշնամին փոխեց հարձակման ուղղությունը, 2 գումարտակ, տանկեր ու ՀՄՄ-ներ շարժեց դեպի Հադրութի գումարտակի՝ Վերին Սեյիդահմեդլիի պաշտպանական բնագծերը: Այստեղ ևս հաջողությունը հայ մարտիկների կողմն էր. հակառակորդին պատճառելով կենդանի ուժի կորուստներ (միայն 25 սպանված[229]՝ հարկադրեցին նրան նահանջել ելման դիրքեր: Օրվա մարտական գործողությունների ընթացքի վրա չազդեցին անգամ գրեթե զուգահեռաբար Մարտունու ՊԾ բնագծերի ուղղությամբ ձեռնարկված հարձակումները:

Մարտական գործողությունների Քելբաջարի ուղղությունում անցիջում պայքար էր ծավալվել ռազմավարական նշանակության Չիչազլի լեռան՝ 2267,7 նիշով բարձունքի համար:

Փետրվարի 3-4-ին հակառակորդը վերստին փորձեց մխրճվել Մարտունու ՊԾ բնագծերը: Հարձակման երկրորդ օրը գրոհի հանվեց մեծաքանակ հետևակ և 9 միավոր զրահատեխնիկա: Հայ մարտիկները, խփելով 1 S-72 տանկ, ինչպես նաև կասեցնելով հետևակի ու զրահատեխնիկայի առաջխաղացումը, հետ շպրտեցին հակառակորդին՝ խափանելով Մարտունու ՊԾ ռազմավարական ուղղությունում ցանկացած գնով հաջողության հասնելու նրա ծրագրերի իրագործումը: Նմանապես թշնամին ձախողման էր դատապարտված նաև Մարտակերտի ՊԾ-ում, Մ. Գրիգորյանի զորամասի պաշտպանական բնագծերի և ռազմաճակատի հարավարևելյան ուղղություններում: Ամենուր հանդիպելով հայ մարտիկների կազմակերպված, ներդաշնակված պաշտպանությանը, ինչպես նաև կուրուստներ կրելով՝ հակառակորդը ստիպված նահանջում էր, խարխլված մարտակարգերը կարգավորելու, համալրելու և վերստին գրոհի ելնելու համար: Ըստ երևույթին, հակառակորդի հույսը կենդանի ուժի ու նյութատեխնիկական պաշարների առա-

[228] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 49 л., РТ N 152 (23.11.1996 г.), н. 15.01.94 г. - ок. 17.03.94 г., л. 20:
[229] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍ, հմ. 152, թ. 20:

վելությունն էր, սակայն ժամանակակից պատերազմում հաղթում են ոչ թե թվաքանակով, այլ հմտությամբ ու հնարամտությամբ:

Հաջորդ օրերի մարտական գործողությունները ևս եկան հաստատելու այդ ճշմարտությունը: Փորձելով շտկել իրադրությունը հյուսիսարևմտյան ռազմաճակատում՝ հակառակորդը հարձակվեց Մարտակերտի ՊՇ 486,1 նիշով բարձունքի ուղղությամբ: Հայ մարտիկները հետ շպրտեցին թշնամուն՝ չերկնչելով անգամ մշտական հրթիռահրետակոծությունից: Իսկ ձախ թևում, հրնթացս հատելով Տրտուն (Թարթառը), հայ մարտիկներն անցան հակահարձակման և նպաստավոր դիրքեր գրավեցին Տոնաշենի մոտակայքում, բռնազավթված հայկական հնամենի գյուղից 500 մ դեպի հյուսիս: Ջբաղեցրած դիրքերից հայ զինվորներին դուրս մղելու հակառակորդի բոլոր փորձերը ձախողվեցին: Ամեն անգամ տասնյակ զոհեր տալով՝ թշնամին հարկադրված նահանջում էր[230]: Այդուհանդերձ, հաջորդ օրվա առավոտյան ժամը 5-ին հյուսիսային ռազմաճակատի ձախ, և ժամը 8[30]-ին՝ աջ թևերում հակառակորդը հարձակման անցավ: Աջ թևն ու կենտրոնը հաջողությամբ հետ մղեցին 4 գրոհ և թշնամուն հալածեցին մինչև ելման դիրքերը: Ապա նաև, զարգացնելով հակահարձակումը, հայ մարտիկները տիրեցին ռազմավարական նշանակության բարձունքներից մեկին՝ այնտեղ առգրավելով 3 միավոր տեխնիկա[231]:

Դեռևս փետրվարի 9-ին, հրետանային կրակի աջակցությամբ, հակառակորդը մարտական գործողություններ էր սկսել հարավարևելյան ռազմաճակատի ուղղությամբ, սակայն կորցնելով 30 զինվոր, հետ էր շպրտվել:

Ըստ երևույթին դա հետախուզական հարձակում էր, իսկ հիմնական իրադարձությունները ծավալվեցին հաջորդ օրը, երբ մարտերն ընդգրկեցին նախկին ԽՍՀՄ պետական սահմանից մինչև Կարախանբեյլի ձգվող ամբողջ ճակատային գիծը: Հակառակորդին ծանր գնով հաջողվեց ժամանակավորապես գրավել սահմանագծի մոտակա պահակակետերից մեկը, որը սակայն հետ վերադարձվեց: Հակառակորդը նաև շեղող հարված էր նախատեսել Մարտունու ՊՇ բնագծերի ուղղությամբ, սակայն հայ մարտիկների փոխհամագործակցված գործողությունների շնորհիվ, այն էական ազդեցություն չունեցավ հարավարևելյան ռազմաճակատում ընթացող մարտական գործողությունների վրա, դեռ ավելին, մարտունեցիների աննկունությունը նպաստեց հաղթությունների հաջողությանը: Դաս չառնելով նախորդ ձախողումներից՝ հարավարևելյան ճակատում ամեն գնով ռազմական նախաձեռնությունը խլել ձգտող հակառակորդը 1994 թ. փետրվարի 11-ի վաղ առավոտյան, տանկերի և օդուժի աջակցությամբ, հարձակվեց Կորգան և Հորադիզ գյուղերի պաշտպանական բնագծերի վրա[232]: Նախորդ օրերի պես, այս հարձակումը ևս հետ մղվեց: Պարտությունից հակառակորդին չփրկեց ոչ օդում և ոչ էլ մախտական տեխնիկայի առումով ունեցած գերակշռությունը: Հայ զինվորն անսասան էր կանգնած արյամբ նվաճված բնագծում և խիզախորեն էր պաշտպանում իրեն վստահված դիրքերը:

Ամփոփելով Ադրբեջանի նախահարձակման կասեցման ու 1993 թ. դեկտեմբերի 18-ից մինչև 1994 թ. փետրվարի 9-ը մղված մարտական գործողությունների արդյունքները՝ ԼՂՀ ՊԲ քաղբաժինը հրապարակել է հետևյալ տվյալները. «Հակառակորդը կորցրել է 5 հազար զինվոր ու սպա, մեկ մարտական ինքնաթիռ, 72 միավոր զրահատեխնիկա, այդ թվում՝ 36 տանկ, 12 հրանոթ և հրետանային կայանք, որից 3-ը «Գրադ»: Հիշյալ ժամանակահատվածում ինքնակամ գերի են հանձնվել 26 ադրբեջանցի զինյալներ: ԼՂՀ ՊԲ-ն ունեցել է 300 մարտիկի անդառնալի կորուստ, իսկ շարքից դուրս եկած 24 միավոր զրահատեխնիկան փոխհատուցվել է թշնամուց առգրավված զրահատեխնիկայով»[233]:

Մինչև 1994 թ. մայիսյան զինադադարը մղված օպերացիաներին անդրադարձներ կան մյուս գլուխներում, ուստի նպատակահարմար ենք գտնում սույն գլխի թեմատիկ առանձնահատկությունից ելնելով ներկայացնել 1994-2016 թթ. ընթացքում հակառակորդի վարած դիպուկահարային ու դիվերսիոն-հետախուզական արտագրոհների պատերազմին դիմագրավելու համար ՊԲ իրականացրած մարտավարության հիմնական առանձնահատկությունները: Նախ նշենք, որ ըստ մամուլում շրջանառված ՊՆ ներկայացուցիչների հաղորդումների՝ ադրբեջանական կողմը, միայն 2014-2016 թթ. (մինչև ապրիլի 1-ը) ընթացքում իր ունեցած բոլոր դիվերսիոն-հետախուզական խմբերին մարտական կիրառման նպատակով ներգրավել է առնվազն 150 դիվերսիոն ներթա-

[230] Նույն տեղում, եր. 24 բ, 26 ա:

[231] Հմմտ.՝ ***Հարությունյան Մ.,*** Տիրելով նպաստավոր բնագծերի (փետրվար. 1994 թ.), «Մարտիկ», հմ. 8, 1999 թ.:

[232] Հմմտ.՝ ***Հարությունյան Մ.,*** Արցախյան ազատագրական մարտերը 1994 թ. փետրվարին, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հմ. 1-2, Եր., 2001, էջ 73:

[233] Հմմտ.՝ «Մարտիկ», հմ. 7, 1994 թ.:

փանցման փորձերին՝ գործի դնելով ականային, հրետանային և այլ միջոցներ: Դրանք, փաստորեն, լայնամասշտաբ պատերազմական գործողությունների նախապատրաստություններ էին, որոնք, մեր կարծիքով, ինչպես քաղաքական, անպես էլ ռազմական ղեկավարության համարժեք գնահատականին չարժանացան: Հետագա անբարենպաստ զարգացումների ու 2016 թ. պատերազմի հետևանքների լույսի ներքո կարելի է կարծել, որ նաև անհրաժեշտ հետևություններ չեն կատարվել, իսկ ձեռնարկված միջոցները եթե չորակենք ցուցադրական, ապա պետք է բնութագրենք խիստ անբավարար, ինչը, դժբախտաբար, ակնհայտ դարձավ 2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը թշնամու սանձազերծած լայնամասշտաբ զավթողական պատերազմի 44 օրերի ընթացքում, երբ արտակարգ (պատերազմական) իրավիճակում պետական կառավարման համակարգը միանգամայն անկարող գտնվեց պետությունը տեղափոխել ռազմական ռելսերի վրա, իսկ ՊՆ, ԶՈՒ գլխավոր շտաբի, պաշտպանության բանակի, կորպուսների, դիվիզիաների և գնդերի շտաբների, ընդհանրապես հրամկազմի գործողությունները, երբեմն նաև կաշկանդված լինելով քաղաքական իշխանությունների անկոմպետենտության պատճառով առաջացած տարաձայնություններով, արդյունավետ չէին, ունեին կազմակերպական ու մարտավարական լուրջ թերություններ, որոնք արդեն բացասաբար էին անդրադառնում ավելի ցածր մարտավարական օղակներում, ռազմաճակատի պաշտպանական բնագծերում մարտական խնդիրներ կատարող ստորաբաժանումների և ըստ իրադրության սեփական նախաձեռնությամբ մարտեր վարող անձնակազմի մարտունակության վրա: Իհարկե, պատերազմի աղետալի հետևանքների պատճառները դեռ պետք է ամբողջովին ու համակողմանի վերհանվեն, վերլուծվեն և անհրաժեշտ հետևություններ կատարվեն՝ անհապաղ բարեփոխումների ու թերությունների վերացման անհետաձգելի միջոցներ ձեռնարկելու նպատակով, որպեսզի հետագա պատերազմներում մեր պետության ու զինված ուժերի առաջ դրված խնդիրները կատարվեն լիարժեք ու հնարավորինս քիչ մարդկային կորուստներով:

1994-2016 թթ. մեզ պարտադրված թշնամու դիվերսիոն-հետախուզական և դիպուկահարային պատերազմին հայկական կողմը հակադարձել է համարժեք գործողություններով՝ ձգտելով անպատասխան չթողնել նշված սադրիչ արտագրոհները: Որպես կանոն կիրառվել են նաև պատժիչ կամ վրիժառության գործողություններ ինչպես դիպուկահարների, այնպես էլ դիվերսիոն-հետախուզական խմբերի հատուկ օպերացիաների կիրառմամբ: Դրանց ռազմավարությունը կարծես թե թշնամուն իր թվական ու ռազմատեխնիկական գերազանցության միջոցով կոշտ ուժի կիրառման և դրանով քաղաքական հարցերը լուծելու հնարավորության անհեռանկարայնության մեջ համոզելն էր: Այս ռազմավարության էությունը լավագույնս է բնութագրում հայ մեծանուն ռազմական գործիչ ու զաղափարախոս-տեսաբան Գարեգին Նժդեհի խոսքը. «Զգալ տուր թշնամուդ, որ ամեն վայրկյան պատրաստ ես պատերազմելու, և նա կհրաժարվի զինու ուժով քեզ անհանգստացնելու մտքից. ահա սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստության»[234]:

Վերադառնալով 2016 թ. թշնամու սանձազերծած պատերազմի թեմային հարկ է նշել, որ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը հակառակորդը, մարտի մեջ մտցնելով հատուկ նախանշանակման, տանկային և հրետանային ստորաբաժանումներ, կիրառելով բանակային ավիացիա, հարձակում է գործել ԼՂՀ պետական սահմանի հյուսիսային և հարավարևելյան ուղղություններով՝ 5-րդ, 6-րդ և 9-րդ ՊՇ-ների պահպանության տեղամասերում՝ միաժամանակ հրետանային հարվածներ հասցնելով մի շարք խաղաղ բնակավայրերի: Թեև նախահարձակումն անսպասելի էր, ՊԲ նշված զորամասերի մարտական հերթապահություն իականացնող ստորաբաժանումների մարտիկները կարողացել են պաշտպանական մարտեր վարելով կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, նրան պատճառել կենդանի ուժի և սպառազինության ու ռազմական տեխնիկայի զգալի կորուստներ: Չորս օր տևած ինտենսիվ մարտերի ընթացքում ՊԲ մարտիկները ցուցաբերել են անօրինակ հերոսություն, ամուր կամք, մինչև վերջին փամփուշտը կռվելու և հակառակորդին հաղթելու վճռականություն: Հայ զինվորին բնորոշ որակները՝ անձնական խիզախությունը, վստահված սպառազինությանն ու ռազմական տեխնիկային հիանալիորեն տիրապետելն ու հարկ եղած դեպքում այն հնարամտորեն, ստեղծագործաբար կիրառելը, հրամանատարական կազմի արհեստավարժությունն ու մասնագիտական գիտելիքները հնարավորություն են տվել արդեն մարտերի սկզբնական փուլում ձախողել հակառակորդի բոլոր հաշվարկները: Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, իր սկզբնական պլանի տապալումը կանխելու և նոր ձեռք բերված սպառազինությունն անմիջա-

[234] *Նժդեհ Գ.*, Հատրնտիր, Ե., «Ամարաս», 2006, էջ 39:

պես մարտական պայմաններում կիրառելու նպատակներով կիրառել է համազարկային կրակի «Սմերչ» համալիրներ, «Սոլնցեպեկ» ռեակտիվ հրանետներ, Հարավաֆրիկյան Հանրապետությունում և Ուկրաինայում արդիականացված մարտական ուղղաթիռներ, իսրայելական «Հարոպ» մարտական անօդաչու թռչող սարքեր: Հակառակորդի գործողությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք նաև հայկական կողմին հնարավորինս մեծ վնասներ հասցնելու և ահաբեկելու նպատակ էին հետապնդում: Սարտերի առաջին իսկ պահից թշնամին նաև փորձել է ջլատել ՊԲ մարտիկների բարոյահոգեբանական ուժերը, ինչի մասին են վկայում Թալիշ գյուղում անօգնական ծերունիների սառնասիրտ սպանությունն ու դիակների անարգումը, ՊԲ զոհված եռեք զինծառայողների գլխատումը, խաղաղ բնակավայրերի հետևողական հրետակոծությունները և այլ պատերազմական հանցագործությունները: Սակայն թշնամին դատապարտված էր ձախողման, որովհետև յուրաքանչյուր հայ մարտիկ հասկացել է, որ անգամ քաղաքակիրթ քսանմեկերորդ դարում թուրքի ցեղասպան էությունն ու հայթուրքական պատերազմի կերպը չեն փոխվել: Այդ գիտակցումը հայ մարտիկների մոտ առաջացրել է արդարացի զայրույթի և վրեժի զգացողություն, հնարավորություն է տվել մարտական գործողությունների ամբողջ ընթացքում չթուլացնել զգոնությունը, նպաստել է ողջ հայ ժողովրդի և նրա մի մասը հանդիսացող բանակի մարտիկների հայրենասիրական տրամադրությունների աննախադեպ աճին, հասարակության բոլոր խավերի համախմբվելուն, բանակին համաժողովրդական աջակցություն ցուցաբերելուն:

Մարտական գործողությունների ընթացքում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը կարելի է գնահատել բավարար: Անձնակազմը հմտորեն ու խիզախաբար կատարել է առաջադրված խնդիրները: Բավարար է աշխատել նաև հրամանատարական օղակը: Իրադրության ճիշտ գնահատման արդյունքում ժամանակին ընդունվել են ճիշտ, իրատեսական որոշումներ, որոնք հնարավորություն են տվել կատարել ՊԲ պաշտպանության բնագծեր մխրճված թշնամուն ջախջախելու խնդիրը՝ հնարավորինս խուսափելով անհարկի կորուստներից:

Թեև ապրիլի հինգին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ զինադադարի պայմանավորվածություն է ձեռք բերվել, սակայն, ըստ էության, դադարել են միայն զորքերի հարձակողական գործո-

ղությունները: Իսկ դիրքերի հրետակոծություններն ու ակտիվ գնդակոծությունները դեռ շարունակվել են մինչև ամառ:

Ակտիվ մարտական գործողություններից մեկ ամիս անց Պաշտպանության բանակը համալրվել է զորահավաքային ռեսուրսով, ՊԲ ըստ պատերազմական ժամանակի հաստիքների համալրված ստորաբաժանումներն իրականացրել են և՛ մարտական հերթապահություն, և՛ հուսալի դիրքային պաշտպանություն: Ակտիվ մարտական գործողությունների ավարտից հետո, հատկապես առաջին տասը-տասնհինգ օրերին հակառակորդը առերևույթ զերծ է մնացել կրակի դադարեցման ռեժիմը խախտելու գայթակղությունից՝ այդ ընթացքում իրականացնելով նորանվաճ դիրքերի (Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի և Վարանդայի շրջանի Վարազաթումբ բարձունքի շրջաններում) ինժեներական կահավորման աշխատանքներ: Այդ խաբուսիկ հանդարտությունը տեղիք է տվել ՊԲ որոշ զինծառայողների զգոնության թուլացմանը, ինչը կարելի է բացատրել նաև որոշակի օբյեկտիվ պատճառներով: Լարված մարտական հերթապահության կրումը, առավել ևս հակառակորդի խաբուսիկ հանգստությունը, բթացրել են վտանգի զգացողությունը, առաջացրել անտարբերություն, ձևական վերաբերմունք ծառայողական պարտականությունների կատարման հանդեպ: Այդ ամենը հանգեցնում է անվտանգության և զենքի օգտագործման կանոնների խախտումների, հրամանատարության կողմից վերահսկողության թուլացմանը, ինչի հետևանքով եղել են անտեղի կորուստներ: 2016 թ. ապրիլի յոթից մինչև մայիսի 19-ը ՊԲ-ն ունեցել է տասնյոթ զինծառայողի կորուստ, որոնցից երեքը զոհվել են հակառակորդի հրետանու կրակի արդյունքում, երեքը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, մեկը՝ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության կանոնների խախտման, տասներեքը՝ հակառակորդի կողմից խոցվելու հետևանքով: Եթե հակառակորդի հրետանու կիրառման արդյունքում ունեցած կորուստներն ինչ-որ չափով կարելի էր համարել անխուսափելի, ապա մյուս տասնչորս մարդկային կյանքի կորուստը կարող էր և չլինել[235]:

Վերոհիշյալ փաստաթղթում անչափ մտահոգիչ, սխալ ու անչափ վտանգավոր մոտեցում է համարվել սեփական կորուստների ընկալման հոգեբանության փոփոխությունը. եթե նախկինում հակառակորդի

[235] ՊԲ հրամանատարի վերլուծական կյտութը՝ հասցեագրված միավորումների, զորամասերի հրամանատարներին, 19.05.2016 թ. (կատարմամբ գ-տ Ն. Մկրտչյանի), Ստ., 2016, թ. 3:

կողմից ՊԲ զինծառայողի յուրաքանչյուր խոցման դեպք համարվում էր իր տեսակի մեջ բացառիկ արտակարգ պատահար, ապա հիմա հակառակորդի գնդակից զինծառայողի վիրավորվելու կամ զոհվելու փաստը հաճախ ընկալվում է որպես սովորական, ստեղծված իրավիճակում ինչ-որ առումով անխուսափելի երևույթ:

Եթե ապրիլի առաջին չորս օրերին ՊԲ կորուստները եղել են մարտադաշտում, արյունահեղ մարտերի ընթացքում, ապա հետագա կորուստներից հնարավոր էր և անհրաժեշտ էր խուսափել: Յուրաքանչյուր մարդու զոհվելը դառնում է ընտանեկան ողբերգություն նրա հարազատների և մտերիմների համար, անդառնալի բացասական ազդեցություն է գործում մեր հասարակության վրա՝ խարխլելով հաղթական բանակի նկատմամբ ավանդաբար ամուր վստահությունը, խիստ բացասաբար է ազդում նաև զորքերի բարոյահոգեբանական վիճակի վրա: Այսքանը գիտակցում է նաև հակառակորդը, որը անկախ կրակի դադարեցման ռեժիմի պահպանման ու արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման կողմնակիցը լինելու վերաբերյալ իր հայտարարություններից, շարունակում է օգտագործել հայկական կողմին կորուստներ պատճառելու ցանկացած հնարավորություն:

Անտեղի մարդկային կորուստները բացառելու նպատակով ՊԲ հրամանատարությունն անհրաժեշտ է համարել.

ա. բոլոր կարգի հրամանատարների անմիջական մասնակցությունը պաշտպանության կազմակերպմանը,

բ. լուրջ ուշադրություն դարձնել դիրքերի ինժեներական առումով ճիշտ կահավորմանը,

գ. մշտական վերահսկողություն իրականացնել մարտական հերթապահությունում ընգրկված անձնակազմի նկատմամբ՝ բացառելով խտրական վերաբերմունքը զորահավաքային ռեսուրսի և ժամկետային զինծառայողների նկատմամբ,

դ. անշեղորեն հետամուտ լինել վերադաս հրամանատարության ցուցումների և հրամանների կատարմանը և մշտապես նույնը պահանջել ենթականերից,

ե. ձեռնարկել գործուն միջոցներ մարտական հերթապահության ընդգրկված անձնակազմի զգոնության բարձրացման ուղղությամբ,

զ. լուրջ ուշադրություն դարձնել մարտական խնդիրների կատարմանը ընդգրկված անձնակազմի հրահանգավորմանը, անվտանգության կանոնների իմացությանն ու պահպանմանը:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԱՐՑԱԽԻ ՋՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երրորդ՝ «Արցախի ՋՈՒ-ի մարտավարության առանձնահատկությունները» գլխում քննության են առնվել Արցախի զինված ուժերի տարբեր տեսակների, տարբեր զորատեսակների ու հատուկ զորքերի ստորաբաժանումների ու զորամասերի կողմից մարտի պատրաստման և վարման տեսության ու պրակտիկայի, ռազմական նպատակներին հասնելու համար օգտագործվող կրակի, կազմավորումների ու տարաշարժի համակցության հիմնահարցերը:

1991 թ. ամառային ռազմարշավից մինչև 1992 թ. ամառային ռազմարշավ ընկած ժամանակամիջոցում Արցախի ինքնապաշտպանության ջոկատները, Ա. Տեր-Թադևոսյանի վկայությամբ, կիրառում էին հետևյալ մարտավարական հնարքները.

- հանկարծակիությունն ապահովելու համար գործողությունները սկսվում էին գիշերային ժամերին (Տողի, Սարինշենի, Կրկժանի, Մալիբեկլուի, Խոջալուի, Շուշիի գործողությունները),

- հարվածներ էին հասցվում հակառակորդի կառավարման մարմիններին (Տողի, Խոջալուի, Շուշիի գործողություններ),

- հսկողության տակ էին վերցվում հաղորդակցության այն ուղիները, որոնցով հակառակորդը կարող էր համալրում ստանալ (Սարինշենի, Կրկժանի, Շուշիի գործողություններ),

- հակառակորդի նահանջի համար թողնվում էր միջանցք: Միջանցքի առկայությունը, որպես կանոն, հանգեցնում էր նրան, որ հակառակորդը մի առ ժամանակ անց դադարեցնում էր դիմադրությունը և դիմում փախուստի (Տողի, Մալիբեկլուի, Խոջալուի, Շուշիի գործողություններ):

- մի քանի ուղղություններով միաժամանակյա հարձակում, ինչը դժվարացնում էր որոշել գլխավոր հարվածի ուղղությունը (Սարինշենի, Կրկժանի, Խոջալուի, Շուշիի գործողություններ),

- թշնամու թիկունքում հարված հասցնելը, ինչը շփոթության էր մատնում հակառակորդին և ստիպում, որ նա հապշտապ դադարեցնի

դիմադրությունը և խուճապի մատնվի (Լեսնոյի, Կրկժանի, Շուշիի գործողություններ)[236]:

ՊԲ ստորաբաժանումները հնարավորինս խուսափել են դեմ հանդիման մարտեր մղելուց և դիմել են հետևյալ փորձարկված մարտավարությանը. հարվածել առավելս անսպասելի ուղղություններով, մշտապես թշնամուն զգալ տալ, որ եթե ժամ առաջ չհեռանա իր դիրքերից, ընկնելու է շրջապատման մեջ: Այդ մարտավարությունը Շուշիի և մյուս ազատագրական մարտերի ժամանակ բավական արդյունավետ է եղել: Արդյունքում ՊԲ հարձակողական ուժերը արդյունավետորեն լուծել են մարտական բարդ խնդիրները՝ ունենալով անհամեմատ ավազ կորուստներ, թեև սովորաբար հարձակվող կողմի կորուստները շատ են լինում:

Հակառակորդների բարոյահոգեբանական առանձնահատկությունները և մարտարվեստի հմտություններին տիրապետումը

Ռազմական գործողությունների սկզբնական շրջանում Ինքնապաշտպանության ուժերի սպառազինությունը, ռազմական տեխնիկան և զինամթերքը, հակառակորդի ունեցածի համեմատությամբ, խիստ սահմանափակ էին: Այնուհանդերձ, հայ մարտիկները դրսևորեցին մարտական ոգու և դիմացկունության շատ ավելի բարձր որակներ, ինչն Ինքնապաշտպանության ուժերին հնարավորություն տվեց հաջողությամբ իրականացնել ինչպես պաշտպանական, այնպես էլ հարձակողական ռազմական գործողություններ: Ինքնապաշտպանության ուժերն ավելի արագ էին յուրացնում և հմտորեն կիրառում ինչպես թեթև հրազենը, այնպես էլ սպառազինության և ռազմական տեխնիկայի առավել բարդ տեսակները: Ռազմամթերքի անբավարարությունն ստիպում էր դրանք առավել արդյունավետ գործածելու հմտություններ ձեռք բերել:

Ուշագրավ է այն փաստը, որ հայ մարտիկները շատ արագ հոգեբանական կայունություն ձեռք բերեցին հակառակորդի կողմից օդուժի և մեծ քանակությամբ զրահատեխնիկայի կիրառման նկատմամբ: Պա-

[236] *Տեր-Թադևոսյան Ա.,* Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

տերազմի սկզբնական փուլում հակառակորդի գրոհների ժամանակ մեծ թվով տանկերի կիրառությունը իրարանցում էր առաջ բերում մեր զինվորների շրջանում: Սակայն շատ արագ ուսումնասիրվեցին տանկերի զրահածածկույթի թույլ տեղերը, և հակատանկային նռնականետների միջոցով դրանք ոչնչացնելու մարտավարություն մշակվեց: Արագ յուրացվեցին նաև «ՋԿ-23-2» զենիթային կայանքների (ՋԿ) և «Ստրելա-2Մ» շարժական զենիթահրթիռային համալիրների գործածության հիմնական հմտությունները, ինչի շնորհիվ Ինքնապաշտպանության ուժերին հաջողվում էր, դեռ մինչև Արցախում ՀՕՊ ավելի ժամանակակից հրթիռային համալիրների հայտնվելը, խոցել հակառակորդի ինքնաթիռները և ուղղաթիռները:

Ավելի բարձր տոկունություն էր դրսևորում նաև Արցախի քաղաքացիական բնակչությունը: Չնայած հրետանային անդադար կրակին և ավիագրոհներին, որոնց արդյունքում քաղաքացիական բնակչության շրջանում մեծ թվով զոհեր էին լինում, արցախցիները չէին լքում իրենց օջախները, քանի դեռ հայկական զորքերը պահպանում էին պաշտպանական դիրքերը: Մինչդեռ ադրբեջանական բնակչությունը շատ արագ թողնում էր իր տները՝ հենց որ ռազմական գործողությունները մոտենում էին իր բնակավայրերին կամ ենթարկվում էր հայկական կողմի պատասխան գնդակոծությանը[237]:

Արցախյան պատերազմի փորձը ցույց է տալիս, որ մարտնչող զինվորն ու սպան մարտական հրաշքներ են գործում, երբ թիկունքում զգում են իրենց ընտանիքների և մյուս հարազատների տաք շունչը, նրանց պաշտպանությամբ կյանքի կոչում նաև հայրենիքի պաշտպանության սուրբ գործը: Այդպես էր 1992 թ. հունվարի 26-ին, Քարինտակի հերոսական պաշտպանության օրը, երբ գյուղի փոքրաթիվ պաշտպանների կողքին մնալով՝ նրանց հարազատներն իրենց իսկ ներկայությամբ քաջալերել ու մոտիվացրել են յուրաքանչյուրի ձգտումը ամեն գնով հաղթելու վայրագ թշնամուն: Հանրահայտ է, թե ինչքան էր մեր առաջնագծային հերոս Մոնթե Մելքոնյանը կարևորում ռազմիկների ընտանիքների ներկայությունը նրանց թիկունքում, որպեսզի հայրենիքի յուրաքանչյուր պաշտպան զգա, որ նախ և առաջ պաշտպանում է իր ընտանիքը և նահանջելու տեղ չունի: Հենց այս ճիշտ մոտեցման շնորհիվ է նաև, որ Մարտունին պաշտպանող ռազմիկները հրաշքներ էին գոր-

[237] *Тер-Тадевосян А.,* Анализ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), с. 563:

ծում ռազմաճակատում թվապես ու տեխնիկայով գերակշռող թշնամուն պարտությունների մատնելիս: Արցախաբնակ յուրաքանչյուր ընտանիք իր հերթին գիտակցել է, թե ինչ կարևորություն ունի իր ներկայությունը մարտնչող ռազմիկի կողքին և մշտապես նպաստել է նրա մարտական ոգու ու հաղթանակի հասնելու վճռականության բազմապատկմանը[238]:

Իսկ թշնամին ինչպես Արցախյան պատերազմի տարիներին, այնպես էլ 2016 թ. ապրիլի 2-ին սանձազերծած ռազմական ագրեսիայի վերջնարդյունքում դատապարտված էր պարտության, որովհետև ոչ միայն նրա մղած պատերազմն էր անարդարացի, ոչ միայն վարքագիծն էր ոճրագործի, այլ նաև զրկված էր սեփական ընտանիքի տաք շնչառությունը թիկունքում զգալու հնարավորությունից, քանզի մինչև նենգադավ ռազմագործողություն սկսելը զինծառայողների ընտանիքները փախչեցնում էր շատ հեռու՝ կորցնելով կռվելու մոտիվացիան: Արցախյան պատերազմի մասնակիցները հիշում են, թե ինչպես էին տասնյակ կիլոմետրերով հետապնդում իրենց ընտանիքների հետքերով փախչող թշնամուն և ազատագրված գյուղերում բնակիչների չէին հանդիպում:

Մինչ ռազմաճակատներում Պաշտպանության բանակի զինծառայողները 2016 թ. ապրիլին հերոսաբար հետ էին մղում թշնամու նախահարձակումը, հայ սպաներն ու ռազմիկները անձնուրաց ու աննկուն պայքար էին մղում հայրենիքի յուրաքանչյուր թիզ հողի համար, պետությունն իր հերթին հոգ էր տանում նրանց ընտանիքների անվտանգության մասին՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները ոսոխի հեռահար հրետակոծություններից ու հնարավոր օդային հարձակումներից խաղաղ բնակչության պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար: Մասնավորապես, պատրաստության ամենաբարձր մակարդակի է բերվել քաղաքացիական պաշտպանության համակարգը, բնակչությանը պատսպարելու համար նախապատրաստվել են ռմբապաստարաններն ու շենքերի ներքնահարկերը: Հակաօդային պաշտպանության ուժերն ու համապատասխան այլ ծառայություններ շուրջօրյա մարտական հերթապահություն են իրականացրել վտանգը ժամանակին հայտնաբերելու և չեզոքացնելու, որոշ դեպքերում՝ կան-

[238] Ավելի հանգամանալից տե՛ս *Арутюнян М.*, О морально-психологических аспектах самообороны на примере вооруженных сил Арцаха, «Кавказ в геополитических интересах региональных и мировых держав». Сборник научных статей, посвященный памяти выдающегося ученого-кавказо-веда и большого друга армянского народа Виктора Владимировича Черно-уса, Ростов-на-Дону, ДГТУ-Принт, 2018, с. 43-52.

խարգելելու համար: Մի խոսքով՝ արվել է հնարավոր ամեն ինչ, որպեսզի ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկն ու սպան իրենց ընտանիքների անվտանգության համար չմտահոգվեն և իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնեն մարտական խնդիրները կատարելու և թշնամուն հետ շպրտելու վրա:

Գեներալ-մայոր Ա. Տեր-Թադևոսյանը գտնում է, որ «Հակառակորդի հրամանատարության օպերատիվ և մարտավարական ծրագրերն ու գործողությունները պարզունակ էին. նրանք չէին դիմում անուղղակի գործողությունների և ռազմական խորամանկության:

Հակառակորդի առանձին ժամանակավոր հաջողությունները պայմանավորված էին հետևյալ հանգամանքներով.

- հայկական կողմը հետ էր մնում խոշոր ռազմական կազմավորումներ և կանոնավոր զինված ուժեր ստեղծելու հարցում,

- պաշտպանությունը ճեղքելու համար հակառակորդն օգտագործում էր [նախկինի] խորհրդային զորքերը,

- ուժերի և միջոցների հարցում հակառակորդն էական գերազանցություն ուներ»[239]:

Այս դիրքորոշումը, մեր կարծիքով, օբյեկտիվ չէ, որովհետև ակներևաբար թերագնահատում է հակառակորդին, մանավանդ, երբ նրա հրամանատարության օպերատիվ և մարտավարական ծրագրերն ու գործողությունները պարզունակ է համարում, անտեսում էր անուղղակի գործողությունների և ռազմական խորամանկության դիմելու նրա ընդունակությունը:

Մենք առիթ ունեցել ենք հենց աղբբեջանական աղբյուրների տեղեկությունների հիման վրա ներկայացնելու հակառակորդի առաջին կարևոնավոր ստորաբաժանումների առաջին օպերացիայի պլանի և մտահղացման մանրամասները, ընդհանրապես՝ կիրառված մարտավարական հնարները, որոնք, անկախ Քարինտակի ճակատամարտի արդյունքից, վկայում են հակառակի մասին[240]:

Մեկ այլ օրինակ: Բռնազավթման նպատակով նախապատրաստելով Շահումյանի շրջանի ուղղությամբ լայնածավալ հարձակում՝ հա-

[239] *Տեր-Թադևոսյան Ա.*, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 13-19 մայիսի 2007 թ., № 18:

[240] *Հարությունյան Մ., Հարությունյան Ա.*, Քարինտակի հերոսական պաշտպանությունը (ռազմական տեսանկյուն), Շ., «Կամար» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2020, էջ 10-16, 40-44, 49-54, 61-63:

կառակորդն 1992 թ. հունիսի սկզբին ուշադրություն շեղող գործողություններ էր նախաձեռնել Մարտակերտի շրջանի արևմտյան սահմանագծի երկայնքով[241], իսկ արդեն բուն օպերացիայի ընթացքում՝ շեղող հարվածներ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու և Հադրութի շրջանների հիմնականում ռազմավարական նշանակության բնագծերի վրա[242]:

Առանձնահատկություններից կարելի է նշել ինչպես պաշտպանական շրջանների, այնպես էլ առանձին մոտոհրաձգային գումարտակների՝ որպես ինքնուրույն մարտավարական միավորների գործունեությունը օպերացիաների իրականացման գործում: Խնդիրն ու մտահղացումը տալիս էր շտաբը, իսկ դրանց իրականացման եղանակներն ու հնարները ստեղծագործաբար որոշում էին այդ մարտավարական միավորների հրամանատարներն ու շտաբները, իհարկե, մանրամասները համաձայնեցնելով գլխավոր հրամանատարության հետ:

Շուշիի ազատագրման օպերացիայի մարտավարությունը

Ինքնապաշտպանական ուժերի հրամանատարական կետում, մայիսի 7-8 գիշերը, Արկադի Տեր-Թադևոսյանը ուղղությունների և առանձին ստորաբաժանումների հրամանատարներից ընդունում էր պատրաստականության մասին զեկույցները: Երբ ժամը 02[30]-ին Հարավային ուղղության հրամանատար Սամվել Բաբայանը զեկուցեց 2214,8 նիշով գերիշխող բարձունքից մայրուղու հատվածը հսկողության տակ առնելու մասին, Արկադի Տեր-Թադևոսյանը ժամը 02[50]-ի սահմաններում տվեց հրետանային նախապատրաստություն սկսելու հրաման:

Սկսելով օպերացիայի հրետանային նախապատարաստությունը, Ժորա Գասպարյանը ԲՄ-21-ից 3 հրթիռ է արձակում Շուշի քաղաքի ստորին հատվածի վրա, դրանով ստուգում նշանառության ճշտությունը, որից հետո 17 հրթիռներ են արձակվում նույն ուղղությամբ: Այնուհետև կրակը տեղափոխվում է քաղաքի վերին հատվածի վրա: Այլ ուղղությամբ հարձակման տպավորություն ստեղծելու նպատակով, ավելի քան 1 ժամ ականանետային կրակ է վարվում Ջանհասանի վրա: Առաջին համազարկը տրվել է 40 հրկիզող հրթիռներով, որոնք հրդեհի օջախներ են առաջացրել Շուշիում՝ խուճապի մատնելով այնտեղ գտնվողներին: Համազարկից անմիջապես հետո «Գրադ» կայանքները տեղափոխվել են պահեստային կրակային դիրքեր: Կայանքերի տեղաշարժից անմիջապես հետո հակառակորդը «Գրադ»-ի շուրջ 20 հրթիռներ է արձակում մեր կայանքների հիմնական դիրքերի վրա: Զինամթերքի սակավությամբ հանդերձ «Գրադի»-ի 40 հրթիռներ են արձակվել նաև Աղդամ քաղաքի վրա, որպեսզի շեղվի հակառակորդի հրամանատարության ուշադրությունը և կասեցվի այդտեղից հակառակորդի հնարավոր հարձակումը:

Թե օպերացիայի հրետանային նախապատրաստության, և թե առաջկցման ընթացքում ունեցած հնարավորությունների սահմաններում, իրենց խնդիրները բարեհաջող են կատարել նաև Դ-30, ԿՍ-19 և ականանետային ստորաբաժանումները:

ԻՊՈՒ համազարկային կրակի ռեակտիվ համակարգերից Շուշի քաղաքի և շրջակա կրակակետերի ուղղությամբ, ընդհանուր առմամբ, բաց են թողնվել շուրջ 240 հրթիռներ:

Օպերացիայի վարման ընթացքում բոլոր չորս ուղղություններում գործողություններն, ընդհանուր առմամբ, ընթացել են նախորոշված պլանի համաձայն: Այդ մասին գրում է նաև օպերացիայի հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանը. «Գործողության նախատեսված պլանը, հիմնականում, հաջողվեց իրականացնել: Գործողությունն սկսվեց մայիսի 8-ին, ժամը 02[30]-ին՝ հրետանային նախապատրաստությամբ: Գործողության հաջողությանը նպաստեց այն, որ մինչև դրա սկսվելը հակառակորդը Շուշիից խոշոր ջոկատ տեղափոխեց Քյոսալար, ինչը թուլացրեց քաղաքի պաշտպանությունը: Սակայն, մյուս կողմից, դա ուժեղացրեց հակառակորդի դիմադրությունը Քյոսալարի ուղղությամբ, որը հաղթահարելու համար հրամանատարությունը «26»-ի դիրքերում գտնվող զորքերի պահեստ[ազոր]ային խմբին[243] հանձնարարեց հարվածել հակառակորդի թիկունքին: Անմիջականորեն Շուշին գրոհող մեր զորքերի հաջող գործողությունները «26»-ի և Շոշի ուղղություններում հնարավորություն տվեցին արագ կոտրել հակառակորդի դիմադրությունը, և արդեն մայիսի 9-ի առավոտյան ժամը 4-ին Շուշին ազա-

[241] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կանաչ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, Ը., 2015, էջ 87-88:
[242] Նույն տեղում, էջ 96-99:

[243] Խոսքը Ցուրա Հովհաննիսյանի հրամանատարությամբ նոր-նոր անվանապես կազմավորված գումարտակի մասին է:

տագրված էր: Հակառակորդի զորքերը քաշվեցին դեպի Ջարիսլու գյուղը»[244]:

Հադրութի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում մղված ռազմական գործողությունների մարտավարությունը

Միաժամանակ պաշտպանական ու հարձակողական մարտեր ծավալվեցին Հադրութի, Մարտունու և Մարտակերտի ՊՇ-ներում: Մարտունու շրջանում 1993 թ. ապրիլին նկատվեց հակառակորդի որոշակի աշխուժացում: Մի քանի անգամ փորձ ձեռնարկվեց հետևակի մեծ ուժերով և զրահատեխնիկայի օգնությամբ ճեղքել հայ մարտիկների պաշտպանության գիծը: Սակայն, հրամանատարների անձնվեր և հմուտ գործողությունները, ինչպես նաև մարտիկների խիզախությունն ու համարձակությունն ամեն անգամ հակառակորդին հարկադրեցին, կենդանի ուժի ու տեխնիկայի մեծ կորուստներ կրելով, հետ քաշվել եւման դիրքերը: Տեղային նշանակության մարտերի արդյունքում վերահսկողության տակ առնվեց շրջակայքի վրա գերիշխող ու կարևոր նշանակության Ոսկեբլուր (Կըզըլկայա) բարձունքը: Ապրիլի 1-ին, Ուրյանասարի մատույցներից հետ շպրտելով հակառակորդին, Մարտունու ՊՇ 24-րդ և 25-րդ գումարտակները ռազմագործողություն սկսեցին Ոսկեբլուր բարձունքի ուղղությամբ և շրջանաձև պաշտպանություն բռնեցին 433,9 և 463,7 նիշերով բարձունքներում[245]:

Հադրութի շրջանի բնակավայրերի չդադարող հրթիռահրետակոծությունները և սահմանագծի վրա ձեռնարկվող հարձակումները Մարտունու ՊՇ շտաբին ստիպում էին կոնկրետ քայլեր ձեռնարկել ադրբեջանցիների ռազմական հենակետերի ոչ կրակակետերի չեզոքացման ուղղությամբ:

Ապրիլի 2-ի գիշերը, նախորդ օրվա պես, հակառակորդը հրանոթներից, տանկերից հրետակոծեց Հադրութի շրջանի Ուխտաձորի (Էդիլլուի), Տողի, Ազոխի պաշտպանական դիրքերը: Թշնամու կրակակետերի ճնշման նպատակով Հադրութի ՊՇ ստորաբաժանումները ռազմական գործողություններ սկսեցին այդ ուղղություններում:

[244] *Տեր-Թադևոսյան Ա.*, Արցախում ռազմական գործողությունների վերլուծություն (1991 թ. հուլիս-1992թ. մայիս), «Հայ զինվոր», 19-26 մայիսի 2007 թ., № 19:
[245] ԼՂՀ ՊՆԱ, Օ2ՍՏ, № 15և, եր. 14 բ:

Շահրուվեն-յալում հակառակորդը չորս պահակակետ ուներ՝ 3-րդ պահակակետում՝ Ղաջարի մոտակայքում տեղադրված թնդանոթից անընդհատ հրետակոծում էր Դրախտիկը: Այդ պահակակետի վրա գրոհեցին 3-րդ վաշտի տղաները: 2-րդ պահակակետի վրա հարձակվեց գորամասի հետախուզությունը, 1-ինի վրա՝ 2-րդ վաշտը: Այդ պահակակետերը և Ղաջար գյուղը Մարտունու ՊՇ մարտիկների կողմից գրավվելուց անմիջապես հետո հակառակորդը ճողոպրեց նաև 4-րդ պահակակետից: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Հադրութի ՊՇ մարտիկները, մագլցելով բարձունքը, լուսաբացին հանկարծակի գրոհով մտան թշնամու խրամատները: 1-ին վաշտը և Տողի գումարտակը միաժամանակ գրոհեցին Գովշաթլուի ուղղությամբ և, ճնշելով հակառակորդի կրակակետերը՝ դուրս եկան դիմացի բարձունքները, ամբողջացնելով Ղաջարում ու Շահրուվեն-յալում հաստատված ստորաբաժանումների պաշտպանական բնագիծը: Հակառակորդը բազմիցս փորձեց վերագրավել կորսված դիրքերը, բայց ամեն անգամ արժանի հակահարված ստացավ[246]:

Ապրիլի 2-ին 21-րդ, 22-րդ և 23-րդ մոտոհրաձգային գումարտակները գրոհեցին և կեսօրին շրջանաձև պաշտպանություն բռնեցին ռազմավարական նշանակության խազազ բարձունքի վրա: Մարտեր մղվեցին նաև Ղաջար, Դիվանալըլար գյուղերի կրակակետերի վնասազերծման համար, որոնք ևս ի վերջո պսակվեցին հաջողությամբ:

Հարավ-արևելքում Հադրութի և Մարտունու ՊՇ-ների համատեղ ջանքերով կարևոր նշանակության խազազ, Շահրուվեն-յալ բարձունքներին, Ղաջար, Գովշաթլու և Դիվանալըլար բնակավայրերին տիրելը, որոնք աղրբեջանական զինված կազմավորումների համար հենակետեր էին ԼՂՀ տարածք ներխուժելու համար, չեզոքացրեց սպառնալիքը: Դրա հետ մեկտեղ, Մարտունու ՊՇ-ում ձեռք բերված անառարկելի հաջողությունների համապատկերի վրա նշմարվեց հարձակմամբ գրավված դիրքերում և բնագծերում ամրանալու մարտիկների անվարժվածությունը: Դիրքերը բազմիցս հանձնելը և կրկին տիրելը կամ ձեռքից ձեռք անցնելը, վկայում են, որ կրտսեր հրամանատարները պատշաճ կերպով չէին մշակում նոր գրավված բնագծերում ամրանալու հարցերը: Հաշվի չէին առնվում տեղանքի մարտավարական առանձնահատկությունները, բացակայում էր ամուր կարգապահությունը: Դա պարզո-

[246] «Մարտիկ», 1998 թ., № 15:

րոշ երևաց Մարտունու ՊՇ-ում մղված, հատկապես Ոսկեբլուր (Կըզըլկայա) սարի, 61,8 նիշով բարձունքի մարտական գործողությունների վերլուծությունից[247]:

Հակառակորդը, կենտրոնացնելով կենդանի ուժ և մարտական տեխնիկա, օգտագործելով օդուժ և հրետանի, գրոհեց Մենգելենաթա լեռան վրա գտնվող 589,8 և 599,9 նիշերով բարձունքները: Հարձակումը կասեցվեց, հակառակորդը հետ շպրտվեց: Համառ մարտերով Հադրութի ՊՇ ստորաբաժանումները, թեև հետ քաշվեցին Մենգելենաթա լեռից, բայց հակառակորդին կենդանի ուժի մեծ կորուստներ պատճառեցին:

Ամսվա ընթացքում մարտական գործողություններ ընթացան նաև Օմարի լեռնանցքում, Մարտակերտի շրջանի Մաղավուզ և Միհիզրելիկ գյուղերում, Մարտունու ՊՇ առանձին, հատկապես՝ Կուրոպատկինոյի հատվածներում, Հադրութի ՊՇ Հին Թաղերի ու Խծաբերդի ուղղություններում:

Ամենուր հակառակորդն արժանի հակահարված էր ստանում և հարկադրված նահանջում ելման դիրքեր: Այդ մարտերը, թեև տեղական նշանակություն ունեին, սակայն ամուր հիմքեր էին ստեղծում դրանց արդյունքների ու օպերատիվ-մարտավարական իրադրության դինամիկայի հաշվառմամբ, ավելի խոշոր օպերացիաներ մշակելու և անցկացնելու համար:

Այսպիսով, ապրիլ ամսում հակառակորդը հարձակողական գործողություններն ակտիվացնելով Հադրութի շրջանի հարավում՝ Հին Թաղեր, Խծաբերդ գյուղերի և Լաչինի միջանցքի ուղղությամբ, համապատասխանաբար՝ Ջաբրայիլի և Կուբաթլիի շրջաններից մշտական սպառնալիքի տակ էր պահում այդ կենսապահովման ճանապարհը: Թշնամու հաճախակի գրոհները չեզոքացվեցին Հադրութի ՊՇ ուժերով: Առանձին տեղամասերում, հանդիպական գրոհի ընթացքում, հակառակորդն ստիպված նահանջեց՝ կորցնելով սպառազինություն, մարտական տեխնիկա և կենդանի ուժ:

Մարտակերտ քաղաքի ազատագրման օպերացիայի ժամանակ կարևոր նշանակություն ունեցավ Շուշիի ՊՇ ստորաբաժանումների տարաշարժը, որը այլ ստորաբաժանումների հետ փոխգործակցության շնորհիվ մեծապես նպաստեց հակառակորդի դիմադրությունը հնարավորինս արագ կոտրելուն: Շուշիի ՊՇ զոհամասերը խնդիր ունեին լայն

[247] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 021, л. 55:

շրջանցումով դուրս գալ հակառակորդի թիկունքը, հաստատվել Աղդամ-Մարտակերտ մայրուղու վրա գերիշխող բարձունքների վրա, դրանով իսկ նպաստել Մարտակերտ քաղաքի ազատագրմանը: Մտահղացված գործողությունն իրագործելու համար մարտիկների արիությունից ու պատրաստակամությունից բացի, անհրաժեշտ էր նաև խորամանկել հակառակորդին: Հանդուգն ու անսովոր գործողությունը, բոլոր մանրամասներով քննարկելուց հետո, Ռ. Գրիգորյանի և Վ. Ավագյանի հրամանատարությամբ երկու գումարտակները 1993 թ. հունիսի 16-ին, գիշերվա քողի տակ, անցան հակառակորդի պահակակետերի արանքով, շրջանցեցին ականապատ արգելափակոցները և հայտնվեցին թշնամու դասավորության խորքերում՝ Ալիմադաթլի, Մոլլալար ու Քյուրդլար գյուղերից անդին: Անմիջապես ճակատ կազմելով, հայ մարտիկները հինգ-վեց ուղղություններով ու փոթորկալի կրակ տեղալով, թիկունքից անակնկալ հարված հասցրին և խուճապի մատնեցին իր կենդանի ուժի և տեխնիկայի գերակշռությանն ապավինած թշնամուն:

Երկու օր անց, երբ հակառակորդն ուշքի եկավ, Շահբուլաղից սկսեց հրետակոծել Շուշիի ՊՇ դիրքերը, իսկ այնուհետև՝ գրոհի անցավ օդուժը:

Այդ ամենը, ինչպես նաև հերդառատ անձրևները չէին կարող խոչընդոտել հայկական ստորաբաժանումներին՝ զարգացնելու հաջողությունը և հակահարձակման անցնելու հյուսիսարևելյան ուղղությամբ՝ փոխհամագործակցելով Շահբուլաղի ու Փափրավենդի ուղղություններով գրոհող Ասկերանի և Կենտրոնական ՊՇ-ների հետ: Այս մարտական գործողությունը, նախադեպը չունենալով, մեծապես նպաստեց Մարտակերտ քաղաքի ազատագրմանը, քանի որ 819,7 նիշով բարձունքում (Թազախաչին-յալում) շրջապատման մեջ հայտնվելու սպառնալիքը ստիպել էր հակառակորդին թողնելու Մարտակերտը[248]: Ճնշվեցին նաև Մեծ Ջինլի, Ալիմադաթլի, Մոլլալար և Քյուրդլար գյուղերի թշնամական կրակակետերը[249]:

Պաշտպանական մարտերում հակառակորդը հետ շպրտվեց արևելյան ռազմաճակատի Փափրավենդ-Ղալայչիլար, իսկ հարավային ուղղությունում՝ Հադրութի ՊՇ բնագծերից անդին:

Ասկերանի ՊՇ մարտիկները կարևոր հաջողության հասան՝ ամրանալով Եղդիխրման բարձունքի վրա: Թշնամին ապարդյուն փորձում

[248] «Սարտիվ», 1993 թ., № 21:

[249] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 151, եր. 68 ա:

էր հաջողության հասնել Մարտունու և Մարտակերտի ՊՇ ուղղություններում, սակայն նրա բոլոր գրոհները կասեցվեցին: Հունիսի 26-ի վաղ առավոտյան հայ մարտիկները մտան Բոյահմեդլի:

Աղդամի ռազմագործողության ժամանակ ԻՊՈՒ ստորաբաժանումների ու զորամասերի հրամանատարների մասնագիտական աճի և զորքերի ղեկավարման ու մարտավարության կատարելագործման փաստը նշվել է նաև հրամանատարության կողմից: Ինչպես Պաշտպանության բանակի հրամանատարի «1993 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Ինքնապաշտպանության ուժերի մարտական գործողությունների արդյունքների մասին» հրամանում է արձանագրված՝ Աղդամի ռազմագործողության նախապատրաստման ու անցկացման գործում մեծ ավանդ ունեցան Ասկերանի, Մարտունու և Կենտրոնական ՊՇ-ների, ինչպես նաև կենտրոնական ենթակայության հրետանավորները, որոնք գործեցին հմտորեն ու գրագետ՝ դրանով իսկ նպաստելով հաջողությանը: Մշտապես զգալով ռազմամթերքի պակաս, հրետանավորները կարողացան հասնել առավելագույնին, շնորհիվ ճշգրիտ հասցված կրակային հարվածների և առկա միջոցների արդյունավետ օգտագործման: Հրամանատարների և շտաբների կազմակերպական մեծ աշխատանքի, մարտական գործողությունների փորձի կուտակման, մարտիկների զանգվածային հերոսության և անձնվիրության շնորհիվ Աղդամի ռազմագործողությունը հաջողվեց անցկացնել նվազագույն կարճ ժամկետում և ռազմաճակատի այս հատվածում ավարտել հակառակորդի լրիվ ջախջախումը[250]:

Փոխգնդապետ Տիգրան Դևրիկյանը ևս համամիտ է, որ Աղդամի ռազմագործողությունը պլանավորման, կրակի կառավարման, կրակային խոցման ասպարեզներում ոչ միայն կենտրոնական ենթակայության, այլև գնդային հրետանու բարձր մակարդակի հասնելու վկայությունն էր[251]:

Աղդամի ռազմագործողությունը ոգևորիչ ազդեցություն ունեցավ Արցախի ԻՊՈՒ մարտիկների վրա, բարձրացնելով նրանց մարտական ոգին և ամրապնդելով հավատը սեփական ուժերի նկատմամբ: Հրամանատարները ձեռք բերեցին մարտավարական հմտություններ և զորքերը ղեկավարելու փորձ: Հակառակորդից առգրավված մեծաքանակ

[250] ԼՂՀ պաշտպանության նախարարության արխիվ (այսուհետև՝ ԼՂՀ ՊՆԱ), ԻՊԿ նախագահի հրամանագրեր, գործ N 4, թ. 74:

[251] ***Դևրիկյան Տ.***, Աղդամի ազատագրումը, «Հայ զինվոր», թիվ 32, 2011 թ., էջ 10:

սպառազինությունը և տեխնիկան նշանակալիորեն համալրեցին ԻՊՈՒ զինանոցը: Այս ամենը, եթե հավելենք նաև Աղդամի վնասազերծումից ու ներքաղաքական հերթական լարվածությունից հետո Աղրբեջանին թեկուզ և կարճատև հրադադարի պարտադրումը, բնականաբար, բարենպաստ պայմաններ ստեղծեցին անհետաձգելի քայլեր ձեռնարկելու զորքերի մարտունակության, կարգապահության և, իհարկե, նոր վերահսկողության տակ առնված բնագծերում ամրապնդվելու ուղղությամբ:

Մասնավորապես, ինչպես նշված է վերոհիշյալ հրամանում, հուլիս-օգոստոսյան մարտական գործողություններում, ընդհանուր առմամբ, բոլոր ծառայություններն ու զորատեսակները հանդես բերեցին բավականին բարձր մակարդակ: Նկատելի էր շտաբներում աշխատանքի ոճի ու մեթոդների կատարելագործման միտում, շտաբայինների բարձր պատասխանատվություն և իրենց մասնագիտության մեջ հմտանալու ձգտում: Մեծ առաջընթաց է նկատվել մարտական գործողությունների առավել հիմնավոր նախապատրաստման ու պլանավորման ուղղությամբ[252]:

Հուլիսի երկրորդ կեսին ԼՂՀ ԻՊԿ շտաբը տեղափոխվել է նոր շենք և հիմնականում ավարտվել են ծառայությունների տեղավորումը, որոնք անցել են բնականոն գործունեության[253]: Շտաբի նախկին շենքում տեղավորվեց ԼՂՀ արտաքին գործերի նորաստեղծ նախարարությունը, փաստորեն, ստանձնելով ռազմական հաղթանակները դիվանագիտական ճակատում ամրապնդելու էստաֆետը:

Թեև դրականորեն են նշվել Աղդամի ռազմագործողության ժամանակ մեկական ինքնաթիռ և ուղղաթիռ ցած գցելու, ինչպես նաև ՀՕՊ տեխնիկայի մի շարք վերանորոգողական-կանխարգելիչ աշխատանքների, մասնավորապես ԲՄ-11 և ԲՄ-12 մեքենաների վերանորոգման ու մյուս սարքերի և համակարգերի անսարքությունների վերացման հաջողությունները, միաժամանակ, բարձրաձայնվել է Լեռնային Ղարաբաղի բարդ մակերևույթի պայմաններում տարբեր համակարգերի նորմալ գործունեության կարգավորման, փոխգործակցության ու փոխհամալրման ուղղությամբ մեծածավալ աշխատանք տանելու անհրաժեշտության մասին: Մասնավանդ, որ հենց այդ թերություններով էին պայմանավորված հակառակորդի ՌՕՈՒ հանկարծակի ու անպատիժ հարձա-

[252] Նույն տեղում, թ. 76:

[253] Նույն տեղում:

կումները, որոնք ուղեկցվում էին խաղաղ քաղաքների, գյուղերի ու ԻՊՈՒ դիրքերի ռմբակոծանիչ հարվածներով[254]:

Զգալի աշխատանքներ են կատարվել ինժեներական ծառայության գծով: Հաջողվել է նվազեցնել սեփական ու հակառակորդի ականների վրա կորուստներ կրելու դեպքերը, թեև եղածն էլ ոչ մի արդարացում չուներ: Աղդամի ռազմագործողության նախապատրաստման և բուն ընթացքի ժամանակ թույլ տրված սխալները հաշվի առնելով՝ խնդիր էր դրվում ընդլայնել կանխարգելիչ միջոցառումներն ու նախազգուշացումները, ինչպես նաև ականների որոնման ու ոչնչացման աշխատանքները:

Միաժամանակ արձանագրվել են ականազերծման մեծածավալ աշխատանքները Շելլի-Աղդամ, Մուղանլու-Աղդամ, Աղդամ-Գյոյթեփե ուղղություններով, ինչպես նաև «Պուշկեն-յալ»-Փափրավենդ-Շահբուլաղ տեղամասում և Աղդամի օդանավակայանի շրջանում: «Դրանից բացի այստեղ,- նշված է հրամանում,- սարքավորվել են երկարաժամկետ կրակակետեր և կրակային դիրքեր: Տարբեր ուղղություններով կարգի են բերվում և բացվում են ճանապարհներ զրահատեխնիկայի համար»[255]:

ԻՊՈւ հրամանատարությանը հուզել է նաև մարտի վարման ժամանակ զգոնության ու մարտական աչալրջության ուժեղացման հարցը, որի վկայությունն է դրա մասին հատուկ հրամանի ընդունումը: Այնտեղ, 1993 թ. առաջին կեսի մարտական գործողությունների վերլուծության հիման վրա, նշվում են թերությունները և չարդարացված կորուստները, հրամայվում է անհետաձգելի միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ[256]:

Թեև հուլիսի սկզբին հետախուզության առանձին ստորաբաժանումների հիման վրա ստեղծվել էր հետախուզական գումարտակ, բայց ՊԲ հրամանատարը գոհ չէր հետախուզությունից: Հրամանում նշվում էր, որ հնարավորությունների չափով չէր գործել ԻՊԿ հետախուզության բաժինը: «Հետախուզաորոնողական աշխատանք, գործնականում, չի տարվում: Հակառակորդի մասին տվյալները կամ ընդհանրապես բացակայում են կամ ստացվում են ուշացումով: Ոչ հստակ է կազմակերպված հետախուզության գործունեությունը պաշտպանական շրջաններում»[257]:

Դրան հակառակ, բավական հուսալի է գործել կապը՝ մարտում ստորաբաժանումները ղեկավարելու ժամանակ: Առկա սարքավորումներն օգտագործվել են գրագետ ու բանիմացաբար: Աղդամի կրակակետերի ճնշման ժամանակ մեծ օգնություն է ցուցաբերել ռադիոէլեկտրոնային պայքարի դասակը: Մասնավորապես կազմակերպվել է շուրջօրյա մարտական հերթապահություն և ակտիվ աշխատանք է տարվել հակառակորդի զորքերի ղեկավարման ժամանակ կապի կազմալուծման նպատակով հիմնական օբյեկտների ճնշման ուղղությամբ[258]:

Հրամանում շեշտվում է բաց ռադիոփոխանակումների ժամանակ գաղտնիության ռեժիմի բարձիթողի վիճակը, որն արտահայտվել է միանգամայն գաղտնի տեղեկույթը բաց տեքստով հաղորդելու դեպքերով: Դրանից բացի, ցավով է արձանագրվում, որ ռադիոեթերը զբաղեցվում է գործին չվերաբերող խոսակցություններով[259]:

Նշվել է նաև վերանորոգողների փառավոր աշխատանքը: Հուլիս-օգոստոս ամիսներին նրանք վիթխարի աշխատանք են կատարել զրահատեխնիկայի, ավտոփոխադրամիջոցների ու սպառազինության նորոգման և վերականգնման ուղղությամբ: Մասնավորապես վերանորոգվել է 19 միավոր S-72 տանկ, 56 միավոր ՀՄՄ-1, ՀՄՄ-2, ՄՎՏՍ[260], 4 միավոր «Գրադ» կայանք, 75 միավոր ԿԳՏ[261], ԴՇԿ[262], ՊԳՍ[263], «Ուտյոս» տիպի գնդացիրներ: Անմիջապես մարտական դիրքերում մեծածավալ աշխատանքներ են տարել արտագնա բրիգադները՝ տեղում վերանորոգելով 18 միավոր S-72 տանկ և 16 միավոր ՀՄՄ-1, ՀՄՄ-2[264]:

Անբավարար է համարվել կազմզորահավաքային բաժնի աշխատանքը: Մասնավորապես նշվել է, որ դեռևս չեն զորակոչվել բոլոր այն անձինք, որոնք պատերազմական ժամանակ ենթակա են զորակոչի: Տարբեր պատճառներով զինապարտությունից ազատված քաղաքացիները ոչ միշտ են ունենում համապատասխան փաստաթղթեր, իսկ

[254] Նույն տեղում, թ. 77:
[255] Նույն տեղում:
[256] Նույն տեղում, թ. 60:

[257] Նույն տեղում, թ. 77:
[258] Նույն տեղում, թ. 78:
[259] Նույն տեղում:
[260] Մարտական վերանորոգողական-տարհանման մեքենա:
[261] Կալաշնիկովի գնդացիր տանկի
[262] Դեգտյարևի, Շպագինի, Կալաշնիկովի խոշոր տրամաչափի գնդացիր
[263] Կալաշնիկովի գնդացիր արդիականացված
[264] Նույն տեղում:

նրանք, ովքեր ունեն, հաճախ հնացած են բժշկական հանձնաժողովի հետազոտման վաղեմության առումով[265]:

Հաջողությունների ու թերությունների վերհանումը ԻՊՈՒ հրամանատարությանը հնարավորություն է ընձեռում անհետաձգելի միջոցներ ձեռնարկել դրականը զարգացնելու, իսկ բացասականը վերացնելու ուղղությամբ: Այդ իսկ նպատակով ՊԲ հրամանատարի տեղակալներին, ՊՇ-ների ու գումարտակների հրամանատարներին հրամայվել է խիստ միջոցներ ձեռնարկել զինվորական կարգապահության հետագա ամրապնդման, առկա թերությունների շտկման, զորամասերի մարտունակության բարձրացման ուղղությամբ և սեղմ ժամկետում ՊԲ շտաբ ներկայացնել զորատեսակների ու ենթակա ստորաբաժանումների մարտունակության մասին տեղեկանք: ՊԲ շտաբի կապի պետին հրամայվում է վերահսկողության տակ վերցնել գաղտնի տեղեկությունների հաղորդումը, պայքար ծավալել ալիքների փակման և ռադիոփոխանակումների ժամանակ գաղտնիության պահպանման համար[266]:

Աղդամի կրակակետերի ճնշումը, հակառակորդին ստիպելով մի առ ժամանակ դադարեցնել մարտական գործողությունները, հնարավորություն տվեց ի հակակշիռ Ադրբեջանի ռազմական նախապատրաստությունների, ավելի մեծ ուշադրություն հատկացնել բանակաշինության գործընթացին: ԻՊԿ նախագահի 1993 թ. հուլիսի 28-ի հրամանով հրահանգվում էր ուժեղացնել ռազմաճակատի պաշտպանական համակարգը՝ շեշտադրելով հատկապես Աղդամի շրջանում անհետաձգելի միջոցառումները: Այսպես, 3-րդ ՊՇ-ը խնդիր ստացավ զրահատեխնիկայով ու հրետանիով ուժեղացված ստորաբաժանումներով պաշտպանությունն ամրապնդել Գյոյթափա-Աղդամ բ՚ազծում՝ հակառակորդի ճեղքման փորձերը հետ մղելու նպատակով[267]: Հրամայվում էր պատրաստականության բերել ՊՇ-ի հրետանին, հակատանկային ռեզերվը, հրաձիգ-հակաօդայիններին, բարձրացնել համազորային պահեստազորի մարտական պատրաստականությունը հանկարծահաս խնդիրների լուծման համար[268]:

Անշուշտ, նման միջոցներ ձեռնարկվեցին նաև մյուս պաշտպանական շրջաններում: Առանձնապես հատակեցվեցին ու վերանայվեցին նրանց օպերատիվ-մարտավարական խնդիրները, քայլեր ձեռնարկվե-

[265] Նույն տեղում, էջ 79:
[266] Նույն տեղում:
[267] ԼՂՀ ՊՆԱ, Մարտական հրամաններ և մարտական կարգադրություններ, գործ N 38, թ. 36:
[268] Նույն տեղում, թթ.36-37:

ցին հարևան ստորաբաժանումների միջև փոխգործակցության և նրանց պաշտպանական հատվածների ամրաշինական կառույցների կատարելագործման, ռազմագործողություններում շրջանային ուժերի ու միջոցների, պահեստազորի նպատակային օգտագործման ուղղությամբ: Ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ համալրումը, թեև հիմնականում կատարվում էր հակառակորդից առգրավված ռազմավարի միջոցով, բայց բավարարում էր ընթացիկ խնդիրների լուծման պահանջները:

Այս ձեռնարկումները, կազմելով 1992 թ. օգոստոսի 14-ին սկիզբ առած Արցախի ինքնապաշտպանության ուժերը բանակային կառույցների վերակազմակերպման գործընթացի բաղկացուցիչ մասը, եզրափակվեցին ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեի(ՊՊԿ) 1993 թ. նոյեմբերի 10-ի համապատասխան որոշմամբ[269]: ԻՊՈՒ հաճոզիչ հաղթանակները ռազմաճակատներում, անվտանգության գոտու ստեղծումը ԼՂՀ շուրջ լուրջ հիմքեր էին միջազգային իրավական չափանիշներին համապատասխանող կանոնավոր զինված ուժեր ստեղծելու համար, ինչը պայմանավորված էր նաև պատերազմի բնույթով ու ծավալների ընդլայնմամբ, ինչպես նաև մարտական նոր ու ավելի բարդ խնդիրների առաջադրմամբ[270]: Այդ որոշմամբ ՊԲ հրամանատարությանը հանձնարարվել է սեղմ ժամկետում ՊՊԿ հաստատմանը ներկայացնել Պաշտպանության բանակի կառուցվածքը: Այն ներկայացվեց ու ՊՊԿ նախագահի կողմից հաստատվեց 1994 թ. հունվարի 4-ին[271]:

Այսպիսով, Աղդամի ռազմահենադաշտի վնասազերծումը ունեցավ ոչ միայն ռազմաքաղաքական կարևոր նշանակություն, այլ նաև դրականորեն ազդեց Արցախում ռազմական շինարարության գործընթացի վրա, նպաստելով ինքնապաշտպանության ուժերը ժամանակակից բանակային կառուցվածքի փոխակերպելուն, ինչը կանխորոշեց 1993-1994 թթ. ձմեռային ռազմարշավի ծանր պաշտպանական մարտերի, ապա և ՊԲ հակահարձակողական գործողությունների հաջողությունը:

Մարտակերտ քաղաքի շրջանում և Աղդամի ռազմական հենադաշտում հակառակորդի հարվածային ուժերի ջախջախումը, ԼՂՀ ԻՊՈՒ-ի

[269] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. N 33, որոշում N 323:
[270] *Հարությունյան Մ.*, Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին, էջ 129:
[271] ԼՂՀ կառավարության արձանագրային բաժին, ԼՂՀ ՊՊԿ նախագահի որոշումները. Արձ. N 36, որոշում N 357:

կողմից նպաստավոր բնագծերի զբաղեցումը տիրապետող բարձունքների վրա Ստեփանակերտի ու Մարտակերտի օպերատիվ ուղղություններում կանխարգելեցին հակառակորդի ակտիվ գործողությունները, միաժամանակ անվտանգ դարձնելով ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանագիծը: Հակառակորդի հարձակման միակ հնարավորությունը օդուժն էր, սակայն ԼՂՀ հակաօդային պաշտպանության արդյունավետության բարձրացումը, ՀՕՊ միջոցների կատարելագործումը և հակաօդայինների մասնագիտական վարպետության բարձրացումը կաշկանդում էին հակառակորդի գործողությունները նաև օդում: Ստեղծված պայմաններում հակառակորդի նոր ակտիվացումն սպասելի էր հարավարևելյան և հյուսիսային ճակատագծում, քանի դեռ մարտունակ էին Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Զանգելանի ռազմական խմբավորումները: Փոխվրեժի նպատակով աղրբեջանական հրամանատարությունը հարվածի հիմնական ծանրությունը փոխադրեց հենց հիշյալ օպերատիվ ուղղությունը: Դա դժվար չէր կռահել, քանի որ Մարտունու ուղղությունը, Աղդամի հենադաշտի կորստից ու այնտեղ գտնվող մարտունակ խմբավորման պարտությունից հետո, այլևս չէր կարող գայթակղել հակառակորդին կամ հաջողության հույս ներշնչել: ԻՊՈՒ մեծ ուժերի ու միջոցների առկայությունը Աղդամի և Մարտակերտի ուղղություններում հակառակորդին զրկում էր հակահարձակման անցնելու հնարավորությունից, իսկ Օմարի և Լաչինի ուղղություններում հակառակորդի առաջխաղացման բոլոր փորձերը կասեցվեցին: Հադրութի ՊՇ ուղղությամբ հակառակորդի ակտիվացումը պայմանավորված էր նաև այստեղ աղրբեջանական մեծ ուժերի առկայությամբ և հետագա կենտրոնացմամբ, ինչպես նաև հայկական ուժերի պաշտպանության ճակատագծի ձգվածությամբ, ինչը հույս էր տալիս թշնամուն մի որևէ հատվածում ճեղքում կատարելու:

ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարությունն իր հերթին շահագրգռված էր Հադրութի ՊՇ-ում պաշտպանական համար մարտերով հյուծել հակառակորդի հարվածային խմբավորումներին, անցնել վճռական հակահարձակման ու լուծել հանրապետության հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգության խնդիրը, որը ծառացած էր դեռևս 1992 թ. աշնանային ռազմարշավից ի վեր:

Ինչպես և սպասվում էր Աղդամի խմբավորման պարտությունից հետո, հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ կուտակեց Ֆիզուլու և Ջաբրայիլի շրջաններում՝ դրանով իսկ հարվածի գլխավոր ուղղությունը տեղափոխելով ԼՂՀ հարավարևելյան ու արևելյան շրջանները[272]:

Խախտելով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմանի համաձայնության պայմանները՝ հակառակորդը ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով շարունակում էր հայկական պաշտպանական դիրքերի հրթիռահրետանակոծությունները: Հակառակորդը համառ, բայց ապարդյուն ջանքեր էր գործադրում Հադրութի ՊՇ Բախտիզ լեռան, Գովշաթլուի, Կավաք բարձունքի, Խծաբերդի և Մեծ Թաղերի ուղղություններում նպաստավոր բնագծերի տիրելու նպատակով[273]: Հակառակորդը ձախողման էր դատապարտված նաև ռազմաճակատի այլ հատվածներում՝ Նովրուզլուի, Յուսիֆջանլուի, Քենգերլի-Մաքսուդլու գծի երկայնքով[274]:

Այսպիսով, հակառակորդն անընդհատ լարված էր պահում իրադրությունը հակամարտության գոտում՝ չդադարող հրթիռահրետանակոծություններով ու հարձակումներով ստիպելով ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումներին պատասխան գործողությունների դիմել, ընդհուպ մինչև թշնամու կրակակետերի վնասազերծումը:

Արցախի հարավային սահմաններին մշտապես սպառնացող հակառակորդի ռազմական հենակետերի վնասազերծման օպերացիաները ռազմարվեստի տեսանկյունից վերահմաստավորելու անհրաժեշտությունն ավելի քան հրատապ է ինչպես Պաշտպանության բանակի առաջավոր փորձի ընդհանրացման, այնպես էլ մեր տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության սրման պայմաններում Հայաստանի Հանրապետության ու Արցախի անվտանգային-պաշտպանական համակարգում հնարավոր մարտական գործողությունների ռազմավարությունն ընտրելու համար գիտատեսական հիմքեր ստեղծելու առումներով:

Արդեն առիթ ունեցել ենք ռազմագիտորեն քննության առնելու ռազմաճակատի հարավային ուղղությունում 1993 թ. ամառային ռազմարշավի օպերացիաները և ներկայացնել դրանց մարտավարական առանձնահատկությունները[275]: Առաջադրված նպատակին հասնելու

[272] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л. (Инв. № 15/2-9), Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 74:

[273] «Մարտիկ», 1993 թ., № 21:

[274] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 96 л., РТ № 150 (23.11.1996 г.), н. 16.07.93 г. - ок. 25.10.93 г., л. 33-37:

[275] ***Հարությունյան Մ.,*** Արցախի պաշտպանության հարավային թևում 1993 թ. ամառային ռազմարշավի մարտավարական առանձնահատկությունների մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», մասիս-օգոստոս, 2020, №2 (659), էջ 25-46:

համար խնդիր ենք ունեցել ներկայացնել, մասնավորապես, Արցախի հարավային սահմաններին մշտապես սպառնացող Ջաբրայիլի, Ֆիզուլիի, Կուբաթլուի ռազմական հենակետերի վնասազերծման նպատակով պլանավորված ու հաջողությամբ իրականացված օպերացիաները, դրանց մարտավարական առավել կարևոր յուրահատկությունները, մտահղացումների հնարամտորեն իրականացման եղանակները և հակառակորդի գերակշիռ ուժերին պարտության մատնելու ոչ դյուրին գործում ՊԲ ռազմիկների անհատական որակների ու բարոյահոգեբանական գերազանցության նշանակությունը:

Թեմայի պատմագրությանն անդրադառնալով՝ կարող ենք փաստել, որ հիմնախնդիրը նման առաջադրմամբ, ըստ էության ու գիտականորեն ուսումնասիրված չէ: Արցախյան պատերազմի մասին գրած հեղինակները շոշափել են վերոհիշյալ օպերացիաների առանձին դրվագները և, մեծամասամբ, ռազմաքաղաքական տեսաննյունները: Իսկ դա, բնականաբար, բավարար համարել չենք կարող, մանավանդ, որ նորահայտ բազմաթիվ փաստեր արդեն հնարավորություն են ընձեռում նորովի շարադրելու խնդրո առարկա օպերացիաները, ավելի հանգամանորեն անդրադառնալու հատկապես Արցախում ռազմարվեստի զարգացման գործում դրանց ունեցած նշանակությանը: Կարծում ենք, որ խնդրո առարկա թեմայի պատմագրության հակիրճ ներկայացումը հնարավորություն կընձեռի որոշարկել տողերիս հեղինակի տեղը հիմնախնդրի ուսումնասիրության ոլորտում:

Հարավային ուղղությամբ իրականացված ռազմագործողություններին անդրադարձել է ՊԲ լրատվական ծառայության (2001-ից՝ լրատվության և քարոզչության բաժնի) պետ Սեւոր Հասրաթյանը[276]: Նշված աշխատանքներն ավելի շատ քարոզչական, ճանաչողական-տեղեկութային բնույթ են կրում, օպերացիաները ներկայացված են մակերեսայնորեն, բազմաթիվ անհարկի կրկնություններով, նկարագրություններում հաճախ քաղաքական բաղադրիչը գերազանցում է ռազմականին, բացակայում են ռազմագիտական վերլուծությունները և փաստերի հիման վրա արված եզրակացությունները: Որպեսզի մեր գնահատականներն ավելի առարկայական լինեն, բերենք դրանք հաստատող օրինակ-

[276] *Հասրաթյան Մ.,* Գոյամարտ (ԼՂՀ պաշտպանության բանակի մարտական ուղու պատմության համառոտ ուղեցույց), Ս., 1998, *նույնի՝* Ղարաբաղյան պատերազմ, Ե., 2001, *նույնի՝* Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ս., 2008, *նույնի՝* Արցախյան ճակատում (1991 թ. ապրիլ-2016 թ. ապրիլ), Ե., 2018 և այլն:

ներ: Ներկայացնելով հարավային ուղղությամբ իրականացված օպերացիաներում ՊԲ հրետանու դերը՝ Մ. Հասրաթյանը գրել է. ««...» շնորհիվ նրանց կողմից իրականացված ճշգրիտ կրակային աջակցության, ինքնապաշտպանական ուժերը մեկը մյուսի հետևից ոչնչացրին Ֆիզուլու, Ջեբրայիլի, Ղուբաթլուի, Ջանգելանի, Հորադիզի շրջաններում տեղակայված թշնամական հենակետերը և Արցախի պետական սահմանը հասցրին մինչև Արաքս գետը»[277] (շարահյուսությունը և տեղանունների ուղղագրությունը՝ բնագրային են.- Մ. Հ.): Մեջբերված տողերը և ռազմագործողության արդյունքը, որ հեղինակը համարել է սահմանների անվտանգության բարձրացումը և ՊԲ նյութատեխնիկական բազան ռազմավարի հաշվին համալրելը, նույնությամբ կրկնվել են նաև նրա այլ հրատարակություններում[278]:

Անհարկի կրկնությունների և ակնհայտ մակերեսայնության վկայություն է նաև հետևյալ անդրադարձը. «Այն իր շարունակությունն ունեցավ նաև օգոստոսից մինչև հոկտեմբերի վերջերը ռազմաճակատի հարավարևելյան և հարավային ուղղություններում իրականացված մարտական գործողությունների ընթացքում, երբ մեկը մյուսի հետևից հայկական ուժերը վնասազերծում էին Ֆիզուլիի, Ջեբրայիլի, Ղուբաթլուի, Ջանգելանի և Հորադիզի տարածքներում տեղաբաշխված թշնամական ռազմահենակետերը»: Հակաօդայինների ներդրումն այդ օպերացիաներում արտահայտված է «Ֆիզուլի քաղաքի մերձակայքում» «երկու (օգոստոսի 16-ին և 17-ին), իսկ Ստեփանակերտի երկնքում՝ մեկ (օգոստոսի 31-ին) ինքնաթիռ» ոչնչացնելու փաստի արձանագրմամբ[279]:

Այդ օպերացիաները գիտականորեն փորձել ենք ներկայացնել մեր ատենախոսությունում[280], ինչպես նաև առանձին հրապարակումներում[281]:

[277] *Հասրաթյան Մ.,* Պաշտպանության բանակի հրթիռահրետանային և հակաօդային պաշտպանության զորքերը Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ս., 2009, էջ 40:

[278] *Հասրաթյան Մ.,* Պաշտպանության բանակի զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ս., 2010, էջ 75, հմմտ. 2-րդ հրատ. 2014, էջ 75 և այլն:

[279] *Հասրաթյան Մ.,* Պաշտպանության բանակի հրթիռահրետանային և հակաօդային պաշտպանության զորքերը Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 96, հմմտ. *Հասրաթյան Մ.,* Պաշտպանության բանակի զորատեսակները, ծառայությունները և առանձին ստորաբաժանումները Ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 126, ինչպես նաև 2-րդ հրատ., էջ 125-126:

[280] *Հայրապետյան Մ., Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտաստ. աստիճանի հայցման ատենախոսություն, Ե., (պահվում է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի գիտական և Հայաստանի ազգային գրադարաններում),* 2001, էջ

Խնդրո առարկա օպերացիաների մանրամասներին անդրադարձել են դրանց պլանավորմանն ու իրականացմանն անմիջապես մասնակցած ռազմական բարձրաստիճան առանձին գործիչներ կամ նրանց մասին պատմող հեղինակները: Հատկանշելի են ՀՀ և ԼՂՀ ռազմական գերատեսչությունը ղեկավարած Ս. Սարգսյանի և Ս. Օհանյանի հեղինակությամբ լույս տեսած և գեներալ-լեյտենանտներ Մ. Գրիգորյանի, Ս. Բաբայանի և այլոց մասին պատմող կենսագրական ու հուշագրական բնույթի գրքերը[282]: Նշվածներից միայն Ս. Բաբայանին նվիրված գրքում ենք հանդիպում հարավային ուղղությունում 1993 թ. ամառային ռազմարշավի օպերացիաների հանգամանալից նկարագրությունը, ինչը կարևորվում է դրանց մտահղացման, պլանավորման ու իրականացման վերաբերյալ մի շարք ուշագրավ տեղեկություններով:

Ընդհանրական ու հանրահայտ տեղեկությունների վերարտադրությամբ, իսկ աղրբեջանցիների դեպքում նաև իրականության նենգափոխմամբ հանդես են եկել մի շարք հեղինակներ[283], որոնք, ցավոք, ըստ

119-125, հմմտ. ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Գեամա» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 150-157:

[281] ***Հարությունյան Մ.,*** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատագրական մարտերը 1993 թ. օգոստոսին, Երիտասարդ գիտաշխատողների 27-րդ նստաշրջանի զեկուցումների հիմնադրույթներ, Ե., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, էջ 40-42, ***Հարությունյան Մ., Խաչատրյան Հ.,*** Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Կուբաթլուի ռազմական գործողություն 1993, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994: Հանրագիտարան 1 հատորով, Ե., Հայկական Հանրագիտարան. հրատ., էջ 697-699, ***Արտեմյան Մ.,*** Азербайджан-НКР: краткая история военного конфликта, «Вестник» Университета Месроп Маштоц (сборник научных статей), С., 2009, № 3, с. 56, ***Հարությունյան Մ.,*** Հակառակորդի չդադարող սադրանքները (օգոստոս. 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս, 1999 թ., № 33, ***նույնի*** Պատմական հողերի ազատագրումը (օգոստոս. 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս, 1999 թ., № 34, ***նույնի*** Ռազմաճակատի հարավարևելյան ուղղությունում Արցախի ինքնապաշտպանության ուժերի հակահարձակումը հրահրված էր աղրբեջանցիների կողմից, «Մարտիկ», 14-21 օգոստոս, 2004 թ., № 35 և այլն:

[282] ***Սարգսյան Ս.,*** Հայկական բանակ (Բանակը մեր ժողովրդի և պետության անվտանգության գրավական է), Ե., 2002, էջ 19, 58, ***Օհանյան Ս.,*** Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (համառոտ ուրվագիծ), Ե., 2012, էջ 141-144, ***Հակոբյան Հ.,*** Զորավարը, Ե., 2006, էջ 23-24, ***Հակոբյան Հ.,*** Զորավարը, գիրք 2-րդ, Ե., 2013, էջ 62-66, ***Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.,*** Հաղթանակներն ինչպես եղել են. ազգականչը 44, Ե., 2008, էջ 126-137:

[283] ***Арутюнян В.,*** События в Нагорном Карабахе. Хроника, часть V. Январь 1993 г.- июль 1995 г., Е., Из-во «Гитутюн» НАН РА, 1997, с. 171-184, ***Ազրաեանեան Հ.,*** Մարտնչող Արցախը, գիրք Գ (1985-2000), Ս., 2007, էջ 88-90, 497-500, ***Հակոբյան Թ.,*** Վանաչ և սև. Արցախյան օրագիր, Թ., 2008, էջ 254-256 և 561-562, նաև. 7, ***Հովհաննիսյան Ա.,*** Բանակաշինությունը Հայաստանի երրորդ հանրապետությունում, Ե., 2015, էջ 121-128, ***Жирохов М.,*** Карабах: земля раздора, К., 2009, с. 88-90, Араслы Дж., Армяно-азербайджанский конфликт (военный аспект), Б., 1995, с. 41-43:

էության չեն նպաստել խնդրո առարկա հիմնախնդրի գիտական մշակմանը:

1993 թ. ամառային ռազմարշավի հիմնական ուղղության փոփոխման նախադրյալները

Ջաբրայիլի, Ֆիզուլիի և Կուբաթլուի օպերացիաների անհրաժեշտությունը հասկանալու համար, նախ ներկայացնենք 1993 թ. ամառային ռազմարշավի հիմնական ուղղության փոփոխման նախադրյալներն ու շարժառիթները: Մարտակերտ քաղաքի շրջակայքում և Աղդամի ռազմական հենաղաշտում հակառակորդի հարվածային խմբավորումների ջախջախման, տիրապետող բարձունքների վրա նպաստավոր բնագծերի զբաղեցման շնորհիվ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը Ստեփանակերտի ու Մարտակերտի օպերատիվ ուղղություններում կանխարգելեցին հակառակորդի ակտիվ գործողությունները՝ միաժամանակ անվտանգ դարձնելով ԼՂՀ հյուսիսարևելյան սահմանագիծը: Թվում էր, թե հակառակորդի հարձակման միակ հնարավորությունը մնացել էր օդուժը, սակայն ԼՂՀ հակաօդային պաշտպանության արդյունավետության բարձրացումը, ՀՕՊ միջոցների կատարելագործումը և հակաօդայինների մասնագիտական վարպետության բարձրացումը կաշկանդում էին հակառակորդի գործողությունները նաև օդում: Ստեղծված պայմաններում հակառակորդի նոր ակտիվացումն սպասելի էր հարավարևելյան և հարավային ճակատագծում, քանի դեռ մարտունակ էին Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Ջանգելանի ռազմական խմբավորումները: Փոխվրեժի նպատակով աղրբեջանական հրամանատարությունը հարվածի հիմնական ծանրությունը փոխադրեց հենց հիշյալ օպերատիվ ուղղությունը: Հիրավի, դա դժվար չէր կռահել, քանի որ Մարտունու ուղղությունը, Աղդամի հենաղաշտի կորստից ու այնտեղ գտնվող մարտունակ խմբավորման պարտությունից հետո, այլևս չէր կարող գայթակղել կամ հաջողության հույս ներշնչել հակառակորդին: ԻՊՈՒ բավարար քանակությամբ մարտունակ ուժերի ու միջոցների առկայությունն Աղդամի և Մարտակերտի ուղղություններում հակառակորդին զրկում էր հակահարձակման անցնելու հնարավորությունից, իսկ Օմարի և Լաչինի ուղղություններում աղրբեջանական զինված ուժերի առաջխաղացման բոլոր հուսահատ փորձերը կասեցվեցին:

Հադրութի Պաշտպանական շրջանի ուղղությամբ հակառակորդի նոր ակտիվացումը պայմանավորված էր նաև Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի և Զանգելանի շրջաններում ադրբեջանական մեծաքանակ ուժերի առկայությամբ և հետագա կենտրոնացմամբ, ինչպես նաև հայկական ուժերի պաշտպանության ճակատագծի ձգվածությամբ, ինչը մի որևէ հատվածում ճեղքում կատարելու հույս էր տալիս թշնամուն:

ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարությունն իր հերթին շահագրգռված էր Հադրութի ՊՇ-ում պաշտպանական հատառ մարտերով հյուծելու հակառակորդի հարվածային խմբավորումներին, անցնելու վճռական հակահարձակման ու լուծելու հանրապետության հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Լաչինի մարդասիրական միջանցքի անվտանգության խնդիրը, որ ծառացած էր դեռևս 1992 թ. աշնանային ռազմարշավից ի վեր:

Ինչպես և սպասվում էր Աղդամի խմբավորման պարտությունից հետո, հակառակորդը վիթխարի կենդանի ուժ և միջոցներ կուտակեց Ֆիզուլու և Ջաբրայիլի շրջաններում՝ դրանով իսկ մատնելով հարվածի գլխավոր ուղղությունը ԼՂՀ հարավարևելյան ու հարավային շրջանները տեղափոխելու իր մտահղացումը: Դա արդեն ակնհայտ էր, որովհետև խախտելով կրակի դադարեցման վերաբերյալ երկկողմանի համաձայնության պայմանները՝ հակառակորդը ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով շարունակում էր հայկական պաշտպանական դիրքերի և խոր թիկունքում գտնվող խաղաղ բնակավայրերի հրթիռահրետանակոծությունները:

Հակառակորդը հատառ, բայց ապարդյուն ջանքեր էր գործադրում Հադրութի ՊՇ Բախտիզ լեռան, Գովշաթլուի, Կավաք բարձունքի, Խծաբերդի և Մեծ Թաղերի ուղղություններում նպաստավոր բնագծերի տիրելու նպատակով, ինչը հնարավորություն կտար Աղրբեջանի ԶՈՒ հարավային խմբավորմանը դուրս գալ նպաստավոր օպերատիվ-մարտավարական բնագծեր[284]:

Նմանապես հակառակորդը ձախողման էր դատապարտված նաև ռազմաճակատի այլ հատվածներում՝ Նովրուզլուի, Յուսիֆջանլուի, Քենգերլի-Մաքսուդլու գծի երկայնքով[285]:

Այսպիսով, ինչպես արդեն նշել ենք, հակառակորդն անընդհատ լարված էր պահում իրադրությունը ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ չդադարող հրթիռահրետանակոծություններով ու արտագրոհներով շոշափելով ԻՊՈՒ մարտակարգերի խոցելի հատվածները՝ դրանով իսկ ըստ ամենայնի ստիպելով ԻՊՈՒ ստորաբաժանումներին պատասխան գործողությունների դիմել, ընդհուպ մինչև թշնամու կրակակետերի վնասազերծումը:

Հետ մղելով թշնամու հրթիռահրետանային ու հետախուզական շարժունակ խմբերի հարձակումներով ուղեկցվող ուժեղ ճնշումը՝ ԻՊՈՒ ստորաբաժանումները հակահարձակման անցան հարավային ռազմաճակատի ամբողջ գծի երկայնքով՝ նպատակ ունենալով ազատագրել Հադրութի շրջանի բռնազավթված բնակավայրերը և ճնշել հակառակորդի կրակակետերը:

Հադրութի շրջանի հարավում ԻՊՈՒ հակահարձակման մարտավարության առանձնահատկությունները

ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումների ընդհանուր հակահարձակումը Հադրութի շրջանի հարավում սկսվեց 1993 թ. օգոստոսի 15-ին[286]: Ադրբեջանցի ռազմական փորձագետը, ջանալով ԼՂՀ ԻՊՈՒ հակազդեցությունը ներկայացնել որպես նախահարձակում՝ այն դրել է օգոստոսի 11-ի տակ[287]: Հրետանային նախապատրաստությունից հետո, ԻՊՈՒ զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակման անցան օպերացիայում ներգրավված ստորաբաժանումները: Հետախուզական և 11-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակների համահավաք խմբի նախապես անցկացրած դիվերսիոն արտագրոհը Քարագլուխ գյուղում տեղակայված հակառակորդի վաշտի հենակետի ուղղությամբ, պսակվեց հաջողությամբ: Ինչպես կենդանի ուժի, այնպես էլ տեխնիկայի կորուստներ կրած հակառակորդը ստիպված էր ճողոպրել Քարագլուխ գյուղից: Սակայն, ազատագրված բնագծերը պահելու և ամրապնդելու համար ուղարկված 11-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը (ԱՄՀԳ) թողեց պահակակետերը, ինչից անմիջապես օգտվեց հակառակորդը և զբաղեցրեց նախկին դիրքերը[288]: Կենտրոնական պաշտպանական շրջանի (ԿՊՇ) ստորաբաժանումները տիրեցին Բանագուր (Բանաձոր) գյուղից հյուսիս ընկած 1042,0, 1139,4, 1008,5, 1004,0, 1064,0 նիշերով

[284] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 74:
[285] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ № 150, л. 33-37:

[286] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 75:
[287] *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 41:
[288] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4, Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 75:

բարձունքներին: Դրանից ընդամենը 20 րոպե անց 12-րդ ԱՄՀԳ դուրս եկավ 805,4 նիշով բարձունքի բնագիծը: 14-րդ և 15-րդ ԱՄՀԳ-ները գրագետ տարաշարժով շրջանցելով Մենգելենաթա (նիշ 720,3) բարձունքը՝ դուրս եկան հակառակորդի թիկունքը՝ 467,5 ու 467,0 նիշերով բարձունքների բնագիծը: 6-րդ ՊԾ ստորաբաժանումները Շիշղաղ լեռան (նիշ 1314.4) ելման բնագծից օգոստոսի 15-ին առաջխաղացում սկսեցին Ցոր, Բանաձոր, Առաքել գյուղերի ուղղությամբ: Մարտերի առաջին օրը նրանց հաջողվեց ազատագրել Ցոր գյուղը և Բանաձորից հյուսիս ընկած մի քանի բարձունքներ: Հաջորդ օրը հաջողվեց ազատագրել Բանաձոր գյուղը և ճնշել հակառակորդի մի քանի կրակակետ:

ԻՊՈՒ հակահարձակման ձախ թևում Մարտունու ՊԾ 21-րդ և 22-րդ ԱՄՀԳ-ները մարտերով առաջացան Վերին Ցաղլավենդ բնակավայրի ուղղությամբ, որի շուրջ, բարձունքներում հարկադրված խոր պաշտպանության էր անցել աղրբեջանական 831-րդ ԱՄՀԳ-ը: Օգոստոսի 15-ին Մարտունու ՊԾ մոտոհրաձգային ստորաբաժանումները մտան Վերին Ցաղլավենդ և Կարամամեդլի գյուղերում սարքավորված աղրբեջանական բանակի հենակետերը, ինչպես նաև տիրեցին Դովլաթյարլը բնակավայրի վրա գերիշխող բարձունքներին: Մարտունու ՊԾ 23-րդ և 24-րդ ԱՄՀԳ-ները միաժամանակ հակահարձակում ձեռնարկեցին Ներքին Վեյսալու գյուղի ռազմական հենակետի ուղղությամբ և վերահսկողություն հաստատեցին այնտեղ: Այնուհետև, շարունակելով առաջխաղացումը, հայ մարտիկները տիրեցին Նամազչալա լեռանը (նիշ 348,5) ու Կոբու Դիլաղարդա գյուղի կաթնապրանքային ֆերմային (ԿԱՖ): Իսկ այդ գյուղում տեղակայված աղրբեջանական բանակի ստորաբաժանումները, հայտնվելով 23-րդ և 24-րդ գումարտակների և աջից գրոհող 21-րդ և 22-րդ գումարտակների արանքում, առանց լուրջ դիմադրության փախուստի դիմեցին: Հայ մարտիկները տիրեցին նաև Քարվենդի մոտակա՝ 318,0 նիշով բարձունքին:

Հետախուզական տվյալների վերլուծությունից հայտնի դարձավ, որ հայկական զորամասերի առաջխաղացումը կանգնեցնելու նպատակով, հակառակորդը մարտական տագնապով ոտքի է հանել Ջաբրայիլի, Ֆիզուլու, Կուբաթլուի, Ջանգելանի հենաղաշտերում կենտրոնացված բոլոր զինված ուժերը[289]: Իրացնելով այդ օպերատիվ տեղեկույթը և վերաղասավորելով կենդանի ուժն ու միջոցները՝ ԻՊՈՒ հրամանատա-

[289] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ № 150, л. 45:

րությունը շարունակեց զարգացնել հաջողությունը նշված օպերացիոն ուղղություններում: Մասնավորապես, Հադրութի ՊԾ ստորաբաժանումները մարտական գործողություններ սկսեցին Սուլեյմանլուի ուղղությամբ, իսկ Մարտունու և Շուշիի ՊԾ ստորաբաժանումները համապատասխանաբար ձախ և աջ թևերում նպաստավոր բնագծեր էին գրաւեցնում հարձակման անցնելու համար: Թերևս այդ վերախմբավորումներով պայմանավորված՝ ընդհանուր առմամբ, մարտերի թափն օրվա ընթացքում նկատելիորեն թուլացավ: Հայ մարտիկների հաջողություններն ստիպեցին Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությանը վերստին հրադադար աղերսել, ինչը, սակայն թելադրված էր ոչ թե աղրբեջանական կողմի խաղաղասիրական ձգտումներով, այլ ուժերի վերախմբավորում կատարելու և աղրբեջանական բանակում առաջացած խուճապը վերացնելու անհրաժեշտությամբ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ հրադադարի վերաբերյալ առաջարկությունից շատ չանցած, օգոստոսի լույս 17-ի գիշերը հակառակորդը հարձակում սկսեց Հադրութի շրջանի սահմանամերձ բնակավայրերից Էդիլլուի (Ուխտաձոր) ուղղությամբ: Մյուս կողմից սխալ կլիներ հնարավորություն տալ պայմանավորվածությունները մշտապես խախտող ագրեսիվ հակառակորդին վերախմբավորելու տեղ հասցված ուժերն ու միջոցները և հարձակման անցնելու ճակատային գծի ամբողջ երկայնքով, ուստի ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, առանց ժամանակ կորցնելու մի քանի ուղղություններով հակահարձակման անցան:

Հարավային ճակատում հաջողությանը նպաստելու, ինչպես նաև հիմնական խնդիրներից մեկը՝ Լաչինի միջանցքի անվտանգությունն ապահովելու նպատակով Լաչինի շրջանում հայ զինվորները մարտեր ծավալեցին «Կոբրա» կոչվող բարձունքից մինչև Ուխտասար և թշնամուց մաքրեցին այդ տարածքը՝ հասնելով Ներքին Ֆարաջան գյուղին[290]: Իսկ Հադրութի ՊԾ մարտիկները տիրեցին Վերին Կարակյունլու բնակավայրի և 805,4 նիշով բարձունքի միջև ընկած հակառակորդի կարևոր դիրքերին: Վերահսկողության տակ առնվեցին նաև Վերին Ռաֆադինլիի շրջակայքը, 660,5, 539,5 և 493,3 նիշերով բարձունքները: Նույն օրը գրավվեց նաև Դաշքեսան գյուղի թռչնապրանքային ֆերման (ԹԱՖ): Երեկոյան հակառակորդը երեք տանկի և հրետանային կրակի աջակցությամբ հարձակում ձեռնարկեց Դաշքեսան լեռան (նիշ 602,1)

[290] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ № 150, л. 47:

կողմից: Հայ մարտիկները, հետ շպրտելով թշնամուն, անցան հակահարձակման և տիրեցին այդ կարևոր բարձունքին: Ժամը 21[25]-ին հայ մարտիկները հաստատվեցին նաև համանուն գյուղում: Այսպիսով, սահմանված ինգօրյա հրադադարը խախտած ադրբեջանական կողմը, փաստորեն, ստացավ արժանի հակահարված[291]:

Օգոստոսի 20-ին, ձգտելով բեկում մտցնել մարտական գործողությունների թատերաբեմում, Մարտունու շրջանի ուղղությունում գտնվող թշնամու զորակայանից փորձ արվեց ճեղքել ՊԾ-ի արևելյան պաշտպանական գիծը: Հայ մարտիկները, կորուստներ պատճառելով հակառակորդին, ստիպեցին թողնել նրա իսկ հենակետերը: Մարտական գործողությունները շարունակվեցին նաև Հադրութի ՊԾ և Լաչինի ուղղություններում: Մարտական գործողություններ սկսեցին նաև Մարտունու ՊԾ մյուս ստորաբաժանումները և սրընթաց գրոհով ժամը 20[15]-ին տիրեցին 472 նիշով բարձունքին (Քավթառլու) և Աղբուռուն լեռանը:

Նախապատրաստական ձեռնարկումներից հետո, 1993 թ. օգոստոսի 22-ին ԼՂՀ ՊՈՒՒ ստորաբաժանումները հակահարձակման անցան Ֆիզուլի-Ջաբրայիլ-Կուբաթլու օպերացիոն ուղղություններով[292]: Հադրութի ՊԾ 13-րդ, 14-րդ, 15-րդ, Մարտունու ՊԾ 21-րդ, 22-րդ ԱՄԶԳ-ին և Հադրութի ՊԾ-ին օգնության եկած 83-րդ Առանձին մոտոհրաձգային բրիգադին (ԱՄՀԲր), ինչպես նաև կենտրոնական ենթակայության ականանետային դիվիզիոնին հաջողվեց նույն օրը մտնել Ֆիզուլի՝ դրանով իսկ լիովին անվտանգ դարձնելով ԼՂՀ արևելյան սահմանները[293]: Վերոհիշյալ ադրբեջանցի հեղինակը ստիպված է խոստովանել, որ «հակառակորդի ուժերի ճնշման տակ ադրբեջանական 160-րդ գնդի և տեղի բրիգադի զորամասերը հարկադրված էին թողնել Ֆիզուլին և համանուն շրջանը 1.050 կմ² ընդհանուր մակերեսով»[294]:

Զուգահեռաբար ազատագրվեց նաև Սեյիդահմեդլի գյուղի մոտակա 378,7 նիշով բարձունքը: Կուբաթլուի և Ջաբրայիլի շրջանների միջակայքում շրջապատվեց ադրբեջանական «Գորշ գայլեր» խմբավորումը և ջախջախվեց: Գերի հանձնվեցին վեց գրոհայիններ:

Մարտական գործողությունների հիմնական թատերաբեմից ՊԲ հրամանատարության ուշադրությունը շեղելու նպատակով թշնամին օգոստոսի 22-ին փորձեց ճեղքել ՒՊՈՒ պաշտպանությունը Օմարի լեռնանցքի ուղղությամբ, բայց, կորուստներ կրելով, հետ շպրտվեց: Այդուհանդերձ, օգոստոսի 23-ին մարտերը նշված ուղղություններում շարունակվեցին: Մարտունու ՊԾ ստորաբաժանումները հակառակորդի գինված ուժերից մաքրեցին Կարախանբեյլի մեծ գյուղը և պաշտպանություն բռնեցին գյուղից դուրս: Նույն օրը վերահսկողություն սահմանվեց Ալխանլը գյուղի մոտակա 236,0 նիշով բարձունքի ու ոչխարապրանքային ֆերմայի (ՈՍՖ), ապա այգիների շրջակայքի վրա: Մարտունու ՊԾ զրահատեխնիկան մտավ Ալխանլու[295]: Հայ մարտիկներին հաջողվեց հասնել Վերին Քյուրդմահմուդլու բնակավայրի հեռակետերին: Վերահսկողության տակ առնվեցին նաև Խորովլու բնակավայրը և նրա շրջակա բարձունքները:

Դեռևս օգոստոսի 20-ին Հադրութի շրջանում ազատագրելով Առաքել գյուղը և այդ տեղամասում հակառակորդին ամբողջությամբ հետ շպրտելով ԼՂՀ տարածքից՝ 6-րդ ՊԾ մարտիկները օգոստոսի 23-ին, հյուսիսից և արևմուտքից հակահարձակման անցան Ջաբրայիլի ուղղությամբ: Միաժամանակ, արևելքից առաջխաղացում սկսեցին 11-րդ, 12-րդ ԱՄԶԳ-ները Դաշքեսան լեռան-Չերեքեն-Խորովլու գծի ուղղությամբ և օրվա վերջում, 61-րդ, 62-րդ, 63-րդ ԱՄԶԳ-ների հետ միասին տիրեցին Ջաբրայիլ քաղաքին:

Կուբաթլուի ուղղությունում Շուշիի ՊԾ ստորաբաժանումներին օգնության հասած ՒՊՈՒ այլ ստորաբաժանումների համագործակցված գործողությունների արդյունքում վերջապես կոտրվեց թշնամու կատաղի դիմադրությունը:

Հաջողությամբ շարունակելով առաջխաղացումը՝ ԼՂՀ ՒՊՈՒ ստորաբաժանումներն ազատագրեցին Կազանգամին բնակավայրը, 134,0 նիշով բարձունքի (Սեյիդլի անբնակ գյուղի) մոտ, դուրս եկան Թումասասարի (Թումասասարի) (նիշ 1580,5) և 1322,8 նիշով բարձունքի բնագիծը: Այդտեղից շարժվելով Դաղդումաս-1 և Դաղդումաս-2 բնակավայ-

[291] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և Պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ.: Պատմ. գիտութ. թեկնածուի գիտական. աստիճանի հայցման ատենախոսություն, էջ 121-122, հմմտ. ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կռունկ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 5, էջ 152:

[292] ԼՂՀ ՊՆԱ, Հադրութի ՊԾ. ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ. - 26.09.1993 թ., քարտեզ № 22, գույքահամար 210, Օպերատիվ բաժնի աշխատանքային քարտեզ. Հադրութի ՊԾ. հուլիս-օգոստոս, 1993 թ., քարտեզ № 21, գույքահամար 206:

[293] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКССО, дело № 4, Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 75:

[294] ***Арасты Дж.,*** Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 41:

[295] ***Դաւիթյան Գ.,*** Իմ անցած մարտական ուղին, «Կռունկ» (ԿԳԿ-ի տարեգիրք): Գիրք 3, Շուշի, «Կռունկ» գիտական կենտրոնի հրատ., 2014, էջ 129:

րերի ուղղությամբ՝ օգոստոսի 25-ի երեկոյան կողմ հայ մարտիկները ձախ թևում տիրեցին գերիշխող 1079,8 նիշով բարձունքին, իսկ աջում՝ Դաղմաշանլը բնակավայրին: Հակառակորդի կրակակետերը ճնշվեցին Դաշվեյսալի և Խավրսլը գյուղերում (Ջաբրայիլի շրջան), որից հետո հայկական կազմավորումները շարժվեցին Թովմասասարի և համանուն բնակավայրի ուղղությամբ[296]: Օրվա ընթացքում անընդհատ հրետակոծվեցին 83-րդ ԱՄՀԲր պաշտպանական դիրքերը: 360,4 և 341,0 նիշերով բարձունքների միջև ընկած տեղամասի վրա թշնամին գրոհ ձեռնարկեց մեկ վաշտի կազմով ու փորձեց մտնել Ալասկարլը գյուղը: Հետ մղելով գրոհը՝ հայ մարտիկները հակահարձակման անցան և, կոտրելով թշնամու դիմադրությունը, մտան Վերին Սեյիդահմեդլի և Կորգան գյուղերը:

Իսկ արդեն օգոստոսի 28-ին 83-րդ ԱՄՀԲր ստորաբաժանումները մտան Վերին Շուքուրբեյլի և Ներքին Աբդուռահմանլու, որով կանխվեց հակառակորդի հարձակումը Ֆիզուլու օպերատիվ-մարտավարական ուղղությունում: Ինչպես ասում են՝ մարտադաշտը ցույց տվեց, որ հակառակորդի ռազմական ինքնաթիռների և ուղղաթիռների օդային հարձակումները ևս չէին կարող խանգարել հայ զինվորների անկասելի առաջխաղացմանը: Հետախուզության հայթայթած տեղեկությունների և գերիների ցուցմունքների համաձայն, մոտակա աղրբեջանական գյուղերն խուճապահար ու արագ լքվում էին:

Հաջորդությամբ էին զարգանում Կուբաթլուի շրջանում հակառակորդի կրակակետերի ճնշման նպատակով մղվող մարտական գործողությունները: Օգոստոսի 29-ին 5-րդ ՊՇ ստորաբաժանումները՝ Ն. Դանիելյանի հրամանատարությամբ, մարտական գործողություններ սկսեցին Կուբաթլուի շրջանում և մտան Կարակիշիլար գյուղը:

Օգոստոսի 30-ի մարտական գործողությունների արդյունքում հայկական ստորաբաժանումները վերահսկողության տակ առան Կուբաթլուի շրջանի Խոջիկ, Բալա-Սոլթանլը և Խանդեկ բնակավայրերը:

Հադրութի ՊՇ մարտիկները շարունակեցին առաջխաղացումը Ֆիզուլու շրջանի Ներքին Քյուրդահմեդլի գյուղի ուղղությամբ: Թշնամու գերակշիռ ուժերին հաջողվեց ծուղակի մեջ առնել հայ մարտիկներին: Սակայն անհապաղ ձեռնարկված միջոցների շնորհիվ հայ մարտիկներին հաջողվեց ճեղքել շրջապատման օղակը:

[296] ԼՂՀ ՊՆՍ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ № 150, л. 56:

Արդեն օգոստոսի 31-ին հայ մարտիկները տիրեցին 835,0 նիշով բարձունքին: Նույն օրը 4-րդ ՊՇ ստորաբաժանումները տիրեցին Գյումբեզ լեռանը (նիշ 1004,4): Ավելի աջ գործող Հ. Բաղմանյանի ստորաբաժանումը թշնամուց մաքրեց Կուրբանթեփե լեռը (նիշ 1762), Մելիքահմեդլի բնակավայրը, Խղդրլը գյուղը և 4-րդ ՊՇ ստորաբաժանումների հետ շարունակեց առաջխաղացումը Աբդալանլը-Լեփեխեյրանը- 781,0 նիշով բարձունք գծով: Մարտունու ՊՇ ստորաբաժանումները ԹԱՖ-ից առաջացան 830,0 և 798,0 նիշերով բարձունքների ուղղությամբ[297]:

Հադրութի շրջանի արևմտյան մասի և Կուբաթլուի շրջանի թշնամական կրակակետերի ոչնչացման մարտերին մասնակցեցին Շուշիի ՊՇ 51-րդ, 52-րդ, 53-րդ, Հադրութի ՊՇ 16-րդ ԱՄՀԳ-ները, ինչպես նաև 2-րդ և 4-րդ ՊՇ-ների առանձին ստորաբաժանումներ: Կարող է տպավորություն ստեղծվել, թե ԻՊՈՒ հաղթարշավը հեշտ ու սահուն էր ընթանում: Ամենևին: Հատկանշենք, որ Կուբաթլուի շրջանում մարտերը մղվում էին մեծ դժվարությունների հաղթահարմամբ: Միայն Շուշիի ՊՇ-ի և օգնության հասած ԻՊՈՒ այլ ստորաբաժանումների փոխհամագործակցված գործողությունների արդյունքում հաջողվեց Կուբաթլուի ուղղությունում կոտրել հակառակորդի դիմադրությունը: Այս ճակատում, Բաշառաթ գյուղի ուղղությամբ Շուշիի ՊՇ-ի ձեռնարկած զորաշարժը մեծապես նպաստեց հակառակորդի դիմադրության ընկրճմանը, ուստի արժանի է հատուկ ուսումնասիրության[298]:

Աղրբեջանական բանակի առանձին ստորաբաժանումների և տեղի բնակչության կատաղի դիմադրությամբ հանդերձ, հայկական կազմավորումները երեք ուղղություններով՝ Ջաբրայիլի, Գյուլեբիրդի և Հագարի գետի ձախափնյակի կողմերից խորացան Կուբաթլուի շրջանի տարածք՝ վերջնանպատակ ունենալով տիրել համանուն շրջկենտրոնին:

Այս օպերացիայի անհրաժեշտությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Կուբաթլուի շրջանում ամրացած հակառակորդը մշտապես սպառնում էր Լաչինի միջանցքի անվտանգությանը, կրակի տակ էր պահում Ստեփանակերտ-Երևան ավտոմայրուղին: Ջարմա-

[297] ԼՂՀ ՊՆՍ, Հադրութի ՊՇ. ՊԲ հրամանատարի վճիռը 15.08.1993 թ.- 26.09.1993 թ., քարտեզ № 22, գույքահամար 210:

[298] ***Հարությունյան Մ.,*** Արցախյան պատերազմի կարևոր օպերացիաների պատմագրական լուսաբանման որոշ վիճահարույց հարցերի մասին, «Հայկական բանակ» (ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի (ՊԱՀՀ) ռազմագիտական հանդես), 2019, № 4, էջ 116:

նալիորեն այս փաստը չեն ուրանում անգամ ադրբեջանցի հեղինակները: Այսպես, օրինակ, վերոհիշյալ Զ. Արասլըն գրել է. «Դրանով (օգոստոսի 31-ին Կուբաթլու շրջկենտրոնին տիրելով.- Մ. Հ.) վերացվեց լայնային միջանցքն ադրբեջանական բանակի կողմից շրջափակելու մեկ և կես տարվա ընթացքում պահպանված սպառնալիքը»[299]: Չգտելով ապահովել ԼՂՀ հարավային սահմանների լիակատար անվտանգությունը՝ ԻՊՈՒ-ը հակահարձակման անցան՝ օպերատիվ-մարտավարական խնդիր ունենալով ջախջախել Ադրբեջանի ԶՈՒ Կուբաթլուի խմբավորումը և ամավա վերջին օրը վնասազերծեցին Կուբաթլու շրջկենտրոնը[300]:

Ընդհանրացնելով վերոհիշյալ մարտական գործողությունների վերաբերյալ ոչ գաղտնի տվյալները՝ կարող ենք փաստել, որ Հադրութի շրջանի բռնազավթված մասի ազատագրման, Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան օպերացիան ռազմաքաղաքական մեծ նշանակություն ունեցավ: Վերացվեց ԼՂՀ հարավարևելյան ու հարավային սահմանների, ինչպես նաև Ստեփանակերտ-Գորիս ավտոմայրուղու վրա կախված մշտական սպառնալիքը, վնասազերծվեցին Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի ռազմակայանները, ջախջախիչ պարտության մատնվեցին համանուն շրջաններում կուտակված թշնամական խմբավորումները, Արցախի շուրջ ընդլայնվեց անվտանգության գոտին և ԻՊՈՒ-ը հաստատվեցին նպաստավոր բնագծերում: Ռազմական ու բարոյահոգեբանական հարվածներ ստացած Ադրբեջանը ստիպված էր համաձայնել բանակցությունների սեղանի շուրջ նստելու ռուսական առաջարկություններին[301]:

ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, հետապնդելով ճողոպրող թշնամուն, կանգ առան Իրանի սահմանից մի քանի կիլոմետր հեռավորության վրա, ինչը նշանակում էր, որ իրականություն էր դառնում ռազմաճակատի զիջը կարճելու մտահղացումը:

Հադրութի շրջանի ազատագրման, Ֆիզուլու, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերի ճնշման օգոստոսյան ռազմագործողության ընթացքում հայ հրետանավորները գործեցին բավական հուսալի և, հիմնականում, լուծեցին առաջադրված խնդիրները: Արցախի

[299] *Արասլы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 41:

[300] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 76:

[301] *Казимиров В.*, Мир Карабаху. Посредничество России в урегулировании нагорно-карабахского конфликта, Москва, Международные отношения, 2009, с. 99:

ԻՊՈՒ հրետանային միջոցներից նշանակետերի դիպուկ խոցման հետևանքով հակառակորդը դիրքերում թողնում էր տեխնիկա, զենք ու զինամթերք[302] ու ճողոպրում: Արագ զարգացող իրադարձություններին ուշի-ուշով հետևող տերությունները խուճապի էին մատնվել: ՀՀ-ում հավատարմագրված օտարերկրյա որոշ դեսպաններ իրենց պետությունների բողոքն էին հայտնում, սպառնալիքներ կարդում: Թուրքիայում կոչեր հնչեցին Հայաստանը ռմբահարելու, ասել է թե՝ ինքնիշխան պետության վրա զինված նախահարձակում ձեռնարկելու մասին: Հայաստանի հետ սահմանամերձ գոտու ամբողջ երկայնքով կենտրոնացվեցին թուրքական 3-րդ դաշտային բանակի 8-րդ և 9-րդ բանակային կորպուսները, մարտական լրիվ պատրաստության բերվեց օդուժը, ռուսական 127-րդ մոտոհրաձգային դիվիզիայի տեղակայման վայրի (Գյումրի) ուղղությամբ կենտրոնացվեցին 12-րդ և 13-րդ մեքենայացված բրիգադները[303]: Ի պատասխան՝ Անդրկովկասյան ռուսական զորախմբի հրամանատարությունն սկսեց 127-րդ մոտոհրաձգային դիվիզիայի հրամանատարաշտաբային զորավարժություններ՝ Հայաստանի տարածք թուրքական ագրեսիայի կասեցման խնդիրների ճշգրտմամբ: Իրանի Իսլամական Հանրապետությունը համալրեց ու լիակատար մարտական պատրաստության բերեց սահմանի երկարությամբ ձգված կազմավորումները, սկսեց զորավարժություններ մարտական գործողությունների գոտու անմիջական հարևանությամբ[304]: Այլևս պատմության գիրկն էր անցել մեր ազգային ու պետական շահերը ոտնակոխ անելու այլ տերությունների ամթոպի գործելակերպը, այլևս հայ ժողովուրդը չէր հանդուրժելու դիվանագետների կամայականությունները և իր վճռական խոսքն ասելու էր հաղթական զենքի լեզվով՝ կանգնեցնելով հակառակորդներին կատարված փաստի առաջ[305]: Փորձը ցույց է տալիս, որ միայն այս կերպ կարող էր վերականգնվել պատմական արդարությունը:

Ռուսաստանի ԱԳՆ միջնորդությամբ, օգոստոսի 31-ի հետմիջօրեին ԼՂՀ և Ադրբեջանի պատվիրակությունների միջև ստորագրվեց հրադադարի համաձայնագիր, որն ուժի մեջ պիտի մնար մինչև սեպ-

[302] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Приказ Председателя комитета Самообороны НКР № 031, л. 76:

[303] *Արասլы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 42:

[304] *Խաչատրյան Հ., Դավթյան Գ., Մարգարյան Ս.*, Հաղթանակներն ինչպես եղել են. ազգականը 44, էջ 136:

[305] *Հարությունյան Մ.*, Պատմական հողերի ազատագրումը (օգոստոս. 1993 թ.), «Մարտիկ», օգոստոս, 1999 թ., № 34:

տեմբերի 10-ը ներառյալ, իսկ այդ ընթացքում պետք է հանդիպեին երկու հանրապետությունների ղեկավարները, սակայն, հիմնական պայմանավորվածությունները մնացին թղթի վրա՝ Ադրբեջանի ապակառուցողական քաղաքականության պատճառով:

Այսպիսով, 1993 թ. օգոստոսին Արցախի ԻՊՈՒ ձեռնարկած օպերացիաները հաթավային սահմանների երկայնքով և հակառակորդի ռազմական հենաէաշտերի վնասազերծումը Ջաբրայիլի, Ֆիզուլու և Կուբաթլուի շրջաններում ունեցան ռազմաքաղաքական կարևոր նշանակություն ինչպես մեր հանրապետության անվտանգության ու պաշտպանունակության բարձրացման, այնպես էլ զինված ուժերի շինարարության համար: Այդ օպերացիաների վերաիմաստավորումը կարող է նշանակալիորեն հարստացնել Արցախում կիրառված ռազմարվեստի առանձին տարրերն ընդհանրացնող պատմությունը և ոչ հեռու անցյալի փորձով նոր իմաստ հաղորդել ագրեսիվ հակառակորդին կանխիչ հարվածներով խաղաղություն պարտադրելու ռազմավարությանը:

Հորադիզի և Մինջևանի ուղղություններում ԻՊՈՒ տարաշարժերի մարտավարության առանձնահատկությունները

1993 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակը ռազմաճակատի օպերատիվ-մարտավարական իրադրությունը համեմատաբար հանգիստ էր, էական միջադեպեր տեղի չունեցան: Կարճատև հրետակոծության ենթարկվեցին Ասկերանի և Մարտակերտի շրջանների պաշտպանական բնագծերը:

Կույշուկ և Սաֆարշա բնակավայրերի ռազմական հենակետից, հակառակորդը հրետանային նախապատրաստությունից հետո, զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակում ձեռնարկեց հայկական պաշտպանական դիրքերի վրա: Ծանր մարտերից հետո թշնամու առաջխաղացումը կասեցվեց, իսկ այնուհետև ԻՊՈՒ մարտիկները հոկտեմբերի 10-ին հակագրոհի անցան: Տևական մարտերից հետո լռեցվեց հակառակորդի երկու կրակակետ:

Հոկտեմբերի 12-ին, հակառակորդը հրետանային նախապատրաստությունից հետո, հարձակվեց Հաղրութի շրջանի հարավում գտնվող պաշտպանական բնագծերի վրա: ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները, կասեցնելով հակառակորդի առաջխաղացումը, հակահարձակման անցան և ադրբեջանցի ևվաճողներին դուրս շպրտեցին Նուզգեր և Շեյբեյ բնակավայրերում տեղակայված ռազմական հենակետերից:

Հակառակորդը ծանր հրետանու և զրահատեխնիկայի աջակցությամբ վերսկսեց հարձակումը հանրապետության հարավային սահմանների ուղղությամբ, սակայն հայկական ստորաբաժանումները, կասեցնելով այդ խելահեղ առաջխաղացումը, հակահարձակման անցան ու վերացրին Շուքյուրբեյլի, Սահմեդբեյլի և Մեծ Բահմանլու բնակավայրերում տեղակայված թշնամու հենակետերն ու կրակակետերը[306]:

1993 թ. հոկտեմբերի 24-ին մի քանի ուղղություններով սկսված՝ Արցախի ԻՊՈՒ հակահարձակումը պսակվեց հաջողությամբ, ճնշվեցին Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերը, որով, փաստորեն, մեկուսացվեցին Ջանգելանը և Ջաբրայիլի ու Կուբաթլիի՝ դեռևս չվնասազերծված ռազմական հենակետերը:

Հոկտեմբերի 24-ին ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները վերացրին Հորադիզի մոտ տեղակայված թշնամու ռազմական հենակետը: Մարտական գործողությունների ընթացքում հակառակորդից առգրավվեց 3 տանկ, 4 ՄՄ-21 հրթիռային կայանք, 4 զրահամեքենա և զգալի քանակությամբ զենք ու զինամթերք: Հաջորդ օրը, Արցախի ինքնապաշտպանության ուժերի ճնշման տակ, հակառակորդը թողեց Սոլթանլին[307]:

Ջանգելանի շրջանում տեղակայված հենակետերից հակառակորդը հոկտեմբերի 26-ին հրթիռահրետակոծության ենթարկեց հայ մարտիկների դիրքերը: Այդ կրակակետերը լռեցնելու առաջադրանքով ԻՊՈՒ ստորաբաժանումներն ակտիվ մարտական գործողություններ ծավալեցին Ջանգելանի ուղղությամբ: Հոկտեմբերի 29-30-ին վերահսկողության տակ առնվեցին Ջանգելան շրջկենտրոնն ու Մինջևան գյուղը՝ իր շրջակայքով[308]: ԻՊՈՒ ստորաբաժանումների ակտիվ գործողությունները հարկադրեցին հակառակորդին հրաժարվել իր նկրտումներից և երկխոսության եզրեր փնտրել ԼՂՀ իշխանությունների հետ: 1993 թ. հոկտեմբերի վերջին օրը, ինչպես նաև նոյեմբերի սկզբներին, ռազմաճակատում հարաբերական անդորր էր տիրում, ինչը պայմա-

[306] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 150, թ. 93:
[307] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 150, թ. 94:
[308] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 141, եր. 5 թ:

նավորված էր հակամարտող կողմերի զինված ուժերի վերախմբավորումներով ու համալրումներով:

Այսպիսով, հակառակորդի Հորադիզ-Կուբաթլի-Ջանգելանյան գործողության ջախջախման ռազմագործողությունը, որ սկսվել էր 1993 թ. հոկտեմբերի 24-ին, իր եզրագծին հասավ նոյեմբերի 1-ին, երբ ԼՂՀ ԻՊՈՒ մարտիկներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Ջանգելան շրջկենտրոնի և հենակետերի վերածված մոտակա բնակավայրերի նկատմամբ: 1-ին, 2-րդ, 6-րդ ՊԾ և կենտրոնական ենթակայության ստորաբաժանումների փոխհամագործակցված ռազմաքաշավը հաջողությամբ պսակվեց մարտական գործողությունների ընդարձակ ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Սահմանամերձ գոտու հարավարևելյան, հարավային և հարավարևմտյան հատվածներում հակառակորդի կրակակետերի պարտադրված ու անհրաժեշտ վնասազերծումը ոչ ևս դարձրեց ԼՂՀ տարածք ներխուժելու, ինչպես նաև խաղաղ բնակավայրերի հրետակոծությունների վտանգը[309]:

ՊԲ-ի իրավական կարգավիճակի ամրագրումը կարևոր նշանակություն ունեցավ ռազմաճակատում նոր հաջողություններ նվաճելու և պետական շինարարության բնագավառում ձեռքբերումներն ամրապնդելու համար:

Նոյեմբերի 25-ին հայկական զինված կազմավորումները, 9-րդ, 10-րդ և 11-րդ սահմանապահ ուղեկալների դիմադրությունը կոտրելով՝ վերահսկողության տակ առան սահմանագծի 161 կիլոմետրանոց հատվածը:

Միջազգային լրատվամիջոցների տեղեկատվության համաձայն, ադրբեջանական բանակում Ղարաբաղի դեմ այդ օրերին կռվում էր Աֆղանստանից եկած 1500 մոջահեդ: Ամսվա վերջին ՊԲ զինվորների ձեռքն ընկան փուշտու լեզվով գրված նամակներ, քարտեզներ, բառարաններ, Ալի Բայրամլիի՝ ադրբեջանական ռազմական ճամբարում արված լուսանկարներ[310]: Թեև Ադրբեջանը լայնորեն կիրառում էր վարձկանների ու միջազգային ահաբեկիչների, այդուհանդերձ, ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումների հաղթարշավն անկասելի էր:

[309] ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело № 4. Нач. 01.01.1993 г.-оконч. 30.12.1993 г., с. 95-96:
[310] «Մարտիկ», 1993 թ., № 34:

Հարավարևելյան և արևելյան ռազմաճակատներում ՊԲ պաշտպանական օպերացիաների մարտավարության առանձնահատկությունները

1993 թ. դեկտեմբերի առաջին տասնօրյակում հակամարտության գոտում հարաբերական անդորր էր տիրում: Հակառակորդը զբաղված էր կենդանի ուժի և տեխնիկայի վերախմբավորումներով: Քաղաքական խարդավանքների և ռազմաճակատում ունեցած ձախողումների հետեվանքով լարված իրավիճակում Ադրբեջանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Նախագահ ընտրված Հ. Ալիևի հիմնական հաղթաթուղթը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ պատեհապմում արմատական բեկում մտցնելու խոստումն էր: Այն կյանքի կոչելու նպատակով Ադրբեջանի իշխանությունները դիմեցին ծայրահեղ միջոցների, որոնք ստացան օրենսդրական աջակցություն: Մասնավորապես, Ադրբեջանի օրենսդիր մարմնի կողմից դեկտեմբերի 2-ին որոշում ընդունվեց դասալիքների և ծառայությունից խուսափողների պատժի ժամկետների մասին, իսկ հաջորդ օրերին օտարազգի զինվորներ վարձելու և բանակն ուժեղացնելու իրավունք վերապահվեց Հ. Ալիևին: Միաժամանակ ակտիվացավ պետական քարոզչամեքենան, որը լծվեց Ադրբեջանի կողմից նախապատրաստվող լայնածավալ նախահարձակման անհրաժեշտության հիմնավորման գործին: Տեղեկատվական բոլոր խողովակներով տարփողվում էին, թե իբր ազատագրված շրջանները հայկական ղեկավարության կողմից դիտվում էին որպես բուֆերային գոտի ռուսական բաժանարար ուժեր մտցնելու համար: Ջանում էին համոզել, որ հայկական կողմի հաջողությունները ձեռք են բերվել ուժերի նշանակալի լարման ու մեծաթիվ զոհերի գնով, ինչի արդյունքում, իբր, հայկական կողմը մտել է ռազմական հյուծման առաջին փուլը:

Հայկական կողմի համար բացասական գործոններից ադրբեջանական քարոզչությունն առանձնացնում էր ժամանակի պակասուրդը, իրադրության կայունացումն ու Ադրբեջանի պաշտպանունակության ամրապնդումը, հայկական տնտեսության ճգնաժամի սրացումը, բնակչության ու բանակի բարոյահոգեբանական լարվածության աճը: Այնուհետև, ադրբեջանցի վերլուծաբանները հայկական կողմին էին վերագրում այնպիսի երևույթներ, որոնք հատուկ էին հենց Ադրբեջանին: Այսպես, նշվում էին իշխանության տարբեր թևերի միջև ներհակությունների ուժգնացումը, հետևողական գորակոչերի հետևանքով զորահավա-

քային ռեզերվի սպառումը, զորակոչային տարիքի քաղաքացիների արտագաղթը և այլն: Ադրբեջանում խստացված ու ծայրահեղ միջոցների դիմելու փաստը թաքցնելու նպատակով այդ երկրի քարոզչամեքենան Հայաստանին էր վերագրում ներքին քաղաքականության կոշտացումը՝ իբր իրավիճակի կայունացման և պատերազմից ավելի շահավետ պայմաններով դուրս գալու նպատակով: Կոշտ քայլերից հատկանշվում էին ուժային միջոցներով հերթական զորակոչի իրականացումը, գաղտնիության ռեժիմի և գրաքննության ուժեղացումը, կորուստները, պատերազմին Հայաստանի մասնակցության տեղեկույթի, մարտական գործողությունների բնույթի իբր խնամքով քողարկումը:

Ադրբեջանի կողմից բազմազգ վարձկանների ու ահաբեկիչների հավաքագրման և Արցախի դեմ օգտագործման, ինչպես նաև արտասահմանյան երկրներից սպառազինության ու տեխնիկայի մեծ խմբաքանակների ձեռքբերման փաստերը թաքցնելու կամ արդարացնելու համար, ադրբեջանական քարոզչամեքենան տարածում էր հայկական կողմից իբր վերահսկվող ՌԴ և արևմտյան տերությունների ֆինանսական կառույցների աջակցությամբ զինված ուժերի հարձակողական հնարավորությունների մեծացման ուղղությամբ լրացուցիչ միջոցների ձեռնարկման, Հայաստանում ռուսաստանյան քանակակազմի զինծառայողներին մարտական գործողություններին պայմանագրային հիմունքներով ներգրավման գործընթացի ակտիվացման մասին: Ադրբեջանական կեղծիքների ու ակնհայտ սուտ տեղեկությունների մասին են վկայում շրջանառվող հետևյալ տվյալները: «Ավելացել է վարձկանների թիվը,- նշել է ադրբեջանական աղբյուրներից մեկը,- 1993 թ. նոյեմբերի դրությամբ Ղարաբաղում են գտնվել ՌԴ Խաղաղօվկիանոսյան նավատորմի ծովային հետևակի հատուկ նախանշանակման գումարտակի ավելի քան 480 նախկին զինծառայողներ, ԱՄՆ, Եվրոպայի, Մերձավոր Արևելքի հայկական սփյուռքից ավելի քան 870 մարտիկներ, Ռուսաստանի Հյուսիս-Կովկասյան տարածաշրջանից կազակական կազմակերպությունների մոտ 1200 գրոհայիններ»[311]: Ադրբեջանցիների ուշադրությունից չեն վրիպել անգամ այն, որ ՌԴ, Բելառուս ուսուցման ու վերապատրաստման են ուղարկվել սպաների ու կուրսանտների նոր խմբեր: Հայաստանին մեղադրել են անգամ Կովկասյան տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական բնույթի փոփոխություննե-

[311] *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 45-46:

րը, ինչպիսին ադրբեջանական վերլուծաբանները համարել են աբխազական հակամարտությունում Վրաստանի ջախջախումը 1993 թ. աշնանը, ապա վերջինիս մուտքը ԱՊՀ, իր շահերին ծառայեցնելու մեջ, պնդելով, թե դրանով ապահովվել են Հայաստանի ռազմավարական թիկունքի հավելյալ ամրությունը և ՌԴ-ի հետ ավելի հուսալի հաղորդակցությունը: Հենց այս թունոտ խանդի արտահայտություններն են բացահայտում Ադրբեջանի մեղսակցությունը Վրաստանի տարածքում դիվերսիոն-հետախուզական խմբերի խափանարար գործողություններին, որոնք 1993 թ. հունվարից վտանգի տակ էին դրել երկաթուղային մայրուղու և Հայաստանի տնտեսությունը սնուցող գազատարի գործունեությունը:

Ադրբեջանական քարոզչությունը շեշտադրումը կատարում էր անվտանգության հարցերով ՀՀ նախագահի խորհրդական Ա. Մանուչարյանի, պաշտպանության նախարար Վ. Մանուկյանի, ԶՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Ն. Տեր-Գրիգորյանցի պաշտոնաթողության և ուժային կառույցները արմատական թևի ներկայացուցիչների ու դաշտային հրամանատարների կողմից զբաղեցնելու հանգամանքի վրա, այդպիսով ցանկանալով ցույց տալ, որ Ադրբեջանի նոր նախահարձակումը ոչ թե հերթական արկածախնդրություն է, այլ ստեղծված իրադրությամբ թելադրված հակազդեցություն: Դա ավելի համոզիչ դարձնելու համար, ադրբեջանցի քարոզիչները խփում էին նույրբ զգայարաններին, տարփողելով, թե «որոշում էր ընդունվել վերսկսելու հարձակումը ռազմաճակատի հարավային տեղամասում՝ Բելոլկանի ուղղությամբ, որտեղ նկատվում էին փախստականների նշանակալի կուտակումներ»: Ադրբեջանցիները փորձում էին համոզել, որ նախատեսված էր գրավել այդ շրջկենտրոնը: Իսկ ռազմագործողության քաղաքական ենթատեքստ էր ներկայացվում Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի հետագա ապակայունացումը[312]:

Դեկտեմբերի 9-ին Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Ա. Ջալիլովը հայտարարեց, որ պատերազմում կորցրել են 18 հազար զինվոր, ավերվել է 800-ից ավելի բնակավայր[313]:

[312] Նույն տեղում, էջ 46-47:

[313] *Арутюнян В.*, События в Нагорном Карабахе. Хроника, часть V. Январь 1993 г.- июль 1995 г., с. 251:

Չբավարարվելով վերոնշյալ կեղծիքներով, ադրբեջանական կողմը ապատեղեկատվություն տարածեց 1993 թ. դեկտեմբերի 10-ին հայկական ուժերի կողմից Բեյլոկան շրջկենտրոնի ուղղությամբ առաջխաղացման և իբր ադրբեջանական բանակի կողմից հակահարված ստանալու մասին: Իրականում ադրբեջանական կողմն էր հետախուզական մարտեր մղում ռազմաճակատի հարավարևելյան հատվածում՝ նախապատրաստելով լայնածավալ հարձակումը: Ինչպես հայտնի է, հավատարիմ մնալով զենքի ուժով հիմնահարցը լուծելու՝ որդեգրած սկզբունքին և նախօրոք կենդանի ուժ ու ռազմական տեխնիկա կուտակելով, դեկտեմբերի 11-ի առավոտյան հակառակորդը հարձակողական ռազմագործողություն սկսեց ռազմաճակատի հարավարևելյան ուղղությամբ: Եռօրյա համառ մարտերի ընթացքում ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումներին հաջողվեց կասեցնել թշնամու առաջխաղացումը և, հակահարձակման անցնելով, գրավել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող մի շարք բարձունքներ: Այս ուղղությամբ նպաստավոր դիրքեր գրավելու նպատակով, հրետանային ինտենսիվ նախապատրաստությունից հետո, հակառակորդը երկու անգամ ևս՝ դեկտեմբերի 14-ին և 15-ին, հարձակողական գործողություններ ծավալեց, բայց ապարդյուն: Երբ հրետանային նախապատրաստությունից հետո հակառակորդը փորձեց ճեղքել հարավարևելյան ռազմաճակատը, Հադրութի ՊՇ մարտիկները գործիմացություն ու արիություն հանդես բերելով, կասեցրին առաջխաղացումը: ՊԲ զինվորներն այստեղ ևս ապացուցեցին, որ ճակատամարտի ելքը հաճախ վճռում են ոչ թե զինվորների թվաքանակը, այլ բարոյականային որակները:

Հանրահայտ փաստերը վկայում են, որ հենց ադրբեջանական իշխանություններն էին խիստ ծայրահեղ միջոցների դիմել, նպատակ ունենալով չեզոքացնել ընդդիմությանը, զինաթափել տարբեր քաղաքական ուժերի ռազմականացված խմբավորումները, դաժանորեն ճնշել թալիշների ու լեզգիների ազգային ազատագրական շարժումները: ԱՊՀ կոլեկտիվ անվտանգության պայմանագրին միանալը, ըստ ռուսամետ քաղաքական գիծը վերականգնելու պատրանք ստեղծած Հ. Ալիևի, Ադրբեջանի առաջ կբացեր խուսանավելու ռազմաքաղաքական հորիզոններ:

Նոր թափով վերսկսվել է Ռուսաստանից, Ուկրաինայից, Բելառուսից և ԱՊՀ այլ պետություններից ադրբեջանցի ու օտարազգի սպաների

Ադրբեջան տեղափոխման և արտոնյալ պայմաններով բանակում ծառայության ընդունելու գործընթացը:

Դեկտեմբերի 20-ին Իվանովոյի նահանգապետը ՏՈՒ-154 ինքնաթիռով Բաքու էր ճանապարհում 92 ռուս վարձկանների, որոնցից յուրաքանչյուրին Ադրբեջանի ղեկավարությունը խոստացել էր վճարել 500 հազար ռուբլի, իսկ զոհվելու դեպքում՝ 5 մլն. ռուբլի՝ նրանց ընտանիքներին: Ռուս վարձկանների հավաքագրումը կատարում էր ոմն գնդապետ Հուսեյնով, որին, անշուշտ ոչ առանց շահի, օգնում էր տեղի զինկոմիսարիատը: Հաղորդում էր ստացվել նաև այն մասին, որ Վոլգոգրադից Բաքու են ուղևորվել 200 ռուս վարձկաններ[314]:

Թուրքիայից զենքի ու սպառազինության ներկրմանն ավելացել են մեծ թվով սպաների ու ռազմական հրահանգիչների ժամանումն Ադրբեջան և անմիջապես Լեռնային Ղարաբաղի դեմ պատերազմում նրանց համակողմանի օգտագործումը: Ավելացվել է Թուրքիայի և այլ երկրների ռազմամտածողական հաստատություններում ադրբեջանական բանակի համար պատրաստվող զինվորական կադրերի քանակազմը: Արձանագրված է դեռևս 1993 թ. նոյեմբերի 2-ին վերսկսված վարձկանների հավաքագրման գործընթացը: Հույսը դնելով զորահավաքային ավելի մեծ ռեսուրսների վրա՝ Ադրբեջանում նույն թվականի միայն հոկտեմբերից մինչև 1994 թ. մայիսն անցկացվել է չորս զորակոչ: Արտասահմանից գնվել ու ներկրվել են ռազմական տեխնիկայի ու սպառազինության մեծ խմբաքանակներ: Միայն 1993 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ԱՆ-124 «Ռուսլան» փոխադրամիջոցային ինքնաթիռով Ուկրաինայից 40 միավոր T-55 տանկ է տեղափոխվել Ադրբեջան:

Նշված և այլ նախապատրաստություններից հետո Ադրբեջանի զինված ուժերը 1993 թ. դեկտեմբերի 15-ին լայնածավալ հարձակման անցան հինգ՝ Ֆիզուլիի, Մարտունու, Աղդամի, Մարտակերտի, Քելբաջարի ուղղություններով: Բոլոր օպերատիվ ուղղություններում հակառակորդն արժանի հակահարված ստացավ և հիմնականում հետ շպրտվեց ելման դիրքեր:

ԼՂՀ ռազմաճակատի ամբողջ երկայնքով դեկտեմբերի 15-ին սկսված լայնածավալ հարձակումներով Ադրբեջանի նորընտիր նախագահ Հ. Ալիևը փորձում էր, թեկուզ վիթխարի կորուստների գնով, շա-

[314] Նույն տեղում, էջ 256-257:

հավետ բեկում մտցնել պատերազմում և դրանով ամրապնդել իր երեքրուն իշխանությունը: Այդ նպատակով հերթական անգամ խախտելով Ռուսաստանի միջնորդությամբ հաստատված տասնօրյա երկկողմանի զինադադարը՝ ադրբեջանական կողմը դեկտեմբերի 21-ի առավոտյան սկսված և մեկ օր տևած հրետանային նախապատրաստությունից հետո, զրահատեխնիկայի աջակցությամբ, 30 կմ ճակատային գծով հարձակման անցավ Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ, սակայն դեմ առավ ՊԲ-ի և պահեստազորային ուժերի համառ դիմադրությանը: Իրավիճակը բարդանում էր, քանի որ Իրանի տարածքից հակառակորդի կրակի ճշտորդներն առավելագույն դիպուկությամբ ուղղորդում էին իրենց հրետանու կրակը: Միաժամանակ Ֆիզուլի-Բեյլոկան գծում ընթացող մարտերից ՊԲ հրամանատարության ուշադրությունը շեղելու նպատակով, հակառակորդը հարձակվեց նաև Մարտունու ՊՇ ուղղությամբ: Նման պայմաններում հարավարևելյան ուղղությունում մարտավարական նահանջ կատարվեց: ՊԲ հրետանային մարտկոցների դիպուկ համազարկերից հետո հակառակորդի շարքերում խուճապ առաջացավ: Հայ ազատամարտիկներին վիճակված էր մարտնչել հակառակորդի՝ մի քանի անգամ գերակշռող հետևակի դեմ: Արյունահեղ ու համառ մարտեր էին ընթանում յուրաքանչյուր բարձունքի համար: Տեղանքի առանձնահատկություններից ելնելով, ՊԲ զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարները շրջանցում էին մարտավարական արվեստի ընդունված «չափանիշները» և անակնկալի բերելով հակառակորդին՝ փորձում կոտրել նրա հարձակման թափը: Իսկ թշնամին շարունակում էր կենդանի ուժի ու զրահատեխնիկայի կուտակումները ռազմաճակատի համեմատաբար բաց ու թույլ տեղամասերում կամ ճեղքվածքներում, հատկապես Արաքսի երկայնքով, ավտոմայրուղու վրա: Օրհասական պահին դրությունը փրկեցին Մարտունու ՊՇ տանկիստները, որոնք պատեհաժամորեն օգնության հասան Ալիանլու բնակավայրի ուղղությամբ մարտնչող յուրայիններին. խոցելով հակառակորդի 2 տանկ՝ նրանք ստիպեցին հետևակին նահանջել անկանոն կերպով[315]:

Դեկտեմբերի 29-30-ին ռազմագործողություններ ընթացան Մարտունու և Մարտակերտի ՊՇ-ների ուղղություններում: Հատկապես կատաղի մարտեր ընթացան Մարտակերտ շրջկենտրոնի, Պուշկեն-յալի

[315] «Մարտիկ», 1993 թ., № 41:

ուղղությամբ և Փափրավենդի մատույցներում, որտեղ ադրբեջանցի զավթիչները մի քանի անգամ փորձեցին առաջ անցնել, բայց բոլոր դեպքերում հետ շպրտվեցին[316]:

Ընդհանրացնելով, նշենք, որ 1993 թ. դեկտեմբերին ԼՂՀ ՊԲ-ն պաշտպանական ծանր մարտերում ամրապնդեց տաթվա ռազմական փայլուն հաղթանակները, որոնց շնորհիվ բաղձալի անվտանգության խնդիրը ստանում էր իր լուծումը, ասել է թե՝ Արցախի հայ ազգաբնակչությունն ավելի պաշտպանված է դարձել հեռահար հրետակոծություններից:

1994 թ. հունվար-փետրվար ամիսներին ՊԲ պաշտպանական օպերացիաների մարտավարության առանձնահատկությունները

Հարձակման գլխավոր ուղղություններում կենդանի ուժի և միջոցների անհամադրելի գերակշռություն ստեղծելու միջոցով ռազմաճակատի գիծը ճեղքելու ռազմավարությունը, որը 1993 թ. ձմեռային ռազմարշավի սկզբում մասնակի հաջողություն էր բերել հակառակորդին, հեռանկարային թվաց ադրբեջանական հրամանատարությանը, ուստի հաջորդ տարվա հունվարին նոր թափով վերսկսվեցին հարձակումները ԼՂՀ իրական սահմանների ամբողջ երկայնքով: Հակառակորդի հաշվարկները կոահելի էին. մի քանի ուղղություններով հասցվող միաժամանակյա հարվածներով ճեղքել ռազմաճակատի այս կամ այն հատվածը, մխրճվել ՊԲ մարտակարգերի խորքերը՝ վճռական բեկում մտցնելով պատերազմում և հետամուտ լինելով Արցախը նվաճելու Ադրբեջանի ղեկավարության սնոտի պլանների կենսագործմանը: Հակառակորդի հիմնական հարվածային ուժերը ճնշում էին գործադրում հարավարևելյան, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան ուղղություններով՝ թևերից ու թիկունքից սպառնալով շրջապատել ՊԲ մարտնչող զորամասերը[317]: Միաժամանակ, ուշադրություն շեղող հարձակումներով լարվածություն ստեղծելով նաև ռազմաճակատի մյուս հատվածներում՝ հակառակորդը նպատակ ուներ զրկել ՊԲ հրամանատարությանը պահեստազորային ու հիմնական ուժերի տեղաշարժեր կամ վերախմբ-

[316] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 141, եր. 60 բ, 62 բ:
[317] *Араслы Дж.*, Армяно-азербайджанский конфликт (военный аспект), с. 47:

բավորումներ կատարելու հնարավորությունից: Սակայն, ՊԲ զինծառայողների անձնվիրության, համընդհանուր խիզախության ու տոկունության, ինչպես նաև հրամանատարների հնարամտության շնորհիվ հաջողվեց խափանել հակառակորդի նկրտումների իրականացումը: Հարավարևելյան ռազմաճակատում զարգացնելով հարձակողական գործողությունները Հորադիզ ռազմավարական հանգույցի ուղղությամբ՝ հակառակորդը նպատակ ուներ դուրս գալ Ֆիզուլի քաղաքի վրա: Համախմբելով ուժերը և համալրում ստանալով՝ հայկական-ստորաբաժանումներին հաջողվեց մի առ ժամանակ կասեցնել հակառակորդի առաջխաղացումը[318]: 1994 թ. հունվարի 5-ի առավոտյան հակառակորդը, տանկերի աջակցությամբ, վերստին գրոհեց Ջաղրութի ՊԾ դիրքերը: Նա նախնական առավելություն ստացավ, որովհետև աղրբեջանցի դիվերսանտների խումբը, օգտագործելով Իրանի տարածքը, դուրս եկավ ՊԲ ստորաբաժանումների թիկունքը: Թշնամու մեծաքանակ հետևակը, 3 տանկի աջակցությամբ, ներխուժեց Շուքյուրբեյլի: Մեկ այլ զորամիավորում շարժվեց Վերին Աբդուռահմանլու բնակավայրի ուղղությամբ: Աղրբեջանական հրամանատարությունը, հաշվի չառնելով կենդանի ուժի վիթխարի կորուստները, օտարերկրացի վարձկաններով համալրված նորանոր ստորաբաժանումներ էր քշում մարտադաշտ, հատուկ ջոկատների միջոցով, որպես կանոն, գնդակահարելով փախչող յուրայիններին[319]:

Հյուսիսարևմտյան ռազմաճակատում ռազմական տեխնիկայի, հրետանային կրակի աջակցությամբ հակառակորդը ներխուժեց Լև ու Բոզլու գյուղերը: Պաշտպանական ծանր մարտեր էին մղվում Բաբաշլար, Չոնդրլու գյուղերում[320]: Համառ մարտերից հետո հունվարի 4-ին Օմարի լեռնանցքից հակառակորդի առաջխաղացումը կասեցվեց: Սակայն, ստանալով նոր համալրումներ և ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելով, հակառակորդին հաջողվեց հունվարի երկրորդ կեսին ճեղքել ճակատային գիծը և սպառնալից չափով խորանալ ռազմավարական նշանակություն ունեցող շրջանի տարածք:

Արևելյան և հյուսիսարևելյան ռազմաճակատներում հունվարի 3-ին հակառակորդը մարտական գործողություններ սկսեց Մարտակերտի ՊԾ-ի Լևոնարխ գյուղի մոտ տեղաբաշխված դիրքերի ուղղությամբ: Նույն օրը վաղ առավոտյան Ասկերանի և Կենտրոնական ՊԾ-ների ստորաբաժանումները հակահարձակման անցան ռազմաճակատի Փափրավենդ-Սալահլի-Քենգերլի հատվածում[321]:

Հունվարի 4-ին հարձակման ենթարկվեցին նաև Մարտակերտի, Մարտունու և Հադրութի ՊԾ-ների բնագծերը: Շուրջ 70 աղրբեջանցի զինվորներից բաղկացած խմբավորումը, որին հաջողվել էր անցնել մարտունեցի ռազմիկների թիկունքը, օպերատիվ գործողությունների արդյունքում շրջապատվեց: Հուսահատ կատաղությամբ դիմադրելուց, մարտադաշտում 43 դիակ թողնելուց հետո, աղրբեջանցի զինվորները մազապուրծ ճողոպրեցին[322]:

Ռազմաճակատի հյուսիսարևելյան ուղղությունում հիմնականում դիրքային մարտեր էին ընթանում:

Պաշտպանական մարտեր ռազմաճակատի ամբողջ երկայնքով

Միր-Բաշիրում և Ենիքենդում աղրբեջանական հրամանատարության ստեղծած ուժեղ հարվածային խմբավորումները 1994 թ. հունվարի 6-ին հարձակում ձեռնարկեցին երկու՝ Մարտակերտի և Աղդամի ուղղություններով: Մարտական գործողությունների ընթացքում Բարդայից ուժեղացված նորանոր զորամասեր նետվեցին Միր-Բաշիրի տեղամաս[323]: Մատաղիսի ուղղությամբ տասնյակ միավոր զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակումներ գործելիս, հակառակորդը կորցրեց շուրջ 300 զինվոր և հետ շպրտվեց: Կեսօրից հետո, կենտրոնական ուղղությունում հակահարձակման անցնելով, ՊԲ կազմավորումները ճնշեցին Գյուլիջա և Սումա գյուղերի թշնամական կրակակետերը[324]:

Հունվարի 7-ին հակաբակորդը լայնածավալ հարձակում սկսեց Մարտունու և Հադրութի ՊԾ-ների ուղղությամբ: Մարտունու ՊԾ-ում թշնամին գրավեց 609 բարձունքը: Հարավարևելյան ռազմաճակատում ՊԲ ստորաբաժանումները կազմակերպված երկրորդ բնագիծ նահան-

[318] ԼՂՀ ՊՆՍ, Рабочая тетрадь оперативного дежурного, 88 л., РТ № 141(23.11.1996 г.), н. 25.10.93 г. - ок. 14.01.94 г., л. 74 а:
[319] Նույն տեղում, եր. 78 բ:
[320] Նույն տեղում, եր. 68 բ:

[321] Նույն տեղում, եր, 70 ա:
[322] «Մարտիկ», 1994 թ., № 2:
[323] ԼՂՀ ՊՆՍ, ՕՀՍՏ, № 141, եր. 81 ա:
[324] Նույն տեղում, եր 81 բ, 82 ա:

ջեցին: Իսկ Սալահլի-Քենգերլի հատվածում ՊԲ ստորաբաժանումներն ամրապնդեցին իրենց հենակետային դիրքերը[325]:

Հունվարի 8-ից ի վեր ռազմաճակատի ամբողջ երկայնքով շարունակվող մարտական գործողություններում աղրբեջանական հրամանատարությունն այլ մարտավարության դիմեց, ճակատային գրոհները փոխարինելով շրջանցող և գիշերային հարձակումներով: ՊԲ կազմավորումները, կասեցնելով հակառակորդի առաջխաղացումը և գիշերային գրոհները, ռազմաճակատի առանձին հատվածներում հակահարձակման անցան՝ իրենց դիրքերը բարելավելու նպատակով:

Հունվարի 10-ին աղրբեջանական բանակը վերսկսեց լայնածավալ հարձակումները ռազմաճակատի ամբողջ երկայնքով՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքս: Հատկապես ծանր իրավիճակ էր ստեղծվել Մատաղիս-Լյուլասազ բնագծում: Կասեցնելով թշնամու առաջխաղացումը՝ ՊԲ կազմավորումները թեժ մարտերի արդյունքում ազատագրեցին Լյուլասազ գյուղը և գերիշխող ռազմավարական բարձունքներից մեկը: Հակառակորդի «Կումանդո» զորախումբը շրջապատվեց ու գլխովին ջախջախվեց[326]: Հաջողությունն ամրապնդելու համար, ՊԲ զորամասերն ամբողջ ճակատով հակահարձակման անցան՝ խրամատներից քշելով թշնամուն:

Հունվարի 12-ի առավոտյան հակառակորդը հարձակվեց Փափրավենդ-Սալահլի-Քենգերլի, Մարտունու ՊՇ և ռազմաճակատի հարավարևելյան ուղղություններով: Կատաղի մարտեր ընթացան նաև Արցախի հյուսիսային ռազմաճակատի ամբողջ երկայնքով: Հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդն անընդհատ փորձում էր հետ գրավել կորցրած դիրքերը, սակայն ապարդյուն: Հաղրութի և Մարտունու ՊՇ-ների հարակից բնագծերի ուղղությամբ հակառակորդի գրոհները կասեցնելով՝ ՊԲ զորամասերը հակահարձակման անցան և ազատագրեցին Ներքին Աբդուռահմանլու բնակավայրը:

Հունվարի 15-ին թեժ մարտեր ընթացան ճակատային գծի ամբողջ երկայնքով: Հարավային ռազմաճակատում շարունակվեց հայ մարտիկների առաջխաղացումը: Հակառակորդը հարձակման անցավ Մարտունու և Հաղրութի ՊՇ-ների բնագծերի ուղղությամբ[327]:Մարտական գործողություններ ընթացան նաև Կարախանբեյլիի հատվածում: Ամենա երկրորդ կեսին ևս համառ մարտեր ընթացան ռազմաճակատային գծի ամբողջ երկայնքով: Ֆիզուլիի ուղղությունում՝ Կարախանբեյլիի, Վերին Աբդուռահմանլուի հատվածներում, Մարտունու ՊՇ-ում՝ Աղբուռունի տեղամասում և այլուր, Ասկերանի ՊՇ-ում Կարակաշլը, Սալահլի-Քենգերլի և Մարտակերտի ՊՇ-ի՝ Մարտակերտ-Լևոնարխ, Մատաղիս-Լյուլասազ բնագծերի, Եզնիկյումեր, Գյոդակբուռուն (նիշ 781.3) և Թարթառի ավազանի մի շարք այլ բարձունքների ուղղություններում աննկուն պաշտպանությամբ ու համարձակ հակագրոհներով չեզոքացվեցին հակառակորդի առաջխաղացման փորձերը:

Մարտական գործողությունների Քարվաճառի թատերաբեմում այնքան էլ բարեհաջող չէր իրադարձությունների ընթացքը: Հարվածային ուժերի ու տեխնիկայի գերակշռություն ստեղծելով՝ հակառակորդը սպառնալից խորանում էր շրջանի տարածքում:

Հունվարի 24-ին մարտերը Քարվաճառի շրջանում շարունակվեցին Բաղրլը, Բաբաշլար, Կամբշլը բնակավայրերի և Բուզդուխ լեռան ուղղություններում[328]: Երկու օր անց արդեն մարտեր էին մղվում Բոզլու, Բաբաշլար հատվածում: Բացառությամբ Քարվաճառի շրջանի, ԼՂՀ մյուս ռազմաճակատներում, հիմնականում, հակառակորդը մեծ կորուստներ կրելով, ստիպված նահանջեց:

Փետրվարի առաջին տասնօրյակում Քարվաճառի, Մարտակերտի, Մարտունու և Հադրութի ուղղություններում կատաղի մարտերը շարունակվեցին: Փետրվարի 1-ին հակառակորդը գրոհեց Մարտունու ՊՇ բնագիծը, սակայն տեխնիկայի ու կենդանի ուժի կորուստներ կրելով, հետ շպրտվեց:

Հակահարձակման անցնելով, հայ մարտիկներն առանց կորուստների, վերստին տիրեցին նախօրեին թողնված դիրքերին[329]: Մարտեր ընթացան նաև հարավարևելյան ռազմաճակատում: Ծանր պաշտպանական մարտերի ընթացքում խփելով 2 ծանր տանկ, հայ զինվորները կասեցրին հակառակորդի առաջխաղացումը, իսկ այնուհետև զարգացնելով հաջողությունը, անցան հակահարձակման՝ առաջնորդվելով «լավագույն պաշտպանությունը հարձակումն է» մարտավարությամբ: Սակայն հակառակորդն ամեն գնով ձգտում էր բեկում մտցնել ռազմաճակատի հենց այս հատվածում, իր հաշվարկները կառուցելով հարթավայրային գոտում աղրբեջանական բանակի մարտավարական առավե-

[325] Նույն տեղում, եր. 83 ա:
[326] Տե՛ս «Մարտիկ», 1994 թ., № 4:
[327] ԼՂՀ ՊՆԱ ՕՀՍՏ, № 141, եր. 98 բ:

[328] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 49 л., РТ № 152 (23.11.1996 г.), н. 15.01.94 г. - ок. 17.03.94 г., л. 8 б:
[329] Տե՛ս «Մարտիկ», 1994 թ., № 8:

լության մասին առասպելի վրա, ուստի հաջորդ օրը մարտական գործողությունները Ֆիզուլիի ուղղությունում վերսկսվեցին: Հաշվի առնելով տեղանքի առանձնահատկությունները, որոնք, թերևս ավելի քաջածանոթ էին հակառակորդին, ինչպես նաև ուժերի ու միջոցների գերակշռություն ստեղծելով հարվածի գլխավոր ուղղություններում, մասնավորապես, միայն 289,3 նիշով բարձունքի վրա նետվեց մի ամբողջ գումարտակ և 6 տանկ, աղրբեջանական հրամանատարությունը գրեթե համոզված էր հաղթանակի մեջ: Սակայն հայ մարտիկներն այս անգամ էլ ստիպեցին թշնամուն խոր հիասթափություն ապրել: Հենց վերոհիշյալ բարձունքի մատույցներում ծավալված մարտերի ընթացքում խփվեց 3 տանկ ու շարքից հանվեց հակառակորդի 30 զինվոր[330]:

Չհամակերպվելով իրականության հետ, թշնամին փոխեց հարձակման ուղղությունը, 2 գումարտակ, տանկեր ու ՀՄՄ-ներ շարժեց դեպի Հաղրութի գումարտակի՝ Վերին Սեյիդահմեդլիի պաշտպանական բնագծերը:

Այստեղ ևս հաջողությունը հայ մարտիկների կողմն էր. հակառակորդին պատճառելով կենդանի ուժի կորուստներ (միայն 25 սպանված[331]), հարկադրեցին նրան նահանջել ելման դիրքեր: Օրվա մարտական գործողությունների ընթացքի վրա չազդեցին անգամ գրեթե զուգահեռաբար Մարտունու ՊԾ բնագծերի ուղղությամբ ձեռնարկված հարձակումները:

Մարտական գործողությունների Քելբաջարի ուղղությունում անցիջում պայքար էր ծավալվել ռազմավարական նշանակության Չիչագլի լեռան 2267,7 նիշով բարձունքի համար:

Փետրվարի 3-4-ին հակառակորդը վերստին փորձեց մխրճվել Մարտունու ՊԾ բնագծերը: Հարձակման երկրորդ օրը գրոհի հանվեց մեծաքանակ հետևակ և 9 միավոր զրահատեխնիկա: Հայ մարտիկները, խփելով 1 S-72 տանկ, ինչպես նաև կասեցնելով հետևակի ու զրահատեխնիկայի առաջխաղացումը, հետ շպրտեցին հակառակորդին, խափանելով Մարտունու ՊԾ ռազմավարական ուղղությունում ցանկացած գնով հաջողության հասնելու նրա ծրագրերի իրագործումը: Նմանապես թշնամին ձախողման էր դատապարտված նաև Մարտակերտի ՊԾ-ում, Մ. Գրիգորյանի զորամասի պաշտպանական բնագծերի և ռազ-

[330] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 49 л., РТ № 152 (23.11.1996 г.), н. 15.01.94 г. - ок. 17.03.94 г., л. 20:
[331] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, № 152, թ. 20:

մաճակատի հարավարևելյան ուղղություններում: Ամենուր հանդիպելով հայ մարտիկների կազմակերպված, ներդաշնակված պաշտպանությանը, ինչպես նաև կուրուստներ կրելով՝ հակառակորդը ստիպված նահանջում էր, խարխլված մարտակարգերը կարգավորելու, համալրելու և վերստին գրոհի ելնելու համար: Ըստ երևույթին, հակառակորդի հույսը կնդանի ուժի ու նյութատեխնիկական պաշարների առավելության էր, սակայն ժամանակակից պատերազմում հաղթում են ոչ թե թվաքանակով, այլ հմտությամբ ու հնարամտությամբ:

Հաջորդ օրերի մարտական գործողությունները ևս եկան հաստատելու այդ ճշմարտությունը: Փորձելով շտկել իրադրությունը հյուսիս-արևմտյան ռազմաճակատում՝ հակառակորդը հարձակվեց Մարտակերտի ՊԾ 486,1 նիշով բարձունքի ուղղությամբ: Հայ մարտիկները հետ շպրտեցին թշնամուն՝ չերկնչելով անգամ մշտական հրթիռահրետակոծությունից: Իսկ ձախ թևում, հընթացս հատելով Տրտուն (Թարթառը), հայ մարտիկներն անցան հակահարձակման և նպաստավոր դիրքեր գրավեցին Տոնաշենի մոտակայքում, բռնազավթված հայկական հնամենի գյուղից 500 մ դեպի հյուսիս: Հակառակորդի բոլոր փորձերը զբաղեցրած դիրքերից հայ զինվորներին դուրս մղելու ուղղությամբ, ձախողվեցին: Ամեն անգամ տասնյակ զոհեր տալով, թշնամին հարկադրված նահանջում էր[332]: Այդուհանդերձ, հաջորդ օրվա առավոտյան ժամը 5-ին հյուսիսային ռազմաճակատի ձախ, և 8^{30}-ին՝ աջ թևերում հակառակորդը հարձակման անցավ: Աջ թևն ու կենտրոնը հաջողությամբ հետ մղեցին 4 գրոհ և թշնամուն հալածեցին մինչև ելման դիրքերը: Ապա նաև, զարգացնելով հակահարձակումը, հայ մարտիկները տիրեցին ռազմավարական նշանակության բարձունքներից մեկին՝ այնտեղ առգրավելով 3 միավոր տեխնիկա[333]:

Արցախի ՊԲ մարտավարության առանձնահատկությունները պատմական Քարվաճառի ազատագրման օպերացիայում

Պատմական Քարվաճառի ազատագրումն Արցախյան պատերազմի ուշագրավ ռազմական գործողություններից է: Ինչպես հայտնի է, ռազմավարական նշանակություն ունեցող այդ շրջանի համար հայկա-

[332] Նույն տեղում, եր. 24 բ, 26 ա:
[333] *Հարությունյան Մ.*, Տիրելով նպաստավոր բնագծերի (փետրվար. 1994 թ.), «Մարտիկ», 1999 թ., № 8:

կան զինված ուժերը երկու անգամ ռազմական գործողություններ են իրականացրել: Առաջին անգամ՝ 1993 թ. մարտի 27-ից ապրիլի 5-ը, երբ վնասազերծվել են բազմիցս Արցախի տարածք ներխուժած ադրբեջանական զինված կազմավորումների վտանգավոր հենակետերը, և ճնշվել՝ հայկական խաղաղ բնակավայրերը դաժանաբար հրետակոծող կրակակետերը: Երկրորդ անգամ՝ 1994 թ. փետրվարի 11-18-ը, երբ հայկական զինված ուժերի հակահարձակմամբ ազատագրվել են Հ. Ալիևի նախագահության օրոք հակառակորդի՝ 1993 թ. դեկտեմբերի 15-ին սկսած լայնածավալ նախահարձակման հետևանքով բռնազավթված Քարվաճառի շրջանի տարածքները, այդ թվում՝ ռազմավարական նշանակության Ամուր (Օմար) լեռնանցքը:

Քարվաճառի ազատագրման առաջին ռազմագործողության վերաբերյալ բազմաթիվ հրապարակումներում[334] տեղեկություններ կարելի է գտնել Արցախի ՊԲ-ի մարտավարական առանձնահատկությունների վերաբերյալ: Քարվաճառի ազատագրման երկրորդ ռազմագործողության պատմագրությունը[335] տակավին սկզբնավորման փուլում է, ուստի կարող է ընկալելի լինել Արցախի ՊԲ-ի մարտավարական առանձնահատկությունների հիմնահարցին առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը: Ժամանակին նպատակահարմար ենք գտել այն դարձնելու առանձին ուսումնասիրության նյութ, որպեսզի ստեղծենք հնա-

[334] ***Դանկախյան Ճ.,*** Քելբաջարի գրավման վճռի հիմքը, «Հայություն», 1993թ. ապրիլ, թիվ 5 (23). Հմմտ.՝ http://ankakhutyun.am/archives/5549 (բեռնման օրը՝ 15.12.2016 թ.), ***Հարությունյան Մ.,*** Քելբաջարի շրջանի ազատագրումը (մարտի 27- ապրիլի 5), «Մարտիկ», հ. 13(826), 4 – 11 ապրիլ, 2009 թ., էջ 3, ***նույնի,*** ...Եվ Քելբաջարն ազատագրվեց, «Շուշի», հ. 7-10, ապրիլ-մայիս 1999 թ., էջ 8, ***նույնի,*** Քելբաջարի շրջանի ազատագրումը (մարտի 27- ապրիլի 5), Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման 1700-ամյակին նվիրված՝ «Գիտության և մշակույթի հիմնահարցեր Արցախում» հանրապետական գիտաժողովի նյութերը (17-18 նոյեմբերի 2000 թ.), Ս., 2001, էջ 41-43, ***Մկրտչյան Հ.,*** Հաղթելու արվեստը, Ե., Հեղինակ. հրատ., 2011, էջ 164-169, ***Դիդիկյան Տ.,*** Քարվաճառի ազատագրումը, «Հայ զինվոր», հ. 17 (882) 4-11.05.2011թ., հ. 19 (884) 18-25.05.2011թ., հմմտ.՝ http://www.hayzinvor.am/3470.html (բեռնման օրը՝ 12.02.2016 թ.), ***Քեշյան Լ.,*** Թուրքիայի դիրքորոշումը Հայաստանի նկատմամբ ԼՂ զորքերի կողմից Քելբաջարի շրջանի ազատագրումից հետո, «Մեսրոպ Մաշտոց» համալսարանի «Լրատու» (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 2016, էջ 254-260, ***Գևորգյան Մ.,*** Քարվաճառի ազատագրումը եղավ Արցախյան գոյամարտի բեկումնային հաղթանակներից մեկը. տես http://www.times.am/?p=36650&l=am (բեռնման օրը՝ 05.03.2016 թ.):

[335] Անգլիացի լրագրող Թոմաս դե Վաալն, անդրադառնալով ադրբեջանական բանակի հյուսիսարևմտյան ճակատում 1994 թ. ձմեռային ռազմարշավին, այն որակել է որպես Արցախյան պատերազմի ամբողջ պատմության մեջ ամենասպրունավին, որը «ամենաքիչն է լուսաբանվել մամուլում (հմմտ.՝ ***Де Ваал Т.,*** Черный сад. Армения и Азербайджан между миром и войной. Перевод с англ. О. Алякринского, Л. Ю. Пантиной, М., «Политическая энциклопедия», 2014, с. 282): Հմմտ.՝ ***Հարությունյան Մ., Հարությունյան Ա.,*** Քարվաճառի շրջանի վերջնական ազատագրման պատմագրության մասին (Քարվաճառի ռազմագործողության 20-ամյակի առթիվ), «Կաճառ» տարեգիրք, Գիրք 8 (95-106), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2017, էջ 191-199:

րավորինս ճիշտ հիմքեր թեմայի հետագա հետազոտությունների և գիտական շարադրանքի համար: Այդ ուսումնասիրությունները պիտանի եղան սույն աշխատության շրջանակներում Արցախի ՊԲ-ի մարտավարության որոշ առանձնահատկություններ ներկայացնելու համար:

Ավելորդ չէ նշել, որ 1994 թ. փետրվարին Քարվաճառի հյուսիսում հայկական զինված ուժերի իրականացրած հակահարձակման մասին գրել են Հ. Գևորգյանը[336], Ի. Ղուկասովը[337], Հ. Խաչատրյանը[338], Վ. Հայրապետյանը[339], տողերիս հեղինակը[340] և ուրիշներ[341]:

Հիշյալ հեղինակներից ոչ բոլորն են անդրադարձել Քարվաճառի ուղղությամբ թշնամու նախահարձակման նպատակներին ու մտահղացմանը: ՊԲ նախկին հրամանատարի կենսագրական նոթերը թղթին հանձնած Հ. Խաչատրյանն, օրինակ, գրել է. «Ադրբեջանի հրամանատարության նպատակը պարզ էր. ճեղքել հայկական ուժերի պաշտպանությունը, դուրս գալ Քելբաջարը Կիրովաբադին կապող ճանապարհի խաչմերուկը, վերահսկողություն հաստատել ԼՂՀ համար կենսապահովման և ռազմավարական նշանակության Վարդենիս-Մարտակերտ միջանցքի նկատմամբ»[342]:

Ռազմագործողությանը մասնակցած՝ ԶՈՒ հրթիռային զորքերի և հրետանու նախկին պետ, գեներալ-մայոր Վ. Հայրապետյանը հակառակորդի պլանների մասին գրել է հետևյալը. «Ադրբեջանի ձեռնարկած

[336] ***Գևորգյան Հ.,*** Պետոն, Ե., «Միքայէլ Վարանդեան», 1994, էջ 128-130:

[337] ***Гукасов И.,*** Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян, Ростов н/Д, ЗАО «Книга», 2001, с. 28-40:

[338] ***Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.,*** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազրականչը 44, Ե., ՀՀՀ, 2008, էջ 151-160:

[339] ***Հայրապետյան Վ.,*** Տաղանդավոր զորավար գեներալ-լեյտենանտ Հրաչյա Հմայակի Անդրեասյանի հիշատակին, «Հայկական բանակ», հ. 3, 2015, էջ 123-130, ***նույնի,*** Թերթելով հերոսական էջերը (Արցախյան ազատամարտը վերհիշումներում), «Լրաբեր հասարակական գիտությունների», հ. 2, 2017, էջ 394-395:

[340] ***Հարությունյան Մ.,*** Ազատ լեռների կանչը, «Մարտիկ», 8-15. 03. 1995 թ., հ. 10, էջ 3, ***նույնի,*** Արցախյան ազատագրական մարտերը 1994 թ. փետրվարին, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հ. 1-2, Ե., 2001, էջ 73-76, ***նույնի,*** Ղարաբաղյան ազատագրական պատերազմ, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994, հանրագիտարան մեկ հատորով, Ե., ՀՀՀ, 2004, էջ 26-27, ***նույնի,*** Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994 թթ., «Կաճառ» (ԿԳԿ տարեգիրք): Գիրք 5(59-70), 2011, Շ., «Կաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2015, էջ 175-179:

[341] ***Հասրաթյան Մ.,*** Ղարաբաղյան պատերազմ, Ե., «Ամարաս», 2001, էջ 166, ***Croissant M.*** The Armenia-Azerbaijan conflict: causes and implications. Greenwood Publishing Group, 1998. p. 96, Cheterian V. War and peace in the Caucasus: ethnic conflict and the new geopolitics. Columbia University Press, 2008. p. 141-142 ևն:

[342] ***Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.,*** Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազրականչը 44, էջ 152:

այդ տխրահռչակ հարձակողական «Մուրովդաղ» օպերացիայի պլանի համաձայն՝ ադրբեջանցիները պետք է գրավեին Քարվաճառի ամբողջ տարածքը, ապա շարունակեին հարձակումը Մարտակերտի, Լաչինի և Հայաստանի Հանրապետության Վարդենիսի շրջանների ուղղություններով»[343]:

Հետագայում հայտնի են դարձել նաև ռսխի մտադրությունների առանձին մանրամասներ: Ըստ որոշ տեղեկությունների՝ «Հ. Ալիևը որոշել էր, որ հարձակողական օպերացիան պետք է սկսվի 1993 թ. դեկտեմբերի 20-ին՝ չեկիստի օրը՝ ըստ երևույթին, նկատի ունենալով, որ Խորհրդային Միությունում իր անցած չեկիստական ուղիով է հասել իշխանության գագաթին»[344]: Մինչդեռ ամեն մի մտահղացում չէ, որ իրականանում է: Այս օրինակում ևս հակառակորդի երևակայությունը բախվել է իրականության գրանիտե պատին: Պարզվել է, որ «թշնամու զինված ուժերը, մասնավորապես՝ հարձակողական խմբավորումները, պատրաստ չէին դեկտեմբերի 20-ին սկսելու մարտական գործողությունները, և հակառակորդը լայնածավալ հարձակողական օպերացիայի մեկնարկը տվեց 1993 թ. դեկտեմբերի 26-ին՝ խստաշունչ ձմռան պայմաններում, հարավից (Արաքս գետ) հյուսիս (Օմարի լեռնանցք) ավելի քան 300 կմ ձգվող ճակատով» (տե՛ս նույն տեղում): Ըստ ռազմագործողությունը ղեկավարած գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեասյանի 20-ամյա մարտական ընկեր ու կենսագիր Ի. Ղուկասովի՝ «Այս հարձակումը հայկական զորքերի ազատագրած տարածքները վերանվաճելու նախընտրական խոստումը կատարելու՝ նախագահի ընտրություններում 1993 թ. հոկտեմբերի 3-ին ընտրողների ձայների 98,8 տոկոսը հավաքած Հ. Ալիևի փորձն էր»[345]:

Ուստի, ինչպես հայտնի է դարձել հայկական ԶՈՒ հրամանատարությանը, Ադրբեջանի ղեկավարությունը՝ Հ. Ալիևի գլխավորությամբ, կարևորելով «Մուրովդաղ» օպերացիան, ծավալուն և բազմակողմանի աշխատանք էր տարել պաշտպանության նախարարության և այլ ուժային կառույցների հետ, գլխավոր շտաբում, զորամասերում և դիվիզիաներում անցկացվել էին հրամանատարաշտաբային և հատուկ մարտավարական զորավարժություններ: «Ադրբեջանական կողմը վստահ

[343] *Հայրապետյան Վ.*, Տաղանդավոր զորավար գեներալ-լեյտենանտ Հրայր Հմայակի Անդրեասյանի հիշատակին, «Հայկական բանակ», հ. 3, 2015, էջ 124:

[344] *Гукасов И.*, Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян, с. 32:

[345] Նույն տեղում, էջ 28:

էր, որ բոլոր նախապատրաստական աշխատանքները և խնդիրները կատարվում են՝ համաձայն «Մուրովդաղ» ռազմավարական օպերացիայի պլանի, սակայն նրանք հաշվի չէին առել»[346], որ Արցախի հինավուրց Մոավ լեռնաշղթայի պաշտպանությունն իրականացնելու է հայկական բանակը՝ ողջ հայ ժողովրդի գործուն աջակցությամբ:

Ռազմագործողության հրամանատարության վերաբերյալ տեղեկույթը, մեր կարծիքով, թեև գաղտնի է, սակայն որոշ հեղինակներ անդրադարձել են դրան[347]: Իսկ ոմանք էլ հաղթանակի դափնին ձգտել են վերագրել իրենց գրական հերոսին[348]:

Ինչպես հայտնի է՝ փետրվարի 11-ին սկսվեց ՊԲ զորամասերի համընդհանուր հակահարձակումը Քելբաջարի հյուսիսում: Ռազմագործողությունն իրականացվում էր 3 հիմնական ուղղություններով: Աջից ու ձախից ձեռնարկված սրընթաց գրոհով վերահսկողության տակ առնվեց 2071 նիշով բարձունքը: Չիչագլի բարձունքների ադրբեջանական խմբավորումը հայտնվեց շրջապատման մեջ: Աջ թևում Արշավիր Ղարամյանի գումարտակը գրավեց Բաղըրլը բարձունքը, Ստեփանակերտի ստորաբաժանումը՝ 2181.0, իսկ Պետրոս Ղևոնդյանի հրամանատարությամբ գործող ստորաբաժանումը՝ 2008 նիշերով բարձունքները: Հաջորդ օրն Օմարի ուղղությամբ վերսկսված մարտական գործողությունների արդյունքում ՊԲ զորամասերը ոչ միայն կասեցրել են հակառակորդի գրոհները, այլև հակահարձակման անցնելով՝ ռազմաճակատի մի քանի հատվածներում առաջխաղացում են ունեցել 1-2 կմ և տիրել ռազմավարական նշանակության մի շարք բարձունքների[349]:

Մարտակերտի ՊՇ գումարտակներից մեկը՝ Արկադի Շիրինյանի հրամանատարությամբ, հակահարձակման անցնելով՝ համարձակ շրջանցումով հաղթահարել է Մոավի ձյունածածկ լեռնաշղթան և փակել Օմարի լեռնանցքը՝ կտրելով հակառակորդի թիկունքը և զրկելով նրան ոչ միայն համալրումներ ստանալու, այլև նույնիսկ խոշոր ուժերով նահանջելու հնարավորությունից: Այդ աներևակայելի դժվարին

[346] Հմմտ.՝ *Հարությունյան Մ., Հարությունյան Ա.*, Քարվաճառի շրջանի վերջնական ազատագրման պատմագրության մասին (Քարվաճառի ռազմագործողության 20-ամյակի առթիվ), «Կռաճար» տարեգիրք, Գիրք 8 (95-106), 2017, էջ 194:

[347] Հմմտ. *Гукасов И.*, Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян, с. 33, *Հայրապետյան Վ.*, Տաղանդավոր զորավար գեներալ-լեյտենանտ Հրայր Հմայակի Անդրեասյանի հիշատակին, «Հայկական բանակ», հ. 3, 2015, էջ 126:

[348] *Խաչատրյան Հ., Ղազարյան Գ., Մարգարյան Մ.*, Հաղթանակներն՝ ինչպես եղել են. ազգականներ 44, էջ 159-160:

[349] *Գևորգյան Հ.*, Պետոն, էջ 128-130:

տարաշարժը ժամանակին կարևորվել ու բարձր է գնահատվել. «Այդ համարձակ ռազմերթը, որն, ինչպես Հաննիբալի ու Սուվորովի Ալպյան անցումները, հիացմունք է առաջացնում, հիրավի վճռորոշ նշանակություն է ունեցել հակառակորդի զորախմբերը ջախջախելու, Քելբաջարի հյուսիսն ու Օմարի լեռնանցքն ազատագրելու համար»[350]:

Պաշտպանության նախկին նախարար Ս. Օհանյանը, բարձր գնահատելով հրետանու դերը Քարվաճառի, մանավանդ՝ Ամուր լեռնանցքի ռազմագործողությունների ժամանակ, գրել է. «...Վլադիմիր Հայրապետյանի ղեկավարությամբ հզոր հրետանային բռունցք էր ստեղծվել, իսկ հակահարձակման նախօրեին... մշակվեց հետևակի հրամանատարների հետ համագործակցությունը: ... Հաջողությամբ զարգացնելով հակահարձակումը՝ հայկական ուժերը հանդիպեցին միմյանց: [Հրետանու] գիշերային կրակի վարումն ունի իր առանձնահատկությունները, բայց հետևակի ու հրետանավորների փայլուն համագործակցության շնորհիվ հրետանու կրակը դիպուկ էր ու արդյունավետ: Թշնամին չէր սպասում, որ այդչափ ուժեղ հարձակումը գիշերով էլ կշարունակվի և այն էլ՝ հրետանային այդպիսի աջակցության պայմաններում»[351]:

Ռազմագործողության պատմական նշանակության մասին հեղինակները գրեթե միակարծիք են, որովհետև այդ հաղթանակի շնորհիվ իսկապես լուծվել են օպերատիվ-մարտավարական, ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրներ:

Ինչպես արձանագրված է ՊԲ հրամանատարի հրամանում, «Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը կարևոր նշանակություն է ունեցել Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ՊԲ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու և շրջապատման սպառնալիքը վերացնելու առումներով»[352]:

Հակառակորդին հնարավորություն չի տրվել փակելու ԼՂՀ-ն Հայաստանի հետ կապող երկրորդ «կյանքի ճանապարհը», որը հատկապես կենսական է Մարտակերտի շրջանի համար, խնդրո առարկա ժամանակի կտրվածքով, մանավանդ՝ բռնազավթված բնակավայրերն ազատագրելու և բռնատեղահանված բնակչության վերադարձն ապահովելու առումներով: Վերահսկողություն է սահմանվել ռազմավարական Ամուր (Օմար) լեռնանցքի՝ մեր հանրապետության հյուսիսարևմտյան բնական սահմանի վրա՝ բնականաբար, դիրքային առավելություն ստանալով հակառակորդի նկատմամբ: Գլխովին ջախջախվել է Ամուր լեռնանցքի ուղղությամբ ամիսներ ի վեր կուտակված հակառակորդի զինուժը, շարքից հանվել կամ առգրավվել են մեծ քանակությամբ տեխնիկա, զենք ու զինամթերք: Համեստ հաշվումներով, շարքից հանվել է հակառակորդի ավելի քան 16 միավոր մարտական տեխնիկա, 5 հատ-ից, 1 ինքնագնաց ականանետ, առգրավվել թուրքական արտադրության սպառազինություն[353]:

Այսպես կոչված՝ Աղրբեջանի Հանրապետության գլխավոր դատախազ է. Հասանովը «Մուրովդաղ» ռազմագործողության տապալման համար քավության նոխազ է դարձրել զորամասի հրամանատար մայոր Ս. Իլյասովին, շտաբի պետ Զ. Իբրահիմովին, բայց, ինչպես տեղին նկատել է Ի. Ղուկասովը, լռություն է պահպանել այդ արկածախնդրական պլանը մտահղացած ռազմաքաղաքական ղեկավարության ձախողման, առավել ևս՝ նախահարձակ հակառակորդին ջախջախած հայկական բանակի սխրագործության մասին: Համեմատելով հակառակորդ կողմերի զինված ուժերի անձնակազմերի բարոյաքաղաքական վիճակը և դաժան ձմռան պայմաններում մարտնչելու պատրաստությունը՝ Ի. Ղուկասովը հատկանշել է այդ առումներով հայկական բանակի առավելությունը: Նույն հեղինակը հայկական զինված ուժերի կողմից «Մուրովդաղ» ռազմագործողության տապալման նշանակությունն ընդգծելու համար դրանով է պայմանավորել Աղրբեջանի ղեկավարության՝ մարտական գործողությունները դադարեցնելու խնդրանքը, ապա և Բիշքեկում 1994 թ. մայիսի 12-ին զինադադարի վերաբերյալ համաձայնության ստորագրումը[354]:

Այսպիսով, պատմական Քարվաճառի ազատագրման օպերացիաները Արցախյան պատերազմի ուշագրավ ու փառապանծ էջերից են: Մասնավորապես երկրորդ օպերացիան դարձնելով առանձին ուսումնասիրության նյութ՝ ձգտել ենք հնարավորինս ճիշտ հիմքեր ստեղծել թեմայի հետագա գիտական շարադրանքի համար: Պատմական Քարվաճառում ազրեսիվ գործողություններ նախաձեռնելով՝ Աղրբեջանի ԶՈՒ հրամանատարությունը նպատակ ուներ ճեղքել հայկական ուժե-

[350] *Հարությունյան Մ.*, Ազատ լեռների կանչը, «Մարտիկ», 8-15. 03. 1995 թ., հ. 10, էջ 3:
[351] *Օհանյան Ս.*, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը (հատառոտ ուրվագիծ), Ե., 2012, էջ 172-173:
[352] ՊԲ գլխավեդակային ծառայություն, «ԼՂՀ ՊԲ հրամանատարի հրամաններ.1994 թ.», հրտման N 19 առ 12 մարտի 1994 թ.:

[353] *Հարությունյան Մ.*, Ազատ լեռների կանչը, «Մարտիկ», 8-15. 03. 1995 թ., հ. 10, էջ 3:
[354] Հմմտ. *Гукасов И.*, Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян, с. 37:

րի պաշտպանությունը, դուրս գալ Քարվաճառ քաղաքը Կիրովաբադին կապող ճանապարհի խաչմերուկը, վերահսկողություն հաստատել ԼՂՀ-ի համար կենսապահովման և ռազմավարական նշանակության Վարդենիս-Մարտակերտ միջանցքի նկատմամբ: Հետևաբար, ավելորդ չէ կրկնել, որ հայկական ինքնապաշտպանության ուժերի այդ հաղթանակի շնորհիվ ոչ միայն ձախողվել են Ադրբեջանի զինված ուժերի գավթողական պլանները, այլև լուծվել են ինչպես օպերատիվ-մարտավարական ու ռազմաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական մի շարք հրատապ խնդիրներ:

Քելբաջարի շրջանի հյուսիսային մասի և Օմարի բարձրադիր լեռնանցքի ազատագրումը կարևոր նշանակություն ունեցավ Մարտակերտի շրջանում ազատագրական մարտեր մղող ՊԲ ստորաբաժանումների թիկունքն ապահովելու և շրջապատման սպառնալիքը վերացնելու առումով: Հակառակորդը չկարողացավ փակել ԼՂՀ-ն Հայաստանի Հանրապետության հետ կապող երկրորդ «կյանքի ճանապարհը», որը հատկապես կենսական էր Մարտակերտի շրջանի համար, խնդրո առարկա ժամանակի կտրվածքով՝ մանավանդ բռնազավթված բնակավայրերն ազատագրելու և բռնատեղահանված բնակչության վերադարձն ու անվտանգությունն ապահովելու առումներով: Վերահսկողություն սահմանվեց Օմարի ռազմավարական լեռնանցքի՝ Արցախի Հանրապետության հյուսիսարևմտյան բնական սահմանի վրա, բնականաբար դիրքային առավելություն ստանալով հակառակորդի նկատմամբ: Օմարի լեռնանցքի ուղղությամբ ամիսներ շարունակ կուտակված հակառակորդի զինուժի ջախջախումը, մեծ քանակությամբ տեխնիկայի, զենք ու զինամթերքի շարքից հանումը կամ առգրավումը բխում էին հայկական պետականության անվտանգության շահերից[355]:

Օմարի ազատագրման օպերացիայի հաջող ելքը կանխորոշեց նաև հյուսիսային ռազմաճակատում ՊԲ ստորաբաժանումների առաջխաղացման հաջողությունը: Հետ մղելով հակառակորդի հարձակումը Մարտակերտի ՊՇ նորանվաճ բնագծերի ուղղությամբ՝ հայ մարտիկներն անցան հակահարձակման և տիրեցին 854,0 ու 1000,7 նիշերով բարձունքներին: Միաժամանակ, Շահումյանի պարտիզանները, հանկարծահաս հարվածով, հակառակորդին դուրս շպրտեցին Դաստակերտից և համատեղ ուժերով տիրեցին 854,0 նիշով բարձունքին: Հակառա-

[355] Հմմտ.՝ ***Հարությունյան Մ.,*** Արցախյան ազատագրական մարտերը 1994 թ. փետրվարին, «Կրթությունը և գիտությունը Արցախում», հմ. 1-2, Եր., 2001, էջ 75:

կորդը փորձեց հետ խլել կորսված դիրքերը, սակայն արժանի հակահարված ստացավ:

Փետրվարի 20-ին, մարտական տեխնիկայի աջակցությամբ, թշնամին վերսկսեց հարձակումը հյուսիսում: Արցախի ՊԲ մարտիկները հետ մղեցին այն: Տոնաշենի մոտ պարտություն կրելուց հետո, հակառակորդն ստիպված էր հետ քաշվել ու դիրքեր բռնել Տրտուի մոտ, ճանապարհի խաչմերուկում: Փետրվարի 19-ին ռազմաճակատի հյուսիսարևելյան, իսկ 21-ին հյուսիսարևմտյան (Մաղավուզի) հատվածներում կասեցնելով հակառակորդի կատաղի հարձակումները՝ Մարտակերտի ՊՇ մարտիկները նպաստեցին Տոնաշենի ուղղությունում նոր հաջողությունների նվաճմանը:

Հյուսիսում ձախողվելով, հակառակորդն ուժեղացրեց ճնշումը հարավ-արևելքում: Փետրվարի 22-ին հարձակման ենթարկվեցին Կարախանբեյլիի ուղղության հայկական դիրքերը: Մարտեր ծավալվեցին նաև Մարտունիու ՊՇ Մարզիլու-Կուրոպատկինո հատվածում, որտեղ ևս թշնամին ստիպված եղավ նահանջել ելման դիրքերը: Փետրվարի 25-ին հրետանային նախապատրաստությունից հետո, տանկերի ու ՀՄՄ-ների աջակցությամբ, հակառակորդը հարձակվեց Աշանի գումարտակի պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Գումարտակի մարտիկները փոխհամաձայնեցված գործողություններով հետ շպրտեցին թշնամուն: Փետրվարի 26-27-ին ծավալված մարտերում թշնամու մեծաքանակ ուժերը հետ շպրտվեցին նաև հարավարևելյան ռազմաճակատից, սակայն շարունակվում էր Հորադիզից մինչև Խուստուփի բարձունքներն ընկած հայկական պաշտպանական բնագծերի հրետակոծությունը: Փետրվարի 28-ին մղված մարտերի արդյունքում ՊԲ զորամասերն առաջ անցան Ներքին Սեյիդահմեդլիի ուղղությամբ և դիրքեր բռնեցին 288,5, 291,3, 309,9 նիշերով բարձունքների վրա[356]:

Ամփոփելով փետրվար ամսում ընթացած մարտական գործողությունների արդյունքները՝ նշենք, որ միայն Նովրուզլուից մինչև Կարախանբեյլի ընկած ճակատային գծի երկայնքով 15 հարձակում էր ձեռնարկվել, բայց ապարդյուն: Ամեն անգամ մարտադաշտում թողնելով բազմաթիվ դիակներ ու ռազմական տեխնիկա՝ հակառակորդը ստիպված էր նահանջել: Ռազմաճակատի միայն այդ հատվածում հակառակորդը կորցրեց 9 տանկ, այդ թվում 7-ն՝ ընդամենը 2 օրում: Իսկ ընդհա-

[356] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 49 л., РТ N 152 (23.11.1996 г.), н. 15.01.94 г. - ок. 17.03.94 г., л. 38:

նուր առմամբ, փետրվարին թշնամին կորցրեց ավելի քան 2 տասնյակ միավոր զրահատեխնիկա և շուրջ 1000 զինվոր ու սպա[357]:

Փաստերը վկայում են, որ պատերազմը հակառակորդի համար վերածվել էր մարդկային ու նյութատեխնիկական պաշարների վատնման ասպարեզի, ինչը, սակայն, չէր արդարացնում ադրբեջանցի ռազմամոլների զիշատիչ հույսերը, իսկ ձախողումների շղթան, որը տրամաբանորեն սառը ցնցուղի դեր պիտի խաղար, ընդհակառակն ավելի էր գրգռում նրանց հիվանդ երևակայությունն ու ծավալապաշտական զառանցանքները:

Արցախի ՊԲ մարտավարության առանձնահատկությունները 1994 թ. գարնանային ռազմարշավում

Ռուսաստանի միջնորդությամբ կրակի դադարեցման մասին փաստաթուղթը թեև Ադրբեջանը ևս ստորագրել էր, սակայն ռազմաճակատի բազմաթիվ հատվածներում շարունակվում էին նրա զինված ուժերի սադրիչ գործողությունները և հրաձգությունները, ինչպես նաև զորքերի տեղաշարժերը: Մասնավորապես, հրետակոծվեցին և ՀՄՄ-2-ի կրակակետերի թիրախ դարձան Մարտունու ՊԾ բնագծերը: Իր իսկ նախաձեռնած մարտերի ընթացքում տալով 2 սպանված և 25 վիրավոր, հրետանային չդադարող կրակի քողի տակ, հակառակորդը հարկադրված էր նահանջել: Կեսօրին կրակի տակ առնվեցին Սալահլի-Քենգերլիի հայկական պաշտպանական դիրքերը: Հաուբիցներից, «Գրադ» կայանքից և տանկի հրանոթից հրթիռահրետակոծվեցին Մ. Գրիգորյանի զորամասի պաշտպանական բնագծերը: Հրաձգային զենքի և նռնականետների կրակի թիրախ դարձավ նաև Ն. Մոդոմոնյանի զորամասի առաջնագիծը[358]:

Բացի վերոհիշյալ խախտումներից, ադրբեջանական կողմն, օգտագործելով հրադադարի ընձեռած հնարավորությունները, ուժեր ու միջոցներ էր կուտակում ռազմաճակատի տարբեր հատվածներում: Դեռ ավելին, Ֆիզուլիի տեղամասում բնագծից առաջանալով ավելի քան կես կիլոմետր, հակառակորդի ստորաբաժանումը սկսեց խրամատա-

[357] «Մարտիկ», հմ. 10, 1994 թ.:
[358] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀԱՏ, հմ. 152, թթ. 39, 40:

վորվել[359]: Այս և բազմաթիվ այլ փաստեր միանշանակորեն վկայում են, որ Ադրբեջանը շարունակում էր հավատարիմ մնալ հակամարտությունը սոսկ զենքի ուժով լուծելու իր ռազմավարությանը: Նա դեռևս բեկում մտցնելու հույսեր էր փայփայում և ձգտում էր հաջողության հասնել հարավարևելյան ռազմաճակատում: Դա դժվար չէր կռահել, մանավանդ՝ Քելբաջարի ու Մարտակերտի ճակատներում նրա պարտություններից և հարձակման լայն հնարավորությունների սպառումից հետո: Հաստատող օպերատիվ տեղեկություններ ստանալով՝ ՊԲ հրամանատարությունը նախօրոք ուժեղացրեց հարավարևելյան բնագծերը՝ նախատեսելով կտրուկ հակահարձակման միջոցով պարտության մատնել հակառակորդի այդ ուղղության զորամասերը և գրավել նպատակավոր բնագծեր: Մասնավորապես, Հորադիզ երկաթուղային հանգույցի նկատմամբ վերահսկողության սահմանումը հնարավորություն կընձեռեր զգալիորեն կրճատել ճակատային գիծը, ինչն իր հերթին կնպաստեր քիչ ուժերի ու միջոցների ներգրավմամբ հարավարևելյան ռազմաճակատի պաշտպանության հուսալիությունը բարձրացնելուն:

Ինչպես և սպասվում էր, մարտի 3-ին հակառակորդը հարձակողական գործողություններ սկսեց Ներքին Սեյիդահմեդլիի ուղղությամբ և գավթեց այն: Միաժամանակ, Գյուդ-Հորադիզից թշնամին զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակում ձեռնարկեց 308,1 նիշով բարձունքի ուղղությամբ[360]: Հարձակումը հետ մղելով՝ ՊԲ զորամասերն անցան հակահարձակման: Հակառակորդին հրադադար պարտադրելու հենց այսպիսի համարժեք ու վճռական գործողությունները կարելի է համարել 1994 թ. գարնանային ռազմարշավում ՊԲ մարտավարության առանձնահատկություններից մեկը:

Ներքին Սեյիդահմեդլիի ճակատագծում կարևորվում էր հատկապես ռազմավարական նշանակության 309,9 նիշով բարձունքի գրավումը: Թշնամու դասավորության առաջին գծից մարտերը տեղափոխվեցին երկրորդ գիծ: Հակառակորդը կատաղի դիմադրություն էր ցույց տալիս գերեզմանոցում և գյուղի ծայրում գտնվող դպրոցի շենքում: Կեսօրից հետո ՊԲ ստորաբաժանումները տիրեցին 309,9 ու դրանից ձախ ընկած բարձունքներին և պաշարման օղակի մեջ առան Ն. Սեյիդահ-

[359] ***Հարությունյան Մ.,*** Հակառակորդի ներաճողական նկրտումները ձախողելով (մարտ. 1994 թ.), «Մարտիկ», հմ. 11, 1999 թ.:
[360] Նմմն.՝ ***Հարությունյան Մ.,*** Հարավարևելյան ուղղություն. մարտերը շարունակվում են, «Մարտիկ», հմ. 11, 1994 թ.:

մեղիին[361]: Զարգացնելով հաջողությունը նախորդ օրվա առաջխաղացման ուղղությունում՝ Հադրութի ՊՇ ստորաբաժանումները գրավեցին հակառակորդի խրամատների ևս երկու գիծ: Հաղթահարելով թշնամու հրետանային կատաղի կրակի ծածկոցը՝ հայ մարտիկները տիրեցին ևս մի գերիշխող բարձունքի և գյուղը գրոհեցին նրա արևելյան կողմից: Պաշարված թշնամին շարունակում էր դիմադրել: Հետաձգելով գյուղ մտնելը՝ ՊԲ ստորաբաժանումները գրավեցին Ալխանլուի մոտակա բարձունքը: Հակառակորդն անխնա հրթիռահրետակոծում էր կորսված դիրքերը՝ դրանով իսկ ստիպելով հայ մարտիկներին անհապաղ շարունակել առաջխաղացումը: Այս մարտավարական առանձնահատկությունը դիտարկելի է Արցախյան պատերազմի գրեթե բոլոր փուլերում: Այն կարելի է ձևակերպել այսպես. **նվաճված բնագծերում երկար մնալու և հեռահար հրթիռահրետակոծություններից կորուստներ կրելու փոխարեն նպատակահարմար է սրընթաց հետապնդել ճողոպրող ոսխին և պատեհաժամանակ վնասազերծել նրա հենակետերը և կրակակետերը: Թշնամու հրետանային ու հրթիռային կրակակետերը ճնշելու նպատակը հաճախ ընկած էր լինում օպերացիաների պլանավորման ու իրականացման մտահղացումների հիմքում:**

Հարավարևելյան ռազմաճակատում կատաղի մարտեր բորբոքվեցին հատկապես 71-րդ առանձին հրաձգային գումարտակի պաշտպանական դիրքերի ուղղությամբ: Հրետանային նախապատրաստությունից հետո ՊԲ ստորաբաժանումները գրոհեցին Ն. Մեյիդահմեդլի գյուղը: Այն պաշտպանում էին մոտ 500 զինառայողներ, 1 Տ-72 տանկ, 1 ՀՄՄ[362]: Մինչև մթնշաղ տևած մարտերի արդյունքում հայ ռազմիկներին հաջողվեց ևս մեկ կիլոմետրով մոտենալ գյուղին: ՊԲ զորամասերին հաջողությունն ուղեկցում էր նաև ռազմաճակատի այլ հատվածներում, հատկապես համառ էին մարտերը Շյուքյուրբեյլիի ուղղությունում: Մարտի 6-ին մարտերը հարավարևելյան ռազմաճակատում նոր թափով վերսկսվեցին: Հրետանու և հարձակողական տեխնիկայի աջակցությամբ հակառակորդը գրոհեց ՆԳՆ Ներքին զորքերի կողմից վերահսկվող դիրքերը: Գրոհը կասեցվեց, թշնամին հետ շպրտվեց: Հակահարձակման անցան ԿՊՇ և Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները, որոնց միացան նաև Շուշիի առանձին գումարտակը, Հադրութի ՊՇ և

[361] Նույն տեղում:

[362] Նույն տեղում: Ավելի հանգամանալից տե՛ս մեր հուշերը՝ ... Հատվում են հեռացող ներկան ու մոտեցող անցյալը (զինթղթակցի նոթատետրից), «Մարտիկ», հմ. 14, հմ. 15, 1997 թ. [ստորագրություն՝ Մ. Ահյան]:

Ներքին զորքերի ստորաբաժանումները: Հադրութի ՊՇ մարտիկները ժամը 15-ին վերջապես մտան Ն. Մեյիդահմեդլի: Իսկ երեկոյան գյուղն ամբողջությամբ ու 309,9 նիշով բարձունքն անցան հայ մարտիկների վերահսկողության տակ:

Մարտի 9-ին հակառակորդը հարձակման անհաջող փորձ ձեռնարկեց Շուքյուրբեյլի - Ն. Մեյիդահմեդլի ճանապարհի մոտակայքում: Երեկոյան հրթիռահրետանային կրակի տակ առնելով Կուրոպատկինոյից մինչև Աղդամից հարավ-արևելք ընկած հայկական պաշտպանական դիրքերը, հակառակորդը հարձակման անցավ: Մոտ 3 ժամ տևած կատաղի մարտերից հետո, կորուստներ կրելով, թշնամին ստիպված էր նահանջել: Մարտի 10-ի առավոտյան հակառակորդը ռազմական գործողություններ ծավալեց Մարտունու և Ասկերանի ՊՇ-ների ուղղություններով՝ կիրառելով նաև ռազմական ուղղաթիռներ: Այդուհանդերձ, թշնամու հարձակումը կասեցվեց: Հաջորդ օրը հակառակորդը, զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակում ձեռնարկեց ՊԲ-ի՝ Ֆիզուլիի ուղղության նոր դիրքերի վրա (Կարախանբեյլիից աջ): Հակառակորդը գրոհեց նաև Աղդամից հարավ ընկած Աջարլը և Մարզիլու բնակավայրերի հայկական պաշտպանական բնագծերը: ՊԲ մարտիկները, հմուտ ու կազմակերպված գործողություններով, ստիպեցին հակառակորդին երկու հատվածից էլ նահանջել ելման դիրքերը[363]: Հաջորդ օրը, հրթիռահրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդը վերստին գրոհեց Աջարլըի և Նովրուզլուի ուղղություններով, սակայն մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ, խուճապահար նահանջեց:

Թշնամին չէր թուլացնում ճնշումը նաև Օմարի ռազմավարական լեռնանցքի ուղղությամբ: Տակավին մարտի 6-ից թշնամու ծավալած հարձակողական գործողությունները համառ մատերով կասեցվում էին, սակայն հաջորդ օրերին հայկական ուժերը ժամանակավորապես նահանջեցին պաշտպանական բնագծի մի բարձունքից: Մարտի 20-ին ՊԲ ստորաբաժանումները կատարեցին Օմարի լեռնանցքի շրջանում հանձնված բարձունքը վերադարձնելու մարտական խնդիրը:

Հակառակորդի խմբավորումը ջախջախելու և նպաստավոր դիրքեր զբաղեցնելու նպատակով, մարտի 18-ին Հադրութի ՊՇ ստորաբաժանումները, հրետանային նախապատրաստությունից հետո, մարտա-

[363] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, հմ. 152, եր. 45 թ:

կան գործողություններ սկսեցին Ն. Սեյիդահմեդլիի ուղղությամբ: Հաջորդ օրը Ֆիզուլիի ուղղությունում կասեցնելով հակառակորդի առաջխաղացումը՝ ՊԲ ստորաբաժանումները հետապնդեցին նրան մինչև ելման դիրքերը: Փորձելով օգնել նեղն ընկած հարևան զորամասերին, հակառակորդը ժամը 18-ին գրոհեց 2-րդ ՊԾ դիրքերից մեկը: Հայ մարտիկները «Ֆագոտով» խփեցին հակառակորդի 1 տանկ, ինչն էլ վճռեց մարտի ելքը: Մարտի 22-ին աղրբեջանական կազմավորումները հարձակման անցան ռազմաճակատի հարավարևելյան հատվածի ուղղությամբ: Հաջողությամբ կասեցնելով թշնամու գրոհները՝ ՊԲ ստորաբաժանումները հակահարձակում ձեռնարկեցին և Ալխանլուի ուղղությունում տիրեցին հակառակորդի պաշտպանության առաջին բնագծին: Կեսօրին մոտ վերահսկողության տակ առնվեց նաև երկրորդ գիծը: 295,9 նիշով բարձունքի և անմիջապես Ալխանլուի պաշտպանության առաջին գծի համար ընթացող մարտական գործողություններն ավարտվեցին նշված բնագծերը ՊԲ-ի վերահսկողության տակ առնելով: Հակառակորդը հարկադրված թողեց նաև 291,3 և 280,1 նիշերով բարձունքները:

Մարտի 22-ի լույս 23-ի գիշերը, հրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդը գրոհեց Աղդամի օդանավակայանից մինչև Աշանի գումարտակի դիրքերն ընկած ճակատային գիծը: Կատաղի փոխհրաձգությունից հետո, հակառակորդը նահանջեց: Հարավարևելյան ռազմաճակատում վաղ առավոտյան մարտերն Ալխանլուի, Շուքյուրբեյլիի և 280,1 նիշով բարձունքի ուղղությամբ վերսկսվեցին[364]:

Մարտի 26-ին հակառակորդը հետախուզական գրոհ ձեռնարկեց հարավարևելյան ռազմաճակատի Ալխանլու բնակավայրի մերձակայքում տեղաբաշխված հայկական դիրքերի ուղղությամբ: Գրեթե 4 ժամ տևած մարտերից հետո, թշնամին անկանոն նահանջեց՝ մարտադաշտում թողնելով տասնյակ դիակներ:

Մարտի լույս 28-ի գիշերը, հրետանային նախապատրաստությունից հետո, 5 տանկի աջակցությամբ, թշնամին Աֆաթլիից հարձակում գործեց Ասկերանի ՊԾ 31-րդ առանձին մոտոհրաձգային գումարտակի պաշտպանական դիրքերի վրա, իսկ մոտավորապես ժամը 5-ին հարձակման անցավ Ասկերանի ՊԾ ճակատային ամբողջ գծի երկայնքով: Երկու ռմբակոծիչներ, երեք մարտական ուղղաթիռներ, քսանի հասնող

[364] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 48 л., РТ N 153 (23.11.1996 г.), н. 17.03.94 г. - ок. 05.05.94 г., л. 5:

մարտական տեխնիկա և հարյուրավոր հետևակայիններ ընդգրկող թշնամու հարվածային խմբավորումը խնդիր ուներ ճեղքել Ասկերանի ՊԾ բնագիծը, դուրս գալ Բարդա-Աղդամ մայրուղին և, չեզոքացնելով ձախ թևում մարտնչող 31-րդ գումարտակը, հնարավորության դեպքում, ներխուժել Աղդամ: Ռազմավարական նկատառումներով ժամանակավորապես թողնվեց Կարակաշլը գյուղը: Բուն դիմադրությունը սկսվեց երկրորդ բնագծից: Հյուծելով թշնամու հարձակողական խմբերի ուժերը՝ հայ մարտիկներն ազատագրեցին Կարակաշլըն: Հակառակորդն, ընդհանուր առմամբ, կորցրեց 6 միավոր Տ-72, 2 միավոր ՀՄՄ-2, 1 միավոր ՀՄՄ-1, 1 միավոր քարշակ (ՄՏԼԲ) և հետևակ տեղափոխող 1 «ԿամԱԶ» բեռնատար[365]:

Օրվա ընթացքում մարտական գործողություններ ծավալվեցին նաև Մարտունու ՊԾ Նովրուզլուի և Հադրութի ՊԾ Ալխանլուի մերձակա պաշտպանական բնագծերի հատվածներում: Սակայն, ԼՂՀ օդային սահմանը խախտած և Նովրուզլուի վրա ռումբեր նետած ჩինգ ինքնաթիռներն անգամ չկարողացան ազդել մարտերի ընթացքի վրա: Հայ մարտիկի բազկի ուժը զգալով, հակառակորդն ամսվա վերջին երկու օրերին հարաբերական հանգստություն էր պահպանում՝ չհրաժարվելով սակայն, ուժերի նոր կուտակումներ ու վերադասավորություններ կատարելուց:

1994 թ. ապրիլի առաջին ինֆորյակում, կապված հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերի հետ, Աղրբեջան-ԼՂՀ հակամարտության գոտում տիրում էր հարաբերական անդորր: Այդ դավաղիր լռությանն այնուհետև հաջորդեցին նոր ռազմագործողություններ, որոնց համար թատերաբեմ ծառայեցին հիմնականում Մարտակերտի շրջանի հյուսիսային ու արևելյան հատվածները:

Ապրիլի 10-ին հակառակորդը հարձակվեց Մարտակերտի շրջանի հյուսիսում գտնվող Քաչալ սարի ու Դաստակերտի պաշտպանական դիրքերի ուղղություններով: Հետ շպրտելով թշնամուն, Մարտակերտի ՊԾ ստորաբաժանումները նախօրոք զբաղեցրած ելման դիրքերից անցան հակահարձակման երեք՝ Գյուլիստանի, Եղակերի ու Արեգասարի ուղղություններով: Հակառակորդի համար տհաճ անակնկալ էր Արեգասարի գրավումը: Դեռևս ապրիլի 9-ին, գրոհային խումբն անցնելով Եղիշե Առաքյալի վանքի մոտով, աննկատ հասել էր Արեգասարի մոտակա բացատին, ուր հակառակորդի ճամբարն ու զրահատեխնիկան էին: Լուսա-

[365] Նույն տեղում, եր. 8 բ.: Ավելի հանգամանալից տես «Խաչեն», հմ. 4, 1994 թ., «Մարտիկ», հմ. 35, 1996 թ.:

բացին ձեռնարկված գրոհը կես ժամ անց պսակվել էր հաջողությամբ: Հինգ դիակ ու ամբողջ զրահատեխնիկան լքելով՝ թշնամին փախուստի էր դիմել: Դեպի նպատակակետ տանող ճանապարհի խաչմերուկում նա կոտրելով հակառակորդի դիմադրությունը՝ հայ մարտիկները շարժվեցին առաջ և անտառով եկան ռազմավարական նշանակության Արեգասար բարձունքը[366]: Մի շարք նպաստավոր դիրքերի տիրեցին նաև Մ. Գրիգորյանի զորամիավորման մյուս ստորաբաժանումները: Շահումյանցի պարտիզանները մտան Գյուլիստան, բայց այնտեղ հաստատվել չկարողացան: Այդ հինավուրց բնակավայրում և Եղակերում շարունակվող մարտերին զուգընթաց, հայկական մյուս ստորաբաժանումներն ազատագրված բնագծերում ամրապնդեցին իրենց դիրքերը:

Ապրիլի 10-ի լույս 11-ի գիշերը Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումները հանկարծակի հակագրոհով ազատագրեցին Լևոնարխի և Մատաղիսի վրա գերիշխող 530,9 նիշով բարձունքները: Հետմիջօրեին, հակառակորդը հրետանու և օդուժի աջակցությամբ հակահարձակման փորձ ձեռնարկեց: Ծանր մարտերի արդյունքում հետ շպրտելով հակառակորդին, Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումներն անմիջապես հակահարձակման անցան: Լևոնարխի մատույցներում դիրքավորվելով, թշնամին կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Սակայն հայրենի գյուղն ու օջախն ազատագրելու մղվող մարտակերտցի զինվորների առաջխաղացումն անկասելի էր: Ճեղքելով թշնամու պաշտպանության գիծը, նրանք լիովին ազատագրեցին Լևոնարխ գյուղը[367]: Նույն օրը, Մարտակերտի ռազմաճակատին աջակցելու նպատակով, մարտական գործողություններ ծավալեցին նաև Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները, որոնք հաջողությամբ ճնշեցին Փոքր Աֆաթլի գյուղի թշնամական կրակակետերը:

Ապրիլի 12-ին մարտերը ռազմաճակատի հյուսիսարևելյան ու արևելյան հատվածներում վերսկսվեցին: Մարտունու ՊՇ ստորաբաժանումները Նովրուզլուի, իսկ Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները Յուսիֆջանլուի ուղություններով հակահարձակման անցան: Հայ մարտիկները մտան Յուսիֆջանլու: Դրությունը փրկելու համար հակառակորդը 4 միավոր զրահատեխնիկա նետեց Յուսիֆջանլուի ու Աֆաթլիի կողմերը: Այդուհանդերձ, ՊԲ ստորաբաժանումները դուրս եկան Յուսիֆջանլու և Կիյամադդինլի գյուղերի արանքը: Մարտերը շարունակ-

[366] «Ազատամարտ», հմ. 18, 1994 թ.:
[367] «Մարտիկ», հմ. 17, 1994 թ.:

վեցին Յուսիֆջանլուի գերեզմանոցի մոտակայքում, 239,8 նիշով բարձունքի ստորոտում, ուր հակառակորդն, ունենալով մեծ ուժեր ու միջոցներ, կատաղի դիմադրություն էր ցուցաբերում[368]:

Կարևոր նշանակություն ունեին Թալիշի ուղղությամբ ծավալված ազատագրական մարտերը: Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումները Լևոնարխից հարձակում ձեռնարկեցին Չայլուի ուղղությամբ և տիրեցին դեպի գյուղ տանող կամրջին, Վերին Չայլուի ֆերմաներին ու ջրաղացին: Դիրքավորվելով այդ բնագծում՝ Մարտակերտի ՊՇ զինվորները վերահսկողության տակ առան Լևոնարխ-Չայլու-Թալիշ ճանապարհների խաչմերուկն ու ջրաղացը և հաջողությամբ հետ մղեցին հակառակորդի երկու գրոհները: Մատաղիսում և նրա շուրջ գտնվող հակառակորդի զորամասերը հայտնվեցին Թալիշի բարձունքներին հասած Մ. Գրիգորյանի և Լևոնարխի ուղղությունում հաստատված Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումների արանքում և խցանի նման դուրս շպրտվեցին Թալիշ-Լևոնարխ գծից այն կողմ[369]:

Ապրիլի 13-ին մարտական գործողությունները Ասկերանի, Մարտակերտի ՊՇ-ներում շարունակվեցին: Հակառակորդի ստեղծած ականադաշտերի խիտ ցանցը խոչընդոտում էր Տոնաշենի ուղղությամբ հայկական ստորաբաժանումների առաջխաղացմանը: Կեսօրից հետո հակառակորդը հակահարձակման անցավ Մարտունու և Ասկերանի ՊՇ-ների բնագծերի կցվածքի հատվածում: Ապրիլի 14-ին Մարտակերտի ՊՇ հյուսիսում ազատագրական մարտերը վերսկսվեցին: Հայկական կազմավորումները երեկոյան կողմ տիրեցին 831,2, 701,3 նիշերով բարձունքներին և ազատագրեցին հնամենի Թալիշ գյուղը: Չհաշտվելով պարտության հետ, հրթիռահրետանային նախապատրաստությունից հետո, հակառակորդն ապրիլի 15-ին հարձակում ձեռնարկեց Մարտակերտի ՊՇ հյուսիսում, բայց ապարդյուն: Կասեցնելով թշնամու առաջխաղացումը, հայ զինվորները վստահաբար շարունակում էին վերահսկել գրաված նպաստավոր բնագծերը: Հակահարձակման արդյունքում Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումները դուրս եկան երկաթբետոնե կամրջի, ճանապարհի երկայնքով՝ մինչև 701,3 նիշով բարձունքն

[368] ԼՂՀ ՊՆԱ, ՕՀՍՏ, հմ. 153, եր. 17 բ:
[369] *Հարությունյան Մ.*, Ազատագրվում են բռնազավթված գյուղերը, «Մարտիկ», հմ. 17, 1994 թ.:

ընկած բնագիծը: Հակառակորդը հարկադրված հետ քաշվեց և պաշտպանություն բռնեց նախօրոք փորված դիրքերում[370]:

Ադրբեջանական հրամանատարությունը զգալով, որ Մարտակերտի ուղղությունում ձախողման է դատապարտված, որտեղ հայ մարտիկներն ազատագրական մարտեր էին մղում, մարտական գործողությունները տեղափոխեց հարավարևելյան ռազմաճակատը: Ապրիլի 15-ի վաղ առավոտյան, տանկերով ու մեծաքանակ հետևակով հակառակորդը հարձակման անցավ Ալխանլուի ճանապարհից աջ, 295,3 բարձունքի, Կարմիր շուկայի և Մաճկալաշենի գումարտակների դիրքերի, Մարտունու ՊԾ բնագծերի հետ կցվածքի ուղղություններով: Հակառակորդը վերատին հույսը դրել էր ուժերի ու միջոցների գերակշռության վրա: Մասնավորապես, Մարտունու ՊԾ-ի հետ կցվածքում նա հարձակման էր հանել 2, Ալխանլուի և Ներքին Սեյիդահմեդլիի ուղղություններով՝ երկուական, ՆԳՆ ստորաբաժանումների դիրքերի վրա՝ 3 տանկ: Համառ մարտերից հետո, հայ մարտիկները ժամանակավորապես թողեցին պահակակետերից մեկը, որը, սակայն, 3 ժամ անց, հակագրոհով ազատագրեցին[371]:

Ապրիլի 15-ի լույս 16-ի գիշերը, հրթիռահրետակոծելով Յուսիֆջանլուի հայկական պաշտպանական դիրքերը, հակառակորդը հարձակման անցավ նաև այս ուղղությամբ, սակայն Ասկերանի ՊԾ մարտիկների հմուտ ու փոխհամագործակցված գործողությունների արդյունքում, թշնամին հետ շպրտվեց: Վաղ առավոտյան մարտեր ծավալվեցին ԼՂՀ հյուսիսում, ուր ՊԲ ստորաբաժանումները, նեղելով թշնամուն, թիզ առ թիզ ազատագրում էին հայրենի հողը: Հենց այդ գերնպատակն էլ շարժառիթավորում էր հայ ազատամարտիկների գործողությունները:

Ապրիլի 16-ի առավոտյան մարտերը վերսկսվեցին նաև Ֆիզուլիի ուղղության արևելյան ու հյուսիսարևելյան հատվածներում: Թշնամին, կենդանի ուժի կորուստներ կրելով և մարտադաշտում թողնելով 1 տանկ, խուճապահար նահանջեց: Կենտրոնական ենթակայության զորամասը, կատաղի մարտեր մղելով, մոտ 4 կմ խորացավ թշնամու դասավորության մեջ և մտավ Գյուլիջա, իսկ Ասկերանի ՊԾ ստորաբաժանումներն առաջ շարժվեցին Սումայի ուղղությամբ՝ խփելով հակառակորդի 1 տանկ[372]: Նշված հատվածներում ձեռնարկված հարձակումները Մարտակերտի ռազմաճակատում ՊԲ զորամասերի ազատագրական գործողությունները դյուրացնելու և հակառակորդի պարտությունն արագացնելու, հետևաբար նաև նրան խաղաղություն պարտադրելու նպատակ էին հետապնդում:

Ապրիլի 17-ին մարտական գործողությունները Մարտակերտի ՊԾ-ում վերսկսվեցին նոր թափով: Հակառակորդը հարձակում ձեռնարկեց Յարըմ լեռան և Թափիկարակոյունլուի ուղղություններով: Պաշտպանական ծանր մարտերով կասեցվեցին նաև Մարտունու ՊԾ առաջնագծի ամբողջ երկայնքով և Ն. Սեյիդահմեդլիից աջ ընկած դիրքերի ուղղությամբ թշնամու ձեռնարկած լայնածավալ հարձակումները: Ապրիլի 17-ի լույս 18-ի գիշերը հարձակման ենթարկվեցին Ֆիզուլիի ուղղության հայկական պաշտպանական դիրքերը: Մարտի ժամանակ հայ մարտիկները նռնականետով վնասեցին հակառակորդի տանկերից մեկը՝ դրանով իսկ կոտրելով նրա հարձակման թափը: Հակառակորդը գրոհեց նաև Գյուլիջայի ուղղության ՊԲ զորամասերի ձախ թևը: Հարձակումը հետ մղվեց: Ասկերանի ՊԾ ստորաբաժանումները մարտեր ծավալեցին Սալահլի-Քենգերլի բնակավայրի մոտակա ԿԱՖ-ի ուղղությամբ: Դաժան մարտերով հանդերձ, ասկերանցի մարտիկներին ի վերջո հաջողվեց մտնել Ջավահիրլի[373]: Մարտական գործողությունները շարունակվեցին նաև Մարտակերտի ՊԾ-ում: Լևոնարխի ուղղությունում հայ մարտիկները խփեցին հակառակորդի 2 S-72 և 1 ԺՄՄ-2:

Ֆիզուլիի ուղղությունում հակառակորդը երկու անգամ օդուժ կիրառեց՝ ռմբակոծելով ՆԳՆ զորքերի դիրքերը: Թշնամու ագռող ճնշման տակ պահակակետերից մեկը ժամանակավորապես թողնվեց: Հարձակումը շարունակվեց հաջորդ դիրքի վրա: Օտարերկրացի վարձկանների ուժերով, զրահատեխնիկայի ու հրետանու աջակցությամբ թշնամին կրկին փորձեց զարգացնել հարձակումը Ն. Սեյիդահմեդլիի ուղղությամբ, բայց ապարդյուն: Ապրիլի 20-ին, հրետանային նախապատրաստությունից հետո, զրահատեխնիկայի աջակցությամբ հակառակորդը հարձակման անցավ Ալխանլուից մինչև Ներքին Աբդուռահմանլու ձգվող ճակատային ամբողջ գծի երկայնքով: Թշնամուն հաջողվեց տիրել պահակակետերից մեկին՝ 308,9 նիշով բարձունքին: Թեժ ու անզի-

[370] ԼՂՀ ՊՆՆ, Рабочая тетрадь оперативного дежурного, 48 л., РТ N 153 (23.11.1996 г.), н. 17.03.94 г. - ок. 05.05.94 г., л. 22, 25:
[371] Նույն տեղում, թ. 23:

[372] *Հարությունյան Ս.*, Ազատագրական մարտեր մղելով (ապրիլ. 1994 թ.), «Մարտինի», հմ. 17, 1999 թ.:
[373] ԼՂՀ ՊՆՆ, Рабочая тетрадь оперативного дежурного, 48 л., РТ N 15 (23.11.1996 г.), н. 17.03.94 г. - ок. 05.05.94 г., л. 28:

ջում մարտերը տևեցին մինչև օրվա վերջը: Ուժերի վերախմբավորում կատարելով և պաշտպանության ուժեղացման ուղղությամբ լրացուցիչ միջոցներ ձեռնարկելով՝ ՊԲ ստորաբաժանումներին հաջողվեց կանգնեցնել հակառակորդի գերակշիռ ուժերի ու միջոցների առաջխաղացումը:

Նախօրեին ուշադրություն շեղող հարձակում ձեռնարկելով Օմարի լեռնանցքի ուղղությամբ, ապրիլի 21-ին հակառակորդը Թափկարակոյունլուից հարձակվեց Մարտակերտի ՊՇ հյուսիսային բնագծերի վրա: Միաժամանակ մարտերը վերսկսվեցին նաև Ֆիզուլիի ուղղությունում՝ 259,7 նիշով բարձունքի համար: Թշնամու օդուժը ռմբահարվածներ էր հասցնում Ն. Սեյիդահմեդլիի հայկական պաշտպանական դիրքերին, բայց այդպես էլ չկարողացավ ընկճել այդ բնագծի պաշտպանների մարտական ոգին[374]:

Ապրիլի 22-ին Ասկերանի ՊՇ մարտիկները տիրեցին Թաղիբեյլի գյուղին: Չկարողանալով դիմագրավել հայկական կազմավորումների առաջխաղացմանը, թշնամին անզոր կատաղությամբ հրթիռահրետանակոծում էր հայկական դիրքերը: Մեծաթիվ կենդանի ուժ և տեխնիկա կուտակելով, ապրիլի 22-ին հակառակորդը 5 ժամ անընդհատ փորձում էր ճեղքել հայկական կազմավորումների պաշտպանությունը Կազախլի ու Թալիշ բնակավայրերի ուղղություններում: Մարտի ընթացքում հայ մարտիկները շարքից հանեցին 1 տանկ և մեծ թվով հետևակայիններ: Պարտություն կրելով Թափկարակոյունլու-Թալիշ գծում՝ հակառակորդը նահանջեց և պաշտպանության անցավ նախօրոք պատրաստված դիրքերում: ՊԲ ստորաբաժանումներն, ավարտելով ուժերի վերախմբավորումը, հակահարձակման անցան և տիրեցին մի շարք նպաստավոր դիրքերի, այդ թվում նաև՝ Կազախլը գյուղին: Լուծելով առաջադրված խնդիրը, հայկական ստորաբաժանումները շարքից հանեցին 2 միավոր տանկ, 2 միավոր ՀՄՄ, 3 միավոր ավտոմեքենա, առգրավեցին 1 թնդանոթ: Կենդանի ուժի մեծ կորուստներ կրելով հանդերձ, թշնամին շարունակում էր թարմ ուժեր նետել մարտադաշտ՝ ապարդյուն ջանալով ոչ միայն հայկական ստորաբաժանումների հաղթարշավը կասեցնել, այլև նույնիսկ հետ գրավել կորսված դիրքերը՝ մեծ հույսեր կապելով զրահատեխնիկայի, հրետանու և օդուժի գերակշիռ ուժերի հետ: Սակայն այդ ամենն, առանց մարտնչող հետևակի, վճռորոշ դեր

[374] *Հարությունյան Մ.*, Ազատագրական մարտեր մղելով (ապրիլ. 1994 թ.), «Մարտիկ», հմ. 17, 1999 թ.:

հաղթալ չէր կարող[375]: ՊԲ մարտավարության առանձնահատկություններից հատկանշելի է օպերացիաների պլանավորման ու իրականացման ժամանակ հայ ազատամարտիկների բարոյամարտական ակներև առավելության, ինչը բազմիցս ապացուցվել է նախորդ ռազմական գործողություններում, վրա հաշվարկներ կատարելու և հաջողությամբ կենսագործելու հմտությունների դրսևորումը:

Ապրիլի 23-ին, շարունակելով նախորդ օրը սկսված մարտական գործողությունները, հակառակորդը զրահատեխնիկայի աջակցությամբ հարձակման անցավ և համառ մարտերից հետո, Աղբուռունի և Կուրպատկինոյի հատվածում զավթեց երեք պահակակետ: Կասեցնելով հակառակորդի հետագա առաջխաղացումը, Մարտունու ՊՇ ստորաբաժանումները հետ շպրտեցին նրան ու վերստին տիրեցին կորսված պահակակետերին:

Ապրիլի 24-ի առավոտյան ռազմաճակատի հյուսիսարևելյան հատվածում (Թալիշից հարավ) ձեռնարկված հակահարձակման արդյունքում հայկական կազմավորումները վերահսկողության տակ առան ռազմավարական նշանակության մի քանի բարձունքներ: Հաջորդ օրվա վաղ առավոտյան հակառակորդը տանկերի ու հրետանու աջակցությամբ, հարձակում ձեռնարկեց ռազմաճակատի հարավարևելյան ուղղությունում: Հադրութի ՊՇ մարտիկները, կասեցնելով գրոհը, թշնամուն հետ շպրտեցին: Ազատագրական մարտերն Ասկերանի ՊՇ հյուսիսարևելյան շրջանում վերսկսվեցին: Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումները, հարձակման անցնելով, տիրեցին երկու բարձունքի: 7-րդ ՊՇ ստորաբաժանումները ճնշեցին Շոթլանլու և Ուսուդլու գյուղերի թշնամական կրակակետերը: Ցարմջայի ուղղությամբ հարձակվող 3-րդ ՊՇ ստորաբաժանումները, խփելով հակառակորդի 1 S-72 և առգրավելով ևս մեկը, շարունակեցին զարգացնել հաջողությունը: Ապրիլի 25-ին Մարտակերտի ՊՇ հյուսիսում ևս զարգացնելով հարձակումը, ՊԲ ստորաբաժանումները տիրեցին 371,1 և 482,0 բարձունքներին: Խփելով հակառակորդի մեկ տեխնիկա, հայ մարտիկները վերահսկողության տակ առան նաև 457,8 բարձունքը: Լրացուցիչ ուժեր գամելու մտադրությամբ, հակառակորդը, հրետանու և 2 S-72-ի աջակցությամբ, հարձակվեց Հադրութի ՊՇ հյուսիսարևելյան դիրքերի վրա: Հարձակումը հաջողությամբ հետ մղվեց: Հարավարևելյան ռազմաճակատի մի այլ հատվածում

[375] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативногр дежурного, 48 л., РТ N 153 (23.11.1996 г.), н. 17.03.94 г. - ок. 05.05.94 г., л. 36 б:

հայ մարտիկները խփեցին հակառակորդի մեկ տանկ՝ խափանելով նրա արտագրոհի ելնելու փորձը: Թշնամու կրակակետերը ճնշելու նպատակով հարձակողական մարտեր ծավալվեցին նաև Ասկերանի ՊՇ-ում: Կենտրոնական ենթակայության զորամասը մտավ Նամիրլի բնակավայրը: Ապրիլի 26-ին Հադրութի և Մարտունիի ՊՇ-ների բնագծերի երկայնքով մարտական գործողությունները վերսկսվեցին: Մարտերը շարունակվեցին նաև Յարմջա հայկական գյուղի ազատագրման նպատակով: Ժամը 16[50]-ին, ի վերջո, Յարմջան ազատագրվեց[376]: Զուգահեռաբար, ազատագրվեցին առավոտյան թողնված դիրքերը հարավարևելյան ռազմաճակատում: Հաջորդ օրը կարևոր բնագծեր նվաճվեցին Ասկերանի ՊՇ ուղղությունում: Ազատագրական մարտերն ընթացան Բաշ Քարվենդ, Շիխլյար ու Միջին Քարվենդ բնակավայրերի ուղղությամբ: Համառ մարտերի ընթացքում վերահսկողության տակ առնվեց Ջավահիրլի բնակավայրը: Ժամը 15-ին Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները ճնշեցին Շիխլյարի, Քարվենդի ու Ջավահիրլիի բոլոր կրակակետերը: Ապրիլի 28-ին հակառակորդը փորձեց ճեղքել ՊԲ պաշտպանության գիծը Բորսուվլուի հատվածում, սակայն, արժանի հակահարված ստանալով, հետ շպրտվեց: Մարտերի ընթացքում հակառակորդը կենդանի ուժի և տեխնիկայի կորուստներ կրեց[377]:

Հանրագումարի բերելով զարնանային ռազմարշավի երկու ամիսների արդյունքները, վերոհիշյալ ռազմական հաջողությունները կարևորելի են նաև այն իմաստով, որ արդեն մայիսին Ադրբեջանի քաղաքական ու ռազմական ղեկավարությունը ստիպված էր նստել բանակցությունների սեղանի շուրջ և համաձայնվել հրադադարի պայմանների հետ:

Հակառակորդին զինադադար պարտադրելու մարտավարությունը

ԼՂՀ-ին սահմանակից ադրբեջանական վերջին ռազմական հենադաշտի՝ Միր-Բաշիրի վրա կախված վտանգը, մոտեցող ռազմաճակատից խույս տվող հազարավոր ադրբեջանցիների հոսքը, բանակի բարոյահոգեբանական վիճակի կտրուկ անկումը և դասալքության ծաղկումը հակառակորդին կանգնեցրել էին թեկուզ կարճատև դադար առնելու, այդ միջոցով ուշքի գալու ուղիների որոնման հրամայականի առաջ: Ա-

[376] Նույն տեղում, թ. 38:

[377] ***Հարությունյան Մ.,*** Ազատագրական մարտեր մղելով (ապրիլ. 1994 թ.), «Մարտիկ», հմ. 17, 1999 թ.:

ռանցքային նշանակության ռազմաճակատում տիրող անհուսալի իրադրության իրատեսական ընկալումը և հրադադարի՝ որպես ստեղծված կացությունից դուրս գալու հնարավորության մասին բազմաթիվ առաջարկությունների գայթակղությունը ևս նպաստեցին հրադադարի պայմաններից հրաժարվելու Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության համառության ընկճմանը: Վերջապես Ադրբեջանը հարկադրված էր իր համաձայնությունը հայտնել ՌԴ ռազմական գերատեսչության ղեկավարի՝ հրադադարի վերաբերյալ առաջարկությանը: Սակայն, տհաճ նախադեպերի հաշվառմամբ ու վերջին տարիների դառը փորձից ելնելով, ԼՂՀ ղեկավարությունը վերապահությամբ ընդունեց ախոյան կողմի այդ «կերպարանափոխությունը», իրավամբ կասկածելով, որ հրադադարն Ադրբեջանը վերստին կօգտագործի նոր լայնածավալ ագրեսիայի նախապատրաստվելու նպատակով, ինչը բացառելու համար անհրաժեշտ էին հրադադարի պահպանման կայուն երաշխիքներ: Բայց, քանի դեռ միջնորդները դրանք տալու իրական հնարավորություններ չունեին, ուստի անվտանգության համար 1 երաշխավորը շարունակում էին մնալ ԼՂՀ պաշտպանության բանակը և նրա նվաճած օպերատիվ-մարտավարական նշանակության բնագծերը:

Շարունակվող ռազմական գործողությունների մարտավարությունը հայկական կողմի համար թշնամուն հրադադար պարտադրելն էր: Ասկերանի ՊՇ ստորաբաժանումները մարտական գործողություններ ծավալեցին Միջին Քարվենդ, Միրաշենի և Ահմեդաղալը բնակավայրերի ուղղությամբ[378]:

Մայիսի 7-ին մարտական գործողությունները Մարտակերտի ՊՇ հյուսիսարևելյան հատվածում վերսկսվեցին: Հակառակորդը ժամանակավոր հաջողության հասավ Մարտակերտի ՊՇ ձախ թևում: Հաջորդ օրը Մարտակերտի ՊՇ ստորաբաժանումները ռազմագործողություն սկսեցին կորսված դիրքերը վերագրավելու նպատակով[379]: Մայիսի 8-ին առաջադրված մարտական խնդիրը լուծվեց, թշնամին հետ շպրտվեց դեպի իր նախկին դիրքերը: Մարտերը շարունակվեցին նաև Մարտակերտի շրջանի հյուսիսարևելյան սահմանագծի երկայնքով: Մասնավորա-

[378] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 48 л., РТ N 153 (23.11.1996 г.), н. 17.03.94 г. - ок. 05.05.94 г., л. 426:

[379] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 96 стр., РТ N 144 (23.11.1996 г.), н. 05.05.94 г. - ок. 28.08.94 г., л. 7:

պես, Ջրաբերդի ուղղությամբ ծավալվեցին համառ ազատագրական մարտեր[380]:

Մայիսի 11-ին սկսելով հրետանային նախապատրաստությունը, հակառակորդը հետևակ ու զրահատեխնիկա հանեց ԿՊՇ և Ասկերանի ՊՇ բնագծերի ուղղությամբ: Կասեցնելով թշնամու առաջխաղացումը, ՊԲ զորամասերն անցան հակահարձակման: ԿՊՇ ստորաբաժանումներն ազատագրեցին Սեյսուլանը[381] և Շուշիի զորամասի հետ փոխհամագործակցելով՝ հարձակումը զարգացրին Ղափանլիի թշնամական հենակետի ուղղությամբ: Ճնշվեցին Ղափանլիի[382] կրակակետերը, մարտերը շարունակվեցին Կարադաղլուի ռազմակայանի ուղղությամբ[383]:

Մայիսի 12-ի վաղ առավոտյան, հրետանային կրակի ու զրահատեխնիկայի աջակցությամբ, հակառակորդը հարձակման անցավ Յուսիֆջանլուի տեղամասում: Հակառակորդը հարձակման անցավ նաև Մարտունու ՊՇ ուղղությամբ: Միաժամանակ հարձակման ենթարկվեցին ՊՇ ստորաբաժանումների դիրքերը Մարտակերտի շրջանում: Հայ հրետանավորները արգելապատնեշային կրակ բացեցին թշնամու հետևակի մարտաշարքերի վրա: Մարտեր ծավալվեցին նաև Մարտակերտի ՊՇ այլ հատվածներում[384]:

Մայիսի 14-16-ին և հետագա օրերին շարունակվեցին հայկական պաշտպանական դիրքերի գնդակոծություններն ու հրետակոծությունները, ինչպես նաև հակառակորդի կենդանի ուժի և տեխնիկայի ակտիվ տեղաշարժերը ռազմաճակատի տարբեր հատվածներում: Մարտական գործողություններին զուգահեռ, ակտիվացավ նաև խաղաղ կարգավորման գործընթացը: Աղրբեջանի կողմից բիշքեկյան համաձայնության խափանումից հետո, գործին խառնվեց ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովը, որի միջնորդությունը հետապնդում էր զինված հակամարտության դադարեցման նպատակ՝ մնացած հարցերի լուծումը թողնելով քաղաքագետներին: Մայիսի 16-ին Մոսկվայում հանդիպելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի, ՀՀ պետնախարար Վ. Սարգսյանի, ԼՂՀ ՊԲ գլխավոր հրա-

[380] Հմմտ.՝ «Մարտին», հմ. 20, 1994 թ.:

[381] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 96 стр., РТ N 144 (23.11.1996 г.), н. 05.05.94 г. - ок. 28.08.94 г., л. 9:

[382] Նույն տեղում, էջ 16:

[383] Հմմտ.՝ *Հարությունյան Մ.*, Պարտադրելով տևական հրադադար (մայիս. 1994 թ.), «Մարտի», հմ. 21, 1999 թ.:

[384] ԼՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, 96 стр., РТ N 144 (23.11.1996 г.), н. 05.05.94 г. - ок. 28.08.94 г., л. 17-18:

մանատար Ս. Բաբայանի և Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովի հետ, նա առաջարկեց մայիսի 17-ի 00 ժամից դադարեցնել կրակը[385]: Այն մեծ դժվարությամբ ընդունեց նաև Ադրբեջանը:

Թեև Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության գոտում ակտիվ մարտական գործողություններ չէին մղվում, սակայն լարվածությունը չէր թուլանում: Պատերազմի իներցիայի տակ կողմերը շարունակում էին ուժերի ու միջոցների տեղաշարժեր և վերախմբավորումներ կատարել: ՊԲ հրամանատարությունը միջոցներ էր ձեռնարկում նվաճված բնագծերն ամրապնդելու և բանակի մարտունակությունը բարձրացնելու, պաշտպանական դիրքերի ինժեներական սարքավորումը կատարելագործելու ուղղությամբ: Այնուամենայնիվ, հավատարիմ մնալով իր սկզբունքներին, հակառակորդն անթաքույց օգտվում էր կրակի դադարեցումից և ոչ միայն կատարելագործում էր պաշտպանության համակարգը, այլև միաժամանակ պահեստազորային ուժեր էր պատրաստում վճռական գործողությունների անցնելու համար: Հատկապես ակտիվություն էր նկատվում նրա՝ Թարթառի ջրանցքի աջափնյակի, Վերին Չայլուի, Կարմրզը-սանալար բնագծում: Պահեստազորային ուժերը կենտրոնացվում էին Միր-Բաշիրում (բրիգադային) և Բարդայում (ռազմաճակատային): Այդ ամենի հաշվառմամբ, ՊԲ հրամանատարությունը համապատասխան միջոցներ էր ձեռնարկում Մարտակերտի՝ ռազմագործողությունների հնարավոր ուղղությունների պաշտպանության կատարելագործման ուղղությամբ, հերթափոխվում էին ստորաբաժանումները, ճշտվում զորամասերի պաշտպանության տեղամասերը: Մասնավորապես, քանի որ իրադրությունը պայթյունավտանգ էր հատկապես ԼՂՀ հյուսիսում, ուստի 5-րդ ՊՇ ստորաբաժանումների առաջ խնդիր էր դրված թույլ չտալ հակառակորդին ճեղքում կատարել այդ ուղղությունում[386]: Հիմնական ջանքերը կենտրոնացնելով Լևոնարխի, նրա ԿԱՖ-ի և շրջակա բնագծերի պաշտպանության վրա՝ Մարտակերտի ՊՇ մարտիկները լուծեցին այդ խնդիրը, որին նպաստեցին կրակային համակարգի ճշգրտման և դիրքերի ինժեներական սարքավորման միջոցառումների պլանավորումն ու անցկացումը: Հակառակորդի կողմից պաշտպանության կպտարելագործման, մարտավարական խորություններում և մարտական շփման գծի ամբողջ երկայնքով դիրքերի

[385] «Сегодня», 17.05.1994 г.: Հմմտ.՝ «Մարտին», հմ. 21, 1994 թ.:

[386] Հմմտ.՝ ԼՂՀ ՊՆԱ, Գործ մարտական հրամաններով ու մարտական կարգադրություններով, N 12, հրաման N 017 առ 2.07.1994 թ.:

ու բնագծերի ինժեներական սարքավորման ուղղությամբ միջոցառումների անցկացումը շարունակվեցին նաև հաջորդ ամիսներին: Միաժամանակ, կատարվում էին զորքերի վերախմբավորումներ, հիմնական ջանքերը կենտրոնացնելով Միր-Բաշիրում՝ Մեծշենի ռազմավարական ուղղությամբ[387]:


Հաշվի առնելով, որ հակառակորդը կարող էր ցանկացած պահի խախտել կրակի դադարեցման համաձայնագիրը, ՊԲ հրամանատարությունը ևս անցկացնում էր անհետաձգելի միջոցառումներ պաշտպանության կատարելագործման և ուժերի ու միջոցների վերախմբավորման ուղղությամբ՝ կապված առաջին շարանակարգի (էշելոնի) ստորաբաժանումների անձնակազմերի, դիրքերում ու բնագծերում հերթափոխի կազմակերպման ու անցկացման հետ: Հրադադարին հաջորդած ժամանակաշրջանին բնորոշ այս յուրօրինակ մրցավազքը, բանակցային գործընթացին զուգահեռ սառը պատերազմի շարունակումը գալիս են մեկ անգամ ևս փաստելու, որ **քանի դեռ ԼՂՀ պաշտպանության բանակը մարտունակ ու հզոր է, պատերազմը չի վերսկսվի: Ուժեղ և կայուն պետություն, ժամանակակից ու մարտունակ բանակ, պաշտպանական-անվտանգային հուսալի համակարգ ստեղծելու պարագայում հայկական կողմը կարող է ռազմական ճանապարհով հիմնախնդիրը լուծելու Ադրբեջանի քաղաքական ուժերի կոչերը դատապարտել սոսկ դատարկ հռետորանքների:** Գիտակցելով խաղաղության ու ան-վտանգության երաշխավորի՝ բանակի դերը, ՊԲ հրամանատարությունը ղեկավարում ու կազմակերպում էր սահմանների պահպանության մշտական մարտական հերթապահության կրման, միաժամանակ, հրամանատարաշտաբային, մարտավարական զորավարժություններում ու մարզումներում անձնակազմի մշտական ուսուցման և վարժման, ինչպես նաև մասնագիտական վարպետության կատարելագործման շարունակական գործընթացը:

Պարտադրված հրադադարը, ադրբեջանական կողմից հաճախակի խախտումներով հանդերձ, պահպանվել է մինչև 2016 թ. ապրիլի 2-ը, իսկ այն դարձյալ Ռուսաստանի միջնորդությամբ վերահաստատելուց հետո՝ մինչև 2020 թ. սեպտեմբերի 27-ը, երբ Ադրբեջանը Թուրքիայի աջակցությամբ ու միջազգային ահաբեկիչների ներգրավմամբ ագրեսիվ,

[387] Նույն տեղում, հրաման N 018 առ 27.07.1994 թ.:

զավթողական, ահաբեկչական պատերազմ սկսեց Արցախի Հանրապետության դեմ և բռնազավթեց նրա տարածքների շուրջ 75 տոկոսը:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ ԼՂՀ սահմանների ու խաղաղ բնակավայրերի վրա մշտական սպառնալիքը, հեռահար հրթիռահրետանակոծությունները և ԻՊՈՒ օպերատիվ-մարտավարական խնդիրները հրամայաբար պահանջում էին վնասազերծել հակառակորդի կրակակետերը և ստեղծել հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգ: Այդ նպատակով պլանավորվեցին ու ձեռնարկվեցին մի շարք խոշոր օպերացիաներ, որոնց արդյունքում ԻՊՈՒ-ի վերահսկողության տակ առնվեցին ռազմական նշանակության բնագծեր Լաչինի, Քելբաջարի, Աղդամի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի ու Զանգելանի շրջաններում: Նպատակ ունենալով խլել ռազմական նախաձեռնությունը՝ արմատական բեկում մտցնել պատերազմում, հակառակորդը նոր ագրեսիա ձեռնարկեց ԼՂՀ-ի դեմ՝ հարձակման անցնելով ճակատային գծի ամբողջ երկայնքով: Արցախյան հիմնախնդիրը զենքի ուժով լուծելու Ադրբեջանի պլանների ձախողման գործում նշանակալի էին ծանր պաշտպանական մարտերում հակառակորդի հարվածային ուժերի հյուծումը և մարտական գործողությունների կենտրոնական հատվածում՝ Աղդամի ու Մարտակերտի շրջաններում ՊԲ-ի սրընթաց հակահարձակումը, ինչն անմիջական սպառնալիքի տակ էր դրել ԼՂՀ-ին սահմանակից ադրբեջանական վերջին ռազմակայանը՝ Միր-Բաշիրը, որին տիրելը հղի էր Ադրբեջանում նոր իշխանափոխության, քաղաքական ճգնաժամի, հետևաբար՝ ռազմական խորտակիչ պարտության վտանգով: Այս և մի շարք այլ գործոնների ճնշման տակ հակառակորդը ստիպված էր, թեկուզ դժկամորեն, համաձայնվել հրադադարի պայմաններին:



ՎԵՐՋԱԲԱՆ

Վերջաբանում ընդհանրացվել են ուսումնասիրության արդյունքները, ներկայացվել են առաջարկներ Արցախի Հանրապետության ռազմական (պաշտպանական) անվտանգության ապահովման, այդ թվում՝ պատերազմի կանխման, հակառակորդի նախահարձակման հետմղմանը պետության ու ՋՈՒ-ի պատրաստման կատարելագործման համար:

Ընդհանրացնելով ձեռքբերված արդյունքները՝ կարելի է փաստել, որ ռազմարվեստի զարգացման վրա ազդած պատմական և ազգային առանձնահատկությունները, աշխարհագրական պայմանները և ռազմական տնտեսության սադմնավորման գործընթացը, ինչպես նաև ռազմարվեստի վիճակը որոշող ռազմական գործի, ռազմապաշտպանական արտադրության և զինված պայքարի միջոցների զարգացման մակարդակը, հասարակարգի բնույթը և այլ գործոններ գիտականորեն ուսումնասիրելը պահանջված էր Արցախի Հանրապետությանը ներված մարտահրավերներին դիմագրավելու անհրաժեշտությամբ:

Սույն աշխատանքի միջոցով ակներև է դարձել մեր հանրապետության ռազմական անվտանգության ապահովման և պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործման ասպարեզում համաշխարհային ռազմական գիտության, ռազմական տեսության, ռազմարվեստի զարգացման ու ռազմապատմական գիտության նվաճումների կիրառման հրատապությունը, ինչը հնարավոր է մեր երկրի սեփական փորձի վերաիմաստավորման, 1991-1994 և 1916 թթ. պատերազմական գործողությունների ու մարտավարության տեսական վերլուծությունների միջոցով: Միաժամանակ հատկանշվել է, որ արդի ռազմատեխնիկական հեղափոխության և ռազմարվեստի բուռն զարգացման պայմաններում վերանայվում են հաստատագրված հասկացությունները, բառեզրերը և զինված պայքարի միջոցների մասին պատկերացումները, որոնց կոնկրետացումը կարևոր նշանակություն ունի ընդհանրապես՝ զինված ուժերի շինարարության և մասնավորապես՝ նրանց կազմակերպվածքի ու կազմի, զարգացման ու սպառազինման ուղիների որոշման համար:

Այդ համատեքստում ելակետային է համարվել այն սկզբունքը, որ առանց Արցախի զինված ուժերի անցած ճանապարհի պատմա-

քննական ու ռազմագիտական ուսումնասիրության և հայկական պատմական ռազմարվեստի բոլոր արժեքավոր տարրերի, ինչպես նաև աշխարհի առաջատար բանակներում կիրառվող ռազմագիտական արդիական լուծումների համադրման հնարավոր չէ կատարելագործել ՊԲ-ի ռազմարվեստը, օպերատիվ և ռազմավարական պլանավորման ընթացակարգերը, մարտական պատրաստությունը:

Կոնկրետ օրինակներով ու պատմական փորձի ընդհանրացումներով ցույց է տրվել, որ Ադրբեջանի ռազմական նախահարձակմանը դիմակայելու ընթացքում Արցախում ռազմական արվեստը նշանակալի զարգացում է ապրել: Այդ առաջընթացի արտահայտություն կարելի է համարել հետևյալ օրինաչափ առանձնահատկությունը. Արցախի ինքնապաշտպանության ուժերի կազմավորմանը զուգընթաց կյանքի էին կոչվում ռազմական գործողությունների նախապատրաստման և վարման տեսության ու պրակտիկայի սկզբունքները: Ռազմական արվեստի սկզբունքները՝ որպես ռազմական գործողությունների կազմակերպման ու վարման կարևոր օրինաչափությունների, հիմնարար դրույթների և պահանջների համախումբ, փորձել ենք պատմաքննական ու գիտական վերլուծության ենթարկել:

Փորձել ենք հնարավորինս ցույց տալ, որ թեև ռազմարվեստի հիմնական սկզբունքներն ընդհանուր են ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օպերացիաների համար, բայց տարբերվում են պատերազմների՝ գիտակցությունից դուրս և նրանից անկախ գոյություն ունեցող օրենքների և զինված ուժերի գործնական կիրառման ուղիներով: Հետևաբար մեր գիտահետազոտական խնդիրը համարել ենք Արցախի ՋՈՒ գործնական կիրառման առանձնահատկությունները և ուղիները համակողմանի ներկայացնելը:

Արցախում 1990-1994 թթ. և հետագայում մղված ռազմական գործողություններին անդրադարձած հեղինակները փորձել են ամենատարբեր տեսանկյուններից բացահայտել Պաշտպանության բանակի ֆենոմենը, սակայն, ուժերով ու միջոցներով գերակշռող հակառակորդին պարտության մատնելու հանգամանքները, մարտավարական ու ռազմավարական գործոնները գիտականորեն ներկայացնելու հիմնախնդիրը, ինչպես ցույց են տալիս մեր ուսումնասիրությունների արդյունքները, նրանց այդպես էլ չի հաջողվել լուծել:

Գործուղումների ժամանակ ոչ միայն ուսումնասիրվել և հավաքվել են արխիվային նյութերը, այլև գրառվել են մասնակից-ականատեսների վկայությունները: Վաղօրոք ընտրված գործիչների գրառված կենդանի վկայությունները վերածվել են վավերագրերի, նրանցից հրնթացս հավաքագրվել թեմային վերաբերող անհրաժեշտ նյութեր կամ տեղեկություններ: Արցախյան պատերազմի առանձին օպերացիաների վերաբերյալ մասնակիցների հուշագրությունների և հրամանատարների ու շարքային զինվորների վավերագրված վկայությունների համակարգման ու հանրահռչակման միջոցով անհրաժեշտ հիմքեր ենք ստեղծել Արցախում ռազմարվեստի զարգացման պատմության արխիվի ստեղծման հրատապ ու կարևոր նպատակի իրագործման համար: Հավաքագրված անտիպ նյութերի ու վավերագրերի, թեմայի վերաբերյալ գրականության, պարբերական մամուլի հրապարակումների ուսումնասիրման արդյունքները հրապարակվել են գիտական պարբերականներում ու ՋՏՄ-ներում: Նախագծի կատարողները մասնակցել են միջազգային գիտաժողովի և հասարակական քննարկումների, որտեղ ներկայացրել են իրենց ուսումնասիրությունների արդյունքները: Հրատարակված գրականության մեծածավալ ուսումնասիրությունների ընթացքում առանձնացվել են խնդրահարույց տեսակետները, նորովի լուսաբանման կարիք ունեցող հիմնահարցերը՝ հետագա գիտական քննության ենթարկելու նպատակով:

Մասնագիտական գրականության հետագա մեծածավալ ուսումնասիրությունները, առանձնացված խնդրահարույց հարցերի վերլուծությունը, նորովի լուսաբանման կարիք ունեցող հիմնահարցերի շարունակական գիտական քննությունն այն արդյունավետ միջոցների ու եղանակների ոչ ամբողջական ցանկն են, որոնք հնարավորություն են տվել լուծելու առաջադրված խնդիրները:

Համակարգված նյութի տեսական ձևակերպման փուլում շարադրվել են փաստական նյութի ուսումնասիրության և տեսական մշակումների հիման վրա կատարված եզրակացությունները, առանձնացվել խնդրահարույց տեսակետները, նորովի լուսաբանման կարիք ունեցող հիմնահարցերը: Սահմանվել են առաջադրված խնդիրների և հարցադրումների հիմնական դրույթները, հիմնավորվել ու գիտական քննության ենթարկվել առաջ քաշված տեսակետները:

Գիտական թեմայի վերջնական տեսքի բերման ու աշխատանքի ավարտական փուլը, Արցախի Հանրապետության դեմ սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի, Թուրքիայի և միջազգային ահաբեկիչների ձեռնարկած ագրեսիայի պատճառով դժվարությամբ հաղթահարվեց: Հրնթացս

հարկ եղավ որոշ սրբագրումներ կատարել ու վերանայել ավարտին հասցված պարբերությունները: Աշխատության տեքստը ենթարկվեց վերջնական ու գիտական մշակման, փորձարկման և գիտական խորհրդակցությունների միջոցով լրամշակման: Հետազոտության արդյունքները մենագրության տեսքով հրատարակելու նախապատրաստական աշխատանքներին զուգընթաց հրատարակվել են գիտական պարբերականներում և ժողովածուներում, ինչպես նաև առանձին գրքույկում՝ անցնելով անհրաժեշտ փորձաքննություն:

Մեր ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա կատարում ենք մի շարք առաջարկություններ, որոնք օգտակար ենք համարում ընդհանրապես ՀՀ և, մասնավորապես, Արցախի Հանրապետության պաշտպանական-անվտանգային համակարգի կատարելագործման և արդի մարտահրավերներին դիմակայելու պետության պատրաստականության համար:

Անհրաժեշտ է լրջորեն վերանայել սպառազինության և ռազմական տեխնիկայի համալրան ռազմավարությունը՝ հիմք ընդունելով տեղային պատերազմների մարտավարության նորամուծությունները և վերջին տարիներին թշնամու զինված ուժերի ռազմատեխնիկական համալրումների ու զորավարժություններում կատարելագործվող հարձակողական մարտավարության տարրերը: ՀՀ ռազմական բյուջեի հնարավորությունները ըստ էության չեն ներում գնել թանկարժեք, ծանր ռազմական տեխնիկա (SOU-1 «Բուրատինո» և SOU-1U «Սոլնցեպյոկ» համազարկային կրակի՝ ծանր հրանետային համակարգեր, տանկեր և այլն): Ինչպես ՀՀ ԶՈՒ շինարարության, այնպես էլ ռազմատեխնիկական համալրման ռուսական մոդելները այլևս սպառել են իրենց, որովհետև Հայաստանը իր մարդկային ու նյութական պաշարներով, սոցիալ-տնտեսական բաղադրիչներով միանգամայն անհամադրելի է ՌԴ-ի հետ: Ադրբեջանի և ՌԴ-ի կողմից պարտադրված սպառազինությունների մրցավազքը մեզ կարծես թե այլընտրանք չի թողել: Ռազմական տեխնիկայի ու սպառազինության մեր հիմնական շուկան ՌԴ-ն է, որի ԶՈՒ ստրատեգիայի հիմքում մեծաքանակ կենդանի ուժի և պաշտպանական ամրաշինությունների միջոցով հակառակորդի ուժերը հյուծելն է և ապա հակահարձակմամբ ջախջախելը: Դա պահանջում է ծանր տեխնիկա, վիթխարի միջոցներ, որոնք ՌԴ-ն ունի: Իսկ ՀՀ-ն այդ հնարավորությունները չունի, ուստի նա իր սուղ միջոցները պետք է

ինայողաբար ծախսի բարձր ճշգրտությամբ խոցող միջոցների և օդային հարձակումներից պաշտպանվելու հուսալի միջոցների վրա:

Արդիականացման կարիք են զգում ոչ միայն ՀՀ ԶՈՒ զինանոցում առկա հնացած ռազմական տեխնիկան, այլ նաև դրանց կիրառման մարտավարությունը: Հակատանկային միջոցների և տեղորոշման համակարգերի կատարելագործումը նկատելիորեն սահմանափակել են տանկային ստորաբաժանումների հարձակողական տարաշարժերի հնարավորությունները: Հետևաբար նախկին կամ հնացած մարտավարությամբ տանկային ստորաբաժանումների կիրառումը ոչ միայն արդյունավետ չի կարող լինել, այլև հանգեցնելու է դրանց անխուսափելի կորստյան: Մեր պարագայում տանկերը կորցնում են իրենց հարձակողական հնարավորությունները, որովհետև այլ զորատեսակների, մասնավորապես, հրետանային ու օդային աջակցությանից ըստ էության զուրկ են, իսկ ռելիեֆի առանձնահատկությունների հաշվառմամբ և ծխածածկույթի քողի տակ մանևրելու մարտական փորձ ու գործնական հմտություններ գրեթե չունեն: Նման պայմաններում գերադասելի է տանկային զորամասերն օգտագործել ՊԲ առաջնագծի պաշտպանությունն ավելի ուժեղացնելու նպատակով՝ դրանք ծավալելով նախօրոք պատրաստված հուսալի թաքստոցներում և լայն տեսադաշտ ունեցող կրակաղիրքերում:

Մերձավոր Արևելքում և այլուր մղվող տեղային պատերազմների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարտական գործողությունների ելքի վրա նշանակալի ազդեցություն են ունենում կառավարվող պայթուցիկ լիցքերը, հրթիռները, անօդաչու թռչող ապարատները (ԱԹԱ) և այլն: Ադրբեջանի և նրան համակողմանիորեն աջակցող Թուրքիայի օդային բացարձակ և հրթիռահրետանային նշանակալի գերակայության հասնելու անթաքույց ջանքերը, որոնք առաջին իսկ հարվածի ընթացքում ՊԲ հակաօդային պաշտպանության և հրետանային միջոցները թիրախավորելու վտանգ են ներկայացնում, հրատապ են դարձնում դյուրաշարժ, պատեհաժամորեն քողարկվող և անհապաղ մարտական կիրառության բերվող զինատեսակների ձեռքբերումը: ՊԲ զինանոցը նպատակասլաց կերպով անհարժեշտ է համալրել տարաբնույթ կառավարվող մարտական լիցքերով, թևավոր հրթիռներով, հետախուզական և մարտական (կամիկաձե) ԱԹԱ-ներով, հակատանկային և հակաօդային (այդ թվում՝ հակահրթիռային և հակադրոնային) նորագույն այնպիսի համակարգերով, որոնք դյուրակիր ու շարժունակ

են, անտեսանելիության աստիճան քողարկելի, բոլոր հնարավոր եղանակներով պաշտպանված հակառակորդի խոցման միջոցներից, և այլն:

Հաշվի առնելով ՀՀ և Արցախի մարդկային ահռելիսպառ ռեսուրսները, զորահավաքային ու պահեստազորային անհամադրելի կարողությունները՝ համապետական կարևոր նշանակություն պետք է ստանա զինապարտների պարբերական հավաքների միջոցով նրանց պատերազմին նախապատրաստելը: Մարտունակ ու շարժունակ պահեստազոր ունենալու, նրանց արդյունավետ մարտական կիրառման մեխանիզմները իստակեցնելու համար մի շարք միջոցառումներ ու նախապատրաստական աշխատանքներ են անհրաժեշտ: Մեծ դերակատարություն ունեն տարածքային զինվորական կոմիսարիատները: Միանգամայն հնարավոր ենք համարում զորահավաքային զորակոչի կազմակերպումը զինհաշվառումային մասնագիտությանը համապատասխան, ինչը խախտվել է 2016 թ ապրիլյան և 2020 թ. պատերազմների ժամանակ՝ պատճառ դառնալով անդառնալի կորուստների: Պահեստազորի ներգրավման արդյունավետությունը նկատելիորեն կբարձրանա, եթե զորահավաքային զորակոչի ենթարկված մեր քաղաքացիները համալրեն այն զորամասերի շարքերը կամ մարտական դիրքերը, որտեղ ժամանակին ժամկետային ծառայություն են անցել, մարտական հերթապահություն են տարել և քաջածանոթ են մարտական գործողությունների տվյալ թատերաբեմին: Նման ընտրովի մոտեցում զինկոմիսարիատները կարող են ցուցաբերել, եթե նախօրոք նախապատրաստական աշխատանքներ իրականացնեն, ուսումնասիրեն զինապարտների տվյալները, կազմեն համապատասխան ցուցակներ և հատակ սահմանեն զորահավաքային զորակոչի կազմակերպման մեխանիզմները: Նշված ուղղություններով զինկոմիսարիատների նախապատրաստությունները ձևական ու ցուցադրական բնույթ են կրում, ինչն իր ամբողջ աղետաբերությամբ ու ողբերգականությամբ արտահայտվում է թշնամու նախահարձակման առաջին իսկ օրերից:

Հակառակ պաշտպանական գերատեսչության տարբեր պատասխանատուների հայտարարությունների՝ ՊԲ ռազմավարությունը պաշտպանական է: Դա հաստատում է նաև ուժերի հարաբերակցության ու տարածքային, նյութական, հաղորդակցական, սոցիալ-տնտեսական, ռազմական ծախսերի և բազում այլ անհամադրելի բաղադրիչների ամբողջությունը: Պաշտպանական ռազմավարությունը մեր

պայմաններում ենթադրում է ՊԲ պաշտպանության առաջին, ծայրահեղ դեպքում՝ երկրորդ կամ երրորդ շարանակարգերում նախահարձակ թշնամու մեծաքանակ կենդանի ուժի ու միջոցների հյուծում, հարձակողական հնարավորությունների սպառում, ապա հակահարձակմամբ ագրեսորների զորքերի մնացորդների ջախջախում: Այս խնդիրը հնարավոր է լուծել ՊԲ ամբողջ առաջնագծի ամրաշինական և ինժեներական սարքավորմամբ, ընդ որում վաշտի, դասակի ու ջոկի հենակետերից մինչև յուրաքանչյուր խրամաբջջի այնպիսի կահավորմամբ, որ դրանք հուսալիորեն պաշտպանված լինեն հրթիռահրետանային ու օդային հարվածներից և ապահովեն անձնակազմի անվտանգությունը:

Դեռևս 1992 թ. ամառային ռազմարշավում Մարտակերտի պաշտպանության ճակատի ճեղքման պատճառներից նշվել է բնակավայրերի շուրջ պաշտպանական ամրությունների և բնակիչներին իրենց բնակավայրերի պաշտպանությանը մասնակից դարձնելու հնարավորությունների բացակայությունը: Թշնամու ռազմատենչ հռետորաբանությունը, ուժի և դրա կիրառման սպառնալիքի, ռևանշիստական տրամադրությունների ածը, հայրենակողական սպառազինությունների մրցավազքը կասկածներ չեն թողնում, որ նոր ագրեսիվ պատերազմը սարերի հետևում չէ: Հետևաբար անհրաժեշտ է ոչ միայն ավելացնել ՊԲ պաշտպանական բնագծերի շարանակարգերը, այլ նաև հարվածի գլխավոր ուղղություններում (2016 թ. ապրիլյան պատերազմը բացահայտեց, որ դրանք թշնամու համար հարավային և հյուսիսային ուղղություններն են) գտնվող բնակավայրերի շուրջ շարանակարգված պաշտպանական բնագծեր ստեղծել, իսկ բնակչությանը հատկացնել իրենց իսկ օջախները պաշտպանելու ժամանակակից միջոցներ: Նույն մոտեցումը պետք է ունենալ նաև այլ բնակավայրերի նկատմամբ, որպեսզի Արցախի ամբողջ տարածքը վերածվի անառիկ ամրոցի:

Հաշվի առնելով այն փաստը, որ թշնամուն հաջողվել է ներխուժել ոչ միայն ՊԲ պաշտպանության խորքերը, այլև մխրճվել Արցախի Հանրապետության խոր թիկունք, ուստի անմիջապես բնակավայրերում թշնամու առաջխաղացումը կասեցնելու և բնակչությանը ֆիզիկական բնաջնջումից պաշտպանելու անհրաժեշտություն կարող է առաջանալ ցանկացած պահի, հարկ է անհապաղ ստեղծել պաշտպանության տեղային օջախներ (ռազմականացված բնակավայրեր)՝ ինժեներական-ամրաշինական կահավորմամբ և մարտավարական միա-


վորների համալրմամբ, և փոդոցային մարտավարության ու դիմադրական շրջանների (օջախների) փոխգործակցության կազմակերպման եղանակների կատարելագործմամբ ու բնակչությանը (ինչու չէ նաև աշխարհազորին ու բանակին) դրանց տարրերի ուսուցմամբ:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԳԳՄ - «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր»
ԱԳՄ – АГС- автоматический гранатомет станковый տես ՀԱՆ
ԱդրԽՍՀ - Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն
ԱԹՄ - անօդաչու թռչող ապարատներ
ԱՀՆԳ - արդյունքների հասնելու վրա խարսխված գործողություններ
ԱՊՀ - Անկախ պետությունների համագործակցություն
ԲՈՒՀ - Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱԱ - Գիտությունների ազգային ակադեմիա
ԳԼՈՆԱՍՍ - ՌԴ Համընդհանուր ուղեվարական արբանյակային համակարգ(ГЛОНАСС- Глобальная навигационная спутниковая система)
ԳՄ - Գերագույն խորհուրդ
ԳՀՓԿԱ - գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ
ԳՇ - Գլխավոր շտաբ
ԳՊՄ – ԱՄՆ-ի Համընդհանուր ուղեվարական արբանյակային համակարգ (GPS-Global Positioning System)
ԴՀ – դիվերսիոն-հետախուզական
ԴԿԿ - դասակի կառավարման կետ?
ԴՇԿ - Դեկտարևի, Շպագինի, Կալաշնիկովի խոշոր տրամաչափի հաստոցավոր գնդացիր (ДШК – станковый крупнокалиберный пулемёт Дектярева, Шпагина, Калашникова)
ԵԱՀԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՍՋՈՒ - Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիր տես CFE
ԵՄ - Եվրոպական միություն
ԶՀՀ - Զենիթահրթիռային համալիր
ԶՀՀԳ – զենիթահրթիռահրետանային գունդ
ԶՈՒ - զինված ուժեր
ԶՓԴ – զրահապատ փոխադրամիջոց
ԷՀՄ – Էլեկտրոնային-հաշվիչ մեքենա
ԹՄ - Թռչող սարք
ԻՊԿ - Ինքնապաշտպանության կոմիտե
ԼՂՀ - Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն
ԼՂԻՄ - Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ
ԽՍՀՄ - Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների միություն
ԿԱՅ – կաթնապրանքային ֆերմա
ՀՄՆ – Հաստոցավոր ավտոմատ (ինքնաձիգ) նռնականետ տես ԱԳՍ

ՀԱՊԿ-Համագործակցության և անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ԿԳՄ– Կալաշնիկովի գնդացիր արդիականացված տես ՊԿՄ
ԿԳՏ- կալկաշնիկովի գնդացիր տանկի տես ՊԿՏ
ԿՋՀՀ- Կրովի զենիթահրթիռային համալիր
ԿՄՄԿ- Կարմիր խաչի միջազգային կոմիտե
ԿՈՒՀ– կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով
ՀԱՊԿ- Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն
ՀՅՍՀ- Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետություն
ՀԿՈՀ- Համազարկային կրակի ռեակտիվ համակարգ
ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ՋՈՒ ԳՇ- Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբ
ՀՀ ՊՆ ՊԱՀՀ – Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան
ՀՀ ՊՆ ԱՈՀԻ - Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ
ՀՄՄ- հետևակի մարտական մեքենա
ՀՇՋ– հրամանատարաշտաբային զորավարժություն
ՀՕՊ- Հակաօդային պաշտպանություն
ՄՏՄ- մարտավարատեխնիկական առաջադրանք
ՆԱՏՕ- Հյուսիս ատլանտյան դաշինք
ՆԳՆ- Ներքին գործերի նախարարություն
ՇՀԿ– Շանհայան համագործակցության կազմակերպություն
ՉԺՀ- Չինաստանի ժողովրդական հանրապետություն
ՊԲ- Պաշտպանության բանակ
ՊԿՄ- ПКМ- Пулемет Калашникова Модернизированный
ՊԿՏ - ПКТ — пулемёт Калашникова танковый
ՊՆ- Պաշտպանության նախարարություն
ՊՇ– պաշտպանական շրջան
ՌԳԹ - ռազմական գործողությունների թատերաբեմ
ՌԳՀ- ռազմագիտական հանդես
ՌԷՊ - Ռադիոէլեկտրոնային պայքար
ՌԻ- Ռազմական ինստիտուտ
ՌՏԲ– ռազմատեղագրական բաժին
ՀԿՈԿ- համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր
ՌՄՀ- ռազմարդյունաբերական համալիր
ՌՏԿ- Ռադիոտեղորոշման կայան
ՌՔԿՊ - ռադիոքիմիական կենսաբանական պաշտպանություն
ՌՕ– ռազմական օկրուգ
ՌՕՈՒ- ռազմաօդային ուժեր

ՍՇՀ– սուր շնչառական հիվանդություն
ՍՈՏ- սպառազինության և ռազմական տեխնիկա
ՎՈՒՄՄ- Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա (հանուն ժողովրդավարության և համագործակցության կազմակերպություն)
ԶՋ- ցամաքային զորքեր
ՕՀՄ- Օդային հարձակման միջոցներ
ՕՍՈՆ- Միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ, ռուսերեն
IPAP - Individual Partnership Action Plan, Անհատական համագործակցության գործողությունների պլան
ISAF- International Secrity Asistance Force, Միջազգային անվտանգության աջակցման ուժեր
CFE - Treaty on Conventional Armed Forces in Europe



Քարտեզ հմ. 4

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

1. ՄԿՋԲՆԱՂԲՈՒՐՆԵՐ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվ (ՀՀ ՊՆԿԱ), գործ N 17 (Դարավերջի ազգային ազատագրական պայքարի և բանակաշինության փաստավավերագրական տեղեկանք. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարություն):

ՀՀ ՊՆԿԱ, Ֆոնդ N 06-083 (Հայաստանի Հանրապետական կուսակցություն), գործ «Անկախության բանակ»:

ՀՀ ՊՆ ընթացիկ գործավարություն, Գիտատեխնիկական հաշվետվություն, գույք հմ. 245 (Գիտահետազոտական աշխատանք «Զորակոչային քանակակազմի մասնագիտական-հոգեբանական հատկությունների հետազոտություն և նախազորակոչային պատրաստության ու զորակոչից հետո անձնակազմի ուսուցման մակարդակի բարձրացման ուղղությամբ հանձնարարականների մշակում»: Հեղ. խումբ՝ Շիրխանյան Վ. Գ., Հովակիմյան Ա. Տ., Մարգարյան Վ. Հ. և ուրիշն.; գիտ. ղեկավար՝ Շիրխանյան Վ. Գ.), Երևան, ՀՀ ՊՆ, 1999, 323 էջ:

ՀՀ ՊՆ ընթացիկ գործավարություն, գույք № 246 (Գիտահետազոտական աշխատանք «ՀՀ ԶՈՒ-ի համալրման կարիքների ապահովման նպատակով ՀՀ մարդկային ռեսուրսների զարգացման միտումների հետազոտություն և մինչև 2016 թ. ներառյալ թերհամալրման բացառման ուղղությամբ հանձնարարականների մշակում»: Հեղ. խումբ՝ Շիրխանյան Վ. Գ., Հովակիմյան Ա. Տ., Մարգարյան Վ. Հ. և ուրիշն.), Երևան, ՀՀ ՊՆ, 1999, 121 էջ:

ԼՂՀ պաշտպանության նախարարության արխիվ (ԼՂՀ ՊՆԱ), Аппаратный журнал радиостанции: начат 25 декабря 1991 г., окончено 5 марта 1992 г.

ԼՂՀ ՊՆԱ, Книга приказов, N 001. По описе за 1992 г. номенклатурный N 1. начато 15 июля 1992 г. - окончено 31 декабря 1992 г. на 148 листах.

ԼՂՀ ՊՆԱ, ՊԲ զորամասերի մարտական ուղին, Գործ N 72,

ԼՂՀ ՊՆԱ, Приказы ПКСО, дело N 4, начато 01.01.1993 г. - оконч. 30.12.1993 г., 99 л., Գույքահամար 9: (Инв. N 15/2-9):

ԼՂՀ ՊՆԱ, Дело N 12 с боевыми приказами и боевыми распоряжениями. Нач. 31.03.1994 г.-окончено 23.01.1997 г., 45л.

ԼՂՀ ՊՆԱ, Дело с приказами ПКСО, Дело N 31, начато 14.18.92 г.-окончено 30.12.1992 г., 55л. (Инв. N 15/2-11):

ԼՂՀ ՊՆԱ, Дело с боевыми приказами и боевыми распоряжениями командования, НШ АО НКР и МО РА, начато 24.10.1994 г.- окончено 27.12.1999 г., дело N 13 (Инв. N 15/2-1455):

ԼՂՀ ՊՆԱ, Дело с боевыми приказами и боевыми распоряжениями, начато 01.01.1993 г.- окончено 23.11.1993 г., дело N 38(Инв. N 15/2-6):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР, начато 03.01.1996г.- окончено 28.12.1996 г., дело N 2 (Инв. N 15/2-251):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР, начато 08.01.1998г.- окончено 30.12.1996 г., дело N 2 (Инв. N 15/2-257):

ՀՂՀ ՊՆԱ, Дело с приказами, директивами МО НКР, НШ Армии, начато - 04.01.1999 г.- окончено 28.12.1999 г., дело N 2 (Инв. N 15/2-1464):

ՀՂՀ ՊՆԱ, ՀՂՀ ՊՆ և ՔՇՊ հրամաններ և դիրեկտիվներ, սկսվ. 21.01.2000թ. - ավարտվ. 30.12.2000 թ., Գործ N 2 (գույքահամար N 15/2-1468):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР и НШ Армии, начато 05.01.2001г.- окончено 28.12.2001 г., дело N 2 (Инв. N 15/2-1811):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР и НШ Армии, Нач. 07.01.2002 г.- окончено 24.12.2002 г., дело N 2 (Инв. N 15/2-1816):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР, Нач. 07.01.2003г.- окончено 25.12.2003 г., дело N 2 (Инв. N 15/2-1933):

ՀՂՀ ՊՆԱ, Приказы и директивы МО НКР и НШ Армии, начато 03.01.2004 г.- окончено 28.12.2004 г., дело N 2 (Инв. N 15/2-2362):

ՀՂՀ ՊՆԱ, Аппаратный журнал радиостанции: начато 24 апреля 1992 г., окончено 12 мая 1992 г.

ՀՂՀ ՊՆԱ, Боевой приказ (Взятие Шуши).

ՀՂՀ ՊՆԱ, թիվ 47035 զորամասի հրամանատարի հրամանը «Մարդասիրական միջանցքի ընդլայնման նպատակով մարտական խնդիրների լուծման հետևանքով ՊՇ զորամասի մղած մարտական գործողությունների արդյունքների մասին», Երևան, N 23 առ 10 ապրիլի 1993թ.:

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, начато 21 февраля- окончено 18 марта 1992г. По книге учета РТ N 140, 96 л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, начато 05 марта- окончено 24 марта 1992г., 48л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, начато 24 марта- окончено 8 апреля 1992г., 48л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, По к.у. РТ N 217, начато 6.06.92 ок. 4.08.92 (16.07.1997), 192 стр.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного, РТ N 147 (23.11.1996 г.), начато 8.09.92 - окончено 5.12.92 г. (Инв. N 1) 1-92 г., 198 стр.

1.29. ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, РТ N 148 (23.11.1996 г.) начато 5.12.92 - окончено 14.01.93 г., 50 л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, РТ N 149 (23.11.1996 г.), начато 14.01.93 - окончено 14.03.1993 Р/Т N4-93 г., 50 л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, РТ N 151 (23.11.1996 г.), начато 13.03.93 г. - окончено 16.07.93 г., 100л.

ՀՂՀ ՊՆԱ, Рабочая тетрадь оперативного дежурного штаба ССО НКР, РТ N 150 (23.11.1996 г.), начато 16.07.93 г. - окончено 25.10.93 г., 96л.

